



**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ
ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ
ՄՈՏԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

**Ռալֆ Յուլիխ
Օլիմպիա Գեղամյան**

2025 թ. հունիս



ՄՈՏԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Շրջակա միջավայրի եւ կլիմայի փոփոխությանն առնչվող գործողությունների ոլորտների

(Ծրագրային գործողություն 1.2 Քաղաքականության մշակում)

Ռալֆ Յուլիխ, Օլիմպիա Գեղամյան

2025 թ. հունիս

Ծանոթագրություն

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում են բացառապես հրապարակման հեղինակները, իսկ դրանում ներկայացված տեսակետները որեւէ կերպ չեն արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:



ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԼՂՏ	Լավագույն հասանելի տեխնոլոգիաներ
ԼՂՏՏՓ	ԼՂՏ հղման փաստաթուղթ
CAFE	Առավել մաքուր օդ Եվրոպայում (Մթնոլորտային օդի որակի մասին հրահանգ)
ՀԸԳՀ	Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագիր
CH4	Մեթան
ԴՊՓ	Դասակարգում, պիտակավորում եւ փաթեթավորում
ՓԿԳ	Փոխվարչապետի գրասենյակ
ԱՈԿ	Աղետների ռիսկի կառավարում
ԵՀ	Եվրոպական համայնք
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ELD	Շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման եւ վերականգնման մասով բնապահպանական պատասխանատվության մասին հրահանգ
EMAS	Շրջակա միջավայրի կառավարման եւ աուդիտի սխեմա
ԱԸՊ	Արտադրողի ընդլայնված պատասխանատվություն
ԱԱՏԵՆ/EPRT	Աղտոտիչների արտանետման եւ տեղափոխման Եվրոպական ռեգիստր
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՄՊ	Եվրոպական միության պատվիրակություն
F-գազեր	Ֆտորացված ջերմոցային գազեր
ԸՊԿ	Ընդհանուր պարտադիր կանոններ
ԿՈ	Կառավարության որոշում
ՋԳ	Ջերմոցային գազեր
ԳԼՀ	Գլոբալ ներդաշնակեցված համակարգ
ՀՔՖԱ-ներ	Հիդրոբլորֆտորածխածիններ
ՀՖԱ-ներ	Հիդրոֆտորածխածիններ
ՀՔՖԱ ՓԴՊ	ՀՔՖԱ-ների փուլային դուսրմղման պլան
ՀՄՀ	Հիդրավլիկ մշակման համակարգ
ՎԹ	Վտանգավոր թափոն
IED	Արդյունաբերական արտանետումների մասին հրահանգ
ԱԻԿՎ	Աղտոտման ինտեգրված կանխարգելում եւ վերահսկում
ՍԹԿ/MAC	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՄԱԿ	Միջին այրման կայաններ
ՄՎտ	Մեզավատ (ջերմային հզորություն)



ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ՍԹԿ/MPC	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՉՀՀ/MRV	Չափում, հաշվետվայնություն եւ հավաստագրում
N2O	Ազոտի օքսիդ
ԱԱՍ/NEC	Արտանետումների ազգային սահմանաչափ
NF3	Ազոտի տրիֆտորիդ
NH3	Ամոնիակ
ՈՄՏՕՄ	Ոչ մեթանային ցնդող օրգանական միացություններ
NOx	Ազոտի օքսիդներ
ՕՔՆ	Օզոնային շերտը քայքայող նյութեր
ՕՊՕ	Օդի պահանջվող օգտագործումը
ԲՀ/PE	Բնակչության համարժեք
ՊՖԱ	Պերֆտորածխածիններ
ՆՀՀ	Նախնական հիմնավորված համաձայնություն
ԿՄ/PM	Կախված մասնիկներ
ԿՕԱ/POP	Կայուն օրգանական աղտոտիչներ
ԱԱՏՈ/PRTR	Աղտոտիչների արտանետման եւ տեղափոխման ռեգիստր
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
REACH	Քիմիական նյութերի գրանցում, գնահատում, թույլտվություն եւ սահմանափակում
ՀՊՏ	Հատուկ պահպանվող տարածք
ՌԷԳ	Ռազմավարական Էկոլոգիական գնահատում
SF6	Ծծմբի հեքսաֆտորիդ
SO2	Ծծմբի երկօքսիդ
ՀՊՏ	Հատուկ պահպանվող տարածքներ
ԹԱՅԵՔՍ/TAIEX	Տեխնիկական աջակցության եւ տեղեկատվության փոխանակման գործիք
ՀԱ	Համապատասխանության աղյուսակ
ՄԱԿ ԵՏՀ	ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով
ՄԱԿ ԿՓԾԿ	ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիա
ՍՄՄՏԴ	Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին հրահանգ
ՑՕՄ	Ցնդող օրգանական միացություններ
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	9
1.1	ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՏԵՔՍՏԻ ՄԱՍԻՆ.....	9
1.2	ՉԵԿՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ	10
2.	ՀԸԳՀ-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄՈՏԱՐԿՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ	12
2.1	Ի՞ՆՉ Է ԻՐԱԿԱՆՈՒՄ ՆՇԱՆԱԿՈՒՄ «ԻՐԱՎԱԿԱՆ ՄՈՏԱՐԿՈՒՄ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	12
2.2	ԴԻՆԱՄԻԿ ՄՈՏԱՐԿՈՒՄ.....	13
2.3	ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՄՈՏԱՐԿՈՒՄ	13
2.4	ՍՈՒՅՆ ՉԵԿՈՒՅՑՈՒՄ ՏԵՂ ԳՏԱԾ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	14
3.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՄՈՏԱՐԿՄԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	15
3.1	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐ.....	15
3.1.1	«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՈՐՈՇԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՄԱՍՆԱԿՈՐ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի 2011/92/ԵՄ ՀՐԱՀԱՆԳ՝ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ	15
3.1.2	«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՈՐՈՇԱԿԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՒ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի 2001/42/ԵՅ ՀՐԱՀԱՆԳ.....	20
3.1.3	ԽՈՐՀՐԴԻ 90/313/ԵՏՀ ՀՐԱՀԱՆԳՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ԾԱՆԱՉՈՂ՝ «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏԿՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 28-Ի 2003/4/ԵՅ ՀՐԱՀԱՆԳ	22
3.1.4	«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇԱԿԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՒ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԱՍՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԻ 85/337/ԵՏՀ ԵՒ 96/61 /ԵՅ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի 2003/35/ԵՅ ՀՐԱՀԱՆԳ	25
3.1.5	«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑԿՈՂ ՎՆԱՍԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍՈՎ ԲՆԱՊԱՉՊԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի 2004/35/ԵՅ ՀՐԱՀԱՆԳ՝ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ.....	27
3.2	ՕՂԻ ՈՐԱԿԸ.....	30
3.2.1	«ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂԻ ՈՐԱԿԻ ԵՒ ԱՎԵԼԻ ՄԱՔՈՒՐ ՕՂԻ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի 2008/50/ԵՅ ՀՐԱՀԱՆԳ (ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ Ե ԾԱՆԱԶԿԵԼ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-ԻՑ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ 2024(2881) ՀՐԱՀԱՆԳՈՎ)	30
3.2.2	«ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂՈՒՄ ԱՐՍԵՆԻՈՒՄԻ, ԿԱՊՄԻՈՒՄԻ, ՍՆԴԻԿԻ, ՆԻԿԵԼԻ ԵՒ ԱՐՈՄԱՏԻԿ ԲԱԶՄԱՅԻԿԼԻԿ ԱԾԽԱՋՐԱԾԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի 2004/107/ԵՅ ՀՐԱՀԱՆԳ (ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ Ե ԾԱՆԱԶԿԵԼ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-ԻՑ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ 2024(2881) ՀՐԱՀԱՆԳՈՎ)	35
3.2.3	«ՈՐՈՇԱԿԻ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔՆԵՐՈՒՄ ԾԾՄԲԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» 93/12/ԵՏՀ ՀՐԱՀԱՆԳԸ ՓՈՓՈԽՈՂ՝ ԽՈՐՀՐԴԻ 1999 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի 1999/32/ԵՅ ՀՐԱՀԱՆԳ՝ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ (ԱՅԼԵՄ ՈՒԺԻ ՄԵՋ ՉԷ, ՆՈՐԸ՝ (ԵՄ) 2016/802 ՀՐԱՀԱՆԳ)	38
3.2.4	«ԲԵՆԶԻՆԻ ՊԱՀՄԱՆ ԵՒ ԲԵՌՆԱՓՈԽՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻՑ ԼՑԱԿԱՅԱՆՆԵՐ ԴՐԱ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՐՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՅՈՂ՝ ՑՆԴՈՂ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՑՕՄ) ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ	



ԿԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 1994 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի 94/63/ԵՅ ՀՐԱՅԱՆԳ՝ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ..... 40

3.2.5 1999/13/ԵՅ ՀՐԱՅԱՆԳԸ ՓՈՓՈԽՈՂ՝ «ՈՐՈՇԱԿԻ ՆԵՐԿԵՐՈՒՄ, ԼԱՔԵՐՈՒՄ ԵՒ ՓՈԽԱՂՈՒՄԻ ԶՈՑՆԵՐԻ ԵՐԵՍՄՇՇԱԿՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՒՄ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏԵԲԱՆՔՈՎ ՑՆԱՊՈՂ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՍԱՅՄԱՆՓԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի 2004/42/ԵՅ ՀՐԱՅԱՆԳ..... 41

3.3 ՋՐԻ ՈՐԱԿԸ ԵՒ ՋՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ 42

3.3.1 ՋՐԱՅԻՆ ԶԱՐԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ ՍԱՅՄԱՆՈՂ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի 2000/60/ԵՅ ՀՐԱՅԱՆԳ՝ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ 43

3.3.2 «ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԳԱՅՀԱՏՄԱՆ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի 2007/60/ԵՅ ՀՐԱՅԱՆԳ 48

3.3.3 «ԶԱՐԱՔԱՅԻՆ ԿԵՐԱՑՈՒՄԻ ՄԱՔՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԽՈՐՀՐԴԻ 1991 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի 91/271/ԵՏՀ ՀՐԱՅԱՆԳ՝ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ..... 51

3.3.4 «ՄԱՐԴՈՒ ԿՈՐՄԻՏ ՍՊՈՒՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍԱԿԸ ՋՐԻ ՈՐԱԿԻ ՄԱՍԻՆ» ԽՈՐՀՐԴԻ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի 98/83/ԵՅ ՀՐԱՅԱՆԳ՝ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ 55

3.3.5 «ԳՅՈՒՂԱՏՆԵՍՄԱԿԱՆ ԱՂՔՈՒՐՆԵՐԻՑ ԱՐՏԱՆԵՏԱԿՈՂ ՆԻՏՐԱՏՆԵՐԻ ՀԵՏԵԲԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑՈՂ ԱՂՏՈՏՄԱՆ ԴԵՄ ՋՐԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԽՈՐՀՐԴԻ 1991 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի 91/676/ԵՏՀ ՀՐԱՅԱՆԳ՝ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ..... 59

3.4 ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 63

3.4.1 ՈՐՈՇ ՀՐԱՅԱՆԳՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉՈՂ՝ «ԹԱՓՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի 2008/98/ԵՅ ՀՐԱՅԱՆԳ 64

3.4.2 «ԱՂԲԱԿԱՑՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ԽՈՐՀՐԴԻ 1999 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի 1999/31/ԵՅ ՀՐԱՅԱՆԳ՝ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ 68

3.4.3 2004/35/ԵՅ ՀՐԱՅԱՆԳԸ ՓՈՓՈԽՈՂ՝ «ԱՐԴՅՈՒՆԱՅԱՆՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳՈՅԱՑՈՂ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի 2006/21/ԵՅ ՀՐԱՅԱՆԳ՝ ՄՇԱԿԱԾ 2009/335/ԵՅ, 2009/337/ԵՅ, 2009/359/ԵՅ ԵՒ 2009/360/ԵՅ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ 75

3.5 ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 82

3.5.1 «ՎԱՅՐԻ ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի 2009/147/ԵՅ ՀՐԱՅԱՆԳ 82

3.5.2 «ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՑՐԵՐԻ ԵՒ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՈՒ ԲՈՒՄԱԿԱՆ ԱԾԽԱՐՀԻ ՎԱՅՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԽՈՐՀՐԴԻ 1992 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի 92/43/ԵՏՀ ՀՐԱՅԱՆԳ՝ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ..... 86

3.6 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՂՏՈՏՈՒՄ ԵՒ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐ 91

3.6.1 «ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» (ՆԵՐԱՌԱԿԱԾ ԱՂՏՈՏՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՒ ԿԵՐԱՅՍԿՈՂ) ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի 2010/75/ԵՄ ՀՐԱՅԱՆԳ..... 92

3.6.2 ԽՈՐՀՐԴԻ 96/82/ԵՅ ՀՐԱՅԱՆԳԸ ՓՈՓՈԽՈՂ ԵՒ ԱՅՆՈՒՅԵՏ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉՈՂ՝ «ՎՏԱՆԳԱԿՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՄ ՊԱՅՄԱՆԱԿՈՐԿԱԾ ԽՈՇՈՐ ԿԹԱՐՆԵՐԻ ՎՏԱՆԳՆԵՐԻ ԿԵՐԱՅՍԿՈՂ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՅՈՒՆԻՍԻ 4-Ի 2012/18/ԵՄ ՀՐԱՅԱՆԳ..... 98

3.7 ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ..... 100

3.7.1 «ՎՏԱՆԳԱԿՈՐ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՅԱՆՄԱՆ ԵՒ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՅՈՒՆԻՍԻ 4-Ի ԹԻՎ 649/2012 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)..... 101



3.7.2 67/548/ԵՏՀ եւ 1999/45/ԵՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՓՈԽՈՂ ԵՒ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ԾԱՆԱԶՈՂ ԵՒ ԹԻՎ 1907/2006
ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ (ԵՀ) ՓՈՓՈԽՈՂ՝ «ՆՅՈՒԹԵՐԻ ԵՒ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ, ՊԻՏԱԿԱԿՈՐՄԱՆ ԵՒ
ՓԱԹԵԹԱԿՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի
ԹԻՎ 1272/2008 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՀ)..... 106

**4. ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌՆՉԿՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ
ՄՈՏԱՐԿՄԱՆ ՁԵՆՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ԵՒ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 108**

4.2.1 ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 96/61/ԵՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՓՈԽՈՂ՝ «ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ
ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԽՈՐՀՐԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 2003/87/ԵՀ ՀԱՅԱՍՏԱՆ..... 109

4.2.2 «ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 2003/87/ԵՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՋԱՅՆ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ
ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԴԻՏԱՆՑՄԱՆ ԵՒ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԽԻՍԻ 21-Ի ԹԻՎ 601/2012 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ) (ԱՅԼԵԽ ՈՒԺԻ ՄԵՋ ՉԷ, ՆՈՐԸ՝ ԹԻՎ
2018/2066 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ) 111

4.2.3 ԹԻՎ 280/2004/ԵՀ ՈՐՈՇՈՒՄՆ ԵՒ ԿՈՐՑՐԱԾ ԾԱՆԱԶՈՂ՝ «ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԱԿՆԵՐՈՎ
ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌՆՉԿՈՂ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԴԻՏԱՆՑՄԱՆ ԵՒ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՒ ԱՅԼ ՏԵՐԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻՉՄԻ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ
21-Ի ԹԻՎ 525/2013 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ) 111

4.2.4 ԹԻՎ 842/2006 ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ (ԵՄ) ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ԾԱՆԱԶՈՂ՝ «ՖՏՈՐԱՑՎԱԾ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ
ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի ԹԻՎ 517/2014
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԱՅԼԵԽ ՈՒԺԻ ՄԵՋ ՉԷ, ՆՈՐԸ՝ ԹԻՎ 2024/573 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ) 113

4.2.5 «ՕՁՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԱՐԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ 2009
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 1005/2009 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՀ) (ԿՈՆՍՈԼԻԴԱՑՎԱԾ ՏԱՐՔԵՐԱԿԸ՝ 2017
ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ)..... 118

5. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՈՂ ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ..... 124

5.1 ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԱՄՓՈՓՈՒՄ)..... 124

5.1.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ
ՕՐԵՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 124

5.1.2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՒ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ
ՈԼՈՐՏՆԵՐ 125

5.1.3 ՕԴԻ ՈՐԱԿԸ..... 126

5.1.4 ՋՐԻ ՈՐԱԿԸ ԵՒ ՋՐԱՅԻՆ ՊԱՇՏԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ..... 127

5.1.5 ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 129

5.1.6 ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ..... 130

5.1.7 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՂՏՈՏՈՒՄ ԵՒ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՎՏԱՆՊՆԵՐ..... 131

5.1.8 ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ..... 131

5.1.9 ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌՆՉԿՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 132

5.2 ԱՌԱՋԱՐԿՈՂ ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ 133

5.2.1 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՒ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ
ՈԼՈՐՏՆԵՐ 134

5.2.2 ՕԴԻ ՈՐԱԿԸ..... 134

5.2.3 ՋՐԻ ՈՐԱԿ ԵՒ ՋՐԱՅԻՆ ՊԱՇՏԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ..... 134



5.2.4	Թափոնների ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	135
5.2.5	ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....	135
5.2.6	ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՂՏՈՏՈՒՄ ԵՒ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐ.....	135
5.2.7	ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ.....	136
5.2.8	ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	136
ՀԱՎԵԼՎԱԾ I. ՀԱՎԵԼՎԱԾ III ՀԸԳՀ ԳԼՈՒԽ 3-Ի (ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ).....		137
ՀԱՎԵԼՎԱԾ II. ՀԱՎԵԼՎԱԾ III ՀԸԳՀ ԳԼՈՒԽ 4-Ի (ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ).....		140



1. ՆԵՐԱԵՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթուղթը պատրաստվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Աջակցություն ՀԸԳՀ-ի մոնիտորինգին, իրականացմանը եւ հաղորդակցությանը» ծրագրի շրջանակներում:

Հիմնական շահառուներն են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի գրասենյակը, տարբեր ոլորտային նախարարություններ եւ պետական հաստատություններ:

Ծրագրի հիմնական նպատակներից մեկը Հայաստանում բարեփոխումների գործընթացին աջակցելն է՝ 2021 թվականի մարտի 1-ին ամբողջությամբ ուժի մեջ մտած ԵՄ-ՀՀ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) շրջանակներում ստանձնված պարտավորությունների բարելավված եւ հետեւողական իրականացման միջոցով: Նշված աջակցությունը մասնավորապես ենթադրում է խորհրդատվություն եւ օժանդակություն ՀՀ կառավարության կողմից քաղաքականության եւ ռազմավարության մշակման գործընթացների բարելավման հարցում:

Սույն փաստաթղթի նպատակն է ներկայացնել շրջակա միջավայրի եւ կլիմայի փոփոխությանն առնչվող գործողությունների ոլորտներում ներկա իրավիճակի, ինչպես նաեւ մոտարկման եւ շրջակա միջավայրի կառավարման առաջընթացի վերաբերյալ գնահատականը: Այն ներառում է լիարժեք մոտարկման հասնելուն ուղղված առաջարկություններ՝ հաշվի առնելով ոլորտին առնչվող ԵՄ թարմացված օրենսդրությունը:

1.1 ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՏԵՔՄԱՏԻ ՄԱՍԻՆ

ԵՄ-ՀՀ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ) ստորագրվել է 2017 թ. նոյեմբերին: Դրա հիմնական մասերի ժամանակավոր կիրառումն ուժի մեջ մտել 2018թ. հունիսին, եւ այն ամբողջությամբ ուժի մեջ է մտել 2021թ. մարտին: ՀԸԳՀ-ն ձեւավորում է շրջանակ, որի ներքո Հայաստանը եւ Եվրոպական միությունը համատեղ աշխատում են ժողովրդավարության, օրենքի գերակայության, մարդու իրավունքների, տնտեսական եւ կայուն զարգացման, շրջակա միջավայրի եւ երկկողմ համագործակցության այլ ոլորտների ամրապնդման ուղղությամբ: Ունենալով Հայաստանում կարգավորող միջավայրը բարելավելու եւ ԵՄ-ի եւ Հայաստանի միջեւ քաղաքացիների օգտին լավագույն փորձի փոխանակում ապահովելու ընդհանուր նպատակ՝ համաձայնագիրը ենթադրում է ինչպես կարելու ոլորտներում օրենսդրական մոտարկում, այնպես էլ քաղաքական հանձնառություններ:

Համաձայնագիրը նախատեսում է շրջակա միջավայրի եւ կլիմայի փոփոխությանն առնչվող գործողությունների ոլորտներում ԵՄ օրենսդրության հիմնական բաղադրիչների մոտարկում հիմնվելով 2019-2026 թվականների համար նախատեսված կոնկրետ ժամանակացույցի վրա: Շրջակա միջավայրի վերաբերյալ 3-րդ գլխի III հավելվածում թվարկված են ԵՄ օրենսդրության ընդհանուր առմամբ **24 օրենսդրական ակտեր**, որոնք վերաբերում են **շրջակա միջավայրի 7 ենթաոլորտների**, եւ որոնք ենթակա են մասնակի մոտարկման: Մոտարկման ենթակա ԵՄ հրահանգների եւ կանոնակարգերի բոլոր մանրամասները, ինչպես նաեւ կոնկրետ ժամանակացույցերը ներկայացված են ՀԸԳՀ-ի հավելվածներում:

Գլուխ 3-ի IV հավելվածում նույն մոտեցումն է ցուցաբերվում **կլիմայի փոփոխությանն առնչվող գործողությունների ոլորտում ԵՄ օրենսդրության մաս կազմող 6 օրենսդրական ակտերի նկատմամբ:**

Շրջակա միջավայրի եւ կլիմայի փոփոխությանն առնչվող գործողությունների ոլորտներում Հայաստանի արձանագրած մոտարկման առաջընթացը պատշաճ կերպով գնահատելու համար



անհրաժեշտ է վերլուծել **Հայաստանի ներկայիս օրենսդրության բազմաթիվ տարրեր**: Այն դեպքերում, երբ ենթադրվում է, որ օրենսդրությունը մոտ ապագայում կփոփոխվի, եւ արդեն առկա են պատրաստի **օրենսդրական նախագծեր**, դրանք նույնպես պետք է ուսումնասիրվեն:

Սակայն սույն զեկույցի հեղինակները ի սկզբանե բախվեցին հայաստանյան օրենսդրության շատ քիչ մասի՝ անգլերեն թարգմանված լինելու խնդրի հետ: Ներկա դրությամբ շրջակա միջավայրի վերաբերյալ որեւէ օրենսդրական ակտ **պաշտոնապես** թարգմանված չէ անգլերեն: Հեղինակները տեքստեր են ձեռք բերել տարբեր աղբյուրներից եւ թարգմանել են ավելի քան 40 փաստաթուղթ, որպեսզի հնարավոր լինի ապահովել ամբողջական եւ հետեւողական գնահատական:

Նաեւ անցկացվել են մի շարք **հանդիպումներ** ՀՀ կառավարության (տարբեր նախարարությունների) **հիմնական շահագրգիռ կողմերի հետ**՝ որոշակի ոլորտներում համապատասխան քաղաքականության եւ օրենքների վերաբերյալ ավելի պարզ պատկերացում կազմելու համար:

Բացի այդ, լիովին հաշվի են առնվել 2024 թվականի դեկտեմբերի «Շրջակա միջավայրի եւ կլիմայի» **մոնիտորինգի զեկույցի նախագծում (ՀՀԳՀ ճանապարհային քարտեզի իրականացման աղյուսակ)** ՀՀ կառավարության կողմից ամփոփված արդյունքները: Հարկ է նշել, սակայն, որ այս աղյուսակի նախագծում տեղ գտած արդյունքները երբեմն ճշգրիտ չէին եւ սույն զեկույցում հիմնավորում չեն գտել:

1.2 **ՉԵԿՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ**

Սույն զեկույցը ներկայացնում է շրջակա միջավայրի վերաբերյալ ՀՀԳՀ III հավելվածի յոթ ենթաոլորտներում եւ կլիմայի փոփոխությանն առնչվող գործողությունների վերաբերյալ ՀՀԳՀ IV հավելվածի վեց ենթաոլորտներում ԵՄ շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրության հետ մոտարկման ուղղությամբ մինչ օրս Հայաստանի արձանագրած ձեռքբերումների վերլուծությունը:

Չեկույցը կոչված է նպաստելու Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ «ՀՀ» կամ «Հայաստան») գործող եւ մշակվող շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրության մեջ առկա իրավական բացերի եւ կարիքների բացահայտմանը եւ այդպիսով օգնելու սահմանել շրջակա միջավայրի եւ կլիմայի փոփոխությանն առնչվող գործողությունների ոլորտներում օրենսդրական մոտարկման հետագա գործողությունների առաջնահերթությունները: Վերլուծությունը գնահատում է, թե շրջակա միջավայրի եւ կլիմայի փոփոխության ոլորտներում ինչ համապատասխան իրավական մոտարկման միջոցառումներ եւ քայլեր են իրականացվել կամ նախաձեռնվել, ինչպես նաեւ՝ որոնք են դեռեւս գոյություն ունեցող հիմնական բացերը:

Այն դեպքերում, երբ լիովին հստակ չէ, թե ինչ չափով է հաջողել մոտարկումը, այդ մասին կնշվի: Չեկույցի ընդհանուր նպատակն է ներկայացնել հստակ պատկեր առ այն, թե ինչ ձեռքբերումներ, կարիքներ, մարտահրավերներ եւ խոչընդոտներ կան շրջակա միջավայրի ոլորտում մոտարկման գործընթացի շրջանակում: Հեղինակները եզրափակիչ եզրակացություն են ներկայացնում ՀՀԳՀ-ի հավելվածներում ներառված յուրաքանչյուր կետի (այսինքն՝ հոդվածի) համար:

Սույն զեկույցում տեղ գտած մոտարկման գնահատումը խիստ մանրամասն է, որպեսզի յուրաքանչյուր ենթաոլորտի իրավասու օրենսդիրը հստակ պատկերացում կազմի, թե ինչի է պետք հասնել իրավական մոտարկման միջոցով եւ ինչի է այն արդեն հասել Հայաստանում: Ծրագրի գործընկերները, ինչպիսիք են՝ ՓԿԳ-ն, ԵՄԴ-ն եւ ոլորտային նախարարությունները, որոնք թեմատիկ մանրամասների մեջ խորամուխ եղած չեն, կարող են կենտրոնանալ մոտարկվող ԵՄ օրենսդրության յուրաքանչյուր ակտի (իմա՝ ենթազխի) վերջում ներկայացված դիտողությունների, առաջարկությունների եւ եզրակացությունների վրա:



Հեղինակների կողմից յուրաքանչյուր իրավական ակտի համար մոտարկման եզրակացությունը տրվում է հետեւյալ ձեւակերպումներով՝ «մոտարկված», «հիմնականում մոտարկված», «մասնակիորեն մոտարկված», «որոշակիորեն մոտարկված» կամ «չմոտարկված»: Այն դեպքերում, երբ մոտարկման մակարդակը հստակ չէ, օգտագործվում է «մոտարկման մակարդակը հստակ չէ» ձեւակերպումը, իսկ լիարժեք վստահության բացակայության դեպքում՝ «ենթադրվում է մոտարկման առկայություն/բացակայություն»:

Չեկույցի եզրափակիչ՝ 5-րդ գլխում հեղինակները ներկայացնում են ամփոփ եզրակացություններ՝ ըստ շրջակա միջավայրի (եւ կլիմայի) ոլորտների, ինչպես նաեւ մոտարկման վերաբերյալ մի շարք առաջարկություններ եւ հետագա քայլերի առաջարկներ՝ ուղղված հայաստանյան քաղաքականություն իրականացնող եւ օրենսդիր մարմիններին: Նշված գլխում ներառված են նաեւ իրավական ակտերի մշակման եւ օրենքների ստեղծման գործընթացի վերաբերյալ ընդհանուր առաջարկություններ՝ ՀՀ օրենսդրության բարձր որակը ապահովելու նպատակով:

Չեկույցը սկսվում է ՀՀԳՀ-ի շրջանակներում մոտարկման պահանջների համառոտ ակնարկով (գլուխ 2): Հիմնական մասը (գլուխներ 3 եւ 4) կենտրոնանում է III եւ IV հավելվածներում թվարկված 30 հրահանգների եւ կանոնակարգերի եւ դրանց մոտարկման մակարդակի վրա:

Հեղինակներն անտեսել են ՀՀԳՀ-ի երկու հավելվածներում մատնանշված ժամանակացույցերը, քանի որ դրանք գրեթե բոլորն արդեն անցել են ՀՀԳՀ-ի ուժի մեջ մտնելուց ի վեր:

Սույն զեկույցին կից ներկայացված են ԵՄ-ում ներկա դրությամբ (2025թ. մայիսի 30) ընդունված շրջակա միջավայրի եւ կլիմայի ոլորտներին առնչվող բոլոր համապատասխան հրահանգների եւ կանոնակարգերի ցանկերը: Հատկանշական է, որ հատկապես կլիմայի ոլորտում ՀՀԳՀ-ում թվարկված կանոնակարգերի մեծ մասը չեղարկվել են: Շրջակա միջավայրին եւ կլիմային վերաբերող ենթագլուխներից յուրաքանչյուրում նշված են այլ հրահանգներ եւ կանոնակարգեր (եւ որոշումներ), որոնք կարող են դիտարկվել ՀՀԳՀ հավելվածի ապագա վերանայումների համար՝ ՀՀ-ԵՄ գործընկերության խորհրդի միջոցով:



2. ՀՀԳՀ-ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄՈՏԱՐԿՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ՀՀԳՀ-ն պահանջում է, որ Հայաստանի Հանրապետությունը «աստիճանաբար մոտարկի իր օրենսդրությունը ԵՄ օրենսդրությանը», ինչպես համաձայնեցված է համաձայնագրով: **Նման մոտարկումը չի նշանակում, որ Հայաստանը պետք է ամբողջությամբ վերարտադրի համաձայնեցված դրույթները, ինչպես պահանջվում է ԵՄ անդամ պետությունների դեպքում:** Ներպետական օրենսդրության համապատասխանեցումը ԵՄ դրույթներին կհամարվի բավարար ՀՀԳՀ-ով սահմանված պարտավորությունները կատարելու համար:

ՀՀԳՀ-ի II եւ IV հավելվածներում ներառված յուրաքանչյուր հրահանգ սկսվում է «ներպետական օրենսդրության ընդունման եւ իրավասու մարմնի/մարմինների նշանակման» պահանջով: Այնուհետեւ հստակեցվում է ՀՀԳՀ-ի հավելվածների մաս կազմած յուրաքանչյուր ընտրված դրույթի առնչությամբ ընդունման ենթակա օրենսդրությունը:

«Օրենսդրության ընդունում» ասելով հասկացվում է, որ համապատասխան թեմայի վերաբերյալ ընդունվել են առնվազն մի քանի հիմնարար իրավական ակտեր, որոնք հիմնված են ԵՄ օրենսդրական հայեցակարգերի վրա: Սա, առաջին հերթին, ենթադրում է, որ Հայաստանում օգտագործվում է նույն տերմինաբանությունը (սահմանումները), ինչ ԵՄ-ում մոտարկման իրավական հիմքի համար ընդհանուր ըմբռնում ունենալու համար:

2.1 ԻՆՉ Ե ԻՐԱՎԱՆՈՒՄ ՆՃԱՆԱԿՈՒՄ «ԻՐԱՎԱԿԱՆ ՄՈՏԱՐԿՈՒՄ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Մոտարկումը լավագույնս կարելի է նկարագրել որպես «ՀՀ օրենսդրության համատեղելիության ապահովում ԵՄ օրենսդրության հետ» այն ոլորտներում, որոնք նշված են ՀՀԳՀ-ում եւ թվարկված են ՀՀԳՀ-ի հավելվածներում: «Մոտարկում» տերմինի այլընտրանքային մեկնաբանություններ են՝ «ՀՀ օրենսդրության **համապատասխանեցումը** ԵՄ օրենսդրության հետ» կամ «ՀՀ օրենսդրության **պատշաճեցումը** ԵՄ օրենսդրության հետ»:

Ընդհանուր առմամբ, «մոտարկում»-ն ավելին է, քան ԵՄ օրենսդրության վերարտադրությունը (տրանսպոզիցիան), ինչպես դա պարտավոր են անել ԵՄ անդամ պետությունները: ԵՄ-ում տրանսպոզիցիան պահանջում է, որ նրա անդամ պետությունները իրենց ներպետական օրենսդրությունը **լիովին համապատասխանեցնեն** ԵՄ օրենսդրությանը (հրահանգներին): Ինչ վերաբերում է Հայաստանին, հաշվի առնելով մոտարկման գործողությունների կարելորագույն նշանակությունը ԵՄ-ի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների ամրապնդման եւ Հայաստանում բարեփոխումների օրակարգի առաջխաղացման գործում հայ օրենսդիրը պետք է ձգտի հասնել ներպետական եւ ԵՄ օրենսդրության համատեղելիության ամենաբարձր մակարդակին:

Տեխնիկապես ասած՝ «իրավական մոտարկումը» նշանակում է ոչ միայն «օրենսդրության պլանավորում եւ պատրաստում» եւ հետագայում «նոր կամ փոփոխված ՀՀ օրենսդրության ընդունում», այլեւ դրա «**կիրարկում**» (implementation) եւ «**իրականացում**» (enforcement) (ՀՀԳՀ Հոդված 372, կետ 2):

Կիրարկումը նշանակում է «օրենսդրության գործնական կիրառում», իսկ իրականացումը՝ «օրենսդրական ակտի պահպանման ապահովում»՝ կիրարկման համար պատասխանատու մարմինների/պետական ծառայողների կողմից ձեռնարկված համապատասխան միջոցառումների միջոցով: ԵՄ-ում օրենսդրության կիրարկումը եւ իրականացումը գտնվում են անդամ պետությունների իրավասության ներքո: Իրականացման ստանդարտ միջոցառումները ներառում են, օրինակ, իրավասու մարմինների կողմից անհատական որոշումների (վարչական



ակտերի) կայացումը, ինչպիսիք են լիցենզիաների, թույլտվությունների կամ այլ լիազորությունների տրամադրումը, ինչպես նաեւ նախագծի կամ ծրագրի իրականացումը:

Լայն իմաստով՝ կիրարկումը կարող է սահմանվել որպես «իրավասու մարմինների բոլոր մոտեցումները՝ խրախուսելու կամ ստիպելու այլոց պահպանել գործող օրենսդրությունը» (օրինակ՝ դիտանցում, պարբերական ստուգումներ, նախագուշացումներ, վարչական տույժեր, քրեական պատժամիջոցներ, թույլտվությունների հետկանչ եւ այլն):

Սա նշանակում է, որ օրենսդրության մշակմանը զուգահեռ պետք է ձեռնարկվեն **բոլոր անհրաժեշտ քայլերը**՝ ապահովելու համար, որ Հայաստանում առկա լինեն բավարար վարչական եւ ինստիտուցիոնալ կարողություններ, որպեսզի իրավասու մարմիններն իրենց ամենօրյա պրակտիկայում կարողանան կյանքի կոչել բոլոր նոր օրենքների կիրարկումը եւ իրականացումը: Սա նաեւ ներառում է իրագրելվածության բարձրացման միջոցառումներ եւ ցանկացած նոր օրենքի կիրարկման համար պատասխանատու անձնակազմի վերապատրաստում:

2.2 ԴԻՆԱՄԻԿ ՄՈՏԱՐԿՈՒՄ

ԵՄ օրենսդրությունը (EU Acquis) օրենսդրական ակտերի ստատիկ հավաքածու չէ. հրահանգներն ու կանոնակարգերը անընդհատ փոփոխվում կամ չեղարկվում են՝ նոր տեխնիկական զարգացումներին, իրավական կարիքներին եւ դրանց կիրառման ընթացքում ձեռք բերված փորձին համապատասխան: Այլ կերպ ասած՝ **ԵՄ օրենսդրությունն ունի դինամիկ բնույթ եւ պահանջում է անընդհատ թարմացում**, ինչպեսեւ համապատասխան ներպետական օրենսդրությունը:

Որպես արդյունք՝ ՀՀԳՀ-ի Հոդված 371-ը պահանջում է, որ Հայաստանի եւ ԵՄ-ի կողմից ստեղծված Գործընկերության խորհուրդը պարբերաբար դիտարկի եւ թարմացնի ՀՀԳՀ-ի հավելվածները՝ արտացոլելու ԵՄ օրենսդրության մեջ տեղ գտած զարգացումները («դինամիկ մոտարկում»):

Որեւէ հրահանգի կամ կանոնակարգի՝ ամբողջությամբ չեղյալ հայտարարվելու դեպքում իրավական առումով իմաստ չի ունենում ՀՀ օրենսդրությունը մոտարկել այնպիսի իրավական ակտի, որն այլեւս ուժի մեջ չէ ԵՄ-ում, եւ օրենսդիրը պետք է հղում կատարի նոր օրենսդրությանը, նույնիսկ նախքան Գործընկերության խորհրդի կողմից ՀՀԳՀ հավելվածում կատարվելիք թարմացումները: Այն դեպքում, երբ նոր օրենսդրության ուժի մեջ մտնելը նախատեսվում մի քանի տարի անց (օրինակ՝ «Քաղաքային կեղտաջրերի մասին» նոր հրահանգը), որպես հղում կարող է օգտագործվել գործող օրենսդրությունը:

Որպես կանոն՝ խորհուրդ է տրվում ուշադրություն դարձնել ԵՄ իրավական ակտի վերջին տարբերակին՝ ՀՀ օրենսդրությունը ԵՄ գործող օրենսդրությանը հնարավորինս ճշգրիտ մոտարկելու համար: Հետեւաբար, խորհուրդ է տրվում նախեսառաջ ստուգել, թե արդյոք կա՞ հրահանգի/կանոնակարգի նոր «կոնսոլիդացված» տարբերակ, որը հասանելի է <https://eur-lex.europa.eu/homepage.html> կայքում:

2.3 ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՄՈՏԱՐԿՈՒՄ

Համաձայն ՀՀԳՀ Հոդված 370-ի՝ Հայաստանը պետք է իրականացնի իր օրենսդրության աստիճանական մոտարկում ԵՄ օրենսդրությանը՝ ինչպես նշված է Հավելվածներում՝ հիմք ընդունելով սույն Համաձայնագրով նախատեսված հանձնառությունները, եւ այդ Հավելվածների դրույթների համաձայն՝ հաշվի առնելով, որ ամբողջական մոտարկումը երկարատեւ, քայլ առ քայլ գործընթաց է:



Աստիճանական մոտարկումը պետք է կախված լինի իրահանգի/կանոնակարգի տիրույթում գտնվող թեմայի բարդությունից եւ տվյալ ոլորտում համապատասխան իրավական իրավիճակից:

Եթե շրջակա միջավայրի ոլորտում գործում է «բարենպաստ» օրենսդրություն, որն արդեն իսկ անդրադառնում է տվյալ իրահանգի ասպեկտների մեծ մասին, ապա այդ օրենսդրությունը պետք է պահպանվի եւ անհրաժեշտության դեպքում պարզապես փոփոխվի:

Սակայն այն դեպքերում, երբ շրջակա միջավայրի մասին ՀՀ օրենսդրությունը պետք է նորովի մշակվի կամ էապես վերանայվի, որպեսզի նոր օրենսդրական ակտեր ընդունվեն (եւ գործող իրավական ակտերը չեղյալ հայտարարվեն), «հովանոցային մոտեցումը» թվում է մոտարկման ամենահարմար մեթոդը, ինչը նշանակում է, որ «շրջանակային օրենքը» կարգավորում է շահագրգիռ կողմերին առնչվող հիմնական ասպեկտները (եւ տերմինաբանությունը) եւ հիմնական իրավունքներն ու պարտականությունները: Համապատասխան իրավասու մարմինն տրվում են իրավական լիազորություններ՝ ժամանակին ընդունելու երկրորդային իրավական փաստաթղթեր: Սա հնարավորություն է տալիս իրականացնել «աստիճանական» մոտարկման գործընթաց, որն ինքնին համապատասխանում է ՀԸԳՀ պահանջներին: Այս մոտեցումը հայ օրենսդիրների կողմից լայնորեն կիրառվում է նաեւ շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտների մեծ մասում, որտեղ հիմնական օրենքները անդրադառնում են հիմնահարցին, իսկ մանրամասները կարգավորվում են հետագա ԿՈ-ներով:

ԵՄ իրահանգներում/կանոնակարգերում օգտագործվող հասկացությունների վրա հիմնված նման «հիմնական» օրենքի առկայությունն ընդհանուր առմամբ համարվում է լիաժեռ մոտարկման ուղղությամբ դրական առաջին քայլ եւ, հետեւաբար, առնվազն գնահատվում է որպես «որոշակիորեն / մասնակիորեն մոտարկված»:

2.4 ՍՈՒՅՆ ՉԵԿՈՒՅՑՈՒՄ ՏԵՂ ԳՏԱԾ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Սակայն, սույն գնահատման զեկույցի դեպքում կգնահատվի միայն օրենսդրության մշակման ու ընդունման գործընթացը, եւ բացառապես մի քանի դեպքերում անդրադարձ կկատարվի նաեւ կիրարկման ընթացքում ի հայտ եկած թերություններին: Այնուամենայնիվ, հասկանալի է, որ մի շարք ոլորտներում, չնայած ՀՀ օրենսդրության ձեւականորեն հաջողված մոտարկմանը, առօրյա պրակտիկայում առկա է պատշաճ կիրարկման եւ իրականացման պակաս: Դրա հիմնական պատճառներն են կիրարկման իրավասությունների հետ կապված անորոշությունները (որոնք մասամբ պայմանավորված են օրենսդրության անորոշ ձեւակերպումներով, ինչպես նշվում է սույն զեկույցում), ինչպես նաեւ մարդկային, ֆինանսական կամ վարչական ռեսուրսների պակասը:

Հետեւաբար, կարելու է, որ ՀՀ օրենսդրությունը մշակվի ոչ միայն խիշտ ճշգրիտ, հստակ եւ թափանցիկ (իրավունքի գերակայության միջազգային չափանիշներին համապատասխան), այլեւ այնպես, որ այն իրատեսորեն կիրարկվի եւ իրականացվի: Սույն զեկույցում դիտարկվող որոշ ոլորտներում կմատնանշվեն իրականացման հնարավոր խոչընդոտները:

Հեղինակները կցանկանային ընդգծել, որ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող մեկ այլ նախագծի շրջանակներում 2020 թվականին մշակվել եւ ՀՀ արդարադատության նախարարությանն (ԱՆ) ու ԵՄԴ-ին տրամադրվել է իրավական մոտարկման վերաբերյալ ձեռնարկ՝ հայերեն եւ անգլերեն լեզուներով: Ձեռնարկը պարունակում է ուղեցույցներ եւ բազմաթիվ օրինակներ «դրական օրենսդրական մոտարկման» վերաբերյալ, ինչպես նաեւ մոտարկման գործիքների՝ օրինակ՝ կարգավորման ազդեցության գնահատման, համապատասխանության աղյուսակների եւ բացատրական նշումների կիրառման վերաբերյալ:



3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՄՈՏԱՐԿՄԱՆ ՁԵՌՔԵՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԲԱՅԹՈՂՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀԳՀ III գլխի III հավելվածը բաղկացած է 7 ենթագլուխներից, մասնավորապես՝

- Շրջակա միջավայրի կառավարում եւ շրջակա միջավայրի ինտեգրում բաղաբաղականության այլ ոլորտներ
- Օդի որակ
- Ջրի որակ եւ ջրային պաշարների կառավարում
- Թափոնների կառավարում
- Բնության պաշտպանություն
- Արդյունաբերական աղտոտում եւ արդյունաբերական վտանգներ
- Քիմիական նյութերի կառավարում

ՀՀԳՀ III հավելվածում ներառվել են յուրաքանչյուր ոլորտին առնչվող քաղվածքներ ԵՄ հիմնական հրահանգներից եւ կանոնակարգերից: Ստորել նշված են նաեւ այն իրավական փաստաթղթերը, որոնք (դեռեւս) չեն ներառվել՝ հաշվի առնելով, որ ՀՀԳՀ-ն ապագայում կփոփոխվի՝ հավանաբար ներառելով ԵՄ լրացուցիչ իրավական ակտեր:

3.1 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՈԼՈՐՏԵՐ

Շրջակա միջավայրի կառավարման ոլորտում ՀՀԳՀ-ն ընդգրկել է հինգ հրահանգների հիմնական բաղադրիչները:

Սակայն, երկու գործիք (դեռեւս) ՀՀԳՀ-ի մաս չեն կազմում, մասնավորապես՝

- Շրջակա միջավայրի կառավարման համակարգի մասին կանոնակարգը (EMAS, Կանոնակարգ (ԵՅ) № 1221/2009), որը շրջակա միջավայրի ոլորտում գործող մասնավոր ձեռնարկությունների համար նախատեսված կամավոր գործիք է, եւ
- «Քրեական իրավունքի միջոցով շրջակա միջավայրի պաշտպանության մասին» հրահանգը (2024/1203), որն ընդունվել է Նախորդ տարի ու ենթարկվել էական վերանայման:

Ակնկալվում է, որ մասնավորապես վերջին հրահանգը մեծ կարեւորություն կստանա ԵՄ շրջակա միջավայրի իրավունքի շրջանակում, եւ այն պետք է հաշվի առնվի Հայաստանի բաղաբաղականություն մշակողների եւ օրենսդիրների կողմից՝ ապագայում ՀՀԳՀ-ի մաս դառնալու հնարավորության տեսանկյունից:

3.1.1 «Շրջակա միջավայրի վրա որոշակի պետական եւ մասնավոր ծրագրերի ազդեցության մասին» Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 13-ի 2011/92/ԵՄ հրահանգ՝ փոփոխություններով

2011/92/ԵՄ հրահանգը Եականորեն փոփոխվել է 2014/52/ԵՄ հրահանգով: Հայաստանի կողմից իրավական մոտարկման ուղղությամբ ձեռնարկվող ջանքերը պետք է հաշվի առնեն 2014 թվականին կատարված այդ փոփոխությունը:

Բացի այդ, Հայաստանը 1997 թվականին վավերացրել է Անդրսահմանային համատեքստում ՇՄԱԳ-ի մասին Եսպոյի կոնվենցիան եւ պարտավոր է այդ կոնվենցիայով սահմանված համապատասխան պահանջները տեղափոխի ազգային օրենսդրություն (տե՛ս ստորել):

- **Ներպետական օրենսդրության ընդունում**



2023 թվականին Հայաստանում ընդունվել է 2014 թ. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» օրենքում (այսուհետ՝ ՇՄԱԳ օրենք) փոփոխություն կատարելու մասին օրենքը: Փոփոխված օրենքն ուժի մեջ է մտել 2023 թ. հունիսի 9-ին: Հատկանշական է, որ նոր օրենքի մշակման եւ շրջանառման գործընթացն իրականացվել է շահագրգիռ կողմերի լայն շրջանակի մասնակցությամբ, ներառյալ քաղաքացիական հասարակությունը, պետական կառավարման մարմինները, գործարար համայնքը եւ մասնավոր հատվածը, ինչպես նաեւ ուղեկցվել է բազմաթիվ հանրային քննարկումներով:

Բացի այդ, Հայաստանն ընդունել է ՇՄԱԳ-ի վերաբերյալ չորս ենթաօրենսդրական ակտեր՝

- ՀՀ կառավարության 2014 թ. նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշումը՝ «Հանրության իրազեկման եւ հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների եւ առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը եւ ժամկետները սահմանելու մասին»:
- ՀՀ կառավարության 2023 թ. դեկտեմբերի 28-ի թիվ 2343-Ն որոշումը՝ «2014 թ. նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»:
- ՀՀ կառավարության 2024 թ. հունվարի 11-ի թիվ 43-Ն որոշումը՝ «Նախատեսվող գործունեության տեսակների վերակառուցման կամ ընդլայնման կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինման կամ վերապրոֆիլավորման կամ կոնսերվացման կամ տեղափոխման կամ դադարեցման կամ փակման կամ քանդման կամ նախագծային փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության անհրաժեշտությունը որոշելու կարգը հաստատելու մասին»:
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2022 թ. հոկտեմբերի 25-ի թիվ 369-Ն հրամանը՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները հաստատելու մասին»:

Վերոնշյալ օրենսդրությունն արդյունավետ կերպով անդրադառնում է ՇՄԱԳ համակարգի համապատասխան ասպեկտներին: Միայն ԵՄ-ում ՇՄԱԳ-ի գծով որոշումների կայացման կարելու բաղադրիչ հանդիսացող նախնական գնահատման (սկրինինգի) գործընթացն է, որ ՀՀ օրենսդրությամբ չի կարգավորվում:

Մոտարկված է

- **Իրավասու մարմնի/մարմինների սահմանում**

ՇՄԱԳ օրենքի 2023 թվականի նոր խմբագրման համաձայն՝ ՇՄԱԳ-ին առնչվող մի շարք որոշումների կայացման համար պատասխանատու են «լիազոր մարմինները»: Դրանց շարքում ընդգրկված են «լիազոր պետական մարմինները», «տարածքային կառավարման մարմինները» եւ «տեղական ինքնակառավարման մարմինները»: Կառավարության (նախարարների կաբինետի) իրավասությունները ներկայացված են Օրենքի Հոդված 8-ում: «Լիազոր մարմնի» (իմա՝ Շրջակա միջավայրի նախարարության) իրավասությունները ներկայացված են Հոդված 9-ում:

Տարածքային կառավարման մարմինների իրավասությունները կարգավորվում են ՇՄԱԳ օրենքի Հոդված 10-ով, իսկ տեղական ինքնակառավարման մարմիններինը՝ Հոդված 11-ով:

Մոտարկված է

- **Պահանջների սահմանում, ըստ որոնց սույն հրահանգի I հավելվածի ծրագրերը ենթակա կլինեն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, եւ**



**ընթացակարգի սահմանում, որով կորոշվի, թե սույն հրահանգի II հավելվածի որ
ծրագրերի համար կպահանջվի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
(4-րդ հոդված)**

ՇՄԱԳ հրահանգի Հավելված I-ում եւ Հավելված II-ում ընդգրկված գործունեության տեսակները
լայնորեն ներառվել են ՇՄԱԳ օրենքի 12-րդ հոդվածում, որը դրանք դասակարգում է երկու
կատեգորիայի՝ Ա (համապատասխանում է Հավելված I-ին) եւ Բ (համապատասխանում է
Հավելված II-ին): Անշուշտ, Հավելվածներ I-ում եւ II-ում թվարկված ցուցակները ոչ թե պարզապես
պատճենվել են, այլ հարմարեցվել են Հայաստանի կարիքներին:

Ուշագրավ է, որ Ա կատեգորիայի (պարտադիր ՇՄԱԳ) գործունեության տեսակների համար
սահմանված շեմերը հաճախ շատ ավելի խիստ են, քան ՇՄԱԳ հրահանգով նախատեսվածները:
Սա վերաբերում է, մասնավորապես, ջերմաէլեկտրակայաններին (50 ՄՎտ ջերմային հզորություն՝
300 ՄՎտ-ի փոխարեն), երկաթուղային գծերին (500 մ երկարություն՝ 2100 մ-ի փոխարեն),
ստորերկրյա ջրերի արդյունահանմանը (տարեկան 5 միլիոն խորանարդ մետրի արդյունահանում
10 միլիոնի փոխարեն):

Բ կատեգորիայի գործունեության տեսակների մասով եւս շեմային ցուցանիշները հաճախ ավելի
ցածր են, քան ՇՄԱԳ հրահանգով սահմանվածները: Օրինակ՝ կենցաղային կեղտաջրերի մաքրման
կայանների (50 հազար բնակչի համարժեք հզորություն՝ 150 հազարի փոխարեն),
խողովակաշարերի (300 մ տրամագիծ եւ 1 կմ երկարություն՝ 800 մ տրամագծի եւ 40 կմ
երկարության փոխարեն), թռչնաբուժական տնտեսությունների (20 հազար առանձնյակ՝ 60
հազարի փոխարեն), եւ խոզաբուժական տնտեսությունների դեպքում (1000 գլուխ՝ 3000-ի
փոխարեն):

Ուշագրավ է, որ ոչ վտանգավոր թափոնների աղբավայրի կառուցումը Հայաստանում դասվում է Ա
կատեգորիայի գործունեության տեսակների շարքին եւ պետք է ենթարկվի ՇՄԱԳ-ի, մինչդեռ ՇՄԱԳ
հրահանգում այն ներառված է Հավելված II-ում: Նույնը վերաբերում է բոլոր (!) ճանապարհների
կառուցմանը, որոնք նույնպես ընդգրկված են ՇՄԱԳ հրահանգի Հավելված II-ում: Մնում է տեսնել,
թե որքանով դա կիրառելի գործնականում հաշվի առնելով կառուցվող ճանապարհների մեծ
քանակը:

Ինչ վերաբերում է Ա եւ Բ կատեգորիայի գործունեության տեսակների տարբերակմանը, ապա
ՇՄԱԳ օրենքում եւ դրա ենթաօրենսդրական ակտերում այդպիսի տարբերակումը հստակ
արտահայտված չէ: Երկու կատեգորիաների գործունեության տեսակների համար էլ, կարծես,
պահանջվում է պարտադիր ՇՄԱԳ՝ անկախ հանգամանքներից, եւ չկա նախնական գնահատման
գործընթաց, ինչպես սահմանված է ԵՄ օրենսդրությամբ: ՀՀ կառավարության 2024 թ. հունվարի
11-ի թիվ 43-Ն որոշմամբ սահմանված «ՇՄԱԳ-ի անհրաժեշտության վերաբերյալ» ընթացակարգը
որոշակի անհատական նախնական գնահատում է նախատեսում **միայն գործունեության
տեսակների փոփոխությունների դեպքում**, սակայն ընդհանրապես չի տարբերակում Ա եւ Բ
կատեգորիաների գործունեության տեսակները՝ նույնիսկ հստակ չհիշատակելով այդ երկու
կատեգորիաները: Սա նշանակում է, որ ՀՀ կառավարության 2024 թ. հունվարի 11-ի թիվ 43-Ն
որոշումը չի կարգավորում նախնական գնահատման գործընթացը այնպես, ինչպես
նախատեսված է ՇՄԱԳ հրահանգի Հոդված 4-ով:

Հետեւաբար, լիարժեք հասկանալի չէ, թե ինչու է ընդհանրապես կատարվում Ա եւ Բ
կատեգորիաների գործունեության տեսակների տարբերակումը, եթե երկու դեպքում էլ
պահանջվում է պարտադիր ՇՄԱԳ: Ա եւ Բ կատեգորիաների գործունեության տեսակների համար
առկա են միայն որոշ երկրորդական ընթացակարգային տարբերություններ:



Չնայած ՇՄԱԳ հրահանգի Հոդված 4-ով սահմանված նախնական գնահատման ընթացակարգի բացակայությանը՝ դրա գոյությունը իրավական առումով պարտադիր պահանջ չէ, եթե հրահանգի Հավելված II-ում ներառված գործունեության զգալի մասը փաստացի ենթարկվում է ՇՄԱԳ-ի, ինչը պաշտոնապես արձանագրված է ՀՀ օրենսդրության մեջ:

Մոտարկված է

- **Կառուցապատողի կողմից տրամադրվելիք տեղեկատվության շրջանակի սահմանում (5-րդ հոդված)**

ՇՄԱԳ հրահանգի Հոդված 5-ով սահմանված՝ ՇՄԱԳ հաշվետվությունում մշակողի կողմից ներկայացվելիք տեղեկատվության ծավալը լավագույնս ինկորպորացված է ՇՄԱԳ օրենքի Հոդված 15-ում: Սույն հոդվածն ավելի մեղմ պահանջներ է սահմանում Բ կատեգորիայի գործունեության տեսակների դեպքում հաշվետվությունների համար, սակայն լիովին համահունչ է ՇՄԱԳ հրահանգին: Հանքարդյունաբերական գործունեության դեպքում ՇՄ նախարարի 2022 թ. հոկտեմբերի 25-ի թիվ 369-Ն հրամանը նախատեսում է ՇՄԱԳ հաշվետվության բովանդակության եւ գնահատման ընթացակարգի ավելի մանրամասն կանոնակարգում:

Մոտարկված է

- **Շրջակա միջավայրի հարցերով զբաղվող իշխանության մարմինների հետ խորհրդակցության ընթացակարգի եւ հանրային խորհրդակցության ընթացակարգի սահմանում (6-րդ հոդված)**

ՇՄԱԳ օրենքի Հոդված 16-ով սահմանված է համապատասխան ընթացակարգ, որի մանրամասները կանոնակարգվում են «ՀՀ կառավարության 2014 թ. նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2023 թ. դեկտեմբերի 28-ի թիվ 2343-Ն որոշմամբ: Փոփոխված 1325-Ն որոշմամբ սահմանվում է երկու հանրային լսման անցկացում, ընդ որում՝ եւ՛ Ա, եւ՛ Բ կատեգորիայի գործունեության տեսակների համար, ինչը համարվում է բավականին հավակնոտ մոտեցում, եւ հարց է, թե արդյոք այն արդյունավետ կգործի գործնականում: Այնուամենայնիվ, զուտ իրավական տեսանկյունից ընթացակարգային մանրամասները ՇՄԱԳ օրենքում եւ փոփոխված 1325-Ն որոշման մեջ շատ հստակ եւ ճշգրիտ են կարգավորված:

Մոտարկված է

- **Տեղեկատվության փոխանակման եւ խորհրդակցության վերաբերյալ միջոցառումների սահմանում ԵՄ այն անդամ պետությունների հետ, որոնց շրջակա միջավայրը հավանաբար զգալի ազդեցություն կկրի ծրագրից (7-րդ հոդված)**

ՇՄԱԳ հրահանգի Հոդված 7-ը վերաբերում է անդրսահմանային ՇՄԱԳ-ին: Այստեղ հարկ է ձեւակերպումը հասկանալ այնպես, որ այն կիրառելի է Հայաստանի համար, որը սահմանակից չէ որեւէ ԵՄ անդամ պետության: Հետեւաբար՝ պետք է հենվել Անդրսահմանային համատեքստում ՇՄԱԳ-ի մասին Եսպոյի կոնվենցիային, որը Հայաստանը վավերացրել է 1997 թ.-ին:

ՇՄԱԳ օրենքի Գլուխ 6-ը (Հոդվածներ 24-27), կարծես, պատշաճ կերպով ամրագրում է անդրսահմանային ՇՄԱԳ-ի տրանսպոզիցման բոլոր համապատասխան մանրամասները:

Մոտարկված է



- Կառուցապատման թույլտվություն ստանալու համար դիմումների վերաբերյալ որոշումների ելքի մասին հանրությանը տեղեկացնելուն ուղղված միջոցառումների սահմանում (9-րդ հոդված)

Հայաստանում ՇՄԱԳ-ի արդյունքի վերաբերյալ որոշումը չի հանդիսանում իրավասու մարմնի կողմից տրվող «կառուցապատման թույլտվություն», ինչպես սահմանված է ՇՄԱԳ հրահանգում, այլ հանդիսանում է լիազոր մարմնի կողմից հաստատման ենթակա «պետական փորձագիտական եզրակացություն»:

Հոդված 19-ի 5-րդ կետի համաձայն՝ պետական փորձագիտական եզրակացությունը պետք է յոթ աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվի լիազոր մարմնի պաշտոնական կայքում: Պարզ չէ, թե արդյոք այնտեղ հրապարակվում է միայն հաստատված պետական փորձագիտական եզրակացությունը, թե այդ եզրակացության վերաբերյալ պաշտոնական որոշումը, սակայն ենթադրվում է, որ հրապարակային ծանուցման պահանջը կատարվում է:

Մոտարկված է

- Վարչական եւ դատական մակարդակներում արդյունավետ, չափազանց մեծ ծախսեր չընդգրկող եւ ժամանակին իրականացվող՝ հանրությանը եւ ոչ կառավարական կազմակերպություններին ներգրավող՝ վերանայման ընթացակարգերի սահմանում (11-րդ հոդված)

Հոդված 19-ի 8-րդ կետի համաձայն՝ պետական փորձագիտական եզրակացությունը կարելի է բողոքարկել՝ «ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով»: Սակայն անհասկանալի է, թե որտեղ է կարգավորվում, որ պետական փորձագիտական եզրակացության վերաբերյալ նման որոշումը հանդիսանում է վարչական ակտ, որը կարող է բողոքարկվել ինչպես թույլտվություն կամ լիցենզիա, եւ անհասկանալի է՝ ինչպես եւ ով (հանրություն, ՀԿ) կարող է բողոքարկել այն: Հայտնի չէ նաեւ, թե ինչ գին կարող է ունենալ նման իրավական վերանայման գործընթացը:

Հայաստանում գոյություն ունի պրակտիկա, երբ հասարակական կազմակերպությունը կամ անհատը դիմել է դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել դրական փորձագիտական եզրակացությունը: Սակայն դատարանը որոշում է կայացրել՝ մերժելով փորձագիտական եզրակացությունը որպես վարչական ակտ ճանաչելու պահանջը՝ հիմնավորելով, որ այն չի հանդիսանում գործունեություն իրականացնելու վերջնական փաստաթուղթ, այլ հիմք է թույլտվության տրամադրման համար:

Սակայն մեկ այլ դատավոր, առանց որեւէ բացատրության, իր որոշման մեջ նշել է, որ փորձագիտական եզրակացությունը վարչական ակտ է:

Որոշակիորեն մոտարկված է (բացատրությունը տե՛ս ստորել)

Եզրափակիչ նկատառումներ եւ առաջարկություններ.

ՇՄԱԳ հրահանգը ձեւական առումով լավ մոտարկված է, բացառությամբ ՇՄԱԳ արդյունքների իրավական փորձաքննության (այսինքն՝ պետական փորձագիտական կարծիքների) մասի, որը լավ կարգավորված չէ, թեեւ ՇՄԱԳ հրահանգի պատշաճ իրականացման կարեւոր մասն է կազմում:

ՇՄԱԳ օրենքի Հոդված 19-ի 6-րդ կետում նշվում է, որ պետական փորձաքննության դրական եզրակացության բացակայության պարագայում առաջարկվող գործունեության իրականացումն արգելվում է: Սա նշանակում է, որ, ի տարբերություն ՇՄԱԳ հրահանգին համապատասխան կառուցապատման թույլտվության մերժմանը, ՇՄԱԳ-ի փորձագիտական եզրակացությունը չի



կարող փոխվել այլ պատճառներով, օրինակ՝ տնտեսական կամ ենթակառուցվածքային կարիքներից ելնելով:

Սա նշանակում է, որ Հայաստանում ՇՄԱԳ-ի գործիքակազմը շատ ավելի ուժեղ է, քան ԵՄ-ում, որտեղ այն ընդամենը ընթացակարգային գործիք է՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ մտահոգությունների պատշաճ գնահատումն ապահովելու համար, որը կարող է չեղարկվել վերջնական որոշումների կայացման ժամանակ, նույնիսկ եթե ՇՄԱԳ-ի արդյունքը բացասական է:

ՀՀ օրենսդրությունը ՀՀԳՀ-ի ներքո պահանջվող սկրինինգի ընթացակարգ չի նախատեսում: Այն պետք է ներառվի ՇՄԱԳ օրենսդրության մեջ՝ ՇՄԱԳ-ի մասին հրահանգին ավելի համապատասխանելու, ինչպես նաեւ ՇՄԱԳ-ը գործնականում շատ ավելի կիրառելի դարձնելու համար՝ առանց չափազանց շատ գործունեության տեսակների համար պարտադիր ՇՄԱԳ-ներ անցկացնելու անհրաժեշտության (սկրինինգի նպատակը հենց սա է, այսինքն՝ տարրորշել «փոքր» գործունեության տեսակները, որոնք կարող են ՇՄԱԳ-ի կարիք ունենալ կամ չունենալ՝ կախված դեպքից): Կասկածելի է, որ Բ կատեգորիայի բոլոր գործունեության տեսակների համար կարող է իրականացվել պատշաճ ՇՄԱԳ, քանի որ, հավանաբար, կլինեն չափազանց շատ գործունեության տեսակներ՝ հաշվի առնելով ցածր շեմերը: **Իրականացման տեսանկյունից՝ սա կարող է լուրջ խոչընդոտ լինել:**

3.1.2 «Շրջակա միջավայրի վրա որոշակի նախագծերի եւ ծրագրերի ազդեցության գնահատման մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2001 թվականի հունիսի 27-ի 2001/42/ԵՀ հրահանգ

2001/42/ԵՀ հրահանգը լրացնում է նախագծի գնահատմանը եւ պահանջում է նմանատիպ շրջակա միջավայրի գնահատման գործընթաց, այսինքն՝ ռազմավարական Էկոլոգիական գնահատում (ՌԷԳ)՝ նաեւ իրավաբանորեն պարտադիր պլանների եւ ծրագրերի համար, որոնք կարող են ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

• Ներպետական օրենսդրության ընդունում

Հայաստանում ՇՄԱԳ-ի մասին օրենքը՝ փոփոխություններով հանդերձ (տե՛ս վերելում Գլուխ 3.1.1), կարգավորում է նաեւ ՌԷԳ պահանջների իրականացումը (չնայած վերնագիրը դա չի ենթադրում), ինչի մասին հստակ նշվում է Հոդված 1-ում: ՇՄԱԳ-ի մասին օրենքի 5-րդ գլուխը (հոդվածներ 21–23) նվիրված է ՌԷԳ հարցերին, սակայն օրենքի այլ դրույթներ եւս կիրառելի են ՌԷԳ-ի համար: Բացի այդ, գոյություն ունի՝

- ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 2294-Ն որոշումը՝ «Ռազմավարական Էկոլոգիական գնահատման կարգի եւ ռազմավարական Էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին»,

որը կարգավորում է ՌԷԳ-ին առնչվող մի շարք ընթացակարգային մանրամասներ:

Մոտարկված է

• Իրավասու մարմնի/մարմինների սահմանում

Ինչ վերաբերում է իշխանության մարմինների լիազորություններին, ապա դրանց բաշխումն իրականացվում է գրեթե նույն կերպ, ինչ ՇՄԱԳ-ի դեպքում. լիազորությունների բաշխումն արվում է 8-10 հոդվածների համաձայն՝ «կառավարության», «լիազորված մարմինների» եւ «տարածքային կառավարման մարմինների» միջեւ: ՌԷԳ գործընթացում ներգրավված են նաեւ տեղական



ինքնակառավարման մարմինները, Առողջապահության նախարարությունը (ԱՆ) եւ հնարավոր այլ կառույցներ:

Մոտարկված է

- Ընթացակարգի սահմանում, որով կորոշվի, թե որ նախագծերի եւ ծրագրերի համար է պահանջվում ռազմավարական Էկոլոգիական գնահատում, եւ պահանջների սահմանում, ըստ որոնց նման գնահատման ենթակա կլինեն այն նախագծերը կամ ծրագրերը, որոնց համար պարտադիր է ռազմավարական Էկոլոգիական գնահատումը (3-րդ հոդված)

ՌԷԳ-ի մասին հրահանգի 3-րդ հոդվածի 2-րդ մասը որոշ ծրագրեր եւ պլաններ ցանկացած պարագայում դիտարկում է որպես ռազմավարական գնահատման ենթակա: Հրահանգի 4-րդ եւ 5-րդ կետերի համաձայն՝ ԵՄ անդամ պետությունները Հավելված II-ում սահմանված չափանիշների հիման վրա որոշում են կայացնում առանձին դեպքերի վերաբերյալ, թե որ այլ ծրագրերն ու պլաններն են ենթակա ՌԷԳ-ի:

ՇՄԱԳ-ի մասին օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ մի շարք ոլորտների «հիմնարար փաստաթղթեր» ենթակա են ՌԷԳ-ի: Այդ ոլորտները նշանակալիորեն համապատասխանում են ՌԷԳ-ի մասին հրահանգին (օրինակ՝ գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնաբուծություն, էներգետիկա, արդյունաբերություն, տրանսպորտ):

Սակայն, եթե ՌԷԳ-ի մասին հրահանգը տարածվում է միայն պլանների եւ ծրագրերի վրա, ապա ՇՄԱԳ-ի մասին ՀՀ օրենքն այդ շրջանակից շատ ավելի հեռու է գնում. ՌԷԳ-ին վերաբերելի հնարավոր փաստաթղթեր են համարվում նաեւ «ռազմավարությունները, հայեցակարգային փաստաթղթերը, բնական պաշարների օգտագործման սխեմաները, հատակագծերը»: **Իրավական առումով սա խնդիր չի ներկայացնում, սակայն իրականում գործնական կիրառման համար լուրջ մարտահրավեր է (առաջարկությունները տե՛ս ստորեւ):**

«Սկրինինգային փուլ» նախատեսված չէ նաեւ ՀՀ կառավարության 2023 թվականի N 2294-Ն որոշմամբ. այս ենթաօրենսդրական ակտը հիմնականում կենտրոնանում է աշխատանքի շրջանակների որոշման փուլի վրա, ինչը նորմալ է:

Ինչ վերաբերում է «հիմնարար փաստաթղթի» իրավական բնույթին, 21-րդ հոդվածը նշում է, որ այդ փաստաթղթերը պետք է «**հիմքեր** պարունակեն ՇՄԱԳ-ին առնչվող գործունեություն իրականացնելու համար»: ՌԷԳ-ի մասին հրահանգի համաձայն՝ պլանները/ծրագրերը պետք է «սահմանեն ապագա ՇՄԱԳ-ին առնչվող գործունեության **շրջանակը**», եթե դրանք պահանջում են ՌԷԳ: Ենթադրվում է, որ տվյալ ձեւակերպումները գրեթե նույն նշանակությունն ունեն:

Մոտարկված է

- Շրջակա միջավայրի հարցերով զբաղվող իշխանության մարմինների հետ խորհրդակցության ընթացակարգի եւ հանրային խորհրդակցության ընթացակարգի սահմանում (6-րդ հոդված)

ՇՄԱԳ-ի մասին օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ 21-րդ հոդվածում նշված բոլոր ոլորտների իրավասու մարմինները պետք է ներգրավվեն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մեջ: Սակայն, ոչ օրենքը, ոչ էլ ՀՀ կառավարության 2023 թվականի N 2294-Ն որոշումը չեն սահմանում շրջակա միջավայրի հարցերով զբաղվող իշխանության մարմինների ներգրավման ընթացակարգի մանրամասները: **Այս առումով ընթացակարգային մանրամասները բացակայում են:**



Ինչ վերաբերում է հանրային խորհրդակցությունների ընթացակարգին, ապա ՇՄԱԳ-ի մասին օրենքի ՇՄԱԳ-ի վերաբերյալ դրույթները կիրառելի են նաեւ ՌԷԳ-ի համար (տե՛ս ՇՄԱԳ-ի մասին օրենքի 7-րդ գլուխը, մասնավորապես՝ 28-րդ հոդվածը): Ընթացակարգը լավ կարգավորված է:

Մասնակիորեն մոտարկված է՝ շրջակա միջավայրի հարցերով զբաղվող իշխանության մարմինների մասով

Մոտարկված է հանրային խորհրդակցությունների մասով

- **Տեղեկատվության փոխանակման եւ խորհրդակցության վերաբերյալ միջոցառումների սահմանում ԵՄ այն անդամ պետությունների հետ, որոնց շրջակա միջավայրը հավանաբար զգալի ազդեցություն կկրի ծրագրից (7-րդ հոդված)**

ՇՄԱԳ-ի առնչությամբ ՀՀԳՀ-ի այս պահանջը պետք է մեկնաբանվի այլ կերպ՝ այն դիտարկելով ոչ թե հարեւան ԵՄ անդամ պետությունների, այլ «Էսպոյի կոնվենցիայի ՌԷԳ արձանագրության» համատեքստում, որին Հայաստանը միացել է 2011 թվականից:

Արձանագրությունը պահանջում է մեխանիզմի ներդրում հարեւան երկրներին համապատասխան անդրսահմանային ՌԷԳ փաստաթղթերում ներգրավելու համար: ՇՄԱԳ-ի մասին ՀՀ օրենքը տարբերակում չի դնում ՇՄԱԳ-ի եւ ՌԷԳ-ի անդրսահմանային կանոնների միջեւ, բանի որ երկուսն էլ կարգավորվում են 6-րդ գլխում: Պատճառն այն է, որ եւ՛ ՇՄԱԳ-ին առնչվող գործունեության տեսակները, եւ՛ ՌԷԳ-ին առնչվող փաստաթղթերը կոչվում են «հիմնարար փաստաթղթեր»: Իրավական տառումով սա որոշ չափով բարդ եւ երկիմաստ է, սակայն ընդունելի է:

Մոտարկված է

Եզրափակիչ նկատառումներ եւ առաջարկություններ.

Ինչպես ՇՄԱԳ-ի դեպքում, այնպես էլ ՌԷԳ-ի պարագայում սկրինինգի փուլ գոյություն չունի այն «հիմնական փաստաթղթերի» համար, որոնք հնարավոր է՝ առնչություն չունեն շրջակա միջավայրի վրա ազդեցության հետ: Հաշվի առնելով հիմնարար փաստաթղթերի լայն, գրեթե հեղիեղուկ սահմանումը՝ հատկապես դրանց մեջ «հայեցակարգային փաստաթղթերի» ներառումը, **խիստ նպատակահարմար է ունենալ որոշ չափորոշիչներ կամ դեպք առ դեպք նախնական գնահատում**՝ ինչպես առաջարկվում է Հրահանգի Հավելված II-ում: Հարց է, թե արդյոք հնարավոր է իրականացնել լիարժեք ՌԷԳ օրենքով նախատեսված բոլոր փաստաթղթերի համար՝ առանց դրանցից որոշները սկրինինգի փուլով անցկացնելու միջոցով բացառելու:

3.1.3 խորհրդի 90/313/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հանրային հասանելիության մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2003 թվականի հունվարի 28-ի 2003/4/ԵՀ հրահանգ

«Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հանրային հասանելիության մասին» 2003/4 հրահանգը Օրիոսի կոնվենցիայի համապատասխան դրույթները ներմուծում է ԵՄ օրենսդրություն: Հայաստանը եւս 2001 թվականից համարվում է Օրիոսի կոնվենցիայի կողմ, հետեւաբար, պարտավոր է ներպետական օրենսդրությամբ կարգավորել դրա հիմնադրույթները:

- **Ներպետական օրենսդրության ընդունում**

Տեղեկատվության (ներառյալ շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության) հասանելիությունը Հայաստանում կարգավորվում է 2003 թվականի սեպտեմբերի 23-ին ընդունված «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով: Երկրում շրջակա միջավայրի



վերաբերյալ տեղեկատվության հանրային հասանելիության մասին առանձին օրենսդրություն գոյություն չունի:

«Տեղեկատվության ազատության մասին» գործող օրենքը **չի պարունակում** որեւէ հատուկ դրույթ, որը վերաբերում է շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությանը. այն ընդհանուր առմամբ տարածվում է **տեղեկատվության բոլոր տեսակների** վրա՝ այդ թվում՝ շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության: Այս հարցում ավելի մեծ թափանցիկություն եւ պարզություն ապահովելու համար պատրաստվել են «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մասին» հատուկ օրենքի մի քանի նախագծեր (վերջինը՝ 2022 թվականին), սակայն դրանք հանվել են շրջանառությունից:

Ենթադրվում է մոտարկման առկայություն

- **Իրավասու մարմնի/մարմինների սահմանում**

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքը տեղեկատվության մատչելիության համար պատասխանատվությունը դնում է տեղեկատվություն տնօրինող բոլոր սուբյեկտների վրա, որոնք սահմանվում են որպես «պետական մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաեւ հանրային նշանակություն ունեցող կազմակերպություններ եւ դրանց պաշտոնատար անձինք»՝ ակնհայտորեն վերաբերելով բոլոր պետական մարմիններին, որոնք տիրապետում են շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության:

Մոտարկված է

- **Գործնական միջոցառումների սահմանում, որոնց շրջանակում շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի կլինի հանրության համար, եւ կիրառելի բացառությունների սահմանում (3-րդ եւ 4-րդ հոդվածներ)**

Հոդվածներ 3-ը եւ 4-ը պահանջում են հարցման հիման վրա շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության հստակ կարգավորումներ (Օրհուսի կոնվենցիայի 4-րդ հոդված): «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի տեղեկատվության հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին՝ «օրենքով սահմանված կարգով»: Տեղեկատվություն տնօրինողը մշակում եւ հրապարակում է այն ընթացակարգերը, ըստ որոնց իր կողմից տրամադրվում է տեղեկատվություն՝ «օրենսդրությամբ սահմանված կարգով»:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 9-րդ հոդվածը կարգավորում է տեղեկատվության նկատմամբ հասանելիություն ստանալու եւ այն տրամադրելու վերաբերյալ մի շարք ընթացակարգային մանրամասներ: Չնայած բոլոր մանրամասները ուսումնասիրած չլինելու հանգամանքին՝ ենթադրվում է, որ 9-րդ հոդվածը ներառում է Օրհուսի կոնվենցիայի 4-րդ հոդվածով սահմանված հիմնական ընթացակարգային տարրերն ու պահանջները եւ, հետեւաբար, համապատասխանում է նաեւ ՀՀԳՀ-ի պահանջներին:

Ավելին, «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը 8-րդ հոդվածում սահմանում է տեղեկատվության հարցման հիման վրա դրա տրամադրման սահմանափակումներ, ինչը, կարծես, համահունչ է Օրհուսի կոնվենցիայի եւ ՇՄԱԳ-ի մասին հրահանգի 4-րդ հոդվածի դրույթներին:

Մոտարկված է



- Պետական մարմինների կողմից հանրության համար շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության ապահովում (Հոդված 3(1))

ՀՀԳՀ-ի հավելվածում նշված այս պահանջն ավելորդ է թվում, քանի որ այն արդեն իսկ վերետում նշված պահանջի մաս է կազմում: Ամեն դեպքում, հաշվի առնելով «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի լայն կիրառելիությունը եւ դրա միջոցով կարգավորված ընթացակարգային մանրամասները, կարելի է ենթադրել, որ ՀՀ օրենսդրությունը համահունչ է ԵՄ հրահանգի պահանջներին:

Մտարկված է

- Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվություն չտրամադրելու կամ միայն մասնակի տեղեկատվություն տրամադրելու մասին որոշումների վերանայման ընթացակարգերի սահմանում (Հոդված 6)

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան: Օրենքն այս առնչությամբ այլ մանրամասներ չի կարգավորում: Այնուամենայնիվ, ՀՀ վարչական օրենսդրությունը նախատեսում է լիարժեք մեխանիզմներ՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման դեպքում ինչպես վարչական ընթացակարգերով բողոքարկման, այնպես էլ դատական պաշտպանության համար:

Մտարկված է

- Հանրության շրջանում շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության տարածման համակարգի ստեղծում (Հոդված 7)

ԵՄ հրահանգի սույն դրույթը ներմուծում է Օրիոսի կոնվենցիայի համապատասխան հոդվածից:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է տեղեկատվություն տնօրինողների կողմից տեղեկատվության ակտիվ տարածման հիմնական կանոնները, որոնք վերաբերում են նաեւ շրջակա միջավայրի ոլորտի համար պատասխանատու մարմիններին ու նրանց կողմից պահվող տեղեկատվությանը: 7-րդ հոդվածը շատ լավ եւ ճշգրիտ է ձևակերպված եւ նույնիսկ ներառում է «շրջակա միջավայրի վրա ազդեցության» վերաբերյալ դրույթներ ոչ միայն շրջակա միջավայրի ոլորտի համար պատասխանատու մարմինների, այլև բոլոր տեղեկատվություն տնօրինողների համար:

Ըստ ՇՄ-ի՝ նախարարության պաշտոնական կայքն ապահովում է շրջակա միջավայրի որակին վերաբերող տեղեկատվության տրամադրումը եւ թարմացումը, ներառյալ քրի, օդի եւ հողի դիտանցման տվյալները, ՇՄԱԳ եւ ՌԷԳ զեկույցները, ազգային զեկույցները, միջազգային համագործակցության, լիցենզիաների եւ թույլտվությունների տրամադրման, անտառային կառավարման մասին տեղեկատվությունը եւ այլն: Կայքի կառավարումն իրականացվում է «ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում տեղեկատվության տեղադրման եւ թարմացման կարգը հաստատելու մասին» ԲՆ N 338-Ա հրամանի համաձայն:

Գործում է նաեւ e-draft.am միասնական կայքը, որը նախատեսված է իրավական ակտերի նախագծերի հրապարակման համար: Այն հնարավորություն է տալիս յուրաքանչյուրին ծանոթանալու պետական մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերին, ներբեռնելու այդ նախագծերը, ինչպես նաեւ գրանցվելու՝ որպես ֆիզիկական կամ



իրավաբանական անձ՝ նախագծերի օգտին կամ դրանց դեմ քվեարկելու եւ առաջարկություններ ներկայացնելու համար:

Մտարկված է

Եզրափակիչ նկատառումներ եւ առաջարկություններ.

Հատկանշական է, որ արդեն երկար ժամանակ է, ինչ Հայաստանում գործում է «Տեղեկատվության ազատության մասին» լայնածավալ եւ լավ մշակված օրենքը: Թեպետ այն ներառում է շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության տրամադրմանը, այնուամենայնիվ, խորհուրդ է տրվում կարգավորել հատուկ ընթացակարգային մանրամասներ՝ շրջակա միջավայրի տեղեկատվության մատչելիության վերաբերյալ, ինչպես նաեւ առանձին ենթաօրենսդրական ակտով սահմանել, թե ինչը կարող է համարվել հասանելի տեղեկատվություն՝ հաշվի առնելով ԵՄ-ում ձեռք բերված փորձը, որտեղ կան բազմաթիվ գործեր ինչպես ազգային դատարաններում, այնպես էլ Եվրոպական դատարանում:

3.1.4 «Շրջակա միջավայրին վերաբերող որոշակի նախագծերի եւ ծրագրերի կազմման մասով հանրային մասնակցությունը սահմանելու եւ հանրային մասնակցության եւ արդարադատության մատչելիության վերաբերյալ խորհրդի 85/337/ԵՏՀ եւ 96/61 /ԵՀ հրահանգները փոփոխելու մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2003 թվականի մայիսի 26-ի 2003/35/ԵՀ հրահանգ

2003/35 հրահանգը ամբողջությամբ ինքնուրույն Եվրոպական իրավական ակտ չէ: Ըստ Էութայն, այն բաղկացած է երեք բաղադրիչից.

- Շրջակա միջավայրին վերաբերող որոշակի նախագծերի եւ ծրագրերի մշակման գործընթացում հանրության մասնակցության ինքնուրույն բաղադրիչը. խոսքը վերաբերում է տարատեսակ թափոնների կառավարման ծրագրերին, գյուղատնտեսական ծրագրերից առաջացող ջրի նիտրատային աղտոտմանը եւ օդի որակի նախագծերին/ծրագրերին (տե՛ս Հրահանգի I հավելվածը):
- ՇՄԱԳ-ի մասին հրահանգի փոփոխությունը (նախկինում՝ 85/337/ԵՏՀ, ներկայումս՝ 2011/92/ԵՄ՝ փոփոխություններով):
- «Արդյունաբերական արտանետումների մասին» 2010/75/ԵՄ հրահանգի փոփոխությունը (նախկինում՝ Աղտոտման համալիր կանխարգելման եւ հսկման 96/61/ԵՀ հրահանգ):

• Ներպետական օրենսդրության ընդունում

Հայաստանում «ՌԷԳ կարգի եւ ՌԷԳ հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023 թվականի N 2294-Ն որոշումը ճշգրիտ կերպով կարգավորում է ընթացակարգային մանրամասները եւ պատասխանատվության շրջանակները:

Մտարկված է

Այնուամենայնիվ, շրջակա միջավայրին վերաբերող նախագծերի եւ ծրագրերի մշակման գործընթացում հանրային մասնակցության առնչությամբ հարկ է նշել Հայաստանում հետեւյալի բացակայությունը.

- թափոնների կառավարման գործող ծրագիր (տե՛ս ստորեւ, բաժին 3.4.1).
- նիտրատների նկատմամբ խոցելի գոտիների համար նախատեսված գործողությունների ծրագիր (տե՛ս ստորեւ, բաժին 3.3.5).



- օդի որակի հետ կապված գործողությունների ծրագրերի մշակման դրույթ (տե՛ս ստորեւ, բաժին 3.2.1):

Ուստի, այս բոլոր կարեւոր գործիքներից որեւէ մեկի մասով հանրային մասնակցություն չի իրականացվում, չնայած որ դա վերը նշված հրահանգով սահմանված պահանջ է:

Դեռեւս չկա նաեւ արդյունաբերական արտանետումների վերաբերյալ օրենսդրություն (խոշոր արդյունաբերական օբյեկտների թույլատրման եւ վերահսկման կարգավորում), որը ՀՀԳՀ-ի պահանջ է (տե՛ս բաժին 3.6.1), եւ որը եւս ենթադրում է հանրային մասնակցություն:

Իրավիճակն այլ է ՇՄԱԳ-ի մասին հրահանգի շրջանակներում հանրային մասնակցության մասով, ինչը կարգավորված է ՇՄԱԳ-ի մասին ՀՀ օրենքով. այս դեպքում իրավական մոտարկման մակարդակը դրական է:

Որոշակիորեն մոտարկված է

- **Իրավասու մարմնի/մարմինների սահմանում**

Ինչպես նշվեց վերեւում, Հայաստանում դեռեւս չկան համապատասխան քաղաքականության նախագծերի կամ ծրագրերի համար պատասխանատու մարմիններ: Նույնը վերաբերում է նաեւ արդյունաբերական արտանետումների ոլորտում հանրային մասնակցությանը, որը նույնպես դեռեւս կարգավորված չէ: Միայն ՇՄԱԳ-ին առնչվող նախագծերի պարագայում է, որ ՇՄԱԳ-ի մասին օրենքը հստակ ձեւով կարգավորում է նաեւ հանրային մասնակցությանը վերաբերող հարցերում լիազոր մարմինների գործառույթները:

Որոշակիորեն մոտարկված է

- **Հանրությանը տեղեկատվության տրամադրում նախատեսող մեխանիզմի (հոդվածներ 2(2)(a) եւ 2(2)(d)) սահմանում**

Հայաստանում դեռեւս չկան 2003/35/ԵՅ հրահանգով նախատեսված ծրագրեր (տե՛ս վերեւում), եւ, հետեւաբար, տեղեկատվության տրամադրման համապատասխան մեխանիզմների կիրառումն այս փուլում հնարավոր չէ:

Մոտարկված չէ

- **Հանրային խորհրդակցության մեխանիզմի սահմանում (հոդվածներ 2(2)(b) եւ 2(3))**

Հայաստանում դեռեւս չկան 2003/35/ԵՅ հրահանգով նախատեսված ծրագրեր, եւ, հետեւաբար, հանրային խորհրդատվության համապատասխան մեխանիզմների կիրառումն այս փուլում նույնպես հնարավոր չէ:

Մոտարկված չէ

- **Հանրային մեկնաբանությունները եւ կարծիքները որոշումների կայացման ընթացքում հաշվի առնելուն ուղղված մեխանիզմի սահմանում (Հոդված 2(2)(c))**

Հայաստանում դեռեւս չկան 2003/35/ԵՅ հրահանգով նախատեսված ծրագրեր, եւ, հետեւաբար, որոշումների կայացման համապատասխան մեխանիզմների կիրառումն այս փուլում նույնպես հնարավոր չէ:

Մոտարկված չէ

- **Վարչական եւ դատական մակարդակներում արդյունավետ, ժամանակին իրականացվող եւ չափազանց մեծ ծախսեր չընդգրկող արդարադատության մատչելիության երաշխավորում հանրության (ներառյալ ոչ կառավարական**



կազմակերպությունների) համար (հոդվածներ 3(7) եւ 4(4), շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում եւ աղտոտման համատեղ կանխարգելում եւ վերահսկում)

2003/35/ԵՅ հրահանգի 3 (7) հոդվածը վերաբերում է ՇՄԱԳ-ի մասին հրահանգի 11-րդ հոդվածի (նախկինում 10 a) ներառմանը ՇՄԱԳ-ի մասին հրահանգում: Թե որքանով է ՇՄԱԳ-ի մասին հրահանգի 11-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունը ներդրվել ՀՀ օրենսդրության մեջ, դեռեւս հնարավոր չէ գնահատել:

Օրենսդրությունը գործընթացի մասնակիցներին իրավունք է վերապահում օրենքով սահմանված ժամկետներում լիազոր մարմինն եւ նախաձեռնողին ներկայացնել ցանկացած գրավոր կամ բանավոր առաջարկություն, մեկնաբանություն եւ կարծիք՝ թե՛ հանրային լուսմների ժամանակ, թե՛ հետագայում գրավոր կամ էլեկտրոնային եղանակով, առանց դրանց հիմքում ընկած պատճառը հիմնավորելու անհրաժեշտության: Այն դեպքերում, երբ ներկայացված կարծիքները չեն ընդունվում, լիազոր մարմինը պարտավոր է տրամադրել հիմնավոր բացատրություն (մանրամասն տե՛ս ՇՄԱԳ-ի մասին օրենքի դրույթներում, ինչպես նաեւ ՀՀ կառավարության 2023 թվականի N 2343-Ն որոշման մեջ, որը սահմանում է հանրության իրազեկման եւ հանրային լուսմների ծանուցման բովանդակությունը):

Սակայն, ինչպես արդեն նշվել է վերեւում (տե՛ս բաժին 3.1.1), ՇՄԱԳ-ի վերաբերյալ որոշումների դատական վերանայման ընթացակարգը դեռեւս պատշաճ կերպով կարգավորված չէ:

Ինչ վերաբերում է աղտոտման համալիր կանխարգելմանը եւ հսկմանը (այժմ Արդյունաբերական արտանետումների մասին հրահանգ), ապա Հայաստանում համապատասխան օրենսդրություն դեռեւս գոյություն չունի, ուստի հանրությունը չունի արդարադատության մատչելիություն այդ ոլորտում:

Որոշակիորեն մոտարկված է

3.1.5 «Շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման եւ վերականգնման մասով բնապահպանական պատասխանատվության մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2004 թվականի ապրիլի 21-ի 2004/35/ԵՅ հրահանգ՝ փոփոխություններով

Բնապահպանական պատասխանատվության մասին հրահանգը շրջակա միջավայրի ոլորտում ԵՄ հորիզոնական օրենսդրության եւս մեկ բաղադրիչ է: Այն վերաբերում է շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելմանը, հայտնաբերմանը եւ վերականգնմանը, մասնավորապես՝ պահպանվող տեսակներին եւ բնական միջավայրերին հասցվող վնասին, ջրերին հասցվող վնասին կամ հողին հասցվող վնասին: Հրահանգը չի տարածվում այլ, մասնավորապես՝ օդին հասցվող վնասի վրա:

Բնապահպանական պատասխանատվության մասին հրահանգը սահմանում է հանրային պատասխանատվության հայեցակարգը, որը պետք է հստակ տարբերակել դասական քաղաքացիական եւ քրեական պատասխանատվության հասկացություններից: Հանրային պատասխանատվությունը նշանակում է, որ ա) վնասը վերաբերում է ամբողջ հանրությանը (եւ ոչ թե մասնավոր/իրավաբանական անձի) եւ հանդիսանում է մաքուր Էկոլոգիական վնաս, եւ բ) դրա վերականգնումը պետք է ապահովվի պետական մարմինների կողմից: Սույն հրահանգը չի անդրադարձնում քրեական պատասխանատվության կամ ավանդական քաղաքացիական վնասի դեպքերին, ինչպիսիք են՝ գույքային վնասը կամ անձնական վնասվածքները:

- **Ներպետական օրենսդրության ընդունում**



Հայաստանում չկա օրենսդրություն, որը կկարգավորի շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման եւ վերականգնման պատասխանատվության հարցերը՝ ինչպես նախատեսված է Բնապահպանական պատասխանատվության մասին հրահանգով: Թեեւ որոշ օրենքներում հիշատակվում է «շրջակա միջավայրին հասցվող վնաս» հասկացությունը (տե՛ս, օրինակ՝ Ընդերքի մասին ՀՀ օրենսգիրքը, «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը, «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ եւ 22-րդ հոդվածները, «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը, «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածը, «Աղբահանության մասին» ՀՀ օրենքի 4.3-րդ հոդվածը, ինչպես նաեւ Ջրային օրենսգրքում եւ «Թափոնների մասին» ՀՀ օրենքում ոչ բնապահպանական վնասին առնչվող դրույթները), սակայն ընդհանրապես պարզ չէ, թե շրջակա միջավայրին հասցված ինչ վնասի մասին է խոսքը գնում, ո՞վ է այն սահմանում, եւ արդյոք պե՞տք է ձեռնարկվեն վերականգնման (ոչ թե փոխհատուցման) միջոցառումներ, եւ եթե այո, ապա՝ ո՞ւմ կողմից:

Մոտարկված չէ

- **Իրավասու մարմնի/մարմինների սահմանում**

Բնապահպանական պատասխանատվության վերաբերյալ օրենսդրության մշակման լիազոր մարմինը ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունն է՝ համաձայն իր կանոնադրության (ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 11-րդ կետի 3-րդ ենթակետ): Սակայն, հաշվի առնելով ոլորտում համապատասխան օրենսդրության բացակայությունը, այս փուլում **անհստակ է**, թե ապագայում որ պետական մարմինն ինչպիսի **գործառույթներ է իրականացնելու** տվյալ օրենսդրության կիրառման շրջանակներում:

«Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ իրավասու տեսչական մարմինն ունի որոշ իրականացման եւ վերահսկողության գործառույթներ բնապահպանական խախտումների դեպքում (որը նույնը չէ, ինչ Բնապահպանական պատասխանատվության մասին հրահանգի շրջանակում կիրառվող «վնաս» հասկացությունը), ինչպես նաեւ համապատասխան «վնասի փոխհատուցման» առնչությամբ: Սակայն այս կարգավորումները Բնապահպանական պատասխանատվության մասին հրահանգով նախատեսված պատասխանատվության եւ վերականգնման մեխանիզմների հետ կապ չունեն:

Մասնակիորեն մոտարկված է

- **Շրջակա միջավայրին (ջուր, հող, պաշտպանված տեսակներ եւ բնական միջավայրեր) հասցվող վնասի կանխարգելմանն ու վերականգնմանն ուղղված կանոնների եւ ընթացակարգերի սահմանում՝ «աղտոտողը վճարում է» սկզբունքի հիման վրա (հոդվածներ 5, 6 եւ 7, Հավելված II)**

Բնապահպանական պատասխանատվության մասին հրահանգի ուշադրության կենտրոնում առավելապես շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելումն ու վերականգնումն է: Հրահանգի 5-րդ հոդվածի համաձայն՝ եթե կա շրջակա միջավայրին վնաս հասցնելու վտանգ, ապա գործողություն իրականացնող օպերատորը պարտավոր է ձեռնարկել որոշ կանխարգելիչ միջոցներ: Իրավասու մարմինը կարող է պահանջել այդպիսի միջոցների ձեռնարկումը: 6-րդ հոդվածի համաձայն՝ նույն մոտեցումը կիրառվում է նաեւ արդեն իսկ շրջակա միջավայրին հասցված վնասի դեպքում. օպերատորը պարտավոր է իրականացնել համապատասխան վերականգնման միջոցառումներ, իսկ իրավասու մարմինը կարող է օրինականորեն պահանջել դա: 7-րդ հոդվածը՝ Հրահանգի II հավելվածի հետ մեկտեղ, սահմանում է, թե ինչպիսի վերականգնման միջոցառումներ պետք է ձեռնարկվեն եւ ինչ չափանիշներով է կատարվում դրանց ընտրությունը:



Հայաստանում դեռեւս չկա գործող օրենսդրություն, որը կներառի վնասի կանխարգելման եւ վերականգնման վերաբերյալ նշված պահանջներից որեւէ մեկը:

Մտարկված չէ

- **Վտանգ ներկայացնող մասնագիտական գործունեության համար խիստ պատասխանատվության սահմանում (Հոդված 3(1) եւ Հավելված III)**

Բնապահպանական պատասխանատվության մասին հրահանգը, ինչպես շատ միջազգային իրավական ռեժիմներ, տարբերակում է վնասի համար պատասխանատվության երկու ձեւ՝ մեղքի վրա հիմնված պատասխանատվություն եւ խիստ պատասխանատվություն: Մեղքի վրա հիմնված պատասխանատվությունը ենթադրում է, որ վնասի պատճառման պահին պետք է առկա լինի որոշ սուբյեկտիվ տարր՝ այսինքն՝ վնաս հասցրած գործողության հեղինակը պետք է վնասը պատճառած լինի դիտավորյալ կամ առնվազն անզգուշությամբ: Իսկ ահա խիստ պատասխանատվությունը ենթադրում է, որ որոշակի գործունեության տեսակների (որոնք թվարկված են Հրահանգի III հավելվածում) օպերատորը պատասխանատու է հասցված վնասի համար միայն այն պատճառով, որ տվյալ գործունեությունն իր բնույթով վտանգավոր է՝ անկախ հանգամանքից, թե արդյոք նա գործել է անզգուշ կամ ոչ:

Հայաստանում դեռեւս չկա գործող օրենսդրություն, որը կարգավորում է որոշակի գործունեության տեսակների համար խիստ պատասխանատվությունը:

Մտարկված չէ

- **Օպերատորների համար անհրաժեշտ կանխարգելիչ եւ վերականգնող միջոցներ ձեռնարկելու պարտավորությունների՝ ներառյալ ծախսերի վճարման պատասխանատվության սահմանում (հոդվածներ 5, 6, 7, 8, 9 եւ 10)**

ՀՀԳԳ-ի հավելվածի այս դրույթը ինչ-որ չափով ավելորդ է, քանի որ հոդվածներ 5-ը, 6-ը եւ 7-ը վերելում արդեն քննարկվել են: Ինչ վերաբերում է հոդվածներ 8-ին, 9-ին եւ 10-ին, դրանք վերաբերում են վերականգնման եւ վերականգնող միջոցառումների իրականացման հետ կապված ծախսերի փոխհատուցման եւ բաշխման տարբեր ասպեկտների: Որպես կանոն՝ (իրավական առումով) պատասխանատվություն է կրում այն օպերատորը, որը պատճառել է վնասը: Հոդված 8-ում շարադրված են որոշ հնարավոր բացառություններ: Հոդված 9-ը վերաբերում է բազմակի պատճառահետեւանքայնության դեպքերին, այսինքն՝ երբ վնասը պատճառվել է մեկից ավելի օպերատորների կողմից: Եթե վերականգնման ծախսերը նախապես կրում է իրավասու մարմինը, ապա այն կարող է մինչեւ 5 տարվա ընթացքում հետ պահանջել այդ ծախսերը (Բնապահպանական պատասխանատվության մասին հրահանգ, Հոդված 10):

Հայաստանում դեռեւս չկա բնապահպանական վնասի ծախսերի փոխհատուցման հարցերի վերաբերյալ համապատասխան օրենսդրություն:

Մտարկված չէ

Եզրափակիչ նկատառումներ եւ առաջարկություններ

Հայաստանում դեռեւս չկա գործող օրենսդրություն, որը կհամապատասխանի Բնապահպանական պատասխանատվության մասին հրահանգից բխող պահանջներին: Հրահանգում առկա գրեթե բոլոր համապատասխան սահմանումներն բավականաչափ մոտարկված չեն (հատկապես՝ «չրջակա միջավայրին հասցված վնաս» հասկացությունը), իսկ վթարների եւ միջադեպերի դեպքում կիրառվող վարչական (բայց ոչ՝ վարչական իրավախախտումների իմաստով) պատասխանատվության ամբողջ հայեցակարգը նոր է



Հայաստանի համար: Սա վերաբերում է նաեւ վտանգավոր գործունեության համար նախատեսված «խիստ պատասխանատվությանը», հասարակական կազմակերպությունների՝ դատական գործեր նախաձեռնելու իրավունքին, պատշաճ վերականգնման միջոցներին եւ այլ կարելու ասպեկտներին: Խստորեն առաջարկվում է մշակել նոր «Շրջակա միջավայրին հասցված վնասի եւ պատասխանատվության մասին» օրենք եւ համապատասխանեցնել գործող օրենսդրությունը՝ օգտագործվող տերմինաբանության առումով:

3.2 Օդի որակը

Օդի որակի ոլորտում ՀՀԳՀ-ի հավելվածում թվարկված են հինգ հրահանգներից քաղվածքներ, որոնց Հայաստանը պետք է մոտարկի իր օրենսդրությունը:

«Ծծմբի երկօքսիդի (SO₂), ազոտի օքսիդների (NO_x), ոչ մեթանային ցնդող օրգանական միացությունների (NMVOC) եւ ամոնիակի (NH₃) ազգային արտանետումների կրճատման մասին» հրահանգը ՀՀԳՀ-ի մաս չի կազմում, քանի որ այն սահմանում է կոնկրետ արտանետումների կրճատման նպատակային նպատակներ՝ ԵՄ յուրաքանչյուր անդամ պետության համար առանձին: Նշված հրահանգը նաեւ ծառայում է 1999 թվականի Գյոթեբորգի արձանագրության պահանջները ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի «Մեծ հեռավորությունների վրա օդի միջսահմանային աղտոտվածության մասին կոնվենցիայի» մեջ ներմուծելու նպատակին:

Թեեւ Հայաստանը 1997 թվականից հանդիսանում է վերոնշյալ կոնվենցիայի կողմ, այն երբեք չի վավերացրել Գյոթեբորգի արձանագրությունը:

3.2.1 «Եվրոպայի համար մթնոլորտային օդի որակի եւ ավելի մաքուր օդի մասին» 2008/50/ԵՅ Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2008 թվականի մայիսի 21-ի 2008/50/ԵՅ հրահանգ (ուժը կորցրած է ճանաչվել 2026 թվականի դեկտեմբերի 12-ից ուժի մեջ մտնող 2024(2881) Հրահանգով)

«Եվրոպայի համար մթնոլորտային օդի որակի եւ ավելի մաքուր օդի մասին» 2008/50/ԵՅ հրահանգն այս ոլորտում գործող հիմնական օրենսդրական ակտն է: Այն կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության հետեւյալ ուղղությունները, որոնք կարելու են իրավական մոտարկման տեսանկյունից.

- մթնոլորտային օդի որակի նպատակների սահմանում եւ հաստատում.
- անդամ պետություններում մթնոլորտային օդի որակի գնահատում՝ ընդհանուր մեթոդների եւ չափանիշների հիման վրա.
- մթնոլորտային օդի որակի վերաբերյալ տեղեկատվության ստացում.
- հանրության համար մթնոլորտային օդի որակի վերաբերյալ նման տեղեկատվության հասանելիության ապահովում.
- մթնոլորտային օդի որակի պահպանությունն այնտեղ, որտեղ այն արդեն լավ է, եւ բարելավում՝ մնացած դեպքերում:

Հատկանշական է, որ 2008/50/ԵՅ հրահանգը չի վերաբերում օդ արտանետումներին, այլ միայն օդի որակին:

2008/50/ԵՅ հրահանգը, սակայն, 2024 թվականին ուժը կորցրած է ճանաչվել՝ պայմանավորված 2026 թվականի դեկտեմբերի 12-ից ուժի մեջ մտնող նոր 2024(2881) հրահանգի ընդունումով: Նոր հրահանգը հաշվի է առնում Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից սահմանված օդի որակի նոր ուղեցույցները:



Սույն վերլուծության նպատակներից ելնելով՝ մենք կշարունակենք հիմնվել «հին» (գոյություն ունեցող) իրահանգի, այլ ոչ թե նորի վրա, քանի որ վերջինն ուժի մեջ կմտնի միայն 1,5 տարի անց:

• **Ներպետական օրենսդրության ընդունում**

Հայաստանում օդի որակի վերաբերյալ օրենսդրությունը բաղկացած է հիմնական օրենքից, այն է՝

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվել է 1994 թվականի հոկտեմբերի 11-ին եւ վերջին անգամ փոփոխվել է 2022 թվականի դեկտեմբերի 7-ին՝ ՀՕ-522-Ն օրենքով,

ինչպես նաեւ ՀՀ կառավարության հետեւյալ երկու որոշումներից.

- «Մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի արտանետումների պետական հաշվառման եւ հաշվառման վերաբերյալ տեղեկատվության ամփոփման, վերլուծման եւ արխիվացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2024 թվականի N 23-Ն որոշում.
- «Մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի մշակման եւ սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծ ներկայացրած իրավաբանական անձանց եւ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց արտանետման թույլտվությունների տրամադրման կամ մերժման կամ ուժը կորցրած ճանաչելու մասին կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2024 թվականի N 32-Ն որոշում:

Համաձայն 2024 թվականի դեկտեմբերի ՀՀԳԳ ճանապարհային քարտեզի իրականացման ժամանակացույցի նախագծի՝ նախատեսվում է նաեւ մշակել «Մթնոլորտային օդի աղտոտվածության կրիտիկական մակարդակի եւ կրիտիկական բեռնվածության շեմի վերաբերյալ կարգը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծ, որը նախատեսվում է ընդունել մինչեւ 2025 թվականի վերջը: Նախատեսվում է նաեւ մինչեւ 2025 թվականի վերջը մշակել «Գոտիների եւ ագլոմերացիաների դասակարգման մասին» կառավարության որոշման նախագիծ, որը կդառնա օդի որակի պլանների մշակման մեթոդական ուղեցույցների մշակման իրավական հիմքը:

Հայաստանի համար մարտահրավեր է 2008/50/ԵՀ իրահանգում օգտագործվող նոր տերմինաբանության գործածումը: Որոշ տերմիններ համապատասխանեցվել են, իսկ մյուսները՝ դեռեւս ոչ: Օրինակ՝ «աղտոտող նյութ», «մակարդակ» (Հայաստանում «աղտոտման մակարդակ»), «կրիտիկական մակարդակ» (Հայաստանում «կրիտիկական բեռնվածություն»), բայց այն ներառում է նաեւ մարդկանց վրա ազդեցությունը՝ ի տարբերություն ԵՄ-ի, մինչդեռ ՀՀ օրենսդրությունում առկա «կրիտիկական մակարդակի» սահմանումը ԵՄ օրենսդրությունում համարժեք տերմին չունի), «գոտի», «շրջապատող օդ» (Հայաստանում մթնոլորտային օդ) տերմինները լավ են սահմանված, մինչդեռ մյուս հիմնական տերմինները իրականում համապատասխանեցված չեն («ագլոմերացիա») կամ ընդհանրապես սահմանված չեն («մակարդակ», «գնահատում», «սահմանային արժեք», «նպատակային արժեք», «գնահատման վերին եւ ստորին շեմ»): Հրահանգում օգտագործվող շատ այլ սահմանումներ պարտադիր չէ, որ մոտարկվեն:

Որոշակիորեն մոտարկված է

• **Իրավասու մարմնի/մարմինների սահմանում**

Հոդված 6-ի համաձայն՝ մթնոլորտային օդի պահպանության ոլորտի լիազոր մարմինը պատասխանատու է այն հարցերի համար, որոնք սահմանված են 2008/50/ԵՀ իրահանգում, այդ թվում՝



- Մթնոլորտային օդում աղտոտող (վնասակար) նյութերի առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաների մասին նորմերի մշակումը (կետ 2).
- Մթնոլորտային օդի աղտոտվածության կրիտիկական մակարդակի եւ կրիտիկական բեռնվածության շեմի սահմանման կարգի մշակումը (կետ 7).
- Մթնոլորտային օդում աղտոտող (վնասակար) նյութերի արտանետումների պետական հաշվառումը եւ ջերմոցային գազերի արտանետումների հաշվառումը (կետ 9).
- Մթնոլորտային օդի պետական դիտանցման կազմակերպումը եւ իրականացումը (կետ 12).
- Մթնոլորտային օդի որակի գնահատման, աղտոտվածության չափման եւ չափման ստանդարտացված մեթոդների, ինչպես նաեւ աղտոտվածության չափման կայանների տեղակայման եւ քանակի միասնական չափանիշների մշակումը (կետ 13).
- Գոտիների եւ ազլոմերացիաների դասակարգման կարգի մշակումը (կետ 16):

Այս իրավասությունների շրջանակում պակասում է օդի որակի ծրագրերի եւ կարճաժամկետ գործողությունների ծրագրերի մշակումը:

Ինչպես սահմանված է 4-րդ հոդվածի 35-րդ կետում, լիազոր մարմինը «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն շրջակա միջավայրի պահպանության ոլորտում կառավարության քաղաքականությունը մշակող եւ իրականացնող մարմինն է, այն է՝ Շրջակա միջավայրի նախարարությունը:

Հոդված 7-ի համաձայն՝ մթնոլորտային օդի պահպանության ոլորտում տարածքային կառավարման մարմինները նույնպես ունեն մի շարք օժանդակ, **սակայն առավելապես ընդհանուր ձեւակերպված իրավասություններ:**

Հիմնականում մոտարկված է

- **Գոտիների եւ ազլոմերացիաների սահմանում եւ դասակարգում (հոդվածներ 4 եւ 5)**

Գոտիների եւ ազլոմերացիաների սահմանում հանդիսանում է օդի որակի գնահատման եւ կառավարման մեկնակետ: Հրահանգի համաձայն՝ յուրաքանչյուր գոտի եւ ազլոմերացիա պետք է դասակարգվի՝ ելնելով գնահատման շեմերից:

Հայաստանում, վերը նշված իրավասությունների նորմից զատ (Հոդված 6-ի 16-րդ կետ), դեռեւս նման օրենսդրություն գոյություն չունի, եւ դեռեւս տեղի չի ունեցել գոտիների եւ ազլոմերացիաների սահմանում եւ դասակարգում: Հարկ է նշել, որ «ազլոմերացիաների» սահմանում չի համապատասխանում Հրահանգի տեքստով սահմանված ձեւակերպմանը:

Մոտարկված չէ

- **Գնահատման վերին եւ ստորին շեմերի եւ սահմանային արժեքների սահմանում (հոդվածներ 5 եւ 13)**

Հրահանգը պահանջում է II հավելվածի Ա բաժնում նշված վերին եւ ստորին գնահատման շեմերի ներառում՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի եւ ազոտի օքսիդների, միկրոսկոպիկ մասնիկների (PM10 եւ PM2,5), կապարի, բենզոլի եւ ածխածնի մոնօքսիդի համար:

ՀՀ օրենսդրությամբ դեռեւս նախատեսված չէ «վերին եւ ստորին շեմերի» որեւէ համակարգ՝ նշված աղտոտող նյութերի մասով օդի որակի գնահատման նպատակով: 2008/50/ԵՅ հրահանգի Հոդված 13-ի եւ XI հավելվածի համաձայն սահմանված «սահմանային արժեքները» նույնպես ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չեն: Ավելին, «սահմանային արժեք» տերմինն առհասարակ դեռեւս սահմանված չէ:

Մոտարկված չէ



- **Օդն աղտոտող նյութերի մասով մթնոլորտային օդի որակի գնահատման համակարգի սահմանում (հոդվածներ 5, 6 եւ 9)**

2008/50/ԵՅ հրահանգը պահանջում է շրջակա օդի որակի գնահատման գործուն համակարգի ստեղծում: Այս համակարգը պետք է գործի գոտիներում եւ ագլոմերացիաներում (Հոդված 5, ինչպես նշված է վերելում)՝ վերոնշյալ աղտոտող նյութերի նկատմամբ եւ Հրահանգի III հավելվածով սահմանված չափանիշների հիման վրա: Որոշ գոտիներում եւ ագլոմերացիաներում որակի գնահատումը պետք է իրականացվի ստացիոնար չափումներով, ինչը կարող է լրացվել մոդելավորման մեթոդներով եւ ցուցանիշային չափումներով (Հոդված 6): Բացի այդ, օդի աղտոտման նշանակալի աղբյուրներից հեռու գտնվող գյուղական վայրերում պետք է իրականացվեն հատուկ չափումներ՝ Հոդված 6-ով սահմանվածի համաձայն: Իսկ Հոդված 9-ի համաձայն՝ այն գոտիներում կամ ագլոմերացիաներում, որտեղ նախորդ տարիներին արձանագրվել են օզոնի բարձր կոնցենտրացիաներ, պետք է իրականացվեն ստացիոնար չափումներ:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 13-րդ կետում խոսվում է կառավարության՝ մթնոլորտային օդի որակի գնահատման չափանիշների, աղտոտվածության չափման եւ ստանդարտացված չափման մեթոդների, ինչպես նաեւ աղտոտվածության չափման կայանքների տեղադիրքերի եւ քանակների միասնական չափանիշների վերաբերյալ կարգը մշակելու իրավասության մասին: Իսկ 8-րդ հոդվածի 4-րդ կետում նշվում է, որ «Մթնոլորտային օդի որակի գնահատումն իրականացվում է աղտոտվածության չափման, ստանդարտացված չափման կամ մոդելավորման մեթոդներով, ինչպես նաեւ աղտոտվածության չափման կայանքների տեղադիրքերի եւ քանակների միասնական չափանիշներով»:

Հայաստանում օրենքով սահմանված օդի որակի գնահատման որեւէ համակարգ դեռեւս գոյություն չունի: Օրենքը որեւէ կերպ չի անդրադառնում գոտիներին եւ ագլոմերացիաներին, ինչպես նաեւ չի նշում, թե որտեղ պետք է տեղակայվեն «չափման կայանքները» (սույն տերմինն օգտագործվում է ՀՀ օրենքում), ինչ պետք է չափեն դրանք, ինչպես եւ ինչ հաճախականությամբ: Ավելին, մոդելավորման մեթոդների կիրառությունն նույնպես նախատեսված չէ: Վերջերս ընդունված կառավարության որոշումը կենտրոնացած է արտանետումների վրա, **սակայն ոչ՝ օդի որակին առնչվող հարցերի:**

Հնարավոր չէ միանշանակ գնահատել՝ արդյոք պարտադիր է օզոնի եւ մյուս աղտոտող նյութերի կոնցենտրացիաների չափումը: Երկու ենթաօրենսդրական ակտերն ուղղված են միայն որոշակի արդյունաբերական գործունեությունից առաջացող արտանետումների վերահսկմանը, **սակայն չեն վերաբերում օդի որակի չափումներին:** Տպավորություն կա, Հայաստանում ընդհանրապես օդի որակի չափման որեւէ համակարգ առկա չէ:

Մտարկված չէ

- **Օդի որակի պահպանության պլանների սահմանում այն գոտիների եւ ագլոմերացիաների համար, որտեղ աղտոտող նյութերի մակարդակները գերազանցում են սահմանային/նպատակային արժեքը (Հոդված 23)**

Հոդված 23-ի համաձայն՝ Հայաստանը պետք է մշակի «օդի որակի ծրագրեր» այն գոտիների եւ ագլոմերացիաների համար, որտեղ աղտոտող նյութերի մակարդակները գերազանցում են սահմանային կամ նպատակային արժեքները: Սակայն ՀՀ օրենսդրությամբ նման «ծրագրերի» մշակումն առաջատեսված չէ: Բացի այդ, աղտոտող նյութերի համար սահմանային եւ նպատակային արժեքները նույնպես կարգավորված չեն, եւ այս տերմինների սահմանումներն առհասարակ



բացակայում են: Նախատեսվում է մինչև 2025 թվականի ավարտը մշակել օդի որակի ծրագրերի վերաբերյալ ենթաօրենսդրական ակտի նախագիծ:

Մտարկված չէ

- **Գոտիների եւ ագլոմերացիաների համար կարճաժամկետ գործողությունների ծրագրերի սահմանում, որոնցում գոյություն ունի զգուշացման շեմերի գերազանցման վտանգ (Հոդված 24)**

Կարճաժամկետ գործողությունների ծրագրերի մշակման պահանջը (որոնք պետք է տարբերակել օդի որակի ծրագրերից) վերաբերում է միայն այն գոտիներին եւ ագլոմերացիաներին, որտեղ առկա է վտանգ, որ շեմային ցուցանիշները կարող են գերազանցվել: Շեմային ցուցանիշը սահմանվում է որպես «մակարդակ, որից բարձր կարճաժամկետ ազդեցության դեպքում բնակչության համար առողջության վտանգ կա, եւ որը պահանջում է անհապաղ միջոցների իրականացում» (տե՛ս Հրահանգը, Հոդված 2, կետ 10): Առանձին աղտոտող նյութերի շեմային ցուցանիշները սահմանված են Հրահանգի XII հավելվածում: Կարճաժամկետ գործողությունների ծրագրերը պետք է ներառեն բոլոր այն միջոցառումները, որոնք ձեռնարկվում են շեմի գերազանցումը մեղմելու նպատակով: Այդ ծրագրերը պետք է հասանելի լինեն հանրությանը:

Հայաստանում որեւէ կարճաժամկետ գործողությունների ծրագիր սահմանված չէ, ինչպես նաեւ առկա չէ նման ծրագրերի վերաբերյալ օրենսդրություն եւ նույնիսկ նախատեսված չէ:

Մտարկված չէ

- **Հանրությանը տեղեկատվության տրամադրման համակարգի ստեղծում (Հոդված 26)**

2008/50/ԵՅ հրահանգի Հոդված 26-ի համաձայն՝ հանրությունը պետք է տեղեկացված լինի օդի որակի հետ կապված մի շարք հարցերի վերաբերյալ: Ինչ վերաբերում է Հայաստանին, դա վերաբերում է՝ ա) մթնոլորտային օդի որակին՝ համաձայն Հրահանգի XVI հավելվածի, եւ բ) օդի որակի ծրագրերին ու կարճաժամկետ գործողությունների ծրագրերին, ինչպես նախատեսված է Հոդված 22-ի 1-ին կետով: Հավելված XVI-ում մանրամասն նշվում է, թե որ տեղեկատվությունն է ենթակա պարբերական հրապարակման:

2024 թվականի դեկտեմբերի ՀՀԳՀ ճանապարհային քարտեզի իրականացման ժամանակացույցի նախագծում նշվում է, որ նման դրույթ նախատեսելու անհրաժեշտություն չկա՝ հաշվի առնելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի լայն շրջանակը: Սակայն այս պնդումը հարցեր է առաջացնում: Նախ եւ առաջ, «տեղեկություն» տերմինն այդ օրենքում սահմանվում է որպես «անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երեւոյթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձեւավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձեւից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ), որն ինչ-որ չափով անհստակ է:

Պարզ չէ՝ արդյոք «մթնոլորտային օդի որակի տվյալներն» տեղավորվում են վերոնշյալ սահմանման շրջանակում, հատկապես եթե հաշվի առնենք 2008/50/ԵՅ հրահանգի Հավելված XVI-ում ներկայացված բոլոր մանրամասները: Բացի այդ, ծրագրերը նույնպես հստակորեն չեն հիշատակվում ի լրումն այն հանգամանքի, որ այդպիսի ծրագրերի մշակումը դեռ պարտադիր չէ:

Ի հավելումս, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն, տեղեկատվություն տնօրինողն է մշակում եւ հրապարակում իր կողմից տեղեկություն տալու



կարգը: Սա հենց այն է, ինչը պահանջում է նաեւ Հրահանգի 26-րդ հոդվածը: Սակայն Շրջակա միջավայրի նախարարության կողմից դեռեւս մշակված չէ որեւէ համակարգ կամ կանոնակարգ, թե ինչ, երբ եւ ինչպես պետք է հրապարակվեն «մթնոլորտային օդի որակի» տվյալները: Իրավական տեսանկյունից նպատակահարմար կլիներ նաեւ իրավական կապ ստեղծել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի եւ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի դրույթների կիրառելիության միջեւ:

Մոտարկված չէ

3.2.2 «Մթնոլորտային օդում արսենիումի, կադմիումի, սնդիկի, նիկելի եւ արոմատիկ բազմացիկլիկ ածխաջրածինների մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի 2004/107/ԵՅ հրահանգ (ուժը կորցրած է ճանաչվել 2026 թվականի դեկտեմբերի 12-ից ուժի մեջ մտնող 2024(2881) Հրահանգով)

2004/107/ԵՅ հրահանգը լրացնում է 2008/50/ԵՅ հրահանգին՝ վերաբերելով օդում առկա չորս ծանր մետաղներին՝ արսենիում, կադմիում, սնդիկ եւ նիկել, ինչպես նաեւ Պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրածիններին (ՊԱԱ): Այն եւս վերախմբագրվել է 2026 թվականի դեկտեմբերի 12-ին ուժի մեջ մտնող 2024/2881 հրահանգով: 2004/107/ԵՅ հրահանգի նպատակները նման են 2008/50/ԵՅ հրահանգի նպատակներին, մասնավորապես՝

- Սահմանել մթնոլորտային օդում տվյալ աղտոտող նյութերի պարունակության նպատակային արժեքներ.
- Ապահովել այս աղտոտող նյութերի առումով մթնոլորտային օդի որակի պահպանությունն եւ/կամ բարելավում.
- Սահմանել ընդհանուր մեթոդներ եւ չափանիշներ՝ մթնոլորտային օդում տվյալ աղտոտող նյութերի պարունակության, ինչպես նաեւ նստվածքների գնահատման համար.
- Ապահովել մթնոլորտային օդում տվյալ աղտոտող նյութերի պարունակության վերաբերյալ համարժեք տեղեկատվության առկայությունն եւ հասանելիությունն հանրության համար:

• Ներպետական օրենսդրության ընդունում

Հայաստանում կիրառվում է նախորդ ենթագլխում նշված նույն օրենսդրությունը, մասնավորապես՝ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» փոփոխված օրենքը (փոփոխություններով) եւ օդ մուտք գործող արտանետումների վերաբերյալ երկու համապատասխան կառավարության որոշումները:

Ո՛չ օրենքը, ո՛չ էլ համապատասխան կառավարության որոշումները չեն անդրադառնում տվյալ Հրահանգով սահմանված նյութերի՝ օդի որակին առնչվող հարցերին: Հնարավոր չէ հստակ գնահատել՝ որքանով են դրանք սահմանում արտանետումների սահմանաչափեր ծանր մետաղների եւ ՊԱԱ-ների համար, սակայն դա այնքան էլ արդիական չէ Հրահանգի մոտարկման համատեքստում, քանի որ այն վերաբերում է բացառապես օդի որակին, այլ ոչ թե արտանետումներին:

Ինչ վերաբերում է տերմինաբանությանը, ապա անհրաժեշտ է սահմանել մի շարք հիմնարար տերմիններ, այդ թվում՝ «նպատակային արժեք», «վերին եւ ստորին գնահատման շեմեր», «ստացիոնար չափումներ», ինչպես նաեւ բոլոր մյուս համապատասխան սահմանումները, որոնք պարունակում է 2008/50/ԵՅ հրահանգը եւ որոնք կիրառելի են նաեւ տվյալ դեպքում:

Ինչպես նշվել է վերելում (տե՛ս 3.2.1), որոշ համապատասխան տերմինների սահմանումներ առկա են «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքում, բայց շատերինը՝ դեռեւս ոչ:



Մասնավորապես, «նպատակային արժեք» տերմինը դեռեւս պետք է սահմանվի եւ որոշվի յուրաքանչյուր աղտոտող նյութի համար:

Մասնակիորեն մոտարկված է

- **Իրավասու մարմնի/մարմինների սահմանում**

Իսկ ինչ վերաբերում է իրավասու մարմիններին, ապա այս դեպքում եւս կիրառելի է նույնը, ինչ նշվել է վերելում (տե՛ս 3.2.1 ենթաբաժին). մթնոլորտային օդի պահպանության ոլորտում կենտրոնական եւ տարածքային կառավարման մարմիններն ունեն սահմանված լիազորություններ: Բոլոր համապատասխան ասպեկտները քննարկվում են այդ լիազորությունների շրջանակում:

Մոտարկված է

- **Գնահատման վերին եւ ստորին շեմերի (Հոդված 4(6)) եւ նպատակային արժեքների (Հոդված 3) սահմանում**

Հրահանգը պահանջում է բոլոր ծանր մետաղների եւ ՊԱԱ-ների համար II հավելվածում նշված վերին եւ ստորին գնահատման շեմերի կիրառում: Նպատակային արժեքները պետք է սահմանվեն I հավելվածում նշվածի համաձայն:

ՀՀ օրենսդրությունը դեռեւս չի նախատեսում նման «վերին եւ ստորին շեմերի» կամ «նպատակային արժեքների» որոշման համակարգ:

Մոտարկված չէ

- **Գոտիների եւ ազլոմերացիաների սահմանում եւ դասակարգում (հոդվածներ 3 եւ 4(6))**

Այս հրահանգի համաձայն՝ գոտիների եւ ազլոմերացիաների սահմանումը մեկնակետ է նաեւ օդի որակի գնահատման եւ օդի որակի կառավարման համար:

Հայաստանում, բացառությամբ վերը նշված իրավասության նորմի (Հոդված 6-ի 16-րդ կետ), նման օրենսդրություն դեռեւս գոյություն չունի, եւ գոտիների ու ազլոմերացիաների սահմանում եւ դասակարգում դեռեւս չի իրականացվել: Հարկ է նշել, որ «ազլոմերացիաների» սահմանումը չի համընկնում Հրահանգում առկա ձեւակերպման հետ:

Մոտարկված չէ

- **Օդը աղտոտող նյութերի մասով մթնոլորտային օդի որակի գնահատման համակարգի սահմանում (Հոդված 4)**

2004/107/ԵՀ հրահանգի 4-րդ հոդվածը պահանջում է Հայաստանի ողջ տարածքում ստեղծել մթնոլորտային օդի որակի գնահատման գործուն համակարգ, որը հիմնված կլինի մթնոլորտային օդում արսենիումի, կադմիումի, նիկելի եւ բենզապիրենի չափման նմուշառման կետերի տեղակայման որոշման չափանիշների վրա՝ III հավելվածում նշված նպատակային արժեքների համապատասխանությունը գնահատելու համար:

Այս համակարգը պետք է ներդրվի գոտիներում եւ ազլոմերացիաներում՝ վերոնշյալ աղտոտող նյութերի նկատմամբ: Սահմանված գոտիներում եւ ազլոմերացիաներում ստացիոնար չափումները կարող են լրացվել մոդելավորման մեթոդներով, գնահատման մեթոդներով եւ պատահական նմուշառմամբ: Բացի այդ, պետք է սահմանվեն ֆոնային նմուշառման կետեր, եւ ըստ անհրաժեշտության կարող են կիրառվել նաեւ կենսաբանական ցուցիչներ (ըստ ցանկության):



Ներկայումս Հայաստանում չկա նման օդի որակի գնահատման օրենքով սահմանված համակարգ: Օրենքը չի կարգավորում գոտիների եւ ագլոմերացիաների հետ կապված հարցերը, չի սահմանում, թե որտեղ պետք է տեղակայվեն «չափիչ կայանքները» (տերմին, որն օգտագործվում է ՀՀ օրենսդրության մեջ) եւ չի նշում, թե ինչը, ինչպես եւ ինչ հաճախականությամբ պետք է չափվի: Այն նաեւ չի նախատեսում մոդելավորման մեթոդների կամ պատահական սմուլշառման կիրառում:

Վերոնշյալ երկու ենթաօրենսդրական ակտերը կենտրոնանում են բացառապես որոշակի արդյունաբերական գործունեությունից արտանետումների վերահսկման վրա եւ չեն անդրադառնում օդի որակի չափումներին: Կարծես թե Հայաստանում օդի որակի չափումներ ընդհանրապես չեն իրականացվում:

Մտարկված չէ

- **Համապատասխան աղտոտող նյութերի մասով օդի որակը պահպանելուն/բարելավելուն ուղղված միջոցների ձեռնարկում (Հոդված 3)**

Հրահանգի 3-րդ հոդվածը պահանջում է, որ Հայաստանն առանց անհամաչափ ծախսերի ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի ապահովի, որ մթնոլորտային օդում արսենիումի, կադմիումի, նիկելի եւ բենզապիրենի գնահատված պարունակությունները չզերազանցեն Հրահանգի I հավելվածում սահմանված նպատակային արժեքները:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ այս ուղղությամբ տարածքային կառավարման մարմինների լիազորություններն են՝ մարզերի բնապահպանական ծրագրերի կազմում մթնոլորտային օդի պահպանության միջոցառումների մշակումը եւ իրականացման ապահովումը, ինչպես նաեւ մթնոլորտ արտանետումների ցրման համար օդերեւութաբանական անբարենպաստ պայմանների դեպքում մարդու առողջությանն ու շրջակա միջավայրին ուղղված սպառնալիքների վերացման միջոցառումների իրականացումը: Բացի այդ, նրանք պարտավոր են համակարգել մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված միջոցառումների իրականացումը մարզերում:

Հոդված 13-ի համաձայն՝ կառավարությունն ապահովում է նաեւ մթնոլորտային օդի անդրսահմանային աղտոտումը կանխարգելող միջոցառումների իրականացումը:

Չնայած լիազորությունների՝ հստակ սահմանված լինելու հանգամանքին, **անհասկանալի է մնում**, թե կոնկրետ ինչ միջոցառումներ կարող են ձեռնարկվել (օրենսդրությամբ պետք է առնվազն սահմանվի նման միջոցառումների ցուցիչ ցանկ) եւ ինչպես են դրանք կապված Հրահանգով նախասահմանված աղտոտող նյութերի հետ:

Մասնակիորեն մտարկված է

Եզրափակիչ նկատառումներ եւ առաջարկություններ օդի որակի երկու հրահանգներին մտարկման վերաբերյալ

ԵՄ օդի որակի վերաբերյալ երկու հրահանգների (որոնք միավորվել են եւ ուժի մեջ կմտնեն 2026 թվականի դեկտեմբերի 12-ից) իրավական մտարկման հետ կապված իրավիճակը Հայաստանում գոհացուցիչ չէ: Գործող օրենսդրությունը չի օգտագործում հրահանգների հիմնական տերմինաբանությունը եւ դրանց հայեցակարգային մոտեցումները: ՀՀ օրենսդրության մեջ իրավական հիմք չունեն ո՛չ օդի որակի գնահատման գոտիների կամ ագլոմերացիաների դասակարգումը, ո՛չ գնահատման վերին եւ ստորին շեմային արժեքները, ո՛չ էլ նույնիսկ օդի որակի ծրագրերի եւ կարճաժամկետ գործողությունների ծրագրերի մշակումը եւ ընդունումը (նման ծրագրերը Հայաստանում դեռեւս բացակայում են եւ չունեն իրավական հիմք):



Օդի որակի գնահատման համակարգի վերաբերյալ օրենսդրություն դեռևս գոյություն չունի, չնայած որ դա «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի փոփոխված տարբերակով նախատեսված պահանջ է: Բացի այդ, չկա իրավական հիմք հանրությանը օդի որակի տվյալների մասին պարբերաբար տեղեկացնելու համար:

Այդ իսկ պատճառով, հաստատակամորեն խորհուրդ է տրվում իրականացնել գործող «Մթնոլորտային օրենքի պահպանության մասին» օրենքի էական վերանայում՝ դրանում լիովին ներառելով ԵՄ հայեցակարգային մոտեցումն ու տերմինաբանությունը եւ այդպիսով ապահովելով ամուր իրավական հիմք ցանկացած ենթաօրենսդրական կարգավորման համար: Որպես երկրորդ քայլ՝ պետք է մշակվի նման ենթաօրենսդրական կարգավորում: «Մթնոլորտային օրենքի պահպանության մասին» օրենքը պետք է կենտրոնանա օդի որակի վրա եւ կամ ընդհանրապես չանդրադառնա, կամ առանձին գլխում ներառի արդյունաբերական արտանետումների չափորոշիչները: Վերջինը կարող է արդյունավետորեն իրականացվել «Շրջակա միջավայրի ինտեգրված թույլտվությունների եւ վերահսկողության մասին» նոր օրենքի շրջանակներում՝ 3.6.1 բաժնում առաջարկվածի համաձայն:

3.2.3 «Որոշակի հեղուկ վառելիքներում ծծմբի պարունակության նվազեցման մասին» 93/12/ԵՏՀ հրահանգը փոփոխող՝ Խորհրդի 1999 թվականի ապրիլի 26-ի 1999/32/ԵՏՀ հրահանգ՝ փոփոխություններով (այլեւս ուժի մեջ չէ, ևորը՝ (ԵՄ) 2016/802 հրահանգ)

Խորհրդի 1999/32/ԵՏՀ հրահանգն այլեւս ուժի մեջ չէ: Այն փոխարինվել է որոշակի հեղուկ վառելիքներում ծծմբի պարունակության նվազեցման մասին [\(ԵՄ\) 2016/802 հրահանգով](#): **ՀԸԳՀ հավելվածը պետք է համապատասխանաբար փոփոխվի:**

Չրահանգը սահմանում է ծծմբի պարունակության առավելագույն սահմանաչափերը ԵՄ-ում օգտագործվող նավթային վառելիքի, գազային վառելիքի, ծովային գազային վառելիքի եւ ծովային դիզելային վառելիքի համար:

- **Ներպետական օրենսդրության ընդունում**

Հայաստանում այս հարցը կարգավորվում է Մաքսային միության (Եվրասիական տնտեսական միության) հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 826 որոշմամբ հաստատված «Ավտոմոբիլային եւ ավիացիոն բենզինին, դիզելային եւ նավերի համար նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքին եւ մագուրին ներկայացվող պահանջների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով, որը սահմանում է նաեւ վառելիքներում ծծմբի պարունակության չափանիշները: Թե որքանով են այդ չափանիշները համապատասխանում Չրահանգին, այստեղ հնարավոր չէ գնահատել:

Ենթադրվում է մոտարկման առկայություն

- **Իրավասու մարմնի/մարմինների սահմանում**

ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի իրականացման ժամանակացույցի նախագծի համաձայն՝ Հայաստանում վառելիքի չափորոշիչների համար իրավասու մարմինը Շրջակա միջավայրի նախարարությունն է: Սակայն, «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի համաձայն, նախարարությունն ունի միայն մթնոլորտային օդում աղտոտող (վնասակար) նյութերի առավելագույն թույլատրելի պարունակության (ՍԹԿ) չափանիշների մշակման բացառիկ իրավասություն: Այս դեպքում, սակայն, խոսքը վառելիքի մեջ նյութերի պարունակության, այլ ոչ թե արտանետումների կամ օդի որակի մասին է: Որքանով հեղինակները տեղյակ են, ազգային ստանդարտների, այդ թվում՝ վառելիքի որակի ստանդարտների մշակման եւ պահպանման



համար պատասխանատու հիմնական մարմինը Ստանդարտացման եւ չափագիտության ազգային մարմինն է:

Ենթադրվում է մոտարկման առկայություն

- Վառելիքի նմուշառման արդյունավետ համակարգի եւ ծծմբի պարունակության որոշմանն ուղղված վերլուծության համապատասխան անալիտիկ մեթոդների սահմանում (Հոդված 6)

Հին հրահանգի 6-րդ հոդվածը փոխարինվել է նոր (ԵՄ) 2016/802 հրահանգի 13-րդ հոդվածով: Այս դրույթը պահանջում է նմուշառման եւ վերլուծության գործուն համակարգ՝ վառելիքներում ծծմբի պարունակությունը որոշելու համար: Նման նմուշառման եւ վերլուծության համակարգի մշակումը եւ ներդրումը ՀՀ պարտականությունն է՝ պայմանով, որ այն արդյունավետորեն գործի: ԵՄ-ում Եվրոպական հանձնաժողովը պետք է ընդունի լրացուցիչ օրենսդրություն, որը կկարգավորի նմուշառման հաճախականությունը եւ դրա իրականացման համար օգտագործվող մեթոդները:

2011 թվականի N 826 որոշման Հավելված 8-ում առկա են նմուշառման եւ վերլուծության մի շարք պահանջներ: Բայց թե այս նմուշառման/վերլուծության մեթոդները գործնականում որքանով են աշխատում, հնարավոր չէ գնահատել:

Ենթադրվում է մոտարկման առկայություն

- Մազուբի եւ նավթաթորվածքի (գազային յուղի) օգտագործման արգելում այն դեպքում, երբ հողում դրանց կիրառման ժամանակ ծծմբի պարունակությունը գերազանցում է սահմանված սահմանային արժեքները (Հոդված 3(1) հոդված, եթե կիրառելի չեն հոդվածներ 3(2)-ում եւ 4(1)-ում նշված բացառությունները)

Որպես կանոն, բայց որոշ բացառություններով, Հայաստանում չպետք է օգտագործվի ծանր մազուբ, եթե դրանում ծծմբի պարունակությունը գերազանցում է դրա քաշի 1.00%-ը (Հոդված 3(1)): Համաձայն Հոդված 4-ի՝ գազային վառելիքը չպետք է օգտագործվի, եթե դրանում ծծմբի պարունակությունը գերազանցում է դրա քաշի 0.10%-ը (առանց որեւէ բացառության):

2011 թվականի N 826 որոշումը պարունակում է վառելիքներում ծծմբի պարունակությունը որոշելու մի շարք պահանջներ, սակայն չի սահմանում սահմանափակումներ ծծմբի պարունակության վերաբերյալ ըստ քաշի եւ չի նախատեսում ՀՀԳՀ-ի պահանջներին համապատասխան սահմանված շեմերը գերազանցող ծծմբի պարունակությամբ վառելիքների օգտագործման արգելք:

Ենթադրվում է մոտարկման բացակայություն

Եզրափակիչ նկատառումներ եւ առաջարկություններ.

Որոշակի հեղուկ վառելիքներում ծծմբի պարունակության վերաբերյալ հրահանգի հետ իրավական մոտարկումը, կարծես թե, իրականացվում է, գոնե մասամբ՝ 2011 թվականի N 826 որոշմամբ: Այնուամենայնիվ, նշված որոշումը չի պարունակում ծծմբի պարունակության որեւէ սահմանափակում եւ չի նախատեսում ԵՄ հրահանգով պահանջվող արգելքները: Թե որքանով են Եվրասիական տնտեսական համայնքի ստանդարտների շրջանակում հնարավոր նման սահմանափակումները, հնարավոր չէ գնահատել:



3.2.4 «Բենզինի պահման եւ բեռնափոխման կայաններից լցակայաններ դրա մատակարարման արդյունքում առաջացող՝ ցնդող օրգանական միացությունների (ՑՕՄ) արտանետումների նկատմամբ վերահսկողության մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 1994 թվականի դեկտեմբերի 20-ի 94/63/ԵՀ հրահանգ՝ փոփոխություններով

Գոյություն ունի սույն [հրահանգի կոնսոլիդացված տարբերակը](#), որն ընդունվել է 2019 թվականի հունիսի 26-ին:

Հրահանգի հիմնական նպատակն է սահմանել բենզինի պահման կայանների եւ սարքավորումների նշանակման եւ շահագործման ստանդարտներ՝ ցնդող օրգանական միացությունների (ՑՕՄ) արտանետումների առումով:

• Ներպետական օրենսդրության ընդունում

Հայաստանում չկա ներպետական օրենսդրություն, որը կկարգավորի բենզինի պահեստավորման եւ բաշխման ընթացքում ՑՕՄ արտանետումների հարցը: Սույն հրահանգի պահանջները որեւէ կերպ արտացոլված չեն նաեւ ՀՀԳՀ ճանապարհային քարտեզի իրականացման ժամանակացույցի նախագծում:

Մոտարկված չէ

• Իրավասու մարմնի/մարմինների սահմանում

Պարզ չէ, թե որ ազգային մարմինն է պատասխանատու Հայաստանում բենզինի պահեստավորումից առաջացող ՑՕՄ արտանետումների վերահսկողության համար:

Մոտարկված չէ

• Բենզինի պահման եւ բեռնափոխման բոլոր կայանների հայտնաբերում (Հոդված 2)

Հրահանգի 2-րդ հոդվածը պարունակում է բոլոր համապատասխան սահմանումները: Դրա հիման վրա կարելի է նույնականացնել պահման (սահմանում «c») եւ բեռնափոխման (սահմանում «n») բոլոր կայանները: ՀՀ օրենսդրությունը դեռեւս չի կարգավորում նման սահմանումները:

Մոտարկված չէ

• Բեռնափոխման կայաններում եւ լցակայաններում պահեստարաններից եւ բեռնափոխման կայաններում շարժական կոնտեյներների բեռնման/բեռնաթափման ընթացքում բենզինի կորստի կրճատմանն ուղղված տեխնիկական միջոցների սահմանում (հոդվածներ 3, 4 եւ 6 եւ Հավելված III)

Հրահանգը պահանջում է մի շարք տեխնիկական միջոցառումների ձեռնարկում կայաններում եւ բենզալցակայաններում պահեստային օբյեկտներից, ինչպես նաեւ կայաններում շարժական բաքերի բեռնման/բեռնաթափման ժամանակ բենզինի կորուստները նվազեցնելու համար: ՀՀԳՀ-ն հստակ հղում է կատարում միայն Հրահանգի III հավելվածին, սակայն I եւ II հավելվածները հավասարապես կարելի է, քանի որ դրանք սահմանում են համապատասխան տեխնիկական միջոցառումները: Այս առումով ՀՀԳՀ-ում անհրաժեշտ է մտցնել համապատասխան փոփոխություններ:

Բնականաբար, Հայաստանում չկա գործող օրենսդրություն, որը կկարգավորի պահեստային կայաններից բենզինի կորստի վերաբերյալ նման տեխնիկական միջոցառումները:

Մոտարկված չէ



- Բոլոր ավտոնոմիաների բեռնման կամրջակների եւ շարժական կոնտեյներների պահանջներին համապատասխանության պահանջի սահմանում (հոդվածներ 4 եւ 5)

Հրահանգի 4-րդ (բեռնման կամրջակներ) եւ 5-րդ (շարժական կոնտեյներներ) հոդվածները նախատեսում են մի շարք տեխնիկական պահանջներ ավտոնոմիաներով բեռնման կամրջակների եւ շարժական կոնտեյներների համար՝ Հրահանգի IV հավելվածում նշվածին համապատասխան:

Ներկայումս Հայաստանում չկա նշված ասպեկտները կարգավորող որեւէ օրենսդրություն:

Մոտարկված չէ

Եզրափակիչ նկատառումներ եւ առաջարկություններ.

Հայաստանում բեռնափոխակ պահման եւ բաշխման արդյունքում ցնդող օրգանական միացությունների (ՑՕՄ) արտանետումների առումով Հրահանգին մոտարկման որեւէ ջանք չի գործադրվում: Այս թեմային առնչվող օրենսդրություն գոյություն չունի, եւ նույնիսկ պարզ չէ, թե որ մարմինն է համարվում պատասխանատու այս հարցի համար, քանի որ սույն Հրահանգն ընդհանրապես չի հիշատակվում 2024 թվականի դեկտեմբերի ՀՀԳՀ ճանապարհային քարտեզի իրականացման ժամանակացույցի նախագծում: Առաջարկվում է այս հարցը քննարկել Շրջակա միջավայրի նախարարության հետ եւ այն ներառել ՀՀԳՀ-ի առաջիկա թարմացված ճանապարհային քարտեզում, ինչպես նաեւ որոշել համապատասխան օրենսդրություն մշակող իրավասու մարմին:

3.2.5 1999/13/ԵՀ հրահանգը փոփոխող՝ «Որոշակի ներկերում, լաբերում եւ փոխադրամիջոցների երեսմշակման ապրանքներում օրգանական լուծույթների օգտագործման հետեւանքով ցնդող օրգանական միացությունների արտանետումների սահմանափակման մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2004 թվականի ապրիլի 21-ի 2004/42/ԵՀ հրահանգ

2004/42/ԵՀ հրահանգը (հայտնի է նաեւ որպես «Ներկերի մասին հրահանգ») նպատակ ունի սահմանափակել ներկերի եւ լաբերի, ինչպես նաեւ տրանսպորտային միջոցների վերանորոգման համար նախատեսված միջոցների մեջ լուծիչների օգտագործումից ցնդող օրգանական միացությունների (ՑՕՄ) արտանետումները: Սա արվում է ներթնլորտային օզոնի առաջացմանը նպաստող ՑՕՄ-երի կողմից առաջացող օդի աղտոտվածությունը կանխելու կամ նվազեցնելու նպատակով: Սույն հրահանգն ունի [նոր կոնսոլիդացված տարբերակ](#), որն ուժի մեջ է 2021 թվականի հուլիսի 16-ից:

- **Ներպետական օրենսդրության ընդունում**

Հրահանգի կիրառման շրջանակի մեջ մտնող արտադրանքը թվարկված է դրա I հավելվածում:

Կան մի շարք կարելու տերմիններ, մասնավորապես՝ «ՑՕՄ» (ցնդող օրգանական միացություններ), «օրգանական լուծիչ», «ՑՕՄ-ի պարունակություն» եւ «շուկայահանում»: Հավելված I-ում արտադրանքը բաժանված է երկու ենթակատեգորիայի՝ ներկեր եւ լաբեր ու տրանսպորտային միջոցների վերանորոգման համար նախատեսված միջոցներ:

Հայաստանում սինթետիկ հիմքով լաբերի եւ ներկերի տեխնիկական կանոնակարգն ընդունվել է 2023 թվականին՝ ՀՀ կառավարության N 916-Ն որոշմամբ: Այս որոշումը կազմված են «Ներկերի մասին» հրահանգի հայեցակարգին համահունչ եւ ներառում է բոլոր համապատասխան



սահմանումները: Օգտակար կլինեն կանոնակարգում ներառել նաեւ «նպատակը» նշող բաժին, սակայն դա պարտադիր չէ:

Մտարկված է

- **Իրավասու մարմնի/մարմինների սահմանում**

ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի եւ վերոնշյալ N 916-Ն որոշման 3-րդ կետի համաձայն՝ Հայաստանում այս արտադրատեսակներում ցնդող օրգանական միացությունների կարգավորման լիազոր մարմինը Էկոնոմիկայի նախարարությունն է:

Մտարկված է

- **Ներկերի եւ լաթերի համար SOU-ի առավելագույն պարունակության սահմանային արժեքների սահմանում (Հոդված 3 եւ Հավելված II)**

Հրահանգի 3-րդ հոդվածի համաձայն՝ հայաստանյան շուկայում ներկերի ու լաթերի վաճառքը թույլատրվում է միայն այն դեպքում, եթե դրանցում SOU-երի պարունակությունը չի գերազանցում II հավելվածում սահմանված սահմանային արժեքները: Հնարավոր են մի շարք հատուկ բացառություններ:

N 916-Ն որոշման IV աղյուսակը սահմանում է ներկերում եւ լաթերում SOU-երի պարունակության սահմանաչափերը, որոնք արտացոլում են Հրահանգի II հավելվածում սահմանված սահմանային արժեքները:

Մտարկված է

- **Շուկայահանված ապրանքների պիտակավորումը եւ համապատասխան պահանջներին համապատասխանող ապրանքների շուկայահանումն ապահովող պահանջների սահմանում (հոդվածներ 3 եւ 4)**

Հայաստանում շուկայահանված եւ Հավելված I-ում թվարկված բոլոր ապրանքները պետք է ունենան համապատասխան պիտակավորում՝ հետեւյալ տեղեկություններով՝ ա) արտադրանքի ենթակատեգորիան եւ SOU սահմանային արժեքները գ/լ-ով՝ Հրահանգի II հավելվածում նշվածին համապատասխան, եւ բ) օգտագործման համար պատրաստ արտադրանքի առավելագույն SOU պարունակությունը գ/լ-ով:

Մտարկված է

Եզրափակիչ նկատառումներ եւ առաջարկություններ.

Սույն հրահանգի պահանջները լավագույնս մոտարկվել են ՀՀ կառավարության 2023 թ. N 916-Ն որոշմամբ: Ներկա դրությամբ հետագա իրավական գործողությունների անհրաժեշտություն չկա:

3.3 Ձրի որակը եւ ջրային պաշարների կառավարումը

Ձրի որակի եւ ջրային պաշարների կառավարման ոլորտում ԵՄ օրենսդրությունը (acquis) բաղկացած է 8 հիմնական հրահանգներից, որոնցից 5-ի առանձին հատվածներ ՀԸԳՀ-ի մաս են կազմում: «Ծովային շրջակա միջավայրի քաղաքականության մասին» հրահանգը չի ներառվել ՀԸԳՀ-ում ակնհայտ պատճառով. Հայաստանը ծովափնյա պետություն չէ: Իսկ «Շրջակա միջավայրի որակի ստանդարտների մասին» հրահանգը հիմնականում փոփոխություններ է մտցնում Ձրի շրջանակային հրահանգում, ուստի այն ՀԸԳՀ-ում ներառելու անհրաժեշտություն չկա: Սակայն, անհայտ պատճառներով, բացակայում է «Ստորգետնյա ջրերն աղտոտումից եւ



վատթարացումից պաշտպանելու մասին» 2006/118/ԵՅ հրահանգը: Ոլորտին առնչվող ԵՄ մյուս օրենսդրական ակտերը եւս պետք է հաշվի առնվեն Հայաստանում:

3.3.1 Ջրային քաղաքականության ոլորտում Համայնքի գործողությունների շրջանակը սահմանող՝ Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2000 թվականի հոկտեմբերի 23-ի 2000/60/ԵՅ հրահանգ՝ փոփոխություններով

«Ջրի շրջանակային հրահանգ» անվանումով հայտնի սույն հրահանգը Եվրոպական միության օրենք է, որն ուղղված է անդամ պետություններում ջրային ռեսուրսների պահպանությանն ու կառավարմանը: Դրա նպատակն է՝ ապահովել ջրի կայուն օգտագործումը՝ պահպանելով եւ բարելավելով գետերի, լճերի, ստորգետնյա եւ ափամերձ ջրերի որակը: Հրահանգը սահմանում է ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման շրջանակ՝ հիմնված բնական գետավազանների, այլ ոչ թե վարչական կամ քաղաքական սահմանների վրա:

Հրահանգը պահանջում է, որ անդամ պետությունները հասնեն «լավ վիճակի» բոլոր ջրային մարմինների համար՝ կանխելով աղտոտումը, խթանելով ջրային ռեսուրսների կայուն օգտագործումը, վերականգնելով վնասված էկոհամակարգերը եւ ներգրավելով հանրությանը ջրային ռեսուրսների կառավարման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում: Ջրի շրջանակային հրահանգը կարելու է խաղում Եվրոպայի ջրային միջավայրի պահպանության գործում՝ հանուն ապագա սերունդների:

• Ներպետական օրենսդրության ընդունում

Հայաստանում ջրի ազգային քաղաքականության ոլորտում ընդունվել են հետեւյալ օրենսդրական ակտերը.

- ՀՀ ջրային օրենսգիրք (ընդունվել է 2002 թվականին).
- «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2006 թվականին)՝ փոփոխություններով.
- «Ջրի ազգային քաղաքականության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2003 թվականին).
- «Սեւանա լճի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2002 թվականին):

Ջրային օրենսգիրքը՝ որպես ջրի ազգային օրենսդրության հիմնական գործիք, պարունակում է Ջրի շրջանակային հրահանգով նախատեսված գրեթե բոլոր հիմնական սահմանումներն ու հասկացությունները:

Սակայն տերմինաբանության մեջ առկա են որոշակի տարբերություններ, հատկապես՝ կապված ջրային ավազանների կառավարման մարմինների եւ հենց գետային ավազանների հետ: Մասնավորապես, Ջրային օրենսգրքի համաձայն՝ ջրային ռեսուրսների առավել արդյունավետ, նպատակաուղղված եւ ապակենտրոնացված կառավարումը խթանելու համար Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմնի կազմում օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծվում են ջրավազանային կառավարման մարմիններ: Այս մարմիններն իրականացնում են ջրավազանային կառավարման պլաններ եւ օժտված են հատուկ լիազորություններով: Ջրավազանային կառավարման պլանը համապարփակ փաստաթուղթ, որը նկարագրում է ջրավազանում իրականացվելիք կառավարման եւ պահպանության այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են Ջրային օրենսգրքի նպատակների իրականացման համար:



Ինչ վերաբերում է «գետային ավազան» տերմինին, Ջրային օրենսգրքում այն սահմանված չէ, սակայն ջրային օրենսդրության մեջ օգտագործվում է գետային ավազանի որոշակի տարածքում եւ դրա ջրհավաք ավազանում գտնվող ջրային ռեսուրսները մատնանշելու համար:

ՀՀ տարածքը բաժանված է 6 ջրավազանային կառավարման տարածքների եւ 14 գետային ավազանների:

Մոտարկված է

- **Իրավասու մարմնի/մարմինների սահմանում**

Ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում ՀՀ կառավարության լիազորությունները սահմանվում են Ջրային օրենսգրքի 3-րդ հոդվածում: Ջրային օրենսգրքի 10-րդ հոդվածը համապատասխան լիազորություններով է օժտում Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին: Ջրային ավազանների կառավարման մարմինները սահմանվում են Ջրային օրենսգրքի 11-րդ հոդվածում, իսկ ջրային համակարգերի կառավարման մարմինը՝ Ջրային կոմիտեն՝ Ջրային օրենսգրքի 12-րդ հոդվածում:

Մոտարկված է

- **Գետերի ավազանների տարածքների որոշում եւ համապատասխան համակարգում ուղղված աշխարհի գետերի, լճերի եւ առափնյա ջրերի պահպանությանը (հոդվածներ 3(1)-3(7))**

Ջրի շրջանակային հրահանգի 3-րդ հոդվածը պահանջում է տարբեր իրավական գործողություններ:

1-ին կետի համաձայն՝ ամեն գետավազան պետք է կցվի իր գետավազանային շրջանին: Փոքր գետավազանները կարող են միավորվել ավելի մեծ գետավազանների հետ՝ ստեղծելով համատեղ գետավազանային շրջաններ:

Սա Հայաստանում արվել է Ջրային օրենսգրքի հիման վրա (14 խոշոր գետավազաններ եւ ջրավազանային կառավարման տարածքներ, տե՛ս Ջրային օրենսգրքի 19-րդ հոդվածը): 2-րդ, 6-րդ եւ 7-րդ կետերի համաձայն՝ յուրաքանչյուր գետավազանային տարածքում պետք է լինի համապատասխան իրավասու ազգային մարմին՝ այս հրահանգի կանոնների կիրառման համար:

Ջրի շրջանակային հրահանգի 3(3) եւ 3(5) հոդվածները կիրառելի չեն Հայաստանի համար:

Հոդված 3(4)-ը պահանջում է, որ միջոցառումների բոլոր ծրագրերը համակարգվեն ամբողջ գետավազանային տարածքի համար: Սա Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանման մարմնի առաջադրանքների մի մասն է (տե՛ս Ջրային օրենսգրքի 10-րդ հոդվածը):

Չնայած ջրավազանային կառավարման ոլորտում իրավասու մարմինների կողմից վարչական միջոցառումների իրականացման համար սահմանված Նորմեր չկան, այս իրավական հարաբերությունները մեծ մասամբ կարգավորվում են Ջրային/գետավազանային կառավարման պլաններով եւ Հայաստանի օրենսդրության մեջ գոյություն ունեցող տարբեր իրավական ակտերով, մասնավորապես՝

- ՇՄ Նախարարի 2023 թվականի N 26-Ն հրամանը՝ ջրավազանային կառավարման պլանի բովանդակության հաստատման մասին.
- ՀՀ վարչապետի 2003 թվականի որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության ջրավազանային կառավարման տարածքային բաժինների ցանկը,



գործունեության կանոնակարգը եվ ջրավազանային կառավարման անցնելու ժամանակացույցը հաստատելու մասին».

- Չնայած ջրավազանային կառավարման համար գոյություն ունեն որոշակի ազգային իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակներ, Ջրի շրջանակային հրահանգի 3-րդ հոդվածի եւ III հավելվածի պարտավորությունները հիմնականում կապված են միջազգային գետավազանային տարածքների սահմանազատման, գետավազանային համատեղ կառավարման պլանների մշակման եւ անդրսահմանային ջրային կառավարման մարմինների ստեղծման հետ:

Անհրաժեշտ են հետագա ջանքեր այս պահանջներին լիովին համապատասխանեցնելու համար, հատկապես միջազգային համակարգման եւ ջրային ռեսուրսների համատեղ օգտագործման համատեքստում:

Մասնակիորեն մոտարկված է

• Գետերի ավազանների տարածքների բնութագրերի վերլուծություն (Հոդված 5)

Ջրի շրջանակային հրահանգի 5-րդ հոդվածը պահանջում է, որ գետավազանային յուրաքանչյուր տարածքի համար իրականացվի դրա բնութագրերի վերլուծություն, մակերեւութային եւ ստորգետնյա ջրերի վիճակի վրա մարդկային գործունեության ազդեցության ուսումնասիրում, ինչպես նաեւ ջրօգտագործման տնտեսական վերլուծություն՝ համաձայն II եւ III հավելվածներում նշված տեխնիկական պայմանների: Այնտեղ սահմանված չափանիշները պետք է ծառայեն Հայաստանի համար առնվազն որպես ուղեցույց:

ՀՀ ՇՄ նախարարի 2023 թվականի N 26-Ն հրամանով հաստատվեց Ջրավազանային կառավարման պլանի բովանդակությունը, որը սահմանում է պլանի բովանդակության մեջ ներառվող պարտադիր տեղեկատվության եւ վերլուծությունների շրջանակը, ներառյալ տնտեսական վերլուծությունները: Բնութագրերը, մարդկային գործունեության ազդեցությունը եւ տնտեսական վերլուծության պահանջները ներառված են յուրաքանչյուր ջրավազանային տարածքի կառավարման պլաններում, օրինակ՝

- «Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թվականների կառավարման պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի N 1909-Ն որոշում.
- «Սեւանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թվականների կառավարման պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի N 1912-Ն որոշում.

Հաշվի առնելով, որ գետերի ավազանային կառավարման ոչ բոլոր պլաններն են հաստատված կամ ներկայումս ուժի մեջ, այս ոլորտում դեռ կան անելիքներ՝ գործընթացի ամբողջականությունն ապահովելու համար:

Մասնակիորեն մոտարկված է

• Ջրի որակի դիտանցման ծրագրերի ստեղծում (Հոդված 8)

Ջրի շրջանակային հրահանգի 8-րդ հոդվածը պահանջում է ազգային մակարդակով մշակել ջրի վիճակի դիտանցման ծրագրեր՝ յուրաքանչյուր գետավազանային տարածքում ջրի վիճակի մասին հստակ պատկերացում կազմելու համար: **Մակերեւութային ջրերի համար նման ծրագրերը պետք է վերաբերեն Էկոլոգիական եւ քիմիական վիճակին եւ Էկոլոգիական ներուժին, իսկ ստորգետնյա ջրերի համար՝ քիմիական եւ քանակական վիճակի դիտանցմանը:**



Ձրային օրենսգիրքը սահմանում է ջրային ռեսուրսների դիտանցման նպատակները: 2003 թվականին ընդունվել է համապատասխան ԿՈ՝ այն իրականացնելու եւ դրան առնչվող հաշվետվությունների գրանցման կարգը հաստատելու համար:

Կարելու է նաեւ նշել, որ Բնապահպանության նախարարության կողմից Ավազանների կառավարման պլանների բովանդակությունը հաստատող հրամանը ներառում է «Ձրային ռեսուրսների դիտանցման արդյունքները եւ ավազանների կառավարման տարածքում գտնվող ջրային մարմինների վիճակի գնահատումը» վերնագրով բաժին, որտեղ ուրվագծվում են դիտանցման տվյալների ներկայացման եւ ջրային մարմինների վիճակի գնահատականների պահանջները:

Ինչ վերաբերում է կոնկրետ ջրային ավազանի կառավարման պլաններին, օրինակ՝ 2022 թվականի «Սեւանի ջրավազանային կառավարման 2022-2027 թվականների պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի N 1912-Ն որոշմամբ դիտանցման հետ կապված հարցերը մանրամասն կարգավորվում են, մասնավորապես՝ 51-րդ կետում, որը ներկայացնում է մակերեւութային ջրերի որակի դիտանցման գործընթացը, եւ 55-րդ կետում, որը ուրվագծում է ստորգետնյա ջրերի որակի դիտանցման գործընթացը: Կան նորմեր ստորգետնյա եւ մակերեւութային ջրերի դիտանցման բարելավմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Նույնը վերաբերում է նաեւ «Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թվականների կառավարման պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի N 1909-Ն որոշմանը. 41-րդ եւ 42-րդ կետերը ներառում են մակերեւութային ջրերի վիճակի եւ որակի դիտանցման վերաբերյալ նորմեր, 43-րդ կետը՝ մակերեւութային ջրերի քանակի դիտանցման իրավական կարգավորումը, իսկ 49-րդ կետը՝ ստորգետնյա ջրերի դիտանցման վերաբերյալ նորմ: Կան նորմեր ստորգետնյա եւ մակերեւութային ջրերի դիտանցման բարելավմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Հիմնականում մոտարկված է

- **Գետերի ավազանների կառավարման պլանների կազմում, խորհրդակցություններ հանրության հետ եւ այդ պլանների հրապարակում (հոդվածներ 13 եւ 14)**

Ձրի շրջանակային հրահանգի 13-րդ եւ 14-րդ հոդվածները պահանջում են մշակել գետավազանային կառավարման պլան գետավազանային յուրաքանչյուր շրջանի համար՝ VII հավելվածում նշված տեղեկատվությամբ: Խրախուսել բոլոր շահագրգիռ կողմերի ակտիվ ներգրավվածությունը այս հրահանգի իրականացման գործում, մասնավորապես՝ գետերի ավազանային կառավարման պլանների մշակման, վերանայման եւ թարմացման գործում: Գետավազանային յուրաքանչյուր շրջանի համար գետավազանային կառավարման պլանները պետք է հրապարակվեն եւ հասանելի լինեն հանրությանը մեկնաբանությունների համար:

ՀՀ ջրային օրենսգիրքը ներառում է հանրության իրազեկման եւ ջրային ռեսուրսների կառավարման եւ պաշտպանության գործընթացներում մասնակցության կարեւորության ճանաչումը: «Հանրային մասնակցություն» վերնագրով 20-րդ հոդվածը սահմանում է այն ոլորտները, որոնցում լիազորված պետական կառավարման մարմինները պարտավոր են տեղեկացնել հանրությանը: Սակայն, ավազանային կառավարման պլանների մշակման գործընթացում հանրության մասնակցության պահանջների վերաբերյալ մանրամասն դրույթներ չկան:

Հանրային մասնակցության մեխանիզմները ուրվագծված են նաեւ ավազանային կառավարման պլաններում, ինչպիսին է «Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թվականների կառավարման պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի N



1909-Ն որոշումը: Համաձայն 85-րդ կետի՝ անցկացվում են երկու հանրային խորհրդակցություններ: Դրանք տեղի են ունենում շահագրգիռ կողմերի հետ հանդիպումների եւ հանրային լայն խորհրդակցությունների, ինչպես նաեւ ջրային հարցերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված տեղեկատվական արշավների միջոցով: Առաջին փուլում խորհրդակցությունը կենտրոնացած էր Հրազդանի հիդրոէլեկտրակայանի հիմնական խնդիրների քննարկման եւ համաձայնեցման վրա, իսկ երկրորդ փուլում՝ միջոցառումների ծրագրի վրա: Խորհրդակցությունների ընթացքում հանրության շահագրգիռ ներկայացուցիչները լրացնում են հարցաթերթիկներ:

Նմանապես, 2022 թվականի «Սեւանի ջրավազանային կառավարման 2022-2027 թվականների պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի N 1912-Ն որոշման 79-րդ կետում նշվում է, որ անցկացվում են երկու հանրային խորհրդակցություններ: Դրանք տեղի են ունենում շահագրգիռ կողմերի հետ հանդիպումների եւ լայն հանրային խորհրդակցությունների, ինչպես նաեւ ջրային հարցերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված տեղեկատվական արշավների միջոցով: Հանրության եւ շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունները կազմակերպվել են ավազանի կառավարման պլանի մշակման ընթացքում, մասնավորապես՝ ավազանի կառավարման պլանի կազմման գործընթացի երկու հիմնական փուլերի ընթացքում: Առաջին փուլում խորհրդակցությունը կենտրոնացած էր Սեւանի հիդրոէլեկտրակայանի հիմնական խնդիրների քննարկման եւ համաձայնեցման, իսկ երկրորդ փուլում՝ միջոցառումների ծրագրի վրա: Խորհրդակցությունների ընթացքում հանրության շահագրգիռ ներկայացուցիչները լրացնում են հարցաթերթիկներ:

Այնուամենայնիվ, այս ասպեկտը լիովին մոտարկված համարելու համար անհրաժեշտ է համարվում ունենալ հանրության մասնակցության վերաբերյալ որոշ ընդհանուր կանոններ՝ Ջրային օրենսգրքում կամ ԿՌ-ով նախատեսված բոլոր ջրային/գետավազանային կառավարման պլանների համար:

Որպես ավազանի պլանավորման գործընթացի առաջին փուլ, 2016 եւ 2017 թվականներին կառավարությունը ընդունեց Արարատյան, Ախուրյան եւ Հարավային ավազանային կառավարման տարածքների երեք պլաններ՝ մինչեւ 2021 եւ 2022 թվականների գործողության ժամկետով: Այժմ Արարատյան եւ Հարավային ավազանային կառավարման տարածքների պլանները գտնվում են մշակման երկրորդ փուլում՝ 2025-2030 թվականների գործողության ժամկետով: Հյուսիսային ավազանային կառավարման տարածքի 2025-2030 թվականների նախագծի պլանը մշակման փուլում է:

Հիմնականում մոտարկված է

Եզրափակիչ նկատառումներ եւ առաջարկություններ.

Փաստորեն, ՀՀ օրենսդրությունը լավ է սահմանում ջրային ռեսուրսների կառավարման համար պատասխանատու մարմինների լիազորությունները, հստակորեն սահմանում է ջրավազանային կառավարման մարմինների գործունեության եւ ջրավազանային կառավարման տարածքներում դրանց ծրագրերի իրավական շրջանակը, ապահովում է հանրության լայն մասնակցությունը ջրային ռեսուրսների կառավարմանը, կարգավորում է դիտանցման գործունեության իրականացումը եւ կարող է համարվել գրեթե լիովին իրավականորեն մոտարկված:

Այնուամենայնիվ, պետք է նաեւ ընդունել, որ որոշ խնդիրներ դեռեւս լուծման կարիք ունեն: Մասնավորապես, ջրավազանային կառավարման մարմինները դեռեւս լիովին չեն հասել այն նպատակներին, որոնց համար ստեղծվել են, քանի որ գործնականում նրանց գործառնությունները մեծապես սահմանափակվում են ջրօգտագործման թույլտվությունների տրամադրմամբ:



Ավելին, հանրային իրազեկվածության եւ ընկալման բարձրացմանն ուղղված անբավարար ջանքերը հանգեցնում են ջրի խնայողության եւ արդյունավետ ջրօգտագործման միջոցառումների սահմանափակ իրականացմանը համայնքային, ձեռնարկությունների, տնային տնտեսությունների եւ անհատական մակարդակներում:

Ցավոք, պետք է նշել, որ չնայած գործող օրենսդրության եւ կարգավորող շրջանակների առկայությանը, դեռեւս առկա են մի շարք լուրջ խնդիրներ: Դրանց թվում են հիդրոկենսաբանական դիտանցման ցուցանիշների անբավարար քանակը, մակերեսային ջրերի դիտանցման կայանների անբավարար քանակը եւ Սեւանա լճի Էկոլոգիական վիճակը գնահատելու համար համապարփակ դիտանցման բացակայությունը:

Այս եւ այլ հարակից խնդիրները կարելու է մարտահրավերներ են եւ պահանջում են անհապաղ լուծումներ: Դրանց լուծման համար կարող է օրենսդրական վերանայումների, ինչպես նաեւ, հավանաբար, ջրային ռեսուրսների դիտանցման համակարգի զարգացման համար հիմնավոր ռազմավարության մշակման եւ ընդունման կարիք զգացվի:

Եվ չնայած ջրավազանային կառավարման համար գոյություն ունեն որոշակի ազգային իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակներ, անհրաժեշտ են հետագա ջանքեր՝ լիովին համապատասխանեցնելու այն պարտավորություններին, որոնք հիմնականում կապված են միջազգային գետավազանային տարածքների սահմանազատման, համատեղ կառավարման պլանների մշակման եւ անդրսահմանային ջրային կառավարման մարմինների ստեղծման հետ, հատկապես միջազգային համակարգման եւ ջրային ռեսուրսների համատեղ օգտագործման համատեքստում:

3.3.2 «Հեղեղումների ռիսկերի գնահատման եւ կառավարման մասին» Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 23-ի 2007/60/ԵՅ հրահանգ

2007/60/ԵՅ հրահանգը («Հեղեղումների մասին» հրահանգ) մշակվել է ի արձագանքումս Եվրոպայում ուժեղ հեղեղումների հաճախակիացման, մասնավորապես՝ 1997 եւ 2002 թվականներին, եւ հեղեղումների ռիսկերի համակարգված կառավարման բացակայության: Դրա հիմնական նպատակը մարդկանց, գույքը եւ շրջակա միջավայրը պաշտպանելու անհրաժեշտությունն է, մասնավորապես՝ անդրսահմանային գետավազաններում, ինչպես նաեւ կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերին արձագանքումը: Հրահանգը լրացնում է Ջրի շրջանակային հրահանգին եւ խթանում է հեղեղումների ռիսկերի գնահատման եւ կառավարման նախաձեռնողական, համաեվրոպական մոտեցումը:

• Ներպետական օրենսդրության ընդունում

Հեղեղումների ռիսկերի վերաբերյալ ՀՀ համապատասխան օրենսդրությունը ներառում է հետեւյալ իրավական ակտերը.

- ՀՀ ջրային օրենսգիրք (ընդունվել է 2002 թվականին).
- «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2006 թվականին)՝ փոփոխություններով.
- «Ջրի ազգային քաղաքականության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2003 թվականին).
- «Հեղեղումների վտանգների եւ հեղեղումների առաջացման ռիսկերի քարտեզներին ներկայացվող պահանջները եւ բովանդակությունը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2024 թվականի N 1158-Ն որոշում:



«Յեղեղում» եւ «հեղեղման ռիսկ» տերմիններն օգտագործվում են ԵՄ հեղեղումների մասին հրահանգում: Երկու տերմիններն էլ հիշատակվում են նաեւ ՀՀ ջրային օրենսգրքի 1-ին հոդվածում: Այսպիսով, հեղեղումների ռիսկերի գնահատումը եւ կառավարումը կարգավորող հիմնական օրենսդրությունն արդեն իսկ գոյություն ունի: Ավելի մանրամասն տեղեկությունների համար տե՛ս ստորեւ բերված գնահատումը:

Մոտարկված է

- **Իրավասու մարմնի/մարմինների սահմանում**

Ջրային օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ ջրային ռեսուրսների դիտակցում իրականացնող պետական լիազորված մարմինն ապահովում է հեղեղումների, սելավների եւ երաշտի կանխատեսումների վերաբերյալ տվյալների տրամադրումը: Սահմանված առաջնահերթություններն իրականացնելու համար **անհրաժեշտ է հստակ սահմանել** աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) ոլորտում ներգրավված բոլոր մասնակիցների **դերերն ու պարտականությունները**:

Աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) ոլորտի ընդհանուր համակարգումն իրականացնում է ՀՀ կառավարությունը, մինչդեռ ներքին գործերի նախարարությունը ԱՌԿ ոլորտում քաղաքականության եւ գործընթացների մշակման, իրականացման եւ համակարգման համար պատասխանատու լիազոր մարմինն է (ՀՀ կառավարության **N 17017 որոշման** 39-րդ կետ):

Որոշակիորեն մոտարկված է

- **Յեղեղման ռիսկի նախնական գնահատման իրականացում (հոդվածներ 4 եւ 5)**

Յեղեղումների մասին հրահանգի 4-րդ հոդվածը սահմանում է գնահատման նվազագույն պահանջները, որոնք, ի թիվս այլոց, ներառում են. անցյալում տեղի ունեցած նշանակալի հեղեղումների նկարագրություն, որտեղ կարող են կանխատեսվել նմանատիպ ապագա իրադարձությունների նշանակալի անբարենպաստ հետեւանքներ: Գնահատումը պետք է ներառի նաեւ ապագա հեղեղումների հնարավոր բացասական հետեւանքների գնահատումը մարդու առողջության, շրջակա միջավայրի, մշակութային ժառանգության եւ տնտեսական գործունեության վրա՝ հաշվի առնելով այնպիսի հարցեր, ինչպիսիք են աշխարհագրությունը, գետերի հոսքի տեղակայումը եւ դրանց ընդհանուր հիդրոլոգիական եւ գեոմորֆոլոգիական բնութագրերը, ինչպես նաեւ կլիմայի փոփոխության ազդեցությունը հեղեղումների առաջացման վրա:

«Յեղեղումների վտանգների եւ հեղեղումների առաջացման ռիսկերի քարտեզներին ներկայացվող պահանջները եւ բովանդակությունը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2024 թվականի N 1158-Ն որոշման հավելվածը պահանջում է, որ իրականացվի նախնական ռիսկի գնահատում հնարավոր հեղեղումների ռիսկերը բացահայտելու եւ բարձր ռիսկայնության տարածքները որոշելու համար: Ռիսկի այս նախնական գնահատումը հիմնված է առկա տվյալների վրա, ինչպիսիք են երկարաժամկետ զարգացման ուսումնասիրությունները, մասնավորապես՝ կլիմայի փոփոխության հեղեղումի ռիսկերի վրա ազդեցության վերաբերյալ (կետ 3 եւ 4): Չկա որեւէ հստակ կանոն, որը նշում է, թե ով պետք է կատարի այս նախնական հեղեղումի գնահատումը, սակայն, ըստ ԿՌ-ի, այն պետք է լինի «գետավազանային կառավարման պլանների» մաս (ինչը, ի դեպ, նախատեսված չէ Ձրի շրջանակային հրահանգով):

Այնուամենայնիվ, ինչպես նշվեց վերեւում, Ջրային օրենսգրքը հստակորեն նախատեսում է միայն «Ջրավազանային կառավարման պլանների» (Ջրային օրենսգրքի 17-րդ հոդված) պատրաստում, եւ ոչ թե գետավազանային կառավարման պլանների: Սա իրավական անորոշություն է, որը



իրավական առումով անհասկանալի է դարձնում, թե ով է կատարում հեղեղումների այս նախնական գնահատումը:

Հիմնականում մոտարկված է

• Հեղեղումների վտանգի եւ ռիսկի քարտեզների կազմում (Հոդված 6)

Հեղեղումների մասին հրահանգի 6-րդ հոդվածը պահանջում է «հեղեղումների վտանգի քարտեզների» եւ «հեղեղումների ռիսկի քարտեզների» պատրաստում: Հեղեղումների վտանգի քարտեզները պետք է ներառեն այն աշխարհագրական տարածքները, որոնք կարող են հեղեղումների ենթարկվել ցածր, միջին կամ բարձր հավանականությամբ: Հեղեղումների ռիսկի քարտեզները պետք է ցույց տան հեղեղումների հավանական բացասական հետեւանքները՝ կապված տուժած բնակիչների հավանական թվի, տուժած տարածքի տնտեսական գործունեության հավանական տեսակի եւ տուժած խոշոր արդյունաբերական հավանական օբյեկտների հետ (Արդյունաբերական արտանետումների հրահանգում նշված օբյեկտներ, տե՛ս ստորեւ, գլուխ 3.6.1):

Համաձայն ՀՀ կառավարության 2024 թվականի N 1158-Ն որոշման հավելվածի՝ Հայաստանում պետք է պատրաստվեն հեղեղումների վտանգի քարտեզներ՝ հեղեղումների ռիսկի նույն սցենարներով, ինչպես նշված է հրահանգում: Հեղեղումների ռիսկի քարտեզները պետք է արտացոլեն հեղեղումների բացասական հավանական ազդեցությունները՝ համաձայն այս հավելվածի 7-րդ կետում նշված հեղեղումների սցենարների եւ ներառեն տուժած բնակավայրերը, բնակչությունը, ենթակառուցվածքները եւ տնտեսական գործունեության այն տեսակները, որոնք կարող են տուժել:

ՀՀ կառավարության 2024 թվականի N 1158-Ն որոշման մեջ (ինչպես նաեւ Ջրային օրենսգրքում (հոդված 91.1) անհասկանալի է, թե ով պետք է պատրաստի հեղեղումի վտանգի քարտեզները եւ հեղեղումների ռիսկի քարտեզները:

Հիմնականում մոտարկված է

• Հեղեղումների ռիսկի կառավարման պլանների կազմում (Հոդված 7)

Հոդված 7-ի համաձայն կազմվող հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրերը պետք է հաշվի առնեն համապատասխան ասպեկտներ, ինչպիսիք են ծախսերը եւ օգուտները, հեղեղումների տարածքը եւ հեղեղումների փոխանցման ուղիները եւ այն տարածքները, որոնք ունեն հեղեղումների ջուրը պահելու ներուժ, ինչպիսիք են բնական հեղեղումային հարթավայրերը, հողի եւ ջրերի կառավարումը, տարածական պլանավորումը, հողօգտագործումը, բնության պահպանումը եւ նավարկությունը:

Հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրերը պետք է անդրադառնան հեղեղումների ռիսկի կառավարման բոլոր ասպեկտներին՝ կենտրոնանալով կանխարգելման, պաշտպանության, պատրաստվածության վրա, ներառյալ հեղեղումների կանխատեսումները եւ վաղ նախազգուշացման համակարգերը, եւ հաշվի առնելով տվյալ գետավազանի կամ ենթաավազանի բնութագրերը:

ՀՀ կառավարության 2024 թվականի N 1158-Ն որոշման մեջ նշվում է հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրերի մշակման մասին, սակայն վերը նշված պարտադիր պահանջները, որոնք պետք է հաշվի առնվեն նման ծրագրերում, ընդհանրապես չեն ներառվել այնտեղ: Ընդհանուր առմամբ, **օրենքով նախատեսված նման ծրագրերի բովանդակության վերաբերյալ հատուկ պահանջներ չկան, ինչպես նաեւ այն մասին, թե ով պետք է պատրաստի նման ծրագրերը:**



Որոշակիորեն մոտարկված է

Եզրափակիչ նկատառումներ եւ առաջարկություններ.

Հեղեղումների մասին հրահանգի ՀՀԳՀ պահանջներին մոտարկումը խառը պատկեր է տալիս: Մի կողմից, օգտագործվում է Հեղեղումների մասին հրահանգի տերմինաբանությունը, եւ օգտագործվում են նաեւ ԵՄ-ում օգտագործվող հասկացությունները (հեղեղումների նախնական ռիսկի գնահատում, հեղեղումների վտանգի քարտեզներ, հեղեղումների ռիսկի քարտեզներ, հեղեղումների ռիսկի կառավարման պլաններ): Սակայն օրենսդրությունը մասամբ ճշգրիտ չէ, քանի որ բաց է թողնում այս բոլոր փաստաթղթերի եւ մասամբ նաեւ դրանց բովանդակության պատրաստման հստակ պարտականությունները: Ընդհանուր առմամբ, **անհրաժեշտ է շատ ավելի ճշգրիտ պարզաբանել** Աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) ոլորտում **ներգրավված բոլոր դերակատարների դերերն ու պատասխանատվությունը**, ներառյալ հեղեղումների ռիսկի կանխարգելման մեխանիզմներն ու գործիքները: Սա կարող է պահանջել նաեւ Ջրային օրենսգրքի եւ հեղեղումների հետ կապված գործող ԿՌ-ի վերանայում:

3.3.3 «Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին» խորհրդի 1991 թվականի մայիսի 21-ի 91/271/ԵՏՀ հրահանգ՝ փոփոխություններով

«Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին» 2001 թվականի հրահանգը վերջին անգամ փոփոխվել է 2008 թվականին: Այնուամենայնիվ, այն ամբողջությամբ կչեղարկվի՝ պայմանավորված 2027 թվականի օգոստոսի 1-ից [Նոր «Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին» 2024/3019/ԵՄ հրահանգի](#) ուժի մեջ մտնելով:

Առայժմ որպես հիմք կընդունվեն գործող հրահանգի պահանջները՝ գնահատելու համար, թե արդյոք իրավական մոտարկումն իրականացվել է, քանի որ, ինչպես նշվեց վերելում, Նոր հրահանգը ԵՄ-ում ուժի մեջ կմտնի միայն 2027 թվականի օգոստոսից:

• **Ներպետական օրենսդրության ընդունում**

Հայաստանում քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին օրենսդրությունը ներառում է հետևյալ իրավական ակտերը.

- ՀՀ ջրային օրենսգրք (ընդունվել է 2002 թվականին).
- «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2006 թվականին)՝ փոփոխություններով.
- «Ջրի ազգային քաղաքականության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2003 թվականին).
- «Կեղտաջրերի եւ ցամաքորդային ջրերի ընդունման համար կլանող հորատանցքերի, սպառված հանքավայրերի, հանքահորերի ու բաց հանքերի օգտագործման եւ արտահոսքի թույլտվության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003 թվականի N 982-Ն որոշում.
- «Ջրային ռեսուրսներ թափվող կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի չափաբանակների հաշվարկի մեթոդիկան հաստատելու մասին» ՀՀ ԲՆ 2003 թվականի N 464-Ն հրաման:

«Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին» հրահանգը սահմանում է քաղաքներում կեղտաջրերի հավաքման, մաքրման եւ հեռացման, ինչպես նաեւ արդյունաբերական կենսաբալանավոր կեղտաջրերի մաքրման պահանջները: Այն սահմանում է ազլումերացիաների համար հատուկ պարտավորություններ, ներառյալ բնակչության համարժեքության շեմերը, իրականացման վերջնաժամկետները եւ մաքրման մակարդակները (առաջնային, երկրորդային եւ առաջադեմ մաքրում):



Հատկանշական է, որ քաղաքային կեղտաջրերի մաքրման վերաբերյալ ՀՀԳՀ -ի հավելվածը Հայաստանից չի պահանջում որեւէ հատուկ կեղտաջրերի մաքրման իրականացում (ո՛չ առաջնային, ո՛չ երկրորդային, եւ առավել եւս՝ երրորդային մաքրում), այլ միայն սահմանում է գործող կեղտաջրերի մաքրման համակարգ ստեղծելու հիմնական նախնական իրավական քայլերը, ներառյալ՝ ճիշտ իրավական տերմինաբանության օգտագործումը:

Չնահատումը ցույց է տալիս, «Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին» իրահանգի առանցքային հասկացությունները դեռեւս չեն ներառվել ՀՀ օրենսդրության մեջ: Այդ առանցքային հասկացություններն են՝ «քաղաքային կեղտաջրերը» (որոնք հետագայում բաժանվում են «կենցաղային կեղտաջրերի» եւ «արդյունաբերական կեղտաջրերի»), «հավաքման համակարգը» եւ «ազլմերացիաները»: «Կեղտաջրեր», «կենցաղային կեղտաջրեր» եւ «արդյունաբերական կեղտաջրեր» տերմինները լավ սահմանված են ՀՀ ջրային օրենսգրքում: ՀՀ-ում կեղտաջրերի հավաքման համակարգը կոչվում է «հիդրավիկ մաքրման համակարգ» եւ «խմբային ջրահեռացման համակարգ»: Չնայած այս սահմանումները, ընդհանուր առմամբ, համապատասխանում են իրահանգին, «ջրահեռացում» տերմինը որոշ չափով մոլորեցնող է եւ պետք է վերանայվի (ճիշտ տերմինն է՝ «կեղտաջրերի հավաքման համակարգ»): Օրենսդրությունում բացակայում է «ազլմերացիա» տերմինի սահմանումը:

Հիմնականում մոտարկված է

Ստորեւ գնահատված է «Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին» իրահանգի կոնկրետ պահանջներին մոտարկման աստիճանը:

- **Իրավասու մարմնի/մարմինների սահմանում**

Ջրային օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմինը ջրի ազգային ծրագրի համաձայն սահմանում է ջրային ռեսուրսների սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի ու էկոլոգիական նվազագույն ելքերը եւ հաստատում է կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի որակական եւ քանակական չափանիշները:

Ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի համաձայն՝ կառավարությունը հաստատում է կեղտաջրերի եւ ցամաքորդային ջրերի ընդունման համար կլանող հորատանցքերի, սպառված հանքավայրերի, հանքահորերի եւ բաց հանքերի օգտագործման եւ արտահոսքի թույլտվության կարգը: Կառավարությունը նաեւ հաստատում է կեղտաջրերով գյուղատնտեսական հողատարածքների ոռոգման կարգը՝ ջրերի ստանդարտների հաստատումից հետո: Այն տարածքներում, որտեղ ծառայություններ է մատուցում «Վեոլիա Ջուր»-ը, վճարումները կատարվում են այս ընկերությանը: Այն բնակավայրերում, որտեղ ծառայություններ են մատուցում տեղական ինքնակառավարման մարմինները, վճարումները ստացվում են անմիջապես նրանց կողմից: Կարգավորող հանձնաժողովը դիտանցում է կեղտաջրերի մաքրումը եւ սահմանում կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման կանոններ (Ջրային օրենսգրքի 14-րդ հոդված):

Մոտարկված է

- **Քաղաքային կեղտաջրերի հավաքման եւ մաքրման իրավիճակի գնահատում**

Քաղաքային կեղտաջրերի հավաքման եւ դրանց մաքրման առկա վիճակի գնահատումը «Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին» իրահանգի իրավական պահանջ չէ, այլ Հայաստանի իրավասու մարմնից պահանջվող նախնական գործնական քայլ՝ գնահատելու համար, թե որքանով են հավաքվում եւ մաքրվում Հայաստանում կեղտաջրերը ներկայումս: Այն չի



պահանջում որեւէ օրենսդրական մոտարկման միջոցառում: Անհասկանալի է, թե արդյոք նման գնահատում արդեն անցկացվել է, թե ոչ:

Մոտարկման անհրաժեշտություն չկա (բայց կա գործնական քայլերի կարիք)

- **Չգայուն ոլորտների եւ ազլումերացիաների որոշում (Հոդված 5(1) եւ Հավելված II)**

Հոդված 5-ի (1)-ը, «Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին» հրահանգի 2-րդ հավելվածի հետ համատեղ, պահանջում է «զգայուն տարածքների» նույնականացում համաձայն 2-րդ հավելվածում նշված չափանիշների: Քաղաքային կեղտաջրերը, նախքան զգայուն տարածքներ թափվելը, անդամ պետություններում պետք է ենթարկվեն ավելի խիստ մաքրման: 2-րդ հավելվածում նշված զգայուն տարածքները, մասնավորապես, բնական քաղցրահամ լճերն ու խմելու ջրի համար օգտագործվող մակերեսային քաղցրահամ ջրերն են: Ազլումերացիաները սահմանվում են որպես տարածքներ, որտեղ բնակչությունը գերազանցում է 10,000 մարդ, եւ որտեղ քաղաքային կեղտաջրերը պետք է հավաքվեն եւ մաքրվեն (առնվազն ապագայում):

ՀՀ օրենսդրության մեջ «ազլումերացիաներ» եւ «զգայուն տարածքներ» տերմինները հստակորեն չեն օգտագործվում, ինչպես սահմանված է ԵՄ ջրային օրենսդրության մեջ: Այնուամենայնիվ, գոյություն ունեն ֆունկցիոնալ առումով նմանատիպ հասկացություններ:

Ազլումերացիաները անուղակիորեն հասցեագրվում են քաղաքային կեղտաջրերի կառավարման կանոնակարգերի միջոցով, մասնավորապես՝ **բնակեցված տարածքներում** կեղտաջրերի հավաքումը եւ մաքրումը կարգավորվում է, գործնականում համապատասխանեցնելով ազլումերացիաների հայեցակարգին, չնայած այդ տերմինով չի սահմանվում:

Ինչ վերաբերում է զգայուն տարածքներին, ՀՀ օրենսդրությունը դրանք պաշտոնապես չի սահմանում ԵՄ իմաստով (օրինակ՝ Էվորոֆիկ գոտիներ, որոնք պահանջում են ավելի խիստ մաքրում): Այնուամենայնիվ, որոշակի Էկոլոգիապես կարեւոր գոտիներ, ինչպիսիք են Սեւանա լիճը եւ Էկոլոգիապես խոցելի գետերը, պաշտպանված են հատուկ բնապահպանական օրենքներով եւ ռազմավարություններով: Հետեւաբար, այս տարածքները կարգավորիչ մեխանիզմների հատուկ ուշադրության են արժանանում, բայց չկա պաշտոնական քարտեզագրում կամ ցանկ, որը համարժեք է ԵՄ «զգայուն տարածքներին»:

Մասնակիորեն մոտարկված է

- **Քաղաքային կեղտաջրերի մաքրման պահանջների իրականացման համար տեխնիկական եւ ներդրումային ծրագրի կազմում (Հոդված 17(1))**

«Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին» հրահանգի 17-րդ հոդվածի 1-ին կետը ԵՄ անդամ պետություններից պահանջվում է մշակել հրահանգի իրականացման ծրագիր: Հայաստանի համար համապատասխան պահանջը քաղաքային կեղտաջրերի մաքրման ծրագիր ստեղծելն է: Քանի որ «Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին» հրահանգից մաքրման ոչ մի ստանդարտ չի հանդիսանում ՀՀԳՀ-ի մաս եւ, հետեւաբար, ուղղակիորեն չի վերաբերում Հայաստանին, ապա հարց է, թե ինչ պետք է պարունակի ծրագիրը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը աստիճանաբար պետք է մոտարկի իր օրենսդրությունը ԵՄ բնապահպանական օրենսդրությանը, նպատակահարմար է, որ նման ծրագրում նախանշվեն առնվազն միջոցառումներ եւ ցուցիչներ, թե ինչպես կարելի է առաջիկա տարիներին Հայաստանում աստիճանաբար բարելավել կեղտաջրերի մաքրման համակարգը, ինչ ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ, ինչ խոչընդոտներ կան եւ այլն:

2006 թվականի «Ջրի ազգային ծրագրի մասին» օրենքի 16-րդ հոդվածում, ըստ փոփոխությունների, նշված է, որ՝



- պետք է ապահովել կեղտաջրերի հեռացման ընկերությունների ֆինանսական կայունությունը.
- մասնավոր հատվածը պետք է ներգրավել կեղտաջրերի հեռացման ծառայությունների շահագործման մեջ.
- պետք է իրականացվի կեղտաջրերի մաքրման ծառայություններ մատուցող ընկերությունների գործունեության դիտանցում եւ վերահսկողություն.
- պետք է կիրառվեն ժամանակակից տեխնոլոգիաներ ջրամատակարարման եւ կեղտաջրերի հեռացման համակարգերի վերականգնման, կառուցման եւ շահագործման գործընթացում:

Այնուամենայնիվ, սրանք բոլորն առայժմ **զուտ հոչակագրային մտադրություններ են**, քանի որ դրանք չունեն որեւէ ժամանակացույց, պարտականություններ, կոնկրետ միջոցներ եւ ցուցիչներ, ինչպես կապահանջվեր «Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին» հրահանգի հոդված 17 (1) համանմանությամբ:

«Ջրային ազգային ծրագրի մասին» օրենքի 17-րդ հոդվածը նշում է, որ «կեղտաջրերի ոլորտում ինդիկների լուծման ուղիները սահմանվում են կառավարության կողմից սահմանված ջրօգտագործման առանձին ոլորտների **զարգացման ռազմավարություններով**»: Նման «ուղիները» պետք է լինեն «Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին» հրահանգում նշված չափորոշիչներին համապատասխանեցնող ծրագրի մաս: Սակայն նման ռազմավարություններ դեռեւս չեն մշակվել:

«Ջրային ծրագրի մասին» օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ խմելու ջրի (ինչու՞ միայն խմելու ջրի) հարցում առաջնահերթություն պետք է լինի կեղտաջրերի մաքրման կայանների անհրաժեշտ վերանորոգումը եւ նորերի կառուցումը, եւ պետք է ներդրվեն կեղտաջրերի մաքրման նոր տեխնոլոգիաներ (սա կրկին միայն հոչակագրային է, առանց որեւէ ժամանակացույցի կամ միջոցառման):

Մոտարկված չէ

Եզրափակիչ նկատառումներ եւ առաջարկություններ.

Հայաստանի օրենսդրության դեպքում, «Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին» հրահանգի որոշ համապատասխան ասպեկտներ մասամբ արտացոլված են ազգային իրավական շրջանակում, ներառյալ Ջրային օրենսգիրքը եւ ԿՈ-ն՝ կեղտաջրերի հեռացման ստանդարտներին վերաբերող: Այնուամենայնիվ, մնում են Եական բացթողումներ.

- Ազլմերացիաների հստակ դասակարգում չկա՝ հիմնված բնակչության համարժեքի վրա, ինչպես սահմանված է հրահանգում
- Կեղտաջրերի ենթակառուցվածքների ժամկետները եւ աստիճանական իրականացման ծրագրերը չեն ներդաշնակեցվում հրահանգի պահանջների հետ
- Իրավասու մարմինը որեւէ իրավական ակտով չի հաստատել կեղտաջրերի ընդհանուր եւ անհատական թույլատրելի հեռացման սահմանաչափերը
- Բացակայում են ինստիտուցիոնալ պատասխանատվությունը, ենթակառուցվածքային պլանավորումը եւ կարգավորող կիրարկումը

ՀՀԳԳ պահանջներից զատ, պետք է նշել, որ քաղաքային կեղտաջրերի դիտանցման, հաշվետվությունների եւ համապատասխանության մեխանիզմները բավարար չափով մշակված կամ ստանդարտացված չեն՝ համաձայն ԵՄ գործելակերպի:

91/271/ԵՏՀ Հրահանգին ավելի լավ մոտարկվելու համար Հայաստանը պետք է թարմացնի իր իրավական շրջանակը, պարզաբանի ինստիտուցիոնալ դերերը եւ իրականացնի



կառուցվածքային պլանավորում եւ դիտանցում: Այս քայլերը կարելու են ՀՀԳՀ պարտավորությունները կատարելու, ջրի որակը եւ հանրային առողջությունը բարելավելու համար:

3.3.4 «Մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի մասին» տորիորդի 1998 թվականի նոյեմբերի 3-ի 98/83/ԵՀ հրահանգ՝ փոփոխություններով

տորիորդի 98/83/ԵՀ հրահանգը սահմանում է մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի առաջին համաեվրոպական ստանդարտները: Այս հրահանգի նպատակն էր պահպանել հանրային առողջությունը՝ ապահովելով, որ Եվրոպական միության տարածքում խմելու ջուրը համապատասխանի անվտանգության եւ որակի ընդհանուր չափանիշներին:

Սակայն 98/83/ԵՀ հրահանգը չեղարկվել եւ փոխարինվել է [2020/2184/ԵՄ հրահանգով](#), որն ուժի մեջ է մտել 2023 թվականի հունվարի 13-ին: Այս վերանայված հրահանգը ներառում է մի շարք նշանակալի թարմացումներ, որոնք ուղղված են ջրի անվտանգության բարելավմանը եւ հանրային առողջության պահպանությանը:

ՀՀԳՀ-ի հավելվածը պետք է համապատասխանաբար փոփոխվի: **Մոտարկման մակարդակը գնահատվել է նոր 2020/2184/ԵՄ հրահանգի հիման վրա:**

• **Ներպետական օրենսդրության ընդունում**

Հայաստանում համապատասխան օրենսդրությունը ներառում է հետևյալ իրավական ակտերը.

- ՀՀ ջրային օրենսգիրք (ընդունվել է 2002 թվականին).
- «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2006 թվականին)՝ փոփոխություններով.
- «Ջրի ազգային քաղաքականության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2003 թվականին).
- ««Մարդու սպառման համար նախատեսված ջրի որակին ներկայացվող պահանջներ» 2.1.4.001-23 սանիտարական կանոնները եւ հիգիենիկ նորմատիվները հաստատելու [...] մասին» ՀՀ ԱՆ 2023 թվականի N 53-Ն հրաման:

«Խմելու ջրի մասին» հրահանգն օգտագործում է մի շարք սահմանումներ, սակայն դրանցից ոչ մեկն էական նշանակություն չունի հրահանգի՝ ՀՀԳՀ-ի մաս կազմող հատվածների մոտարկման տեսանկյունից:

Մոտարկված է

• **Իրավասու մարմնի/մարմինների սահմանում**

Ջրային օրենսգրքի 10-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմինը մասնակցում է ջրերի ստանդարտների մշակմանը եւ վերահսկում է դրանց կիրառումը:

ՀՀ ԱՆ 2023 թվականի N 53-Ն հրամանով հաստատված «Մարդու սպառման համար նախատեսված ջրի որակին ներկայացվող պահանջներ» 2.1.4.001-23 սանիտարական կանոններին եւ հիգիենիկ նորմատիվներին հետեւումն ապահովում են Առողջապահության նախարարությունն ու Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմինը:

Ջրային օրենսգիրքը նաեւ սահմանում է, որ առողջապահության ոլորտի պետական լիազորված մարմինը օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում բնակչությանը մատակարարվող խմելու ջրի որակի չափանիշների պահպանման նկատմամբ: Առողջապահական



Եւ աշխատանքի տեսչական մարմնի իրավասությունն է ապահովել առողջապահության ոլորտի իրավական ակտերի պահանջների պահպանումը՝ օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով:

Մտարկված է

- **Խմելու ջրի ստանդարտների սահմանում (հոդվածներ 4 եւ 5)**

Հրահանգի 4-րդ հոդվածը պահանջում է, որ մարդու սպառման համար նախատեսված ջուրը լինի առողջարար եւ մաքուր: Սա համարվում է այդպիսին, եթե բավարարվում են հետևյալ պահանջները՝

(ա) որ ջուրը գերծ լինի որեւէ միկրոօրգանիզմից եւ մակաբույծներից, ինչպես նաեւ ցանկացած նյութից, որը քանակով կամ կոնցենտրացիայով կարող է վտանգ ներկայացնել մարդու առողջության համար.

(բ) որ ջուրը համապատասխանում է I հավելվածի A, B եւ D մասերում սահմանված նվազագույն պահանջներին:

Հոդված 5-ը նաեւ հղում է կատարում I հավելվածին՝ նշելով, որ անդամ պետությունները պետք է սահմանեն մարդու սպառման համար նախատեսված ջրի համար կիրառելի արժեքներ՝ I հավելվածում նշված պարամետրերի համար: Այս հոդվածի 1-ին կետի համաձայն սահմանված պարամետրիկ արժեքները չպետք է պակաս խիստ լինեն, քան I հավելվածի A, B, C եւ D մասերում նշվածները:

Հավելվածը սահմանում է մանրէաբանական պարամետրերի (A մաս), քիմիական պարամետրերի (B մաս), ցուցիչ պարամետրերի (C մաս) եւ կենցաղային բաշխման համակարգերի ռիսկի գնահատման համար (Լեգիոնելա եւ կապար, D մաս) համապատասխան պարամետրերի շեմային արժեքներ:

Առողջապահության նախարարության (ԱՆ) թիվ 53 հրամանի համաձայն՝ խմելու ջուրը պետք է լինի անվտանգ եւ համապատասխանի այդ նորմերի 1-5 աղյուսակներում նշված պահանջներին, որոնք լիովին համապատասխանում են «Խմելու ջրի մասին» հրահանգով սահմանված պահանջներին: Ավելին, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հաշվի առնելով բնակչության սանիտարահամաճարակային անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությունը, ԱՆ-ն կարող է սահմանել լրացուցիչ ցուցանիշներ, որոնք չեն ներառվել այդ նորմերի 1-5 աղյուսակներում:

Բացի այդ, 2024 թվականին ընդունված «Հանրային առողջության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ պետական կառավարման մարմինները, տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաեւ ջրամատակարարման համակարգերի օպերատորները պատասխանատու են ջրամատակարարման համակարգերի պահպանման եւ բնակչության խմելու ջրի հասանելիության ապահովման համար՝ համաձայն հանրային առողջության նորմերի:

Այս նորմի պահպանումն ապահովելու համար նույն օրենքի դրույթով նախատեսված է, որ եթե խմելու ջրի որակը չի համապատասխանում հանրային առողջության չափանիշներին, հաստատությունների, իրավաբանական անձանց եւ անհատների կողմից խմելու ջրի օգտագործումը կարող է ժամանակավորապես կասեցվել տեսչական մարմնի որոշմամբ:

Մտարկված է

- **Դիտանցման համակարգի ստեղծում (հոդվածներ 6 եւ 7)**

Հոդված 6-ը (Նոր Հրահանգում դեռեւս նույն համարն ունի) թվարկում է համապատասխանության կետերը, որտեղ պետք է պահպանվեն սահմանված պարամետրերը (օրինակ՝ որտեղ է ջուրը դուրս



գալիս ծորակներից կամ որտեղ է այն (ցվում 22երի մեջ): **Հոդված 7-ը** **Նոր Հրահանգում դարձել է հոդված 13** (դիտանցման ասպեկտների վերաբերյալ): Մարդու սպառման համար նախատեսված ջրի որակի կանոնավոր դիտանցումն ապահովելու համար անհրաժեշտ բոլոր միջոցառումները պետք է իրականացվեն Հավելված II-ի Ա եւ Բ մասերի համաձայն: Մարդու սպառման համար նախատեսված **ջրի նմուշներ** պետք է վերցվեն: Համապատասխան **դիտանցման ծրագրերը** պետք է մշակվեն Հավելված II-ի Ա մասի համաձայն:

ԵՄ Հրահանգի Հավելված II-ը սահմանում է **դիտանցման ծրագրերի նվազագույն պահանջները** (Մաս A), ինչպիսիք են առանձին ջրի նմուշների հավաքագրումը եւ վերլուծությունը, ջրառի տարածքների ստուգումները եւ այլն, ինչպես նաեւ սահմանում է դիտանցման պարամետրերը եւ նմուշառման հաճախականությունները (Մաս B):

Հայաստանում խմելու ջրի որակի կանոնավոր դիտանցման իրականացման պատասխանատվությունը կրում է խմելու ջրի մատակարարման համակարգը շահագործող կազմակերպությունը (այստեղ՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ):

Կանոնավոր դիտանցման նպատակով խմելու ջրի մատակարարման համակարգը շահագործող կազմակերպությունը պետք է մշակի յուրաքանչյուր բնակավայրի խմելու ջրի մատակարարման համակարգի դիտանցման ծրագիր, որը պետք է ներառի թիվ 53 հրամանով սահմանված ցուցանիշների դիտանցում, լիազոր մարմնի կողմից սահմանված լրացուցիչ ցուցանիշների դիտանցում, շարունակական դիտանցման ընթացքում գրանցված չափումների արդյունքները եւ մի շարք այլ տվյալներ:

Խմելու ջրի մատակարարման համակարգը շահագործող կազմակերպությունը պետք է վերանայի եւ վերահաստատի խմելու ջրի դիտանցման ծրագիրը առնվազն վեց տարին մեկ: Պահանջները համապատասխանում են խմելու ջրի մասին հրահանգի պահանջներին: Սակայն, նկատելի է, որ մինչ օրս դեռեւս չկան խմելու ջրի դիտանցման հստակ ծրագրեր, եւ այս իրավական պահանջը անտեսվել է:

Առողջապահության նախարարությունն, իր հերթին, իրականացնում է դիսկերի գնահատում եւ անկախ դիտանցում, որոնց արդյունքները ներկայացվում են Ջրային կոմիտեին, իսկ շեղումների մասին՝ տեսչական մարմնին:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ **Հայաստանը դեռեւս կարիք ունի լաբորատոր սարքավորումների վերագինման** եւ հզորացման՝ խմելու ջրի նմուշների ստուգման ոլորտում:

Հիմնականում մոտարկված է (բայց չի կիրարկվել)

- **Սպառողներին տեղեկատվության տրամադրման համար մեխանիզմի ստեղծում (հոդված 13)**

Նոր Հրահանգում 13-րդ հոդվածը դարձել է **17-րդ հոդված**: Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ մարդու սպառման համար նախատեսված ջրի վերաբերյալ բավարար, թարմացված տեղեկատվություն լինի հասանելի՝ համաձայն IV հավելվածի: IV հավելվածը սահմանում է, որ խմելու ջրի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հասանելի լինի սպառողներին առցանց, օգտագործողին հարմար եւ անհատականացված եղանակով: Այն պետք է ներառի ջրի դիտանցման արդյունքները, կարծրությունը, հանքանյութերը, ջրում լուծված անիոնները/կատիոնները՝ կալցիում, մագնեզիում, կալիում, մարդու առողջության համար հնարավոր վտանգի վերաբերյալ տեղեկատվություն եւ այլն:

ՀՀ Առողջապահության նախարարության թիվ 53 հրամանը սահմանում է, որ խմելու ջրի մատակարարման համակարգերը շահագործող կազմակերպությունները պետք է **տարեկան**



առնվազն մեկ անգամ առցանց տրամադրեն խմելու ջրի վերաբերյալ ճշգրիտ եւ արդիական տեղեկատվություն: Այս տեղեկատվությունը պետք է ներառի հետեւյալ տվյալները՝

- խմելու ջրի մատակարարման համակարգը շահագործող կազմակերպության, տվյալ խմելու ջրի մատակարարման համակարգից օգտվող բնակիչների թվի, ինչպես նաեւ խմելու ջրի արտադրության, ներառյալ խմելու ջրի մաքրման եւ ախտահանման վերաբերյալ:
- խմելու ջրի մատակարարման համակարգը շահագործող կազմակերպության կողմից այս նորմերի 1-3 աղյուսակներում թվարկված ցուցանիշների դիտանցման արդյունքները, ներառյալ կալիումի, մագնեզիումի եւ կալիումի մոնիթորինգի արդյունքները՝ դրանց առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաների (ԱԹԿ)/ստանդարտների հետ միասին:
- խմելու ջրում կարծրության, լուծված հանքանյութերի, անիոնների եւ կատիոնների առկայությունը:
- խմելու ջրի մատակարարման համակարգը շահագործող կազմակերպության կողմից դիտանցման արդյունքում գրանցված անհամապատասխանությունների, խմելու ջրի որակի եւ/կամ մարդու առողջության համար հնարավոր ռիսկերի եւ համապատասխանաբար ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ:
- խմելու ջրի մատակարարման համակարգերի ռիսկերի գնահատման եւ կառավարման վերաբերյալ:

Ավելին, օրական առնվազն 10,000 մ³ խմելու ջուր մատակարարող կամ առնվազն 50,000 մարդու սպասարկող խմելու ջրի մատակարարման համակարգեր շահագործող կազմակերպությունները պետք է **տարեկան** տրամադրեն ավելի ընդարձակ տեղեկատվություն:

Այնուամենայնիվ, ՀՀ օրենսդրությունը չի սահմանում խմելու ջրի որակի վերաբերյալ պարբերաբար, **հեշտությամբ մատչելի եւ հրապարակային տվյալների** եւ դիտանցման արդյունքների վերաբերյալ պահանջներ: Խմելու ջրի որակի վերաբերյալ թարմացված օրական տվյալները հասանելի չեն խմելու ջրի մատակարարման համակարգը շահագործող կազմակերպության կայքում (չնայած վերը նշված իրավական պահանջին), ինչպես նաեւ չկա որեւէ բջջային հավելված՝ նման տեղեկատվությանը ծանոթանալու համար:

Որոշակիորեն մոտարկված է

Եզրափակիչ նկատառումներ եւ առաջարկություններ.

Կարելու է ընդգծել, որ Հայաստանում խմելու ջրի որակի համար սահմանված չափորոշիչները լիովին համապատասխանում են ԵՄ խմելու ջրի մասին հրահանգով սահմանված չափորոշիչներին: Պետք է նաեւ նշել, որ ՀՀ օրենսդրությունը սահմանում է խմելու ջրի մատակարարման համակարգը շահագործող կազմակերպության կողմից խմելու ջրի որակի կանոնավոր դիտանցման պարտավորությունը:

Այս ոլորտում Առողջապահության նախարարությունը կարելու է կենտրոնական դեր է խաղում անկախ դիտանցում անցկացնելու գործում: Ցավոք, Հայաստանում լաբորատորիաների տեխնիկական հագեցվածության առումով կան որոշակի բացթողումներ: Կա նաեւ զգալի թերություն խմելու ջրի որակի եւ դիտանցման արդյունքների վերաբերյալ տվյալների հրապարակման եւ մատչելիության հարցում:

Չնայած օրենսդրությունը պաշտոնապես այս պարտավորությունը դնում է խմելու ջրի մատակարարման կազմակերպության վրա, նման տեղեկատվությունը սպառողների համար հասանելի չէ: Չկա որեւէ կայք կամ բջջային հավելված, որը թույլ կտա սպառողներին մուտք գործել իրենց հետաքրքրող հարցերի վերաբերյալ տեղեկատվության: Ավելին, որոշակի տվյալներ տարեկան միայն մեկ անգամ տրամադրելու օրենսդրական պահանջը բավարար չէ, հատկապես



հաշվի առնելով, որ նույնիսկ այս պարտավորությունը գործնականում պատշաճ կերպով չի կատարվում:

Թափանցիկությունը բարձրացնելու եւ սպառողների համար հուսալի տեղեկատվության հասանելիությունն ապահովելու համար խորհուրդ է տրվում, որ համապատասխան մարմինները պարտավորեցնեն խմելու ջրի մատակարարման կազմակերպությունների կողմից կենտրոնացված, հանրությանը հասանելի թվային հարթակի՝ ինչպիսիք են հատուկ կայքը եւ/կամ բջջային հավելվածը, դրանց թարմացումը եւ պահպանումը: Այս հարթակը պետք է տրամադրի ինտերակտիվ կամ պարբերաբար թարմացվող տվյալներ խմելու ջրի որակի, դիտանցման արդյունքների եւ հայտնաբերված ցանկացած ռիսկի վերաբերյալ: Բացի այդ, տվյալները տարեկան հրապարակելու իրավական պահանջը պետք է վերանայվի՝ պահանջելով ավելի հաճախակի թարմացումներ (օրինակ՝ ամսական կամ եռամսյակային), որոնք կուղեկցվեն խիստ կիրառման մեխանիզմներով՝ համապատասխանությունն ու տվյալների ճշգրտությունն ապահովելու համար:

3.3.5 «Գյուղատնտեսական աղբյուրներից արտանետվող նիտրատների հետեւանքով առաջացող աղտոտման դեմ ջրերի պաշտպանության մասին» խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի 91/676/ԵՏՀ հրահանգ՝ փոփոխություններով

«Նիտրատների մասին» հրահանգի նպատակն է պահպանել ջրի որակը նիտրատային աղտոտումից, առավելապես՝ գյուղատնտեսական աղբյուրներից: Հրահանգի նպատակն է նվազեցնել գյուղատնտեսության մեջ օգտագործվող նիտրատներից առաջացող ջրի աղտոտվածությունը՝ թե՛ մակերեսային, թե՛ ստորգետնյա ջրերում՝ հետեւյալի միջոցներով.

- ջրային մարմիններում նիտրատի կոնցենտրացիաների **դիտանցում**.
- նիտրատների նկատմամբ խոցելի գոտիների **սահմանում**.
- ջրի նիտրատային աղտոտվածությունը կանխելու եւ նվազեցնելու համար **գյուղատնտեսական լավագույն փորձի կանոնադրերի** եւ միջոցառումների սահմանում:

• **Ներպետական օրենսդրության ընդունում**

Հայաստանում նիտրատների հետ կապված օրենսդրությունը ներառում է հետեւյալ իրավական ակտերը.

- ՀՀ ջրային օրենսգիրք (ընդունվել է 2002 թվականին).
- «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2006 թվականին)՝ փոփոխություններով.
- «Ջրի ազգային քաղաքականության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2003 թվականին).
- «Ջրային ռեսուրսների նիտրատներով խոցելի տարածքների հայտնաբերման չափորոշիչները եւ գյուղատնտեսական գործունեության հետեւանքով ջրային ռեսուրսների՝ նիտրատներով աղտոտման նվազմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ ՇՄՆ 2024 թվականի N 219-Ն հրաման:

Մոտարկում ապահովելու համար Հայաստանը պետք է իր օրենսդրության մեջ ներառի հրահանգում սահմանված հիմնական հասկացությունները՝ դրա կանոններում սահմանված պահանջներին համապատասխանելու համար:

Այդ հասկացություններն են՝ «ստորգետնյա ջրեր», «քաղցրահամ ջուր», «գյուղատնտեսական կենդանիներ», «պարարտանյութեր», «աղտոտում», «Էվտրոֆիկացիա» եւ «խոցելի տարածք»:

Հայաստանում «ստորգետնյա ջրեր» եւ «նիտրատներով խոցելի տարածքներ» տերմինները լավագույնս սահմանված են ինչպես Ջրային օրենսգրքում, այնպես էլ ՀՀ ՇՄՆ 2024 թվականի N 219-Ն հրամանում: «Քաղցրահամ ջուր», «գյուղատնտեսական կենդանիներ», «պարարտանյութեր»,



«Էվտրոֆիկացիա» եւ «(նիտրատներով) աղտոտում» տերմիններն օգտագործվում են, սակայն սահմանված չեն: Խորհուրդ է տրվում սահմանել նաեւ այս տերմինները՝ դրանց նշանակությունը սխալ մեկնաբանելու հնարավորությունը բացառելու համար:

Հիմնականում մոտարկված է

- **Իրավասու մարմնի/մարմինների սահմանում**

Ջրային օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը սահմանափակող նորմերը մշակում է ԾՄՆ ներքո գործող Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմինը: Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմինը նաեւ մշակում է չափանիշներ նիտրատների նկատմամբ խոցելի ջրային ռեսուրսների գոտիները որոշելու համար եւ իրականացնում է միջոցառումներ, որոնք ուղղված են գյուղատնտեսական գործունեության հետեւանքով ջրային ռեսուրսների նիտրատային աղտոտման նվազեցմանը եւ կանխարգելմանը:

Մոտարկված է

- **Դիտանցման ծրագրերի սահմանում (Հոդված 6)**

«Նիտրատների մասին» հրահանգի 6-րդ հոդվածը պահանջում է մշակել եւ իրականացնել նիտրատների ազգային դիտանցման ծրագիր՝ խոցելի գոտիները որոշելու համար: Նիտրատների դիտանցման ծրագիրը/պլանը պետք է անդրադառնա նիտրատների կոնցենտրացիաներին ինչպես ստորգետնյա, այնպես էլ քաղցրահամ ջրերում: ԵՄ-ում նման ծրագիրը պետք է կրկնվի անդամ պետությունների կողմից յուրաքանչյուր չորս տարին մեկ:

Բնապահպանության նախարարության 2024 թվականի 219 որոշման 5.5-րդ կետի համաձայն՝ «նիտրատի նկատմամբ խոցելի տարածքները որոշվում են առկա դիտակետերից ստացված դիտանցման տվյալների վիճակագրական վերլուծության հիման վրա»: Արդյունքների հիման վրա յուրաքանչյուր գետավազանի համար սահմանվում եւ ներառվում են գետավազանի կառավարման պլաններում նիտրատի նկատմամբ խոցելի տարածքները (ինչը անսովոր է ԵՄ-ում. այս պլանները պետք է պահվեն առանձին): Դիտանցման տվյալների հիման վրա նիտրատի նկատմամբ խոցելի տարածքների վերանայումն իրականացվում է յուրաքանչյուր վեց տարին մեկ (որոշման 6-րդ եւ 7-րդ կետեր):

Այսպիսով, Հայաստանի օրենսդրությունը նախատեսում է նիտրատների դիտանցման միայն հիմնական քայլերը, բայց այն չի պահանջում ստեղծել մանրամասն դիտանցման համակարգ, եւ նման ծրագիր դեռեւս չի ստեղծվել: Օրինակ, Սեւանի ավազանի կառավարման պլանը բավականին մանրամասն ներկայացնում է տարբեր ջրային մարմիններում նիտրատի ուսումնասիրությունների արդյունքները եւ նշում է այն վայրերը, որտեղ ջրի նմուշներում նիտրատի կոնցենտրացիաները գերազանցել են ԵՄ նիտրատների մասին հրահանգով սահմանված չափանիշները: Այնուամենայնիվ, պլանը չի ներառում նիտրատի դիտանցման ծրագրի ընդունում:

Պետք է նաեւ հաշվի առնել, որ այդ կառավարման պլաններից մի քանիսի ժամկետը լրացել է, այդ ժամանակահատվածում դիտանցման ծրագրեր չեն ընդունվել, եւ նոր կառավարման պլաններ դեռեւս չեն հաստատվել: Սա մոտարկման հարցում թերություն է:

Խոցելի գոտիների համար վեց տարվա վերանայման ժամկետը (ԵՄ-ում չորս տարվա համեմատ) համարվում է բավարար մոտարկման համար:

Որոշակիորեն մոտարկված է



- Աղտոտված կամ վտանգված ջրերի հայտնաբերում եւ նիտրատների նկատմամբ զգայուն գոտիների սահմանում (Հոդված 3)

«Նիտրատների մասին» հրահանգի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանը պետք է հայտնաբերի (նիտրատով) աղտոտված ջուրը կամ ջուրը, որը գտնվում է նման ռիսկի տակ, եւ նաեւ սահմանի նիտրատների նկատմամբ զգայուն գոտիները:

Ինչ վերաբերում է նիտրատների նկատմամբ զգայուն գոտիների սահմանմանը, Բնապահպանության նախարարության 2024 թվականի թիվ 2019 որոշումը պարունակում է նման սահմանման չափանիշները, որոնք պետք է մշակվեն Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմնի կողմից՝ համաձայն Ջրային օրենսգրքի 69-րդ հոդվածի (2) կետի:

Ջրային օրենսգրքի 10-րդ հոդվածը թվարկում է Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմնի բոլոր իրավասությունները, ներառյալ ջրային ռեսուրսների կառավարման պլանների մշակման պատասխանատվությունը, որոնք ներառում են նիտրատների նկատմամբ զգայուն տարածքների նշանակված տարածքները (ինչը այդպես չի արվում ԵՄ անդամ պետություններում, եւ կասկածելի է, թե արդյոք դա նպատակահարմար է):

Ինչ վերաբերում է նիտրատներով աղտոտված ջրերի հայտնաբերմանը, ապա ՀՀ օրենսդրությունը դեռեւս նման հայտնաբերում չի պահանջում:

Ինչ վերաբերում է նիտրատների նկատմամբ զգայուն գոտիների սահմանմանը, ապա Բնապահպանության նախարարության 2024 թվականի թիվ 2019 որոշումը պարունակում է նման սահմանման չափանիշները, որոնք պետք է ձեւակերպվեն Ջրային օրենսգրքի 69-րդ հոդվածի (2) կետի համաձայն Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմնի կողմից, ինչպես նաեւ այդ գոտիների սահմանման հիմքը: Մասնավորապես, նիտրատների նկատմամբ զգայուն գոտիները որոշվում են ջրային ռեսուրսների դիտանցման կայաններից ստացված առկա դիտարկումների տվյալների վիճակագրական վերլուծության հիման վրա: Այս վերլուծության արդյունքների հիման վրա յուրաքանչյուր գետավազանի համար նույնականացվում են զգայուն գոտիներ եւ ներառվում համապատասխան ավազանային կառավարման պլաններում: (ԵՄ-ում այդպես է արվում, զգայուն գոտիները չեն սահմանվում գետավազանային կառավարման պլաններում):

Սակայն գործնականում Հայաստանի ավազանային կառավարման պլանները ընդհանրապես արդյունավետորեն չեն անդրադառնում նիտրատների նկատմամբ զգայուն գոտիներին:

Մասնակիորեն մոտարկված է (բայց չի կիրարկվել)

- Պատշաճ գյուղատնտեսական գործելակերպի գործողությունների ծրագրերի եւ կանոնների սահմանում՝ նիտրատների նկատմամբ զգայուն գոտիների համար (հոդվածներ 4 եւ 5)

Հոդված 4-ի համաձայն՝ Հայաստանը պետք է մշակի «պատշաճ գյուղատնտեսական գործելակերպի ծրագրեր եւ կանոններ, որոնք պետք է ներդրվեն գյուղացիների կողմից կամավոր հիմունքներով: Դրանք պետք է պարունակեն որոշակի նվազագույն պահանջներ, ինչպես նշված է II Ա հավելվածում, ինչպիսիք են պարարտանյութերի հողօգտագործման անհամապատասխան ժամանակահատվածները եւ ջրային հոսանքների մոտ պարարտանյութերի հողօգտագործման պայմանները:

Հոդված 5-ի համաձայն՝ «գործողությունների պլանները» (որոնք Հրահանգում կոչվում են գործողությունների ծրագրեր) պետք է մշակվեն Հայաստանի կողմից բոլոր սահմանված զգայուն



գոտիներում: Այս գործողությունների պլանները/ծրագրերը պետք է պարունակեն մի շարք պարտադիր գործողություններ, որոնք թվարկված են II հավելվածում, մասնավորապես՝

- ժամանակահատվածներ, երբ որոշակի տեսակի պարարտանյութերի հողօգտագործումն արգելվում է
- գոմաղբի պահեստավորման տարողունակությունը.
- պարարտանյութերի հողօգտագործման սահմանափակումը:

Ինչ վերաբերում է **«պատշաճ գյուղատնտեսական գործելակերպի գործողությունների ծրագրերի եւ կանոնների»** սահմանմանը, որոնք ԵՄ բոլոր անդամ պետություններում գյուղատնտեսական քաղաքականության հիմնական գործիք են, ապա ՀՀ ջրային ռեսուրսների պաշտպանության օրենսդրության մեջ չկա որեւէ դրույթ, որը պահանջում է նման ծրագրերի եւ կանոնների մշակում: ԵՄ անդամ պետություններում նման ծրագրերի եւ կանոնների սովորաբար մշակվում են գյուղատնտեսության ոլորտի իրավասու մարմինների հովանու ներքո:

ՀՀ-ում գյուղատնտեսական ոլորտը ներառված է Էկոնոմիկայի նախարարության կազմում, սակայն որքանով այս զեկույցի հեղինակները տեղյակ են՝ դեռեւս «պատշաճ գյուղատնտեսական գործելակերպի գործողությունների ծրագրերի եւ կանոնների» չեն մշակվել:

«Պատշաճ գյուղատնտեսական գործելակերպի գործողությունների ծրագրերի եւ կանոնների» փոխարեն, Բնապահպանության նախարարության թիվ 219-րդ հրամանը՝ «գյուղատնտեսական գործունեության հետեւանքով ջրային ռեսուրսների նիտրատներով աղտոտումը նվազեցնելու կամ կանխելու մասին», նախատեսում է մշակել մի շարք միջոցառումներ: Այս միջոցառումները պետք է ներառեն ազոտական պարարտանյութերի օգտագործման եւ գոմաղբի պահեստավորման սահմանափակումներ՝ հաշվի առնելով խոցելի տարածքի առանձնահատկությունները, մասնավորապես՝ հողի տեսակը եւ թեթւությունը, կլիմայական պայմանները, տեղումները, ոռոգումը, հողօգտագործումը եւ գյուղատնտեսական գործելակերպը, ներառյալ ցանքաշրջանառությունը:

Յուրաքանչյուր զգայուն տարածքում իրականացվող միջոցառումները պետք է ապահովեն մշակաբույսերի կանխատեսելի ազոտի պահանջարկի եւ հողից ու պարարտանյութերից մշակաբույսերին փոխանցվող ազոտի քանակի միջեւ հավասարակշռություն: Միջոցառումները պետք է ապահովեն, որ յուրաքանչյուր ֆերմայի կամ անասնապահական տնտեսության համար տարեկան հողին բավող գոմաղբի քանակը՝ արհեստական, թե բնական միջոցներով, չգերազանցի մեկ հեկտարի համար սահմանված սահմանաչափը: Գոմաղբի քանակը հաշվարկվում է անասունների թվաքանակի հիման վրա՝ օգտագործելով միջազգայնորեն ընդունված գործակիցներ: Միջազգային մակարդակով սահմանված սահմանաչափը մեկ հեկտարի համար 170 կգ ազոտ պարունակող գոմաղբ է: Սկզբնական փուլում կարող է թույլատրվել տարբեր քանակություն, եթե դա չի խոչընդոտում նիտրատային աղտոտվածության նվազեցման եւ կանխարգելման գործընթացին: Գյուղատնտեսական գործունեության հետեւանքով ջրային ռեսուրսների նիտրատային աղտոտվածության նվազեցմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումները կրկին պետք է սահմանվեն ավագանի կառավարման պլաններում:

Հատկանշական է, որ Սեւանի ավազանում օրգանական պարարտանյութերի օգտագործման վերաբերյալ տվյալներ չկան: Մեկ հեկտարի համար օգտագործվել է մոտ 2000 կգ հանքային պարարտանյութ: Գոմաղբը Սեւանի ավազանի կառավարման տարածքի ջրային ռեսուրսների վրա ազդող ճնշման գործոններից մեկն է: Հոսքի միջոցով գոմաղբը կարող է մտնել մակերեսային ջրեր եւ ներթափանցել ստորգետնյա ջրեր, ինչը հանգեցնում է ջրում ազոտի, ֆոսֆորի եւ օրգանական միացությունների կոնցենտրացիաների աճի:



ՀՀ օրենսդրությունում նաեւ չկա որեւէ իրավական պահանջ **զգայուն գոտիների համար նախատեսված «գործողությունների պլանների»** մասով: 69-րդ հոդվածի (2) կետը միայն սահմանում է, որ Ձրային ռեսուրսների կառավարման եւ պահպանման մարմինը պատասխանատու է «գյուղատնտեսական գործունեությունից նիտրատային աղտոտվածության մեղմացման եւ կանխարգելման միջոցառումների իրականացման» համար, բայց չի նշում, թե ինչպես, երբ եւ ում համար պետք է սահմանվեն նման միջոցառումներ: Այս ամենը պետք է լինի գործողությունների պլանի մաս` հաշվի առնելով վերը նշված չափանիշները:

Որոշակիորեն մոտարկված է

Եզրափակիչ նկատառումներ եւ առաջարկություններ.

Հայաստանն ընդունել է օրենսդրություն եւ սահմանել լիազորություններ նիտրատների նկատմամբ զգայուն գոտիներում գյուղատնտեսական գործունեության հետեւանքով առաջացող աղտոտման հետ կապված հարաբերությունների կարգավորման ոլորտում: Այն նաեւ սահմանել է, թե ինչպես պետք է նման տարածքները հայտնաբերվեն եւ սահմանվեն:

Այնուամենայնիվ, դիտանցման եւ իրականացման միջոցառումների վերաբերյալ, այս հարցերի կարգավորումը Բնապահպանության նախարարության հրամանով վերապահվել է ավագանային կառավարման պլաններին, որոնք, ցավոք, արդյունավետություն չեն ցուցաբերել այս խնդիրների լուծման գործում: Օրենսդրությամբ նախատեսված չեն զգայուն գոտիների համար նախատեսված գործողությունների պլաններ, ինչպես նաեւ ԵՄ-ում նիտրատներով աղտոտման կանխարգելման ստանդարտ գործիքների համար նախատեսված «Պատշաճ գյուղատնտեսական գործելակերպի գործողությունների ծրագրեր եւ կանոններ»: Ուստի, օրենսդրությունը պետք է բարելավվի:

Բացի այդ, մենք առաջարկում ենք գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման` խորհրդային դարաշրջանի ուղեցույցի ամբողջական վերանայում եւ թարմացում, քանի որ այն չի ներառում Հայաստանում այժմ հաջողությամբ մշակվող բազմաթիվ նոր մշակաբույսեր, ինչպես նաեւ հաշվի չի առնում կլիմայի փոփոխության եւ ոռոգման համակարգերի նորարարությունների հետ կապված խնդիրները:

3.4 Թափոնների կառավարում

Թափոնների կառավարման ոլորտում ԵՄ շրջակա միջավայրի օրենսդրությունը ներառում է բազմաթիվ հրահանգներ, կանոնակարգեր եւ որոշումներ: Հրահանգները կարող են բաժանվել երկու կատեգորիայի. հրահանգներ որոնք ուղղված են թափոնների կառավարման գործողություններին, ինչպիսիք են թափոնների թաղումը, վերամշակումը եւ այրումը, եւ հրահանգներ, որոնք ուղղված են թափոնների կառավարման կոնկրետ ուղղություններին, ինչպիսիք են` փաթեթավորումը, էլեկտրական եւ էլեկտրոնային թափոնները, մարտկոցների եւ շահագործումից դուրս բերված փոխադրամիջոցները:

Այս հրահանգները (դեռեւս) ՀՀԳՀ-ի մաս չեն կազմում: ՀՀԳՀ-ի մաս չի կազմում նաեւ Թափոնների ցանկի մասին 2000 թվականի 2000/532/ԵՀ որոշումը, որն ապահովում է ԵՄ-ում «թափոններ» եւ «վտանգավոր թափոններ» հասկացություններ միասնական կիրառումը:

ՀՀԳՀ-ում ներառված են թափոններին առնչվող միայն երկու հիմնական հրահանգներ` «Թափոնների մասին» հրահանգը եւ «Թափոնների թաղման մասին հրահանգը», ինչպես նաեւ «Արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների մասին» հրահանգը (լեռնահանքարդյունաբերական թափոններ)` հաշվի առնելով, որ բնական պաշարների արդյունահանումը եւ դրա արդյունքում գոյացող թափոնները լուրջ խնդիր են ներկայացնում Հայաստանի համար:



3.4.1 Որոշ հրահանգներ ուժը կորցրած ճանաչող՝ «Թափոնների մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/98/ԵՅ հրահանգ

2008/98/ԵՅ հրահանգը թափոնների ոլորտում «մայր» հրահանգն է: Վերջին տարիներին այն զգալիորեն փոփոխվել է. ներկա պահին գործում է [2024 թվականի փետրվարի 18-ից ուժի մեջ մտած նոր կոնսոլիդացված տարբերակը](#):

Հրահանգը պարունակում է թափոնների ոլորտին առնչվող բոլոր համապատասխան սահմանումները, սահմանում է թափոնների կառավարման հիմնարար հիերարխիան, ներկայացնում է արտադրողի ընդլայնված պատասխանատվության (ԱԸՊ) ուղղությամբ հիմնական պարտավորությունները, սահմանում է թափոնների կառավարման մի շարք թիրախային նպատակներ, սահմանում է թափոնների կառավարման հիմնական պահանջները (ներառյալ թույլտվությունների եւ գրանցման պահանջները)՝ հատուկ ուշադրություն դարձնելով վտանգավոր թափոնների կառավարմանը, ինչպես նաեւ կարգավորում է թափոնների կառավարման նախագծերն ու ծրագրերը:

Սակայն ոչ բոլոր այս հարցերն են ներառվել ՀՀԳՀ-ի շրջանակի մեջ:

- **Ներպետական օրենսդրության ընդունում**

Հայաստանում կա թափոնների կառավարման հարցերի հետ կապված երկու օրենք, ինչպես նաեւ կառավարության մի շարք որոշումներ եւ մեկ հրաման՝ կապված ՀՀԳՀ-ին մոտարկման հետ: Նշված օրենքներն են՝

- «Թափոնների մասին» 2004 թվականի օրենքը՝ փոփոխություններով.
- «Աղբահանության եւ սանիտարական մաքրման մասին» 2011 թվականի օրենքը՝ փոփոխություններով:

Համապատասխան ենթաօրենսդրական ակտերն են.

- «ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման եւ տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003 թվականի N 121-Ն որոշում.
- «Թափոնների անձնագրավորման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի N 47-Ն որոշում.
- «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» ՀՀ շրջակա միջավայրի նախարարի **20024 թվականի N 07 հրաման**:

«Թափոնների մասին» հրահանգի որոշ դրույթներ իրենց արտացոլումն են գտել Հայաստանի թափոնների ոլորտի իրավական կարգավորման մեջ, ներառյալ մի շարք համապատասխան սահմանումներ, ինչպիսիք են՝ «կենցաղային թափոնները», «վտանգավոր թափոններ», «թափոնների օգտահանում» եւ այլն:

Սակայն մի շարք **հիմնական սահմանումներ դեռեւս ամրագրված չեն** (օրինակ՝ «թափոն» տերմինի սահմանումը բացակայում է, իսկ «թափոնի սեփականատեր» տերմինը մեկնաբանվում է Եվրոպական մոտեցմանը հակառակ, ըստ որի՝ առարկան դառնում է թափոն, եթե «սեփականատերը ցանկանում է ազատվել դրանից», այսինքն, հրաժարվում է ցանկացած սեփականության իրավունքից), **կամ սահմանված են ոչ այնքան ճշգրիտ** (օրինակ՝ «թափոնների հեռացում», «օգտահանում», «թափոնների կառավարում»), ինչը **չի համապատասխանում ԵՄ օրենսդրությանը**:

Որոշակիորեն մոտարկված է



- **Իրավասու մարմնի/մարմինների սահմանում**

«Թափոնների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ կառավարությունն է պատասխանատու թափոնների գործածության ոլորտում պետական քաղաքականության մշակման համար: Ենթադրվում է, որ սա ներառում է համապատասխան օրենսդրության մշակումը եւ ընդունումը: Թափոնների կառավարման ոլորտում ՀՀԳՀ-ի պահանջների կատարման հետ կապված առաջադրանքների կատարման համար պատասխանատու են մի շարք պետական մարմիններ եւ հաստատություններ:

Շրջակա միջավայրի նախարարությունն, ի թիվս այլի, կազմում է թափոնների գործածության ոլորտում նպատակային ծրագրեր, թափոններ առաջացնողներին տրամադրում է թափոնների անձնագրեր, կազմում է վտանգավոր թափոնների ցանկը, իրականացնում է թափոնների պետական հաշվառումը («Թափոնների մասին» ՀՀ օրենք, Հոդված 8): «Աղբահանության եւ սանիտարական մաքրման» մասին ՀՀ օրենքի 4.2-րդ հոդվածի համաձայն՝ ՇՄՆ-ն պատասխանատու է նաեւ թափոնների հավաքման ծառայությունների բարելավմանն ուղղված ծրագրերի մշակման եւ համակարգման համար:

Առողջապահության նախարարությունը (ԱՆ) պատասխանատու է («Թափոնների մասին» ՀՀ օրենք, Հոդված 9) թափոնների գործածությանը վերաբերող նորմատիվատեխնիկական փաստաթղթերում մարդու առողջության համար անվտանգության պահանջների մշակման համար:

Տարածքային կառավարման մարմիններն ու տեղական ինքնակառավարման մարմինները («Թափոնների մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 10 եւ 11) ի թիվս այլի, պատասխանատու են աղբահանության վերահսկողության համար: ՏԻՄ-երը նաեւ «աջակցում են» համայնքի ներսում կենցաղային թափոնների տեսակավորված հավաքման համակարգին:

Բոլոր գոյություն ունեցող լիազորությունները հստակ բաշխված են: Այնուամենայնիվ, «թափոնների հավաքման» հետ կապված լիազորությունների հատման հնարավորությունը հնարավոր չէ գնահատել:

Մոտարկված է

- **Թափոնների կառավարման հինգաստիճան ստորակարգությանը համապատասխան թափոնների կառավարման պլանների եւ թափոնների առաջացման կանխարգելման ծրագրերի կազմում (Գլուխ V)**

«Թափոնների մասին» հրահանգը պահանջում է թափոնների կառավարման ազգային պլանների եւ թափոնների առաջացումը կանխարգող ծրագրերի ընդունում՝ որոշակի բովանդակությամբ եւ հասարակության մասնակցությամբ: Պլանում պետք է նկարագրվի, թե ինչ միջոցներ պետք է ձեռնարկվեն թափոնների յուրաքանչյուր տեսակի համար՝ համաձայն թափոնների հիերարխիայի, որը ենթադրում է թափոնների կանխարգելման գերակայություն վերաօգտագործման նկատմամբ, որին հաջորդում են վերամշակումը, օգտահանումը եւ վերջում՝ թափոնների ուտիլիզացումը:

Թափոնների ոլորտում ՀՀ օրենսդրությունը թափոնների կառավարման ազգային պլանների եւ թափոնների առաջացումը կանխարգելող ծրագրերի մշակում եւ ընդունում չի նախատեսում: «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ «թափոնների կառավարման նպատակային ծրագրերը» պետք է մշակվեն Շրջակա միջավայրի նախարարության կողմից, բայց հասկանալի չէ, թե ինչպիսի բովանդակություն պետք է ունենան դրանք: Ավելին, ներկա դրությամբ նման ծրագիր դեռեւս չի ընդունվել:



ՀՀ կառավարությունը 2021 թվականի ապրիլի 1-ին ընդունել է N 464-Լ որոշումը՝ «Աղբահանության համակարգի ռազմավարությունը եւ ռազմավարության կիրարկումն ապահովող 2021-2023 թթ. միջոցառումների ծրագրերը հաստատելու մասին»: Սա կարող է դիտվել որպես առաջին քայլ՝ Թափոնների կառավարման ազգային պլանի ուղղությամբ: 2022 թվականի հունիսին մշակվել է Էլեկտրոնային թափոնների կառավարման նախնական պլան, սակայն առանց պաշտոնական իրավական հիմքի: Թափոնների կառավարման հիերարխիան՝ որպես այդպիսին, դեռեւս չի ներդրվել ՀՀ թափոնների ոլորտի օրենսդրության մեջ:

Որոշակիորեն մոտարկված է

- «Աղտոտողը վճարում է» եւ արտադրողների ընդլայնված պատասխանատվության սկզբունքներին համապատասխան՝ ծախսերի ամբողջական փոխհատուցման մեխանիզմի սահմանում (Հոդված 14)

Ծախսերի փոխհատուցման մեխանիզմը նախատեսում է, որ թափոնների կառավարման հետ կապված բոլոր ծախսերը պետք է կատարվեն թափոններ առաջացնողի կամ դրանց սեփականատիրոջ կողմից: Հայաստանում թափոնների հավաքման հետ կապված բոլոր ծախսերը կարգավորվում են «Աղբահանության մասին» օրենքով: Այնուամենայնիվ, վերջերս կատարված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ներկայիս համակարգը ներառում է միայն թափոնների հավաքման գործառնական, բայց ոչ դրանց ոչնչացման ծախսերը, եւ նաեւ, որ իրավաբանական անձանցից գանձվող վճարները դեռ շատ ցածր են ամբողջ ծառայության ծախսածածկման մակարդակից: Բոլոր ծախսերի փոխհատուցման մեխանիզմ ստեղծելու համար անհրաժեշտ է ընդլայնել Հայաստանում թափոնների կառավարման վճարների հավաքագրման շրջանակը:

Ինչ վերաբերում է արտադրողների ընդլայնված պատասխանատվության (ԱԸՊ) համակարգին, այն կարգավորվում է «Թափոնների մասին» 8-րդ հոդվածի «ա» կետով եւ գտնվում է ՀՀԳԳ-ի շրջանակից դուրս: Այն դեռեւս ներառված չէ ՀՀ օրենսդրության մեջ, սակայն երկրում իրականացվում են ԱԸՊ-ին առնչվող մի շարք պիլոտային նախագծեր:

Մասնակիորեն մոտարկված է

- Հեռացման կամ վերականգնման գործողություններ իրականացնող հաստատությունների/ձեռնարկությունների համար թույլտվությունների տրամադրման համակարգի ստեղծում՝ վտանգավոր թափոնների կառավարման գծով հատուկ պարտավորությունների սահմանմամբ (Գլուխ IV)

«Թափոնների մասին» հրահանգի 23-րդ հոդվածը պահանջում է, որ **թափոնների գործածության հետ առնչվող** բոլոր ձեռնարկությունները եւ կազմակերպությունները ունենան թույլտվություն (լիցենզիա): Նման թույլտվության նվազագույն բովանդակությունը կարգավորվում է հրահանգի նշված դրույթով:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «ե» կետի համաձայն՝ վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահման, փոխադրման եւ տեղադրման գործունեությունը պահանջում է լիցենզավորում: Այս պահանջը կրկնվում է (ինչու՞) ՀՀ կառավարության 2003 թվականի N 121-Ն որոշման մեջ («Վտանգավոր թափոնների կառավարմանն առնչվող գործունեությունը պահանջում է լիցենզավորում»): Ինչ վերաբերում է այդ լիցենզիայի բովանդակությանը, ապա կառավարության N 121-Ն որոշումը կարգավորում է միայն դիմումի, բայց ոչ բուն լիցենզիայի բովանդակությունը: Բացի այդ, դիմումի բովանդակությունը չի համապատասխանում «Թափոնների մասին» հրահանգի 23-րդ հոդվածի պահանջներին, որտեղ նշված է, թե ինչ պետք է արտացոլվի թույլտվության մեջ: Ավելին, լիցենզիա պահանջվում է միայն



վտանգավոր թափոններին առնչվող գործունեության համար, իսկ ոչ վտանգավոր թափոնների հետ կապված գործունեության որոշ տեսակներ դուրս են մնում այդ շրջանակից:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարի **20024 թվականի N 07 հրամանի** մեջ թվարկված են բոլոր վտանգավոր թափոնները: Ենթադրվում է, որ այս ցանկը մեծապես համապատասխանում է «Թափոնների մասին» հրահանգի III հավելվածին, որտեղ թվարկվում է բոլոր վտանգավոր նյութերը, եւ Թափոնների ցանկի մասին ԵՄ 200/532/ԵՀ որոշմանը: Այս առումով, մոտարկման մակարդակն ընդունելի է:

Վտանգավոր թափոններ առաջացնող անձինք պետք է կազմեն եւ հաստատման ներկայացնեն «թափոնների անձնագիր»: Թափոնների անձնագիրը փաստաթուղթն է, որը հաստատում է թափոնի տեսակը եւ վտանգավորության դասը, պարունակում է տեղեկություններ դրա կազմի մասին: Այս անձնագիրը կարող է դիտարկվել որպես քայլ դեպի իրավական մոտարկում: Սակայն դա միայն այն դեպքում, եթե անձնագիրն ապահովում է **տեղաշարժի վերահսկում արտադրությունից մինչեւ վերջնական նպատակակետ**, ինչն իրականում այդքան էլ հստակ չէ, քանի որ օրենքում դրա վերաբերյալ որեւէ նշում չկա:

Որոշակիորեն մոտարկված է

- **Թափոնների հավաքման եւ փոխադրման հաստատությունների եւ ձեռնարկությունների ռեեստրի ստեղծում (Գլուխ IV)**

«Թափոնների մասին» օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանում գործում է թափոնների կադաստր, որը ներառում է «թափոնների դասակարգիչը, թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների եւ հեռացման վայրերի ռեեստրները, ինչպես նաեւ թափոնների եւ դրանց օգտագործման ու վնասագերծման տեխնոլոգիաների վերաբերյալ տվյալների բանկը»:

Սակայն, գործող թափոնների կադաստրը չի ներառում թափոնների հավաքման եւ տեղափոխման հաստատությունների մասին տեղեկատվություն, ինչը «Թափոնների մասին» օրենքի 14-րդ հոդվածով դեռեւս նախատեսված չէ:

Մոտարկված չէ

Եզրափակիչ նկատառումներ եւ առաջարկություններ.

Հայաստանում կա թափոնների կառավարման ոլորտը կարգավորող ընդհանուր օրենսդրություն, բայց մասնավորապես «Թափոնների մասին» ՀՀ օրենքը գործնականում ամբողջությամբ կենտրոնացած է լիազորությունների բաշխման վրա եւ պարունակում է նշանակալի զուտ նկարագրական բաժիններ: Բացի այդ, այլ լուր ընդհանրականորեն թվարկում է թափոնների կառավարման համակարգում տարբեր մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները՝ առանց դրանց հստակեցման: Բացի այդ, օրենքում տնտեսական խթաններն ավելի շատ նկարագրված են, քան իրականում կարգավորված են, ինչը նվազեցնում է իր գործնական արդյունավետությունը:

«Թափոնների մասին» եւ «Աղբահանության եւ սանիտարական մաքրման մասին» օրենքները միմյանց հետ անմիջական կապ չունեն եւ գոյություն ունեն որպես «ինքնուրույն» նորմատիվ ակտեր, ինչը ստեղծում է լիազորությունների կրկնօրինակման կամ հակասությունների ռիսկ: Սա արդեն ակնհայտ է նրանց անվանումներից՝ «թափոններ» եւ «աղբ», որոնք, իրավական տեսանկյունից, պետք է լինեն միեւնույն տերմինները, բայց օրենսդրության մեջ օգտագործվում են տարբեր կերպ:



Ինչպես վերելում նշվեց, ժամանակակից թափոնների կառավարման համակարգի շատ կարեւոր տարրեր դեռեւս պատշաճ կերպով չեն արտացոլվում օրենքներից որեւէ մեկում: Սա մասնավորապես վերաբերում է թափոնների թույլտվությունների եւ հաշվառման համակարգին:

Հատկանշական է, որ ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N 342-Ն հրամանի համաձայն՝ Հայաստանում «կազմակերպությունների բնակելի հատվածներից չտեսակավորված կոշտ կենցաղային թափոնները (բացառությամբ մեծածավալ թափոնների)» սահմանված են որպես 4-րդ դասի վտանգավորության թափոններ:

Այս դրույթը պետք է վերանայվի. ԵՄ երկրներից ոչ մեկում չտեսակավորված կոշտ կենցաղային թափոնները չեն դասակարգվում որպես «վտանգավոր թափոն»: «Թափոնների ցանկի մասին» ԵՄ թիվ 2000/532/ԵՀ որոշման համաձայն, որը դասակարգում է թափոնների բոլոր տեսակները, կենցաղային թափոնները ԵՄ-ում համարվում են «ոչ վտանգավոր», քանի որ դրանք կարող են պարունակել միայն փոքր քանակությամբ վտանգավոր բաղադրիչներ (ԵՄ թիվ 2000/532/ԵՀ որոշմամբ հաստատված ցանկը տե՛ս [այստեղ](#)):

Հայաստանում քաղաքային թափոնները՝ որպես վնասակար թափոններ դասակարգելը գործնականում անհնար է դարձնում ԵՄ հրահանգին համապատասխան թափոնների կառավարման համակարգի ներդրումը:

Առաջարկվում է միավորել երկու օրենքները (կամ գոնե պատշաճ կերպով կապել դրանք), սահմանումներում կատարել փոփոխություններ եւ ներառել հիմնական պարտավորություններ, ինչպես պահանջվում է «Թափոնների մասին» հրահանգով: Պետք է լինի «թափոն» իրավական տերմինի միատեսակ օգտագործում, այլ ոչ թե «աղբ», որը համարվում է խոսակցական արտահայտություն, այդ թվում՝ հայերենում:

ՇՄ նախարարության մեկնաբանությունն առ այն, որ երկու օրենքների միաձուլումն անիրատեսական է՝ հաշվի առնելով, որ դրանց կիրարկման համար պատասխանատու են երկու տարբեր նախարարություններ (մասնավորապես՝ ՇՄ նախարարությունը՝ թափոնների կառավարման համար, իսկ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ)՝ թափոնների հավաքման եւ սանիտարական մաքրման համար), ընդգծում է ՀՀ օրենքների հիմնական ընդհանուր խնդիրներից մեկը. օրենսդրությունը հաճախ կենտրոնանում է «լիազորությունների բաշխման», այլ ոչ թե դրա առարկայի վրա, ինչը կարող է հանգեցնել կիրարկող լիազորությունների վերապահման մի քանի նախարարությունների եւ ենթակա մարմինների: ԵՄ անդամ պետություններում տարածված գործելակերպը է, որ միավոր օրենքը կարգավորում է տարբեր պետական մարմինների իրավասությունները միեւնույն ոլորտում, ինչը ապահովում է ավելի մեծ համաձայնություն եւ արդյունավետություն քաղաքականության իրականացման մեջ (տե՛ս նաեւ ստորեւ բերված մեկնաբանությունները 5.1.1 ենթագլխում «ինքնուրույն օրենքների» վերաբերյալ):

Ամեն դեպքում, երկու օրենքների ներդաշնակեցումը անհրաժեշտ է առնվազն տերմինաբանության առումով: Բացի այդ, թափոնների կառավարման ընթացակարգերը պետք է առնվազն կապակցվեն՝ «օրորոցից մինչեւ գերեզման»:

Անշուշտ, ընթացակարգերի մանրամասները կարող են կարգավորվել կառավարության որոշումներով:

3.4.2 «Աղբավայրերի մասին» Խորհրդի 1999 թվականի ապրիլի 26-ի 1999/31/ԵՀ հրահանգ՝ փոփոխություններով

Ներկա պահին գործում է «Աղբավայրերի մասին» հրահանգի 2024 թվականի օգոստոսի 4-ից ուժի մեջ մտած [Նոր կոնսոլիդացված տարբերակը](#):



ԵՄ-ում թափոններն աղբավայրեր տեղափոխելը համարվում է վերջին միջոց, այսինքն՝ դա թափոնների կառավարման հիերարխիայի վերջին քայլն է, ինչից պետք է հնարավորինս խուսափել: Հիմնական պատճառներն են՝ ռեսուրսների կորուստը, որոնք կարելի է ավելի արդյունավետ օգտագործել, ինչպես նաև կլիմայի պաշտպանությունը՝ հաշվի առնելով աղբավայրերից ջերմոցային գազերի արտանետումները: Հատկանշական է, որ մինչև 2035 թվականը ԵՄ անդամ պետությունները պետք է աղբավայրեր տեղափոխեն առաջացած կենցաղային թափոնների ոչ ավելի, քան 10%-ը:

ՀԸԳԳ-ի III հավելվածը ներառում է մի շարք պահանջներ Հայաստանի աղբավայրերի քաղաքականության եւ օրենսդրության վերաբերյալ:

• **Ներպետական օրենսդրության ընդունում**

Հայաստանում, վերոնշյալ «Թափոնների մասին» օրենքից զատ, գործում են աղբավայրերին վերաբերող մի շարք ենթաօրենսդրական ակտեր.

- «Աղբավայրերի դիտանցման իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2023 թվականի N 2105-Ն որոշում.
- «Աղբավայրերի նախագծման, կառուցման եւ շահագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2024 թվականի N 07-Ն որոշում.
- «Աղբավայրերի շահագործման, բարեկարգման եւ փակման նվազագույն նորմերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2024 թվականի N 27-Ն որոշում:

«Թափոնների մասին» օրենքը չի սահմանում, թե ինչ ասել է «աղբավայր», փոխարենը այն խոսում է «թափոնների հեռացման վայրերի» մասին, որոնք ներառում են աղբավայրերը (բայց կարող է ներառել նաև այլ վայրեր): ՀՀ կառավարության 2027 թվականի N 27-Ն որոշումը պարունակում է «աղբավայր» հասկացության սահմանում, սակայն այն չի համապատասխանում ԵՄ «Աղբավայրերի մասին» հրահանգում տրված սահմանմանը եւ կարիք ունի վերանայման ու ճշգրտման՝ Եվրոպական օրենսդրության հետ ներդաշնակեցումն ապահովելու համար: Մյուս կողմից, «Թափոնների մասին» օրենքը պարունակում է «լիցենզավորված աղբավայր» հասկացության որոշակի սահմանում, սակայն այն օրենքի տեքստում այլևս չի օգտագործվում, ինչը այն իրավական առումով անօգուտ է դարձնում: Օրենսդրությունում բացակայում են նաև այլ կարևոր սահմանումներ, ինչպիսիք են «կենսաքայքայվող թափոնները» եւ «կեղտաջրերը», մինչդեռ «իներտ թափոնները» N 27-Ն որոշմամբ լավ սահմանված են:

«Աղբավայրերի» վերաբերյալ ՀՀ կառավարության ընդունված ենթաօրենսդրական ակտերը, իմա՝ 2023 թվականի N 2105-Ն, 2024 թվականի N 07-Ն եւ 2024 թվականի N 27-Ն որոշումներն անդրադառնում են «Աղբավայրերի մասին» հրահանգի մի քանի ասպեկտների, ինչպես պարզ կդառնա ստորև:

Մասնակիորեն մոտարկված է

• **Իրավասու մարմնի/մարմինների սահմանում**

Աղբավայրերի ոլորտում իշխանության տարբեր մարմինների (կենտրոնական, տարածքային եւ տեղական) լիազորությունները ողջամտորեն սահմանված են «Թափոնների մասին» օրենքի 9-11-րդ հոդվածներում: Նույնը վերաբերում է նաև աղբավայրերի վերահսկողության լիազորություններին, որոնք կարգավորվում են ՀՀ կառավարության 2023 թվականի N 2105-Ն որոշմամբ:

Մոտարկված է

• **Թափոնների թաղման վայրերի դասակարգում (Հոդված 4)**



«Աղբավայրերի մասին» հրահանգի 4-րդ հոդվածը պահանջում է աղբավայրերը դասակարգել երեք կատեգորիայի՝ վտանգավոր թափոնների աղբավայրեր, ոչ վտանգավոր թափոնների աղբավայրեր եւ իներտ թափոնների աղբավայրեր:

ՀՀ օրենսդրությունը դեռեւս նման դասակարգում չի նախատեսում, իսկ աղբավայրերի տարբերակումը կատարվում է միայն «օրինական աղբավայրեր» եւ «ապօրինի աղբավայրեր» հասկացությունների հիման վրա: Փոխարենը՝ դեռեւս օգտագործվում է «սանիտարական աղբավայր» տերմինը, որից պետք է խուսափել. այս տերմինը ընդհանրապես չի օգտագործվում ԵՄ-ում: Աղբավայրերը պետք է դասակարգվեն կամ որպես օրինական, կամ էլ՝ ապօրինի:

ՀՀԳՀ 2024 թվականի դեկտեմբերի ճանապարհային քարտեզի իրականացման ժամանակացույցից վերցված տեղեկատվության համաձայն՝ առաջարկվող աղբավայրերի դասակարգումը Արդարադատության նախարարության միջամտության պատճառով դուրս է մնացել ՀՀ կառավարության 2024 թվականի N 27-Ն որոշման առաջնային տարբերակից. այս միջամտության պատճառն անորոշ է:

Մոտարկված չէ

- **Աղբավայրեր տեղափոխվող կենսաբանորեն քայքայվող քաղաքային տնտեսության թափոնների քանակը նվազեցնող ազգային ռազմավարության մշակում (Հոդված 5)**

«Աղբավայրերի մասին» հրահանգի 5-րդ հոդվածը պահանջում է ազգային ռազմավարության մշակում կենսաքայքայվող կենցաղային թափոնների աղբավայրերի ծավալները կրճատելու համար: Նման ռազմավարությունը պարտադիր չէ, որ լինի առանձին փաստաթուղթ, այլ կարող է լինել ավելի թափոնների մասին ավելի լայն ռազմավարության մաս:

Հայաստանում աղբահանության համակարգի ռազմավարությունը եւ ռազմավարության կիրարկումն ապահովող միջոցառումների ծրագիրը հաստատվել են ՀՀ կառավարության 2021 թվականի N 464-Ն որոշմամբ: Այս ռազմավարության VII գլուխն առաջարկում է լուծումներ թվարկված թափոնների տեսակների կառավարման համար, ներառյալ «կենսաբանական քայքայման ենթակա աղբն աղբավայրերում հայտնվելու նվազեցմանը նպաստող մեխանիզմների կիրառումը»: Առաջարկվում է կենսաքայքայվող աղբն առանձին հավաքել բնակարաններից, բնակելի տներից ինչպես նաեւ սննդի օբյեկտներից եւ ներդնել աերոբ կամ անաերոբ խմորման տեխնոլոգիաները, այդ թվում չորացման եղանակով ծավալի փոքրացման տեխնոլոգիան (տե՛ս նույն ռազմավարության 58-րդ կետը): Այնուամենայնիվ, փաստաթղթում չեն նշվում այդ միջոցառումների իրականացման հետագա քայլերը, ինչպես նաեւ դրանց իրականացման ժամկետները:

Ռազմավարության 2-րդ հավելվածը պահանջում է 2021-2023 թվականների համար մշակել կենսաքայքայվող թափոնների կրկնօգտագործման եւ վերամշակման առաջարկներ եւ ընթացակարգեր: Սակայն, ակնհայտ է, որ այս ուղղությամբ դեռեւս ոչինչ չի արվել: «Աղբահանության մասին» օրենքի նոր՝ 12-րդ հոդվածի համաձայն՝ «սահմանափակվում է կենսաքայքայվող աղբի տեղադրումը աղբավայրերում», սակայն անհասկանալի է մնում, թե ինչպես է այս սահմանափակումը կիրառվում, ում համար եւ որ պահից սկսած է այն գործում:

Որոշակիորեն մոտարկված է

- **Հայտերի եւ թույլտվությունների համակարգի եւ թափոնների ընդունման ընթացակարգերի ստեղծում (հոդվածներ 5-7, 11, 12 եւ 14)**

ՀՀԳՀ-ի այս դրույթը պարունակում է բազմաթիվ իրավական պահանջներ, որոնք պետք է ներառվեն ՀՀ օրենսդրության մեջ:



«Աղբավայրերի մասին» հրահանգի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ **որոշակի տեսակի թափոններ ընդհանրապես չպետք է տեղափոխվեն աղբավայրեր** (հեղուկ թափոններ, պայթուցիկ, բայթայիչ, օբսիդացնող, դյուրավառ թափոններ, հիվանդանոցային կամ կլինիկական թափոններ, ամբողջական եւ մանրացված օգտագործված անվադողեր, կրկնօգտագործման եւ վերամշակման համար առանձին հավաքված թափոններ), եւ դա պետք է արգելվի ազգային օրենսդրությամբ:

ՀՀ կառավարության 2024 թվականի N 27-Ն որոշման 5-րդ կետի համաձայն՝ աղբավայրում արգելվում է տեղադրել պայթուցիկ եւ դյուրավառ նյութերի, բժշկական հաստատություններից ու սպանդանոցներից առաջացած եւ այլ կենսաբանական թափոնների, էլեկտրոնային եւ էլեկտրատեխնիկական սարքավորումների թափոնների, սնդիկ պարունակող լամպերի եւ այլ արտադրանքի, էլեկտրական կուտակիչների եւ մարտկոցների, փոխադրամիջոցների եւ դրանց անվադողերի, ինչպես նաեւ առանց հատուկ տարաների մեջ պահեստավորված հեղուկ թափոնները:

Մոտարկված է

«Աղբավայրերի մասին» հրահանգի 5-րդ հոդվածի (5-րդ եւ 6-րդ կետեր) համաձայն՝ մինչեւ 2040 թվականը Հայաստանում աղբավայրեր պետք է տեղափոխվի կենցաղային թափոնների ոչ ավելի, քան 10%-ը, իսկ մինչեւ 2035 թվականը՝ ոչ ավելի, քան 35%-ը: Թափոնների մասին ռազմավարության մեջ նման նպատակ չի սահմանվում: Հաշվի առնելով Հայաստանում առկա իրավիճակը, որտեղ գրեթե բոլոր թափոնները աղբավայր են տեղափոխվում, իսկ այլընտրանքային մեթոդները դեռեւս մեծ մասամբ թերզարգացած են, նման նպատակների ձեւակերպման եւ դրանց հասնելու հնարավորությունը կասկածելի է: «Աղբավայրերի մասին» հրահանգի 6-րդ հոդվածի լրացուցիչ ասպեկտները ներկայացված են ստորեւ:

«Աղբավայրերի մասին» հրահանգի 7-րդ հոդվածը սահմանում է **աղբավայրի թույլտվության դիմումի** պահանջները: Դիմումը պետք է պարունակի հետեւյալ տեղեկությունները.

- դիմողի/աղբավայրը շահագործողի տվյալներ.
- հեռացման ենթակա թափոնների տեսակների եւ ընդհանուր ծավալի նկարագրություն.
- աղբավայրի առաջարկվող տարողունակության եւ տարածքի նկարագրություն.
- աղտոտման կանխարգելման եւ նվազեցման առաջարկվող մեթոդներ.
- շահագործման, դիտանցման եւ վերահսկողության առաջարկվող պլան.
- աղբավայրի փակման եւ հետինամքի առաջարկվող պլան.
- ՇՄԱԳ.
- ինչպես նաեւ աղբավայրի շահագործման ֆինանսական ապահովում:

Հատկանշական է, որ ՀՀԳՀ-ում չեն հիշատակվում 8-րդ եւ 9-րդ հոդվածները, որոնք վերաբերում են աղբավայրի թույլտվության տրամադրման պայմաններին եւ թույլտվության բովանդակությանը: Սա ենթակա է վերանայման, քանի որ թույլտվության բովանդակության եւ պայմանների պահանջներն ազգային օրենսդրությամբ չկարգավորելու դեպքում քիչ իմաստ ունի միայն թույլտվության դիմումը կարգավորելու:

ՀՀ կառավարության 2024 թվականի N 07-Ն որոշումը կարգավորում է «Աղբավայրերի նախագծման, կառուցման եւ շահագործման կարգը»: Սակայն այս որոշումն իրականում չի անդրադառնում «ընթացակարգային հարցերին», այլ սահմանում է աղբավայրերի համար մի շարք տեխնիկական չափորոշիչներ (ինչն, անշուշտ, դրական է): Այս որոշման հիմնական թերություններից մեկը այդ չափորոշիչների եւ պահանջների իրականացման համար **պատասխանատուի** հստակ նշման բացակայությունն է: Բացի այդ, փաստաթուղթը չի



Նախատեսում «աղբավայրի թույլտվության դիմում», ինչպես դա արվում է ԵՄ-ում: Անհասկանալի է, թե աղբավայրը շահագործողն ինչ պարտավորություններ ունի, բացի որոշ դիտանցումային միջոցառումներից (72-րդ եւ 74-րդ կետեր):

Օրենսդրությամբ Նաեւ կարգավորված չեն թույլտվությունների պայմաններն ու բովանդակությունը. աղբավայրերի շահագործումը պետք է իրականացվի «նախագծին համապատասխան (որը անորոշ հասկացություն է)՝ պահպանելով սանիտարական, քաղաքաշինական եւ բնապահպանական օրենսդրության պահանջները»: Այս ձեւակերպումը չափազանց ընդհանուր է: Ընդհանուր առմամբ, անհասկանալի է, թե ով է N 07-Ն որոշման հասցեատերը՝ աղբավայրը շահագործողը, թե՞ իրավասու որոշում կայացնող մարմինը: Աղբավայրի նախագծման, դրա կարողությունների, շահագործման, դիտանցման, եւ ՇՄԱԳ-ի վերաբերյալ տրամադրման ենթակա (ո՞ւմ կողմից) տեղեկատվությունը մեծ մասամբ համապատասխանում է ԵՄ հրահանգի պահանջներին: Սակայն, աղտոտման կանխարգելման, աղբավայրի փակման եւ հետագա ինամբի, ինչպես նաեւ ֆինանսական ապահովման ասպեկտներին վերաբերող տեղեկատվությունն իսպառ բացակայում է:

Բացի այդ, վերոնշյալ որոշումներում ներառված որոշակի դրույթներ, որոնք վերաբերում են կեղտաջրերի մշակմանը, ավելորդ են (N 27-Ն որոշման 17-րդ կետ եւ N 07-Ն որոշման 67-րդ կետ)

Որոշակիորեն մոտարկված է

«Աղբավայրերի մասին» հրահանգի 11-րդ հոդվածը վերաբերում է թափոնների ընդունման ընթացակարգերին: Յուրաքանչյուր առաքման համար պետք է պատրաստվեն թափոնների վերաբերյալ փաստաթղթեր, որոնք պետք է ստուգվեն աղբավայրը շահագործողի կողմից: Բացի այդ, պետք է իրականացվեն առաքվող թափոնների տեսողական ստուգումներ, եւ աղբավայրը շահագործողը պետք է վարի գրանցամատյան, որտեղ պետք է արձանագրի ընդունված թափոնների քանակը եւ բնութագրերը: Վտանգավոր թափոնների դեպքում պետք է նաեւ նշվի աղբավայրում դրանց ընդունման ճշգրիտ վայրը:

Հայաստանում թափոնների ընդունման որոշ հարցեր կարգավորվում են ինչպես 2024 թվականի N 27-Ն որոշմամբ, այնպես էլ 2024 թվականի N 07-Ն որոշմամբ, չնայած որոշ մասերում դրանք կրկնում են միմյանց: N 27-Ն որոշման 20-րդ կետի եւ N 07-Ն որոշման 69-րդ կետի համաձայն՝ աղբավայրը շահագործողը պարտավոր է վարել թափոնների ընդունման գրանցամատյան, սակայն չի նշվում, թե ինչ տեղեկատվություն պետք է այն պարունակի, եւ պարզ չէ, թե ինչու է այս պահանջը միաժամանակ նշված երկու փաստաթղթերում: Նաեւ սահմանվում է, որ աղբավայրը շահագործողը պետք է վարի թափոնների տեսակների ցանկ, որոնց ընդունումը կարող է հաստատվել կամ մերժվել: Բացի այդ, աղբավայրը շահագործողը պարտավոր է իրականացնել աղբավայր մուտք գործող թափոնների կազմի «դիտանցում», սակայն չկան հատուկ պահանջներ այն մասին, թե ինչպես պետք է իրականացվի այդ դիտանցումը. չկա առաքվող թափոնների յուրաքանչյուր խմբաբանակի պարտադիր փաստաթղթավորում, չկա տեսողական ստուգում եւ չկան վտանգավոր թափոնների մշակման հատուկ պահանջներ:

Մոտարկված է

- Աղբավայրերի շահագործման փուլում հսկողության եւ դիտանցման ընթացակարգերի, նաեւ լքման ենթակա աղբավայրերի համար փակման եւ վերականգնման ընթացակարգերի սահմանում (հոդվածներ 12 եւ 13)

«Աղբավայրերի մասին» հրահանգի 12-րդ հոդվածը պահանջում է հսկողության եւ դիտանցման միջոցառումների իրականացում, որոնք աղբավայրը շահագործողը պետք է իրականացնի իր



գործունեության ընթացքում: Հրահանգի III հավելվածը մանրամասնում է, թե որ պարամետրերն են ենթակա Դիտանցման: Դրա արդյունքները պետք է ներկայացվեն իրավասու մարմին տարեկան առնվազն մեկ անգամ:

ՀՀ կառավարության 2023 թվականի N 2105-Ն որոշումը բավականին մանրամասն կերպով կարգավորում է աղբավայրերի դիտանցման կարգը՝ ներառյալ դրա արդյունքների ներկայացումը իրավասու (լիազոր) մարմին:

Մոտարկված է

«Աղբավայրերի մասին» հրահանգի 13-րդ հոդվածը կարգավորում է աղբավայրերի փակման եւ հետագա խնամքի կարգը: Կարելի է դրոյթն այն է, որ աղբավայրը շահագործողը պատասխանատու է մնում հետշահագործման փուլում աղբավայրի պահպանման, դիտանցման եւ վերահսկողության համար այնքան ժամանակ, որքան կորոշի իրավասու մարմինը: Բացի այդ, շահագործողը պարտավոր է տեղեկացնել իրավասու մարմինն դիտանցման ընթացքում հայտնաբերված շրջակա միջավայրի վրա ցանկացած էական բացասական ազդեցության մասին: Շահագործողը պահպանում է նաեւ փակվելուց հետո աղբավայրի գազը եւ կեղտաջրերը դիտանցման ենթարկելու եւ վերլուծելու պարտավորությունը:

ՀՀ կառավարության 2023 թվականի N 2105-Ն որոշման 8-րդ եւ 11-րդ կետերի համաձայն՝ աղբավայրը շահագործողը պարտավոր է իրականացնել դիտանցում աղբավայրի շահագործման ավարտից հետո առնվազն հինգ տարվա ընթացքում (ո՞վ է որոշում, թե արդյոք այս ժամանակահատվածը պետք է լինի հինգ տարուց ավելի): Նույն որոշման 18-րդ կետի համաձայն՝ աղբավայրը շահագործողը «պարտավոր է անհապաղ տեղեկացնել պետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման եւ վերահսկողական մարմիններին աղբավայրում հրդեհի կամ մարդու առողջությանը եւ շրջակա միջավայրին սպառնացող այլ իրավիճակների մասին»: Չնայած այս կանոնակարգում աղբավայրի գազի եւ կեղտաջրերի մասին հստակ հիշատակում չկա (ինչպես շահագործման փուլում դիտանցման վերաբերյալ այլ կետերում), վերոնշյալը կարելի է գնահատել բավարար մոտարկման համար:

Մոտարկված է

- **Թափոնների թաղման գոյություն ունեցող վայրերն անհրաժեշտ պայմաններով ապահովելու պլանների մշակում (Հոդված 14)**

«Աղբավայրերի մասին» հրահանգի 14-րդ հոդվածը վերաբերում է գործող աղբավայրերին՝ անկախ նրանից՝ դրանք ունեն թույլտվություն, թե գործում են ապօրինի հիմունքներով: Նման աղբավայրերը չպետք է շարունակեն իրենց գործունեությունը, եթե չկա տեղանքի պլան, որը սահմանում է, թե արդյոք գործող աղբավայրը կարող է շարունակել գործել պահանջվող չափանիշներին համապատասխան, թե պետք է փակվի: Այս պահանջը շատ հավակնոտ է եւ պահանջում է զգալի ֆինանսական միջոցներ, քանի որ նման տեղանքի պլանների մշակումը թանկ ընթացակարգ է: Հետեւաբար, քիչ հավանական է, որ Հայաստանը կկարողանա լիարժեք եւ ժամանակին իրականացնել այս պահանջը:

Հայաստանում աղբավայրերի մեծ մասը գործում է առանց թույլտվության, ուստի դրանք ենթակա են կամ տեղանքի պլանի մշակման, կամ անհապաղ փակման: ՀՀ կառավարության 2023 թվականի N 2105-Ն որոշման 3-րդ կետի համաձայն, նման չարտոնագրված աղբավայրերը կարող են ժամանակավորապես շարունակել իրենց գործունեությունը մինչեւ «ՇՄԱԳ-ի մասին» օրենքի համաձայն դրական փորձագիտական կարծիք եւ թույլտվություն ստանալը, կամ մինչեւ նոր՝ արտոնագրված աղբավայրի կառուցումը եւ գործողի փակումը:



Բացի այդ, ՀՀ կառավարության 2024 թվականի N 27-Ն որոշման 26-րդ կետի համաձայն՝ առկա աղբավայրերը ենթակա են փակման, եթե դրանք «չեն համապատասխանում բնապահպանական, քաղաքաշինական ու սանիտարական նորմերին՝ նոր տարածաշրջանային սանիտարական աղբավայրերի կառուցման եւ շահագործման հանձնելուց անմիջապես հետո»: Ասվածի համաձայն՝ աղբավայրը փակելուց առաջ մշակվում է **աղբավայրի փակման պլան** (իսկ թե ում կողմից, պարզ չէ)՝ հստակեցնելով փակման գործողությունները, ժամկետները, ինչպես նաեւ «խախտված հողերի վերականգնման աշխատանքների որակական բնութագրերին եւ ցուցանիշներին ներկայացվող պահանջների նկարագրությունը»: Թե ինչ է նկատի առնվել վերջին մտքի տակ, անհասկանալի է:

Անհասկանալի մնում է, թե ինչու են եւ՛ N 27-Ն, եւ՛ N 2105-Ն որոշումները կարգավորում գործող աղբավայրերի փակումը. եւս մեկ անգամ՝ երկու ենթաօրենսդրական ակտերն էլ բացարձակապես լավ կապված չեն միմյանց հետ:

Հաշվի առնելով վերականգնման ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ հսկայական ֆինանսական ջանքերի անհրաժեշտությունը եւ առկա ֆինանսական ռեսուրսների հետ կապված անորոշությունը՝ կառավարության N 27-Ն եւ N 2105-Ն որոշումների ներկայիս դրույթները, կարծես, բավականին իրատեսական եւ գործնական են (եթե դրանք պատշաճ կերպով իրականացվեն, ներառյալ փակման պլանը):

Հիմնականում մոտարկված է

- **Ծախսերի ձեւավորման մեխանիզմի ստեղծում (Հոդված 10)**

«Աղբավայրերի մասին» հրահանգի 10-րդ հոդվածի համաձայն՝ պետք է ապահովվի, որ աղբավայրի ստեղծման եւ շահագործման հետ կապված բոլոր ծախսերը (ներառյալ աղբավայրի փակման եւ տարածքի հետխնամքի առնվազն 30 տարվա ծախսերը) ծածկվեն շահագործողի կողմից այդ վայրում ցանկացած տեսակի թափոնի հեռացման համար գանձվող վճարներից:

Հայաստանում ներկայումս աղբավայրերի ծախսերը հաշվարկելու նման մեխանիզմ գոյություն չունի, եւ բացարձակապես անհասկանալի է մնում, թե ինչպես են ծածկվում աղբավայրերի շահագործման ծախսերը: Քաղաքային աղբավայրերի դեպքում թափոնների հեռացման վճարը սահմանում է համայնքի ավագանին (համաձայն «Աղբահանության մասին» օրենքի), սակայն անհասկանալի է մնում, թե ինչպես է ճշգրտորեն որոշվում այս վճարի չափը եւ ով է պարտավոր վճարել այն:

Պիլոտային ծրագրի շրջանակներում աղբավայրի շահագործման ծախսերի հաշվարկման մեխանիզմը նախատեսվում է ներդնել Հրազդան համայնքում կառուցված սանիտարական աղբավայրի շահագործման ընթացքում:

Մոտարկված չէ

- **Նախքան աղբավայրում թափվելը համապատասխան թափոնների մաքրման ապահովում (Հոդված 6)**

«Աղբավայրերի մասին» հրահանգի 6-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ աղբավայր կարող են տեղափոխվել միայն նախնական մշակում անցած թափոնները: Այս դրույթը հիմնարար է եւ լուրջ մարտահրավեր է ներկայացնում աղբավայրերի շահագործման համար: Բացի այդ, 6-րդ հոդվածը պահանջում է, որ իներտ, վտանգավոր եւ ոչ վտանգավոր թափոնները տեղափոխվեն միայն համապատասխանաբար դասակարգված աղբավայրեր:



Աղբավայրերի մասին ՀՀ օրենսդրությունը դեռեւս չի պարունակում թափոնների մշակման նման պահանջ, ինչպես եւ աղբավայրերի դասակարգում:

Մոտարկված չէ

Եզրափակիչ նկատառումներ եւ առաջարկություններ.

Իրավական տեսանկյունից՝ Հայաստանը մեծ առաջընթաց է գրանցել՝ ՀՀ կառավարության կողմից վերջին որոշումների ընդունմամբ: Այնուամենայնիվ, դեռեւս անհամապատասխանություն կա առանցքային համարվող «աղբավայր» տերմինի օգտագործման մասով, որը պետք է ավելի ճշգրիտ սահմանվի: Նաեւ չկա աղբավայրերի երեք տարբեր տեսակների դասակարգում: Թեեւ պարզ է, որ վտանգավոր, ոչ վտանգավոր եւ իներտ թափոնների համար տարբեր տեսակի աղբավայրերի (կամ առնվազն մեկ աղբավայրում առանձնացված տարածքների) ներդրումը բարդ ինդիք է, սակայն առնվազն օրենսդրության մակարդակում պետք է նախատեսվի հստակ իրավական տարբերակում եւ ապահովվի, որ նոր արտոնագրված աղբավայրերը ապագայում օգտագործվեն բացառապես այս տեսակի թափոններից մեկի համար: Միջնաժամկետ եւ երկարաժամկետ հեռանկարում պետք է խուսափել վտանգավոր եւ ոչ վտանգավոր թափոնների խառնումից: Պետք է նաեւ նախատեսվեն կենսաբալթայվող թափոնների մշակման եւ աղբավայրերում դրանց աստիճանական հեռացման դադարեցման հստակ միջոցառումներ՝ ժամկետներով, ցուցանիշներով եւ պատասխանատվությամբ:

Հայաստանում (ինչպես եւ ԵՄ-ում) հիմնական մարտահրավերը կլինի ապահովելը, որպեսզի երկարաժամկետ հեռանկարում առանց նախնական մշակման ոչ մի թափոն աղբավայր չջափվի: Նման իրավական դրույթը կարող է ներառվել օրենսդրության մեջ՝ ներդրման անցումային ժամանակահատվածով (տե՛ս վերելում՝ աստիճանական մոտարկում): Ծախսերի փոխհատուցման մեխանիզմը նույնպես պետք է ներդրվի աստիճանաբար՝ հավանաբար սկսելով վտանգավոր թափոնների հեռացումից: Հարկ է եւս մեկ անգամ ընդգծել, որ խառը կենցաղային թափոններն այլեւս չպետք է համարվեն վտանգավոր թափոններ:

3.4.3 2004/35/ԵՀ հրահանգը փոփոխող՝ «Արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների կառավարման մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2006 թվականի մարտի 15-ի 2006/21/ԵՀ հրահանգ՝ մշակված 2009/335/ԵՀ, 2009/337/ԵՀ, 2009/359/ԵՀ եւ 2009/360/ԵՀ որոշումներով

2006/21/ԵՀ հրահանգը վերաբերում է «հանքարդյունաբերական» կամ «արդյունահանման» թափոններին, այսինքն՝ հանքային ռեսուրսների հետախուզման, արդյունահանման, վերամշակման եւ պահեստավորման, ինչպես նաեւ հանքերի շահագործման արդյունքում առաջացող թափոններին: Այս հրահանգը կարգավորում է, որը լրացնում է, բայց որոշ չափով «դուրս է» «թափոնների գործածության» (օրինակ՝ աղբավայրեր տեղափոխում եւ այրում) եւ թափոնների հոսքերի (օրինակ՝ փաթեթավորում, էլեկտրոնային թափոններ, շահագործումից դուրս բերված փոխադրամիջոցներ, մարտկոցներ, նավեր) վերաբերյալ ԵՄ այլ օրենսդրական նորմերի շրջանակից:

Սույն հրահանգի նպատակն է նախատեսել միջոցառումներ, ընթացակարգեր եւ առաջարկություններ՝ արդյունահանող արդյունաբերության թափոնների կառավարման հետեւանքով ջրի, օդի, հողի, կենդանական եւ բուսական աշխարհի, բնական լանդշաֆտի եւ մարդու առողջության վրա ցանկացած բացասական ազդեցություն կանխելու կամ հնարավորինս նվազեցնելու համար:



• Ներպետական օրենսդրության ընդունում

Հայաստանում արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների հարցը խիստ արդիական է՝ հաշվի առնելով հանքերի մեծ թիվը: Արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների հետ կապված գործունեությունը կարգավորվում է «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքով (2011 թվական, թիվ ՀՕ-280-Ն), ինչպես նաև ՀՀ կառավարության հետեյակ որոշումներով:

- «Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի վերջնական փակումից հետո ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից ընդերքօգտագործողի փոխարեն ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի պահպանման, դիտանցման եւ հսկողության միջոցառումներն իրականացնելու դեպքերը եւ կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի N 429-Ն որոշում:
- «Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներում դիտանցման իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի N 661-Ն որոշում:
- «Ընդերքօգտագործման թափոնների կառավարման եւ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման փոփոխված պլանների՝ ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի N 674-Ն որոշում:
- «Ընդերքօգտագործման թափոնների կառավարման եւ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների բովանդակությունը, ինչպես նաև ընդերքօգտագործման թափոնների կառավարման եւ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման միջոցառումները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի N 675-Ն որոշում:
- «Ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանի եւ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանի օրինակելի ձեվերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի N 676-Ն որոշում:
- «Ընդերքօգտագործման թափոնների եւ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների՝ ըստ վտանգավորության դասակարգման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի N 689-Ն որոշում:
- «Ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների գույքագրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի N 774-Ն որոշում:
- «Ընդերքօգտագործման թափոնների վերամշակման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի N 906-Ն որոշում:
- «Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառուցմանը ներկայացվող տեխնիկական պահանջները եւ չափանիշները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի N 984-Ն որոշում:
- «Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառավարմանը եւ ընդերքօգտագործման թափոնների կառավարմանն ու վերամշակմանը ներկայացվող տեխնիկական պահանջները եւ չափանիշները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի N 985-Ն որոշում:
- «Ֆինանսական երաշխիքի բովանդակությունը եւ դրան ներկայացվող չափորոշիչները, դրանց ներկայացվող որակական չափանիշների գնահատման, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի հաշվարկման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի N 990-Ն որոշում:



ԵՄ հրահանգին համապատասխան սահմանվող հիմնական տերմինը «թափոնների օբյեկտ» տերմինն է: «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքը բավականաչափ լավ է սահմանում «ընդերքօգտագործման թափոնների օբյեկտ» տերմինը՝ չնայած այդ սահմանումը փոքր-ինչ տարբերվում է ԵՄ հրահանգում տրված սահմանումից: Կառավարության որոշումների անգլերեն տարբերակներում օգտագործվում է «հանքարդյունաբերական թափոնների օբյեկտ» տերմինը (այլ ոչ թե՛ «ընդերքօգտագործման»), ինչն, անշուշտ, նախընտրելի է, քանի որ ԵՄ իրավական տերմինաբանության մեջ «ընդերքօգտագործում» տերմին գոյություն չունի: «Արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների կառավարման մասին» հրահանգում «թափոն» եւ «վտանգավոր թափոն» հասկացությունների սահմանումները նույնն են, ինչ «Թափոնների մասին» հրահանգում: ՀՀ օրենսդրության մեջ հատկապես մոտարկման ենթակա է «թափոն» հասկացության սահմանումը: Հանքարդյունաբերական թափոնների հետ կապված մյուս բոլոր տերմինների սահմանումներն ընդունելի են:

Հիմնականում մոտարկված է

- Իրավասու մարմնի/մարմինների սահմանում

«Ընդերքի մասին» օրենսգրքի եւ դրա ենթօրենսդրական ակտերի համաձայն՝ Հայաստանում հանքարդյունաբերական թափոնների կառավարման հետ կապված բոլոր հարցերի վերահսկողության համար պատասխանատու է շրջակա միջավայրի պահպանության ոլորտի իրավասու պետական մարմինը՝ Շրջակա միջավայրի նախարարությունը:

Մոտարկված է

- Օպերատորների կողմից թափոնների կառավարման պլանների մշակումն ապահովող համակարգի ստեղծում (թափոնների գործածության օբյեկտների որոշում եւ դասակարգում. թափոնների բնութագրում) (հոդվածներ 4 եւ 9)

«Արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների կառավարման մասին» հրահանգի 4-րդ հոդվածն ընդհանուր առմամբ պահանջում է միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու համար, որ հանքարդյունաբերական թափոնները կառավարվեն առանց մարդու առողջության համար ռիսկի եւ առանց այնպիսի գործընթացների կամ մեթոդների կիրառման, որոնք կարող են վնաս հասցնել շրջակա միջավայրին: Այս միջոցառումները պետք է հիմնված լինեն «լավագույն հասանելի մեթոդների» վրա: Բացի այդ, արգելվում է հանքարդյունաբերական թափոնների անտերության մատնումը, թափումը կամ անվերահսկելի տեղափոխումը:

Հայաստանում հանքարդյունաբերական թափոնների գործածության ընդհանուր պայմանները կարգավորվում են «Ընդերքի մասին» օրենսգրքի 60.1 եւ 60.6 հոդվածներով: Միջոցառումները պետք է իրականացվեն՝ օգտագործելով լավագույն հասանելի տեխնոլոգիաները կամ շրջակա միջավայրի տեսանկյունից լավագույն տնտեսական գործունեությունը:

Վարչական օրենսգրքի համաձայն՝ երեք կամ ավելի խորանարդ մետր թափոնների կուտակումը չնախատեսված եւ չարտոնված վայրերում, այդ թվում՝ աղբամաններից դուրս, ինչպես նաեւ թափոնների հավաքման եւ տեղափոխման ոչ պաշտոնական կամ չկազմակերպված օբյեկտներում կամ աղբավայրերում համարվում է շրջակա միջավայրի խախտում եւ ենթադրում է պաշտոնատար անձի նկատմամբ տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչեւ երկուհարյուրապատիկի չափով:

Մոտարկված է

«Արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների կառավարման մասին» հրահանգի 9-րդ հոդվածի համաձայն՝ թափոնների օբյեկտը պետք է դասակարգվի որպես A



կատեգորիայի օբյեկտ՝ համաձայն հրահանգի III հավելվածում սահմանված չափանիշների: Ա կատեգորիայի օբյեկտը սահմանվում է որպես օբյեկտ, որը՝

- ունի խոշոր վթարի ռիսկ՝ խափանման կամ անպատշաճ շահագործման պատճառով, կամ
- պարունակում է վտանգավոր թափոններ, կամ
- պարունակում է վտանգավոր դասակարգված նյութեր կամ պատրաստուկներ (ԵՄ օրենսդրության համաձայն):

«Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի» 60.3 հոդվածի համաձայն՝ ընդերքօգտագործողները պարտավոր են մշակել «ընդերքօգտագործման թափոնների կառավարման եւ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններ», որոնք պետք է հաշվի առնեն «ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի դասակարգման առանձնահատկությունները»: Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների՝ վտանգի աստիճանից կախված դասակարգման կարգը պետք է հաստատվի ՀՀ կառավարության կողմից:

ՀՀ կառավարության 2017 թվականի N 689-Ն որոշումը կարգավորում է ընդերքօգտագործման թափոնների եւ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների՝ ըստ վտանգավորության դասակարգման բոլոր ընթացակարգային եւ տեխնիկական մանրամասները՝ ԵՄ չափանիշներին համապատասխան: Սակայն որոշումը չի նշում, թե ով է իրականացնում դասակարգումը եւ երբ այն պետք է իրականացվի:

Մոտարկված է

Թափոնների կառավարման օբյեկտի շահագործողի կողմից թափոնների կառավարման պլանների մշակումը կարգավորվում է ԵՄ հրահանգի 5-րդ հոդվածով (այլ ոչ թե՛ 4-րդ կամ 9-րդ). այս մասով ՀՀԳՀ բովանդակությունն այնքան էլ ճիշտ չէ: Այնուամենայնիվ, ենթադրվում է, որ նման պլանները պարտադիր պետք է լինեն նաեւ Հայաստանի համար: Հրահանգի համաձայն՝ շահագործողը պետք է մշակի թափոնների կառավարման պլան՝ հանքարդյունաբերական թափոնները նվազագույնի հասցնելու, մաքրելու, վերականգնելու եւ օգտահանելու համար. նման պլանի նվազագույն բովանդակությունը շարադրված է 5-րդ հոդվածում: «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 60.3-րդ հոդվածը լավագույնս կանոնակարգում է ընդերքօգտագործման թափոնների կառավարման եւ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների կազմման ընթացակարգը: Ավելին, ՀՀ կառավարության 2017 թվականի N 676-Ն որոշումը տրամադրում է նման պլանների մոդել, ինչը շատ լավ է: Այնուամենայնիվ, վերստին, ո՛չ «Ընդերքի մասին» օրենսգրքը, ո՛չ էլ N 676-Ն որոշումը չեն մատնանշում, թե ով պետք է պատրաստի այդ պլանները: ՀՀ կառավարության 2017 թվականի N 674-Ն որոշումից կարելի է ենթադրել, որ դա պետք է արվի «ընդերքօգտագործողի» կողմից (տե՛ս N 674-Ն որոշման հավելվածը), բայց դա պետք է լինի ոչ թե «ընդերքօգտագործողը», այլ՝ թափոնների օբյեկտի շահագործողը: **Սա պետք է շտկվի:**

Հիմնականում մոտարկված է

- **Թույլտվությունների, ֆինանսական երաշխիքների եւ տեսչական համակարգի ստեղծում (հոդվածներ 7, 14 եւ 17)**

«Արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների կառավարման մասին» հրահանգի 7-րդ հոդվածը պահանջում է, որ թափոնների կառավարման որեւէ օբյեկտ չպետք է շահագործվի առանց իրավասու մարմնի կողմից տրված թույլտվության: Թույլտվությունը տրվում է միայն այն դեպքում, եթե շահագործողը համապատասխանում է հրահանգի «համապատասխան պահանջներին»: Այդ պահանջները, մասնավորապես, վերաբերում են թափոնների կառավարման օբյեկտների պատշաճ կառուցմանը եւ կառավարմանը, ներառյալ փակման եւ հետշահագործման ընթացակարգերին:



«Ընդերքի մասին» օրենսգրքի 60.2 հոդվածի համաձայն՝ ընդերքօգտագործման թափոնների կառավարումն իրականացվում է ընդերքօգտագործողների կողմից եւ նրանց միջոցներով՝ ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանին համապատասխան. այդ նպատակով նրանք պետք է ներկայացնեն համապատասխան դիմում: «Ընդերքի մասին» օրենսգրքի ռուղակիորեն չի նշում, որ այդ պլանը պետք է հաստատվի իրավասու մարմնի կողմից: Պլանի ներկայացումից հետո իրավասու մարմնի որոշմանը վերաբերող միակ կարգավորումը ՀՀ կառավարության 2017 թվականի N 674-Ն որոշումն է՝ ընդերքօգտագործման թափոնների կառավարման փոփոխված պլանների հաստատման կարգի մասին. **այն վերաբերում է միայն փոփոխված պլաններին**, այլ ոչ՝ սկզբնականներին: Նման փոփոխված պլանը ուժի մեջ է մտնում իրավասու մարմնի կողմից «հաստատվելուց» հետո, որն իրավունք ունի մերժել պլանը (5-րդ կետ); Պլանը կարող է նաեւ ենթարկվել ՇՄԱԳ-ի (սակայն պարզ չէ, թե որ դեպքերում է դա պահանջվում, իսկ որ դեպքերում ոչ):

Թեեւ «Ընդերքի մասին» օրենսգրքի եւ կառավարության որոշման դրույթներն ինչ-որ չափով երկիմաստ են (հստակ թույլտվություն չկա, «համաձայնեցման» (ոչ թե հաստատման) ենթակա են միայն փոփոխված պլանները), կարելի է անել հետեւություն, որ թափոնների կառավարման ոչ մի օբյեկտ չպետք է շահագործվի առանց իրավասու մարմնի (Շրջակա միջավայրի նախարարության) հաստատման: Թափոնների կառավարման պլանը պետք է պարունակի նաեւ տեղեկատվություն փակման եւ հետշահագործման ընթացակարգերի վերաբերյալ (տե՛ս ՀՀ կառավարության 2017 թվականի N 675-Ն որոշումը, կետ 2):

Հավանաբար մոտարկված է

Հոդված 14-ը պահանջում է, որ իրավասու մարմինը թափոնների կառավարման օբյեկտի շահագործողից նախքան թափոնների կառավարման օբյեկտում վերականգնվող թափոնների կուտակման կամ հեռացման հետ կապված որեւէ գործողություն սկսելը պահանջի ֆինանսական ապահովում (կանխիկ կանխավճար կամ նմանատիպ ձեւաթուղթ):

Ընդերքօգտագործման թափոնների կառավարման ֆինանսական աջակցության հարցը ներկայացված ծրագրի մաս է կազմում (տե՛ս «Ընդերքի մասին» օրենսգրքի 60.4 եւ 60.5 հոդվածները): Այն լավ կարգավորված է. աջակցության հաշվարկման վերաբերյալ լրացուցիչ մանրամասները ներկայացված են ՀՀ կառավարության 2017 թվականի N 990-Ն որոշման մեջ:

Մոտարկված է

Հոդված 17-ի համաձայն՝ իրավասու մարմինը պետք է պարբերաբար ստուգի թափոնների կառավարման օբյեկտը: Օբյեկտի շահագործողը պետք է թարմացված գրառումներ վարի թափոնների կառավարման բոլոր գործողությունների վերաբերյալ եւ դրանք հասանելի դարձնի տեսչական ստուգումների համար:

Ինչ վերաբերում է տեսչական ստուգումներին, «Ընդերքի մասին» օրենսգրքի 60.9-րդ հոդվածը սահմանում է, որ ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից ընդերքօգտագործողների մոտ թափոնների կառավարման եւ դրանց վերամշակմանն ուղղված աշխատանքների իրականացման նկատմամբ տեսչական ստուգումներն իրականացվում են «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Անհասկանալի է, թե այս իրավական հղումը վերաբերում է 2000 թվականի «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքին, 2005 թվականի «Շրջակա միջավայրի վերահսկողության մասին» օրենքին, թե՞ մեկ այլ օրենքի: Նպատակահարմար կլիներ հղում կատարել առնվազն «Շրջակա միջավայրի վերահսկողության մասին» օրենքին, չնայած այս օրենքը բավարար չափով չի կարգավորում «գրանցամատյան վարելու» հարցը:



Բացի այդ, «Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներում դիտանցման իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի N 661-Ն որոշման 27-րդ կետը պահանջում է ջրի քանակի եւ որակի պարբերական ստուգում եւ օբյեկտի շահագործման հետեւանքով մակերեսային ջրերի վրա էական բացասական ազդեցությունների բացահայտում:

Հիմնականում մոտարկված է

- **Հանման հետեւանքով առաջացած ստորերկրյա խոռոչների կառավարման եւ դիտանցման ընթացակարգերի սահմանում (Հոդված 10)**

«Արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների կառավարման մասին» հրահանգի 10-րդ հոդվածը վերաբերում է վերականգնման եւ շինարարության նպատակներից ելնելով արդյունահանված թափոնները հանման հետեւանքով առաջացած ստորերկրյա խոռոչներ վերադարձնելուն: Թափոնների կայունացումը, աղտոտման կանխարգելումը եւ համարժեք դիտանցումը պետք է ապահովվեն ազգային օրենսդրությամբ:

Ստորերկրյա խոռոչների լցման հարցը, կարծես, միայն մասամբ է քննարկվում «Ընդերքի մասին» օրենսգրքում, մասնավորապես՝ 60.7 հոդվածում, որը վերաբերում է ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառուցմանն ու կառավարմանը, բայց չի ներառում այն խոռոչները, որոնք արդյունք են մակերեսային պեղումների (օրինակ՝ բաց հանքերը) եւ լցված են թափոններով: Այնուամենայնիվ, 60.7 հոդվածի բովանդակությունը բավականին լավ է ներկայացված:

Մասնակիորեն մոտարկված է

Հատկանշական է, որ թափոնների օբյեկտների դիտանցումն, ընդհանուր առմամբ, «Արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների կառավարման մասին» հրահանգի 11-րդ հոդվածի պահանջն է, որը ներառված չէ ՀՀԳԳ հավելվածի մաս չի կազմում:

ՀՀ օրենսդրությունը, սակայն, ՀՀ կառավարության 2017 թվականի N 661-Ն որոշմամբ մանրամասն կարգավորում է հանքարդյունաբերական թափոնների օբյեկտների դիտանցումը եւ այս առումով զգալիորեն գերազանցում է ՀՀԳԳ պահանջները:

- **Լեռնահանքարդյունահանման թափոնների գործածության օբյեկտների փակման եւ փակմանը հաջորդող փուլերի ընթացակարգերի սահմանում (Հոդված 12)**

Հրահանգի 12-րդ հոդվածի համաձայն՝ թափոնների օբյեկտը կարող է սկսել փակման ընթացակարգերը միայն իրավասու մարմնի համաձայնությամբ եւ տեղում վերջնական ստուգումից հետո, որը հաստատում է, որ օբյեկտի ազդեցության տակ գտնվող տարածքը վերականգնվել է: Շահագործողը պատասխանատու է հետշահագործման փուլում իրավասու մարմնի կողմից որոշվող ժամանակահատվածում, օբյեկտի պահպանման, դիտանցման, վերահսկողության եւ ուղղիչ գործողությունների համար: Շահագործողը նաեւ պարտավոր է տեղեկացնել իրավասու մարմնին օբյեկտի կայունության վրա ազդող ցանկացած իրադարձության կամ փոփոխության, ինչպես նաեւ շրջակա միջավայրի վրա իրեն հայտնի ցանկացած էական ազդեցության մասին:

Ինչ վերաբերում է հանքարդյունաբերական թափոնների օբյեկտների փակմանը, համապատասխան դրույթը «Ընդերքի մասին» օրենսգրքի 60.8-րդ հոդվածն է, որը շատ լավ կարգավորում է այս ասպեկտը: Լրացուցիչ մանրամասները ներկայացված են «Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների վերջնական փակման մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի N 429-Ն որոշման մեջ:



Մոտարկված է

- Լեռնահանքարդյունահանման թափոնների գործածության փակված օբյեկտների ցանկի կազմում (Հոդված 20)

Հրահանգի՝ ՀԸԳՀ-ի մաս կազմող 20-րդ հոդվածը պահանջում է, որ Հայաստանը ստեղծի եւ պարբերաբար թարմացնի իր տարածքում գտնվող փակ թափոնների օբյեկտների, այդ թվում լքված վայրերի ցանկ:

«Ընդերքի մասին» օրենսգրքի 60.10 հոդվածի համաձայն՝ ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինն իրականացնում է ընդերքօգտագործման թափոնների փակված (այդ թվում՝ լքված) օբյեկտների գույքագրումը: Օբյեկտների գույքագրման անցկացման կարգը սահմանվում է «Ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների գույքագրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի N 774-Ն որոշմամբ: ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունն այս որոշման հիման վրա արդեն իսկ ձեռնարկել է հետեւյալ գործողությունները.

- փակ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների տեղամասերում շրջակա միջավայրի աղտոտվածության մակարդակի գնահատում.
- շրջակա միջավայրին պատճառված վնասի գնահատում.
- աղտոտվածության նվազեցմանը, չեզոքացմանը կամ վերացմանն ուղղված միջոցառումների մշակում:

Նշված միջոցառումները սկսելու համար ստեղծվել է տեղեկատվական տվյալների բազա՝ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման հետեւանքով առաջացած լքված/անսպասարկ արդյունաբերական աղբավայրերի եւ փակված թափոնների օբյեկտների վերաբերյալ:

Բացի այդ, անցկացվել են դաշտային տեսչական ստուգումներ 44 լքված ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներում եւ 5 փակ պոչամբարներում: Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության աստիճանի հիման վրա ընտրվել են 10 օբյեկտներ եւ փակ պոչամբարներ՝ հետագա ուսումնասիրության համար:

Այս ընտրված օբյեկտներում իրականացվել են ընդհանուր աշխատանքներ, այդ թվում՝ ընդերքօգտագործման թափոնների նմուշառում եւ թափոնների ծավալների գնահատում: ՇՄ նախարարի 2019 թվականի N 337-Լ հրամանով՝ հաստատվել են գույքագրման ընթացքում բացահայտված եւ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու առաջնահերթ ծրագրեր պահանջող փակ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների, լքված արդյունաբերական աղբավայրերի եւ խախտված տարածքների ցանկը եւ նկարագրությունները:

Մոտարկված է

Եզրափակիչ նկատառումներ եւ առաջարկություններ.

Ընդերքօգտագործման թափոնների կառավարման ոլորտի ՀՀ օրենսդրությունը մեծ մասամբ մոտարկված է ՀԸԳՀ-ի պահանջներին՝ շնորհիվ «Ընդերքի մասին» օրենսգրքի փոփոխությունների, 5.1 գլխի, 60.1 – 60.10 հոդվածների, ինչպես նաեւ թեմայի վերաբերյալ ՀՀ կառավարության բազմաթիվ որոշումների: Ինչպես նշվեց վերեւում, առկա են միայն աննշան թերություններ: «Ընդերքօգտագործում» տերմինը պետք է փոխարինվի «հանքարդյունաբերություն» տերմինով: Ինչպես նշված է սույն զեկույցի նախաբանում, սա չի նշանակում, որ օրենսդրությունը պատշաճ կերպով կիրարկվում եւ գործնականում իրականացվում է: Այնուամենայնիվ, իրականացման ուղղությամբ խիստ դրական քայլեր են



փակված օբյեկտների եւ դրանց հետ կապված միջոցառումների տվյալների բազա (գույքագրում) ստեղծելու համար Շրջակա միջավայրի նախարարության կողմից արդեն իսկ ձեռնարկված բոլոր գործողությունները:

3.5 Բնության պաշտպանություն

ԵՄ բնության պահպանության օրենսդրությունը բաղկացած է հինգ օրենսդրական ակտերից, որոնցից երկու ամենակարեւորները ՀՀԳՀ-ի հավելվածի մաս են կազմում: ՀՀԳՀ-ում չներառված օրենսդրական ակտերն են՝

- Թիվ 995/2010 կանոնակարգը (ԵՄ), որը սահմանում է փայտանյութ եւ փայտանյութային արտադրանք շուկա ներմուծող տնտեսվարողների պարտավորությունները.
- Թիվ 1143/2014 կանոնակարգը (ԵՄ)՝ օտարածին ինվազիվ տեսակների ներմուծման եւ տարածման կանխարգելման եւ վերահսկման մասին.
- Թիվ 2024/1991 կանոնակարգը (ԵՄ)՝ բնության վերականգնման մասին, եւ դրանում փոփոխություններ կատարելու մասին թիվ 2022/869 կանոնակարգը (ԵՄ):

ՀՀԳՀ-ում փոփոխություններ կատարելիս կարող է նպատակահարմար լինել դրանում ներառել, մասնավորապես, առաջին երկու կանոնակարգերի որոշակի դրույթներ:

Սակայն տեսական ժամանակ է, ինչ բնության պահպանության ոլորտում ԵՄ հիմնական օրենսդրությունը եղել են «Վայրի թռչունների պահպանության մասին» եւ «Բնական միջավայրերի եւ կենդանական ու բուսական աշխարհի վայրի տեսակների պահպանության մասին» հրահանգները, որոնք ՀՀԳՀ-ի մաս են կազմում: Երկու հրահանգներն էլ հիմնված են համանման իրավական մոտեցման վրա:

3.5.1 «Վայրի թռչունների պահպանության մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 30-ի 2009/147/ԵՀ հրահանգ

«Վայրի թռչունների պահպանության մասին» հրահանգը ԵՄ շրջակա միջավայրի ոլորտի ամենահին իրավական ակտն է, որը սկզբնապես ընդունվել է 1979 թվականին եւ փոփոխվել 2009 թվականին՝ դառնալով 2009/147/ԵՀ հրահանգ: Այն նպատակ ունի պաշտպանել Եվրոպայի բոլոր վայրի թռչուններին եւ ցուցակագրված տեսակների բնական միջավայրերը, մասնավորապես՝ հատուկ պահպանվող տարածքների ստեղծման եւ տեսակների պաշտպանության վերաբերյալ դրույթների միջոցով:

• Ներպետական օրենսդրության ընդունում

Հայաստանում վայրի թռչունների պահպանությունը կարգավորվում է հետեւյալ իրավական ակտերով.

- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2000 թվականին եւ փոփոխվել 2022 թվականին).
- ՀՀ կենդանիների Կարմիր գիրք (հաստատվել է 2010 թվականին):

Ստորեւ վերլուծվում է, թե որքանով են այս երկու իրավական ակտերը ներառում ՀՀԳՀ-ի ներքո ստանձնված համապատասխան հանձնառությունները՝ թռչունների տեսակների եւ դրանց բնական միջավայրերի պահպանության առումով: Այնուամենայնիվ, անհնար է վերջնական եզրակացություն անել առ այն, թե արդյոք գոյություն ունի համապատասխան օրենսդրություն որպես այդպիսին:

• Իրավասու մարմնի/մարմինների սահմանում



ՀՀ կառավարության 2000 թվականի N 560-Ն որոշման եւ ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման 9-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանում թռչունների պահպանության միջոցառումների իրականացման լիազոր մարմինը Շրջակա միջավայրի նախարարությունն է:

Մոտարկված է

- **Պահպանության հատուկ միջոցների անհրաժեշտություն ունեցող թռչունների տեսակների եւ պարբերաբար հանդիպող միգրացվող տեսակների գնահատում**

Սույն պահանջը վերաբերում է «Վայրի թռչունների պահպանության մասին» հրահանգի 4-րդ հոդվածին՝ կապված է հավելվածի հետ, որտեղ թվարկվում են բոլոր թռչունների տեսակները, որոնց դեպքում պահանջվում են պահպանության հատուկ միջոցառումներ: Նմանատիպ միջոցառումներ պետք է կիրառվեն նաեւ է հավելվածում չնշված, բայց պարբերաբար միգրացվող թռչունների տեսակների նկատմամբ: Այս պահանջը կատարելու համար անհրաժեշտ է ՀՀ օրենսդրության մեջ ներառել **հատուկ պահպանվող թռչունների տեսակների, ինչպես նաեւ է հավելվածում չնշված այլ պարբերաբար միգրացվող տեսակների ցանկը:**

Հայաստանում չկա պահպանության հատուկ միջոցառումներ պահանջող թռչունների տեսակների, ինչպես նաեւ միգրացվող թռչունների տեսակների ցանկ: Սակայն ՀՀԳՀ-ի այս պահանջը բավարարելու համար անհրաժեշտ է նույնականացնել այդ տեսակները (հավանաբար՝ կառավարության որոշմամբ): ՀՀԳՀ ճանապարհային քարտեզի համաձայն՝ գործնականում միգրացվող տեսակների դիտանցումը պարբերաբար իրականացվում է տարեկան երկու անգամ՝ աշնանը եւ գարնանը՝ շեշտը դնելով մոտ 10 տեսակի վրա: Սա լավ մեկնարկային կետ է, բայց օրենսդրությունը մոտարկելու համար անհրաժեշտ է նորմատիվ ակտ, որը կներառի բոլոր համապատասխան թռչունների տեսակները:

Մոտարկված չէ

- **Թռչունների տեսակների համար հատուկ պահպանման տարածքների որոշում եւ սահմանում (հոդվածներ 4(1) եւ 4)**

ԵՄ-ում «Natura 2000» ցանցի շրջանակներում հատուկ պահպանման տարածքների որոշումը եւ սահմանումը ԵՄ բնության պահպանության քաղաքականության եւ օրենսդրության անկյունաքարն է: Այնուամենայնիվ, Հայաստանը չի կարող ունենալ «Natura 2000» տարածքներ, քանի որ այն թեկնածու երկիր չէ: Այս առումով, հրահանգի 4-րդ հոդվածով (1-ին եւ 4-րդ կետեր) սահմանված պարտավորությունները որպես այդպիսին կիրառելի չեն: Փոխարենը՝ կիրառելի են Բեռնի կոնվենցիայի՝ **«Էմերալդ տարածքների որոշման եւ սահմանման»** մասին դրույթները: Հայաստանը 2008 թվականից «Եվրոպայի վայրի բնության եւ բնական միջավայրի պահպանության մասին» Բեռնի կոնվենցիայի (1979թ.) լիիրավ կողմ է:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը «կարելու թռչնաբանական տարածքներ» տերմինը սահմանում է որպես թռչունների պահպանության համար առանձնացված (բնության հատուկ պահպանվող տարածքներից դուրս կամ դրանցում ներառված) բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքներ, որոնք ծառայում են թռչունների բնադրման, ձմեռման կամ հանգստի համար: Այս սահմանումը բավականին տեղին է: Օրենքի 6-րդ հոդվածի «գ3» կետի համաձայն՝ Շրջակա միջավայրի նախարարությունը պետք է որոշի նման կարելու թռչնաբանական տարածքներ որոշելու չափանիշները: Սա արվել է վերջերս՝ «Կարելու թռչնաբանական տարածքների որոշման չափորոշիչները սահմանելու մասին» ՀՀ ՇՄ նախարարի 2024 թվականի N 277-Ն հրամանի ստորագրմամբ:



Ճանապարհային քարտեզի համաձայն՝ ԱՖրիկյան-եվրասիական միգրացվող ջրային թռչունների պահպանության մասին համաձայնագրի (AEWA) շրջանակներում անցկացվել է գույքագրում այն վայրերում, որոնք կարող են կարելու լինել AEWA-ի շրջանակում ներառված ջրային թռչունների համար: Արդյունքում, 15 վայր նույնականացվել է որպես կարելու AEWA-ի շրջանակում ներառված ջրային թռչունների տեսակների եւ դրանց միգրացիոն կանգառների պահպանության համար:

Մտարկված է

- **Պահպանության հատուկ միջոցների սահմանում պարբերաբար հանդիպող միգրացվող տեսակները պաշտպանելու համար (հոդված 4(2))**

«Վայրի թռչունների պահպանության մասին» հրահանգի 4(2) հոդվածի համաձայն՝ պարբերաբար միգրացվող թռչունների տեսակները պետք է ենթարկվեն **պահպանության հատուկ միջոցառումների**: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ճահճուտների, մասնավորապես՝ միջազգային նշանակության ճահճուտների պահպանությանը: Հատուկ միջոցառումները ձեռնարկվում են ԵՄ յուրաքանչյուր անդամ պետության կողմից առանձին: Այս առումով Հայաստանը եւս ունի գործողությունների լայն ազատություն միգրացվող թռչունների պահպանության միջոցառումներ ընտրելու հարցում:

Կրկին հարկ է նշել, որ Հայաստանում համապատասխան օրենսդրական ակտը «Կենդանական աշխարհի մասին» փոփոխված օրենքն է: Այս օրենքի 3-րդ հոդվածի «դ» կետում կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը նշված է օրենքի նպատակների շարքում: Այնուամենայնիվ, ներկայումս չկան ավելի մանրամասն միջոցառումներ սահմանող հատուկ կարգավորումներ:

«Կենդանական աշխարհի մասին» օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ Կենդանիների Կարմիր գիրքը (ընդունվել է ՀՀ կառավարության 2010 թվականի N 71-Ն որոշմամբ) վարվում է հազվագյուտ եւ անհետացող կենդանական տեսակների պահպանության միջոցառումների մշակման եւ իրագործման նպատակով: Կենդանիների Կարմիր գրքում թվարկված են ձեռնարկված մի շարք միջոցառումներ եւ առաջարկվում են բազմաթիվ այլ միջոցառումներ («պետք է արվի...») գրեթե 100 պահպանվող թռչունների տեսակների համար: Անհնար է գնահատել, թե որքանով են այդ միջոցառումներն իրականացվել եւ արդյոք դրանք իրավաբանորեն պարտադիր են՝ համաձայն Կարմիր գրքի:

ԵՄ անդամ պետություններում Կարմիր գրքերը սովորաբար ծառայում են **զուտ գիտական նպատակների**, մասնավորապես՝ տեսակների դիտանցման եւ գնահատման միջոցով տեղեկատվության հավաքագրմանը: Դրանք բնապահպաններին տրամադրում են տեղեկատվական բազա՝ իրենց դիտանցման առաջադրանքները կատարելու համար, սակայն Կարմիր գրքերը **չեն պարունակում** քաղաքացիների համար իրավաբանորեն պարտադիր պահանջներ: Կարմիր գրքի իրավական կարգավիճակից է կախված, թե արդյոք այն կարող է օգտագործվել Հայաստանում օրենսդրական մոտարկման եւ միգրացվող թռչունների տեսակների **պահպանության համար իրավաբանորեն պարտադիր միջոցառումների** սահմանման նպատակով:

ՀՀ քրեական օրենսգիրքը Կարմիր գրքում ընդգրկված բույսերի եւ կենդանիների ոչնչացումը, ինչպես նաեւ դրանց պոպուլյացիաների ոչնչացումը համարում է հանցագործություն, սակայն ներկայումս որեւէ տեղ չկան կարգավորվող իրավաբանորեն պարտավորեցնող միջոցառումներ միգրացվող թռչունների տեսակների պահպանության համար:

Ընդհանուր առմամբ, ավելի նպատակահարմար կլինի թռչունների տեսակների պահպանությանը նվիրված առանձին գլուխ ներառել կամ «Կենդանական աշխարհի մասին» վերանայված



օրենքում, կա՛մ «Բնության պահպանության մասին» նոր օրենքում, այդ թվում հավելված՝ բոլոր պահպանվող միգրացվող տեսակների անվանումներով:

Մոտարկման մակարդակն անհասկանալի է, ավելի շուտ՝ մոտարկված չէ

- Վայրի թռչունների բոլոր տեսակների պահպանության ընդհանուր համակարգի ստեղծում, որոնց թվից որսի ենթակա տեսակները հատուկ ենթախումբ են կազմում, եւ բռնելու/սպանելու որոշակի տեսակների արգելում (հոդվածներ 5, 6(1), 6(2) եւ 8)

«Վայրի թռչունների պահպանության մասին» հրահանգի 5-րդ, 6-րդ եւ 8-րդ հոդվածները վերաբերում են վայրի թռչունների պահպանության միջոցառումներին (պահպանվող տարածքների որոշումից զատ), որոնք պետք է անմիջապես կիրառվեն տեսակների նկատմամբ:

Հրահանգի 5-րդ հոդվածի համաձայն՝ խստորեն արգելվում է.

- ցանկացած միջոցով դիտավորյալ սպանությունը կամ որսը.
- բների եւ ձվերի դիտավորյալ ոչնչացումը կամ վնասումը, ինչպես նաեւ բների տեղափոխումը.
- ձվերի հեռացումը վայրի բնությունից եւ այդ ձվերի պահպանումը, նույնիսկ եթե դրանք դատարկ են.
- թռչուններին դիտավորյալ անհանգստացնելը, հատկապես բազմացման եւ ձագերի կերակրման շրջանում, եթե նման խանգարումը կարող է էական ազդեցություն ունենալ [...].
- թռչունների այն տեսակների պահումը, որոնց որսն արգելված է:

Հրահանգի 6-րդ հոդվածի (1) եւ (2) կետերի համաձայն՝ արգելվում է վայրի թռչունների ցանկացած տեսակի (կենդանի կամ սատկած) կամ այդպիսի թռչունների հեշտությամբ ճանաչելի մասերի կամ արգասիքների վաճառքը, վաճառքի նպատակով տեղափոխումը, վաճառքի նպատակով պահելը կամ վաճառքի առաջարկը, եթե թռչունները սպանությունը, որսը կամ այլ կերպ ձեռք բերումը տեղի չի ունեցել օրինական հիմունքներով (բացառությամբ բացառիկ դեպքերի):

Հրահանգի 8-րդ հոդվածը կարգավորում է որսորդության հետ կապված հարցերը. վայրի թռչունների որսի, թակարդով բռնելու կամ սպանության ժամանակ արգելվում է օգտագործել թռչունների զանգվածային կամ անխտիր որսի կամ սպանության համար օգտագործվող կամ տեսակների տեղական ոչնչացմանը նպաստող ցանկացած միջոց, սարքավորում կամ մեթոդ: Արգելվում է նաեւ որսորդության համար որոշակի տեսակի տրանսպորտային միջոցների օգտագործումը: Այդպիսի միջոցների ցանկը ներկայացված է հրահանգի IV հավելվածում:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի «գ3» կետի համաձայն՝ պետք է սահմանվեն վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների, դրանց արգասիքների եւ մասերի առք ու վաճառքի իրականացման վայրերին ներկայացվող պահանջներ եւ պայմաններ: Սակայն նման պահանջներ ու պայմաններ դեռեւս օրենսդրորեն չեն սահմանվել, ինչն անհրաժեշտ է «Վայրի թռչունների պահպանության մասին» հրահանգի 6-րդ հոդվածի դրույթներին համապատասխանելու համար:

«Կենդանական աշխարհի մասին» օրենքի 16-րդ հոդվածի «բ» կետի համաձայն՝ պետք է կանխվի կենդանական աշխարհի օբյեկտների ապօրինի օգտագործումը: Սակայն հոդվածում չի նշվում, թե որ դեպքերում է կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումը համարվում ապօրինի եւ ինչպես պետք է իրականացվի նման կանխարգելումը. սույն դրույթն իր բնույթով լոկ հռչակագրային է:



«Կենդանական աշխարհի մասին» օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիների օգտագործումը թույլատրվում է բացառիկ դեպքերում՝ գիտահետազոտական, բնապահպանական, առողջապահական եւ վերարտադրության կազմակերպման նպատակներով՝ լիազորված պետական մարմնի հետ կնքված պայմանագրերի հիման վրա: Պարզ չէ, թե որքանով է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքն ընդգրկում ԵՄ հրահանգի համաձայն պահպանության ենթակա վայրի թռչունների բոլոր տեսակները: Նաեւ պարզ չէ, թե արդյոք «օգտագործում» հասկացությունը ներառում է նաեւ տեղափոխումը եւ վաճառքը, ինչպես պահանջվում է ԵՄ հրահանգի 6-րդ հոդվածով:

Նույն օրենքի 27.2 հոդվածի համաձայն՝ վայրի կենդանիների, այդ թվում՝ ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների, դրանց արգասիքների եւ մասերի առքն ու վաճառքն «իրականացվում են վայրի կենդանիների կենսաբանական, անհատական եւ տեսակային առանձնահատկություններից բխող ու գոյատևման համար անհրաժեշտ կարիքները բավարարող պայմաններում»: Սույն հոդվածը որեւէ արգելք չի նախատեսում:

Օրենքի 23-րդ հոդվածը թվարկում է Հայաստանում կենդանական աշխարհի օգտագործման տեսակումները (առանց հստակեցնելու, թե արդյոք «օբյեկտներ» տերմինը վերաբերում է վայրի կենդանիներին, թե ոչ): Ցանկը ներառում է արդյունագործական նպատակներով օգտագործումը (որսորդություն, ձկնորսություն, հավաք, այդ թվում՝ կենդանիների կենսագործունեության արգասիքների հավաք եւ մթերում): Հոդվածը չի պարունակում որեւէ ուղղակի արգելք, որը համապատասխանում է «Վայրի թռչունների պահպանության մասին» հրահանգի 5-րդ եւ 6-րդ հոդվածներում սահմանված արգելքներին:

«Որսի եւ որսորդական տնտեսության վարման մասին» ՀՀ օրենքն իր 20, 21 եւ 21.1 հոդվածներում կարգավորում է որսորդության թույլատրելի ժամանակահատվածները, ինչպես նաեւ որսորդության համար օգտագործվող մեթոդները, միջոցները եւ գործիքները:

Մտարկված է

3.5.2 «Բնական միջավայրերի եւ կենդանական ու բուսական աշխարհի վայրի տեսակների պահպանության մասին» Խորհրդի 1992 թվականի մայիսի 21-ի 92/43/ԵՏՀ հրահանգ՝ փոփոխություններով

«Բնական միջավայրերի եւ կենդանական ու բուսական աշխարհի վայրի տեսակների պահպանության մասին» հրահանգը համարվում է բնության պահպանության ոլորտում ԵՄ հիմնական օրենսդրական ակտը: Ինչպես «Վայրի թռչունների պահպանության մասին» հրահանգը, այն եւս բաժանված է երկու մասի՝ պահպանվող տարածքների (Natura 2000 տարածքներ) որոշմանը եւ կառավարմանը վերաբերող դրույթներ (հոդվածներ 3-11) եւ կենդանական տեսակների պահպանությանն ուղղված դրույթներ (հոդվածներ 12-16):

• Ներպետական օրենսդրության ընդունում

Հայաստանում կենդանական ու բուսական աշխարհի վայրի տեսակների պահպանությանը վերաբերող իրավական ակտերն են.

- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2000 թվականին եւ փոփոխվել՝ 2022 թվականին).
- ՀՀ կենդանիների Կարմիր գիրք (հաստատվել է 2010 թվականին).
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1999 թվականին եւ փոփոխվել՝ 2023 թվականին):



Ստորել վերլուծվում է, թե որքանով են նշված իրավական ակտերը ներառում ՀՀԳՀ-ի ներքո ստանձնված համապատասխան հանձնառությունները:

- **Իրավասու մարմնի/մարմինների սահմանում**

ՀՀԳՀ ճանապարհային քարտեզի համաձայն՝ «Բնական միջավայրերի» մասին հրահանգի ոլորտում միջոցառումներ իրականացնող լիազոր մարմինը Շրջակա միջավայրի նախարարությունն է (ՇՄՆ)՝ համաձայն ՀՀ կառավարության 2000 թվականի N 560 որոշման եւ ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման 9-րդ կետի 1-ին ենթակետի:

Մոտարկված է

- **Տարածքների ցանկի կազմում, այդպիսի տարածքների սահմանում եւ դրանց կառավարման գերակայությունների որոշում (ներառյալ «Էմերալդ ցանցի» հնարավոր տարածքների ցանկի կազմումը եւ այդ տարածքների համար պաշտպանության եւ կառավարման միջոցների սահմանումը) (Հոդված 4)**

«Բնական միջավայրերի» մասին հրահանգի 4-րդ հոդվածի համաձայն՝ ԵՄ անդամ պետությունները պետք է առաջարկեն եւ նշանակեն հատուկ պահպանվող տարածքներ՝ համաձայն հրահանգում սահմանված ընթացակարգի: Այս տարածքները հետագայում դառնում են «Natura 2000» ցանցի մաս:

Հայաստանի դեպքում սա հնարավոր չէ, քանի որ այն ԵՄ անդամ պետություն չէ: Այնուամենայնիվ, «Natura 2000» տարածքների համարժեքը «Կենսաբանական բազմազանության մասին» Բեռնի կոնվենցիայի ներքո գործող «Էմերալդ տարածքներն» են, որին Հայաստանը միացել է:

«Էմերալդ ցանցը» հատուկ պահպանվող տարածքների Էկոլոգիական ցանց է եւ համարժեք է ԵՄ «Natura 2000» ցանցին՝ ԵՄ անդամ չհանդիսացող երկրների համար: Այն գործարկվել է 1989 թվականին: Ազգային մակարդակով «Էմերալդ ցանցի» ստեղծումը Բեռնի կոնվենցիայի կողմերի համար համարվում է դրանով ստանձնած իրենց պարտավորությունները կատարելու հիմնական գործիքներից մեկը: Նախքան տարածքները պաշտոնապես որպես «Էմերալդ ցանցի» մաս ճանաչելը, բոլոր առաջարկվող տարածքները ենթարկվում են մանրակրկիտ կենսաաշխարհագրական գնահատման՝ որոշելու համար, թե արդյոք դրանք բավարար են ցանցի վերջնական նպատակին հասնելու համար:

ՀՀԳՀ-ի այս պահանջը կատարելու համար Հայաստանի բնապահպանական օրենսդրությունը պետք է ներառի դրույթներ, որոնք կհաստատեն ազգային օրենսդրության եւ Բեռնի կոնվենցիայի միջեւ կապը եւ կնախատեսեն «Էմերալդ» տարածքների որոշումը եւ սահմանումը (ի լրումն ազգային բնության հատուկ պահպանվող տարածքների):

Ըստ Բեռնի կոնվենցիայի վեբկայքի՝ 2024 թվականի դեկտեմբերի 6-ի դրությամբ Հայաստանում կա 23 «Էմերալդ տարածք» թեկնածու, սակայն դրանցից ոչ մեկը դեռեւս պաշտոնապես չի հաստատվել որպես «Էմերալդ տարածք» (տե՛ս՝ <https://rm.coe.int/pa18e-2024-draft-candidate-list-emerald-network-sites-2779-8956-4427-1/1680b27e33>):

«EU4Environment» ծրագրի 2024 թվականի սեպտեմբերյան [գեկույզի](#) համաձայն՝ «Էմերալդ» ցանցում ներառվելիք վայրերի թիվը կարող է հասնել 30-ի:

«Կենդանական աշխարհի մասին» օրենքը բացարձակապես չի անդրադառնում «Էմերալդ տարածքների» որոշման եւ կառավարման հարցերին. ՀՀ օրենսդրությունը նույնպես չի նախատեսում դրանց որոշման եւ կառավարման որեւէ ընթացակարգ: Սա որոշ չափով զարմանալի է, քանի որ ՀՀ կառավարության 2014 թվականի N 1059-Ն որոշման մեջ հստակ նշված



Ե, որ «Էմերալդ» ցանցի ստեղծումը «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի դրույթների կատարմանն ուղղված կարելուագույն քայլերից մեկն է եւ հանդիսանում է նախադեպ Հայաստանում Էկոլոգիական ցանցի ստեղծման ու միջազգային Էկոլոգիական ցանցերին միանալու ուղղությամբ:

«Կենդանական աշխարհի մասին» օրենքը պարունակում է մի շարք դրույթներ, որոնք վերաբերում են բնության հատուկ պահպանվող տարածքներին: Բացի այդ, ուժի մեջ է նաեւ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքը: Սակայն այն չի փոխարինում «Էմերալդ տարածքների որոշման եւ կառավարման կարգը կարգավորող իրավական նորմեր ընդունելու» ՀՀԳԳ-ի ներքո ստանձնված պարտավորությանը: **Խորհուրդ է տրվում մշակել եւ ընդունել «Էմերալդ տարածքներին» սվիրված հատուկ օրենք կամ ենթաօրենսդրական ակտ, կամ բուսական եւ կենդանական աշխարհի մասին օրենքներում ներառել համապատասխան գլուխ (ցանկալի է այս երկու օրենքները միավորել մեկի մեջ):**

Մոտարկված չէ

- Նման տարածքների պահպանության համար պահանջվող միջոցների՝ ներառյալ համաֆինանսավորման սահմանումը (հոդվածներ 6 եւ 8)

«Բնական միջավայրերի» մասին հրահանգի 6-րդ հոդվածն, ըստ էության, սահմանում է ԵՄ անդամ պետությունների երկու կարեւոր պարտավորություն: Առաջինն անհրաժեշտ պահպանման միջոցառումներ սահմանելն է՝ կա՛մ յուրաքանչյուր պահպանվող տարածքի համար հատուկ կառավարման պլանների, կա՛մ այլ զարգացման պլանների, կա՛մ օրենսդրական, վարչական կամ պայմանագրային միջոցառումների միջոցով, որոնք համապատասխանում են բնական միջավայրերի տեսակների Էկոլոգիական պահանջներին: Հայաստանին առավել վերաբերելի Բեռնի կոնվենցիայի համարժեք տեքստը ներկայացված է 4-րդ հոդվածի 1-ին կետում. «Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ձեռնարկի համապատասխան եւ անհրաժեշտ օրենսդրական ու վարչական միջոցներ՝ վայրի ֆյուրայի ու ֆաունայի տեսակների բնական միջավայրերի, հատկապես 1-ին եւ 2-րդ հավելվածներում նշված տեսակների, եւ վտանգված բնական միջավայրերի պահպանությունն ապահովելու նպատակով» (→ բնական միջավայրերի ներքո ի նկատի են առնվում «Էմերալդ» տարածքները):

ՀՀԳԳ-ի ներքո օրենսդրության մոտարկման շրջանակում Հայաստանը պարտավոր է ստեղծել «Էմերալդ» տարածքների պահպանության կարգը սահմանող հիմնական իրավական համակարգ: Դրանով հանդերձ, ներկայումս չկան այդպիսի կանոնակարգեր, որոնք կսահմանեն, թե ինչպես պետք է պահպանվեն «Էմերալդ» տարածքները: Նման օրենսդրություն ընդհանրապես բացակայում է: Միեւնույն ժամանակ, որպես առաջին քայլ, «EU4Environment» ծրագիրը մշակել է իրավաբանորեն ոչ պարտադիր ուղեցույց՝ Հայաստանի «Էմերալդ» տարածքների 2023-2030 թվականների կառավարման պլանների պատրաստման համար, սակայն օրենսդրության մոտարկման նպատակների տեսանկյունից դա բավարար չէ:

Մոտարկված չէ

«Բնական միջավայրերի» մասին հրահանգի 6-րդ հոդվածի երկրորդ մասը նախատեսում է «համապատասխան գնահատման» մեխանիզմի ստեղծում, որը պետք է ապահովի, որ պահպանվող տարածքի վրա Էական ազդեցություն ունեցող որեւէ նախագիծ կամ պլան չի իրականացվում առանց նման գնահատման: Այս մեխանիզմը շատ բարդ է եւ պահանջկոտ եւ **նախատեսված չէ** Բեռնի կոնվենցիայով: Հետեւաբար կարելի է ենթադրել, որ «համապատասխան գնահատման» մեխանիզմի ներդրումը պարտադիր չէ Հայաստանի բնապահպանական օրենսդրության մեջ ներառելու համար:



Մոտարկում անհրաժեշտ չէ

Ինչ վերաբերում է 8-րդ հոդվածի համաձայն համաֆինանսավորման հարցին, ԵՄ անդամ պետությունները պարտավոր են տեղեկացնել ԵՄ հանձնաժողովին 6-րդ հոդվածում նախատեսված առաջադրանքների իրականացման համար իրենց համաֆինանսավորման կարիքների մասին: Հարցն այն է, թե որքանով է սա վերաբերում Հայաստանին՝ որպես ԵՄ անդամ չհանդիսացող պետության: Ամեն դեպքում, Հայաստանի կողմից ԵՄ-ին ուղղված որեւէ համաֆինանսավորման խնդրանք հատուկ օրենսդրության ընդունում չի պահանջի:

Մոտարկում անհրաժեշտ չէ

- **Բնական միջավայրերի եւ տեսակների պահպանման կարգավիճակի դիտանցման համակարգի ստեղծում (Հոդված 11)**

«Բնական միջավայրերի» մասին հրահանգի 11-րդ հոդվածի համաձայն՝ պետք է ստեղծվի սույն հրահանգի շրջանակներում պահպանվող բնական միջավայրերի եւ տեսակների պահպանության վիճակի դիտանցման լավ հաստատված համակարգ: Համաձայն Բեռլին կոնվենցիայի կառավարման, դիտանցման եւ հաշվետվությունների միջոցառումների իրականացման մշտական հանձնաժողովի թիվ 8 (2012) որոշման՝ Կողմերը պարտավոր են ստեղծել դիտանցման համակարգ, իսկ դիտանցման շրջանակը «Էմերալդ» տարածքների որոշման համար ձեռնարկված կառավարման պլանների եւ/կամ այլ վարչական միջոցառումների անբաժանելի մասն է կազմում:

«Կենդանական աշխարհի մասին» եւ «Բուսական աշխարհի մասին» օրենքները պարունակում են դրույթներ, որոնք կառավարության առջեւ խնդիր են դնում **ստեղծել վայրի բնության դիտանցման համակարգ**, սակայն նման համակարգի մանրամասները կարգավորող որեւէ այլ իրավական ակտ գոյություն չունի, մասնավորապես՝ բնական միջավայրերի (այս դեպքում՝ «Էմերալդ» տարածքների) կամ տեսակների պաշտպանության կարգավիճակի վերաբերյալ որեւէ դրույթ չկա: Մինչեւ 2020 թվականը Շրջակա միջավայրի նախարարության ներքո գործում էր Կենսաբազմազանության ռեսուրսների կառավարման գործակալությունը, որը պատասխանատու էր կենսաբազմազանության դիտանցման համար: Այժմ այն վերակազմակերպվել է: Միասնական դիտանցման համակարգ չկա, սակայն կան առանձին կառավարության որոշումներ, որոնք հաստատում են կենդանական աշխարհի, բուսական աշխարհի եւ բնության հատուկ պահպանվող տարածքների դիտանցման կազմակերպման եւ անցկացման ընթացակարգերը:

Մոտարկված է

- **Տեսակների խիստ պահպանության ռեժիմի սահմանում IV հավելվածում թվարկված տեսակների համար՝ Հայաստանին վերաբերող մասով (Հոդված 12)**

«Բնական միջավայրերի» մասին հրահանգի 12-րդ հոդվածը պահանջում է ստեղծել IV հավելվածում թվարկված տեսակների խիստ պահպանության համակարգ՝ արգելելով.

- վայրի բնության մեջ այս տեսակների առանձնյակների դիտավորյալ որսի կամ ոչնչացման բոլոր ձեւերը.
- այս տեսակների առանձնյակներին դիտավորյալ խանգարելը, հատկապես դրանց բազմացման, բուծման, ձմեռման եւ միգրացիայի ժամանակահատվածներում.
- ձվերի դիտավորյալ ոչնչացումը կամ վայրի բնությունից հեռացումը.
- բազմացման կամ հանգստի վայրերի վատթարացումը կամ ոչնչացումը:

Բեռլին կոնվենցիայի 6-րդ հոդվածը գրեթե նույնությամբ կրկնում է վերոնշյալ դրույթը:



«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը նման մանրամասն դրույթներ չի պարունակում (տե՛ս «Կայրի թռչունների պահպանության մասին» հրահանգը), այլ 23-րդ հոդվածում միայն բավականին ընդհանուր եւ մասամբ երկիմաստ արգելք է պարունակում (չնայած որ կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման գրեթե բոլոր նպատակները սկզբունքորեն թույլատրվում են): «Կենդանական աշխարհի մասին» օրենքի 17-րդ հոդվածը նշում է, որ «արգելվում է ցանկացած գործունեություն, որը հանգեցնում է Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը եւ դրանց աճելավայրերի վատթարացմանը»: Այս ձեւակերպումը բավականին լայն է հնչում, եւ անհասկանալի է մտում արդյոք այն ներառում է այն ամենը, ինչը նկատի է առնվում «Բնական միջավայրերի» մասին հրահանգի 12-րդ հոդվածում: Օրենսդրության մոտարկման տեսանկյունից՝ սա չի կարող լիովին բավարար համարվել:

Մոտարկման մակարդակն առավելապես անհասկանալի է

- **Կրթությունը եւ հանրությանն ընդհանուր տեղեկատվության տրամադրումը խթանող մեխանիզմի ստեղծում (Հոդված 22)**

«Բնական միջավայրերի» մասին հրահանգի 22(3) հոդվածի դրույթներին մոտարկումը, մասնավորապես՝ կրթության եւ հանրային տեղեկատվության խթանումը, պարտադիր օրենսդրական կիրարկման պահանջ չի ենթադրում:

ՀՀԳՀ ճանապարհային քարտեզի համաձայն՝ Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներում պարբերաբար անցկացվում են բնապահպանական կրթության եւ հանրային իրազեկման միջոցառումներ, ինչպես նաեւ ոչ ֆորմալ Էկոկրթական դասընթացներ: Այս գործընթացը լուսաբանվում է Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական սոցիալական հարթակներում: «Հայաստանում կենսաբազմազանության պահպանության ուժեղացում եւ կայուն օգտագործում» թվինիկզ ծրագրի շրջանակներում ճանապարհային քարտեզի իրականացման աղյուսակում նշված է, որ ստեղծվել է <https://biodiversity.am/hy/> վեբկայքը, բայց, ցավոք, սույն վեբկայքը, կարծես, ներկայումս անհասանելի է:

Մոտարկված է

Եզրափակիչ նկատառումներ եւ առաջարկություններ.

ՀՀ օրենսդրության բնապահպանական դրույթները միայն մասամբ են համապատասխանում ՀՀԳՀ պահանջներին:

ՀՀ բնապահպանական օրենսդրությունը սկիզբ է առել 2000-ականների սկզբին: Այդ ժամանակվանից ի վեր այն ներառել է բուսական եւ կենդանական աշխարհների պահպանության մասին առանձին օրենքները, ինչպես նաեւ կենդանիների Կարմիր գիրքը: Միեւնույն ժամանակ, ԵՄ օրենսդրությունը (ինչպես նաեւ Բեռնի կոնվենցիան) օգտագործում է այլ մոտեցում. դրանք տարբերակում են, մի կողմից, **բնական միջավայրերի պահպանությունը** (թռչունների/կենդանական աշխարհի եւ բուսական աշխարհի համար), մյուս կողմից՝ **առանձին տեսակների** (թռչուններ/ կենդանական աշխարհ/ բուսական աշխարհ) պահպանման միջոցառումներն ու պահանջները:

Ինչ վերաբերում է բնական միջավայրերի պահպանությանը, հաշվի առնելով, որ Հայաստանը չի կարող «Natura 2000» տարածքներ առանձնացնել, բայց Բեռնի կոնվենցիայով պարտավոր է որոշել եւ կառավարել «Էմերալդ տարածքներ», անհրաժեշտ է շրջակա միջավայրի օրենսդրության մեջ ներառել դրանց որոշման եւ կառավարման հատուկ իրավական հիմք: Սա պետք է ամրագրվի օրենքով, ապա լրացվի կառավարման ընթացակարգերը եւ կառավարման միջոցառումները (եւ/կամ պլանները) կարգավորող մանրամասն ենթաօրենսդրական ակտերով: Օրինակ,



Ուկրաինան, որն ունի գրեթե նույնական օրենսդրություն (Կենդանական եւ բուսական աշխարհների մասին առանձին օրենքներ, Կարմիր գիրք եւ Ազգային պահպանվող տարածքների մասին օրենք), նույն ճանապարհով է անցել եւ ընդունել է «Էմերալդ» տարածքների պահպանության վերաբերյալ հատուկ օրենսդրություն: Հարկ է նշել, որ ներկա դրությամբ Հայաստանում կա «Էմերալդ» տարածքի շուրջ 30 թեկնածու տարածք, սակայն համապատասխան ազգային ընթացակարգերի բացակայության պատճառով դրանք չեն կարող պաշտոնապես ճանաչվել Բեռնի կոնվենցիայի քարտուղարության կողմից, իսկ դրանց կառավարման հարցերը մնում են չլուծված:

Ինչ վերաբերում է տեսակների պահպանությանը, ապա գործող համակարգը նախատեսում է Կարմիր գրքում ընդգրկված բոլոր տեսակների ընդհանուր պահպանություն, սակայն ԵՄ օրենսդրությամբ նախատեսված որեւէ հատուկ պահպանության միջոցառում չկա: Բացի այդ, դեռեւս չեն սահմանվել ՅՈՒՆԵՍԿՕ-ով պահանջվող միգրացվող թռչունների ցանկերը:

Ընդհանուր առմամբ եւ երկարաժամկետ հեռանկարում նպատակահարմար կլիներ ընդունել «Բնության պահպանության մասին» նոր միասնական օրենք, որը կներառի կենդանական եւ բուսական աշխարհի, բնական միջավայրերի եւ տեսակների վերաբերյալ դրույթներ (առանձին գլուխներով), ինչպես նաեւ կպարունակի «Էմերալդ» ցանցի տարածքների պահպանության իրավական հիմքեր:

3.6 Արդյունաբերական աղտոտում եւ արդյունաբերական վտանգներ

Արդյունաբերական աղտոտման եւ արդյունաբերական վտանգների ոլորտում ԵՄ-ում գործում են հիմնականում չորս օրենսդրական ակտեր, որոնցից երկուսը մասամբ ներառված են ՅՈՒՆԵՍԿՕ-ում:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի մաս են կազմում հատվածներ հետեւյալ իրահանգներից.

- «Արդյունաբերական արտանետումների մասին» 2010/75/ԵՄ իրահանգ.
- «Վտանգավոր նյութերի առկայությամբ պայմանավորված խոշոր վթարների վտանգների վերահսկման մասին» 2012/18/ԵՄ իրահանգ (Սեվեգոյի III իրահանգ):

ՅՈՒՆԵՍԿՕ-ում ներառված չեն.

- «Աղտոտիչների արտանետման եւ տեղափոխման Եվրոպական ռեգիստրի (EPRT) ստեղծման մասին» թիվ 166/2006 կանոնակարգ (ԵՀ).
- «Միջին այրման կայաններից որոշակի աղտոտիչ նյութերի՝ մթնոլորտային օդ արտանետումների սահմանափակման մասին» 2015/2193/ԵՄ իրահանգ:

EPRT-ը, մեծ հաշվով, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի պայմանագրի շրջանակներում Օրիոսի կոնվենցիայի աղտոտիչների արտանետման եւ տեղափոխման ռեգիստրի արձանագրության (PRTR արձանագրություն) տեղափոխումն է ԵՄ օրենսդրություն: Այս PRTR արձանագրությունը չի վավերացվել Հայաստանի կողմից, եւ քանի դեռ այդպես է, EPRT կանոնակարգի ներառումը ՅՈՒՆԵՍԿՕ-ում իմաստ չունի: Իրավիճակն այլ է «Միջին այրման կայանների մասին» իրահանգի դեպքում, որը կարելի է համարել «Արդյունաբերական արտանետումների մասին» իրահանգի «փոքր քույրը»: Քանի որ Հայաստանի արդյունաբերական կայանների մեծ մասը միջին չափի են, այլ ոչ թե մեծ (ըստ այս երկու իրահանգների չափանիշների), խորհուրդ է տրվում ՅՈՒՆԵՍԿՕ-ի ապագա փոփոխություններում ներառել նաեւ «Միջին այրման կայանների մասին» իրահանգի համապատասխան դրույթները: Այս իրահանգի ուշադրության կենտրոնում են միջին այրման կայաններից (1-ից 50 ՄՎտ ջերմային հզորությամբ կայաններ) մթնոլորտ արտանետվող SO₂-ի, NO_x-ի եւ փոշու սահմանային արժեքները:



3.6.1 «Արդյունաբերական արտանետումների մասին» (ներառված աղտոտման կանխարգելում եւ վերահսկում) Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 24-ի 2010/75/ԵՄ հրահանգ

2024 թվականի օգոստոսի 4-ից գործում է «Արդյունաբերական արտանետումների մասին» հրահանգի նոր կոնսոլիդացված տարբերակը: Այս կոնսոլիդացումը, մասնավորապես, վերաբերում է հրահանգի գործունեության շրջանակի մեջ անսահմանափակ արտանետումների ներառմանը եւ իրական ազդեցություն չունի ՀՀԳՀ-ի պահանջների վրա:

«Արդյունաբերական արտանետումների մասին» հրահանգը ԵՄ շրջակա միջավայրի օրենսդրության անկյունաքարերից է: Այն խոշոր արդյունաբերական կայանների լիցենզավորման եւ վերահսկողության ոլորտային մոտեցումը փոխարինեց խոշոր այրման կայանների համար լավագույն հասանելի տեխնոլոգիաների (LRS) եւ արտանետումների սահմանային արժեքների (ԱՍԱ) վրա հիմնված ինտեգրված թույլտվությունների եւ վերահսկողության համակարգով:

Հատկանշական է, որ «Արդյունաբերական արտանետումների մասին» հրահանգի ոչ բոլոր համապատասխան դրույթներն են ներառված ՀՀԳՀ-ում, եւ որոշ դեպքերում նկատվում են անհամապատասխանություններ: Օրինակ, ՀՀ իշխանությունները պարտավոր են պարբերաբար վերանայել եւ թարմացնել թույլտվության պայմանները (Հոդված 21), մինչդեռ թույլտվության պայմաններն իրենք, ինչպես նշված է հրահանգի 14(1) հոդվածում, ՀՀԳՀ-ի մաս չեն կազմում, ինչն անտրամաբանական է թվում: Ակնհայտ է, որ 14(1) հոդվածի դրույթները նույնպես պետք է մոտարկվեն թույլտվության պայմանների առումով:

• **Ներպետական օրենսդրության ընդունում**

Հայաստանում մինչ այժմ արդյունաբերական ինտեգրված թույլտվությունների եւ վերահսկողության մասին օրենք չի ընդունվել: Գործում են առանձին լիցենզիաներ / թույլտվություններ՝ համաձայն 2001 թվականի «Լիցենզավորման մասին» օրենքի, ինչպես նաեւ ոլորտային օրենքների շրջանակներում, ինչպիսիք են՝ «Թափոնների մասին» օրենքը (աղբավայրերի շահագործման թույլտվություն), «Աղբահանության մասին» օրենքը (թափոնների հետ կապված տարբեր գործունեության տեսակների լիցենզիաներ), «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքը (մթնոլորտ արտանետումների թույլտվություն) եւ «Ջրային օրենսգիրքը» (ջրօգտագործման թույլտվություն եւ ջրային լիցենզիա): Բացի այդ, արդյունաբերական գործունեության հաստատման համար կիրառվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) գործիքը:

Բացի այդ, «Մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի մշակման եւ սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծ ներկայացրած իրավաբանական անձանց եւ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց արտանետման թույլտվությունների տրամադրման կամ մերժման կամ ուժը կորցրած ճանաչելու մասին կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2024 թվականի N 32-Ն որոշումը կարգավորում է սահմանային թույլատրելի արտանետումների հաշվարկման կարգը (որն Էապես տարբերվում է ԵՄ-ում կիրառվող մոտեցումից), «արտանետման թույլտվություն» տրամադրելու կարգը, ինչպես նաեւ նման թույլտվության հնարավոր չեղարկման կարգը: Սակայն, այս կարգավորման մի շարք դրույթներ չեն համապատասխանում արդյունաբերական ձեռնարկություններից արտանետումների վերահսկման ԵՄ մոտեցմանը:

2013 թվականին գերմանացի իրավաբանների խմբի եւ Շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցիչների կողմից համատեղ պատրաստվել է ինտեգրված բնապահպանական



թույլտվությունների եւ դիտանցման մասին օրենքի նախագիծ, սակայն այն երբեք չի ներկայացվել խորհրդարանի քննարկմանը:

Հատկապես կարելոր է նաեւ ՀՀ բնապահպանական օրենսդրության մեջ այնպիսի հիմնական հասկացությունների սահմանումը, ինչպիսիք են՝ «բնապահպանական թույլտվություն», «արտանետում», «արտանետումների սահմանային արժեք», «ընդհանուր պարտադիր կանոններ», «նշանակալի փոփոխություն» եւ այլ տերմինները:

Մոտարկված չէ

- **Իրավասու մարմնի/մարմինների սահմանում**

ՀՀԳՀ ճանապարհային քարտեզի համաձայն՝ արդյունաբերական արտանետումների վերաբերյալ օրենսդրության մշակման համար պատասխանատու լիազոր մարմինը Շրջակա միջավայրի նախարարությունն է: Այնուամենայնիվ, ճշգրիտ իրավական հիմքը մնում է անհասկանալի: Հայ օրենսդիրը պետք է տեղյակ լինի, որ «Արդյունաբերական արտանետումների մասին» օրենքի ընդունումը կպահանջի շրջակա միջավայրի թույլտվության նոր համակարգի ներդրում, որը կարող է հակասել գործող լիցենզավորման/թույլտվության համակարգին եւ պահանջել էական փոփոխություններ այս համակարգում:

Մոտարկված է

- **Թույլտվության անհրաժեշտություն ունեցող կառուցվածքների որոշում (Հավելված I)**

«Արդյունաբերական արտանետումների մասին» հրահանգի I հավելվածում թվարկված են արդյունաբերական օբյեկտներում իրականացվող գործունեության բոլոր տեսակները: ՀՀ օրենսդրության մեջ նման ցանկ գոյություն չունի, թեեւ 2012 թվականին իրականացված թվինինգ ծրագրի շրջանակներում նախնական գնահատում անցկացվել է: **Մոտարկման տեսանկյունից բավարար կլինի պարզապես նույնականացնել** Հայաստանում հրահանգի I հավելվածի տակ ընկնող բոլոր համապատասխան օբյեկտները, նույնիսկ առանց ազգային իրավական հիմքի: Այնուամենայնիվ, խորհուրդ է տրվում, որ այս ցանկը ընդունվի որպես ինտեգրված թույլտվությունների մասին նոր օրենքի հավելված (ինչպես ԵՄ-ում) կամ որպես կառավարության որոշում (ԿԿ):

Մոտարկված չէ

- **Թույլտվությունների համակցված համակարգի ստեղծում (հոդվածներ 4, 6, 12, 21 եւ 24 եւ Հավելված IV)**

Սա «Արդյունաբերական արտանետումների մասին» հրահանգը հետ մոտարկման պահանջի ամենաբարդ հատվածն է, որը ներառում է տարբեր ասպեկտներ:

Հրահանգի 4-րդ հոդվածի համաձայն՝ ոչ մի կայանք կամ այրման կայան [...] չի կարող շահագործվել առանց ինտեգրված թույլտվության: Թույլտվությունը կարող է ընդգրկել մեկ վայրում երկու կամ ավելի կայանքներ: Նման թույլտվությունը տրամադրվում է միայն այն դեպքում, եթե կայանքը համապատասխանում է հրահանգի պահանջներին (Հոդված 5): 6-րդ հոդվածի համաձայն՝ հնարավոր է որոշակի կատեգորիաների կայանքների/այրման կայանների համար պահանջներ սահմանել այսպես կոչված «ընդհանուր պարտադիր կանոններում» (ԸՊԿ), այնպես որ թույլտվությունը կարող է պարզապես պարունակել իրոք այդ կանոններին՝ առանց մանրամասն անհատական պայմանների: Սա միայն տարբերակ է եւ պարտադիր չէ մոտարկման համար:

Ինտեգրված բնապահպանական թույլտվության դիմումը պետք է նկարագրի «Արդյունաբերական արտանետումների մասին» հրահանգի 12-րդ հոդվածում թվարկված համապատասխան



ասպեկտներից շատերը: Թույլտվության պայմանները սահմանված են հրահանգի 14(1) հոդվածում: 21-րդ հոդվածի համաձայն՝ իրավասու մարմինը պարտավոր է պարբերաբար վերանայել եւ թարմացնել թույլտվության պայմանները:

Հրահանգի 24-րդ հոդվածը IV հավելվածի հետ համատեղ սահմանում է իրավասու մարմնի կողմից հրապարակվող որոշումների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության պայմանները եւ թույլտվության ընթացակարգին հանրության մասնակցության կարգավորումները:

Հայաստանում, հաշվի առնելով ոլորտային մոտեցման կիրառումը, ինտեգրված թույլտվությունների համակարգը դեռեւս չի ներդրվել: Չկան նաեւ դրույթներ, որոնք նախատեսում են ընդհանուր պարտադիր կանոններ (ԸՊԿ), որոնք պարտադիր չեն, բայց խիստ խորհուրդ են տրվում թույլտվությունների համակարգի գործնականությունը պարզեցնելու եւ բարելավելու համար:

Մոտարկված չէ

Ոլորտային օրենքներից ոչ մեկը չի պարունակում թույլտվությունների դիմումների բովանդակության վերաբերյալ դրույթներ (նույնիսկ ջրօգտագործման թույլտվությունների դիմումների վերաբերյալ մի շարք լավ դրույթներ պարունակող Ջրային օրենսգիրքը):

Մոտարկված չէ

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում «աղտոտման անշարժ աղբյուրների համար առավելագույն թույլատրելի արտանետումների չափորոշիչների» վերաբերյալ, Ջրային օրենսգրքի 32-րդ հոդվածում ջրօգտագործման թույլտվությունների վերաբերյալ եւ «Թափոնների մասին» օրենքի 7-րդ հոդվածում խիստ ընդհանուր ձևով ներկայացված դրույթներից զատ, օրենսդրությունում թույլտվությունների բովանդակության վերաբերյալ այլ պահանջներ չկան: Այս ամենը կարելի է համարել լավ մեկնարկային կետ, բայց այն լիովին չի համապատասխանում ՀԸԳՀ-ի պահանջներին: Նշված օրենքներից ոչ մեկը չի պարունակում թույլտվությունների պայմանները վերանայելու եւ թարմացնելու կանոններ:

Որոշակիորեն մոտարկված է

Ինչ վերաբերում է Հայաստանում թույլտվությունների տրամադրման ընթացակարգերին հանրության մասնակցությանը, ապա այն սահմանափակվում է միայն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) ընթացակարգով եւ որեւէ ոլորտային օրենքի համաձայն թույլտվությունների տրամադրման ընթացակարգի մաս չի կազմում:

Մոտարկված չէ

Ջրային օրենսգրքի 42-րդ հոդվածը նախատեսում է լիցենզիա ստացողի մասին տեղեկատվության հրապարակայնություն (բայց ոչ լիցենզիայի/թույլտվության հրապարակում), «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքը նույնպես չի նախատեսում թույլտվության բովանդակության նկատմամբ հասանելիություն: «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը լիցենզիաների/ թույլտվությունների բովանդակություն որպես հասանելի տեղեկատվություն հստակորեն չի նշում:

Մոտարկված չէ

- Համապատասխանության դիտանցման մեխանիզմի ստեղծում (հոդվածներ 8, 14(l)(d) եւ 23(1))

«Արդյունաբերական արտանետումների մասին» հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն՝ պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ՝ թույլտվության պայմանների պահպանումն ապահովելու համար: Սա ներառում է արդյունաբերական գործունեության հնարավոր կասեցումը՝ շրջակա



միջավայրի վրա զգալի բացասական ազդեցության կամ մարդու առողջությանը սպառնացող վտանգի դեպքում:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի արտանետման սահմանված չափաբանակների եւ պայմանների պահպանումը (արդյո՞ք սա նշանակում է թույլտվության պայմաններ) ապահովվում է «պետական վերահսկողությամբ»: Այս նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հնարավոր է չեղարկել արտանետման թույլտվությունը: Տեսուչի պահանջով արտանետման թույլտվության չեղարկման հնարավոր դեպքերը մանրամասն նկարագրված են ՀՀ կառավարության 2024 թվականի N 32-Ն որոշման 22-րդ կետում:

Ձրային թույլտվությունների կասեցումը եւ չեղարկումը նույնպես հնարավոր է (տե՛ս Ձրային օրենսգրքի 30-րդ եւ 30.2-րդ հոդվածները):

Այդուհանդերձ, գոյություն չունի իրավական կապ «Բնապահպանական վերահսկողության մասին» 2005 թվականի օրենքի փոփոխված տարբերակի դրույթների հետ, չնայած որ այդպիսին պետք է լինի, քանի որ սույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ բնապահպանական օրենսդրության խախտման դեպքում պետական բնապահպանական տեսուչը կարող է գրանցել խախտումները եւ, ի վերջո, նույնիսկ «կասեցնել, դադարեցնել կամ արգելել» խախտողի գործունեությունը:

Հիմնականում մոտարկված է

Հրահանգի 14 (1 d) հոդվածը պահանջում է, որ իրավասու մարմինը պարբերաբար տեղեկացվի կայանքների շահագործողների կողմից իրականացվող ինքնահսկման արդյունքների մասին: Ինքնահսկման պահանջները պետք է լինեն թույլտվության պայմանների մաս:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ «ստուգվող կամ դիտարկվող սուբյեկտները» պարտավոր են իրականացնել «ինքնահսկում»: Շրջակա միջավայրի օրենսդրությանը համապատասխանելու համար ինքնահսկում իրականացնելու կարգը պետք է սահմանվի կառավարության որոշմամբ, սակայն այն դեռեւս չի ընդունվել: Նաեւ չի նշվում, որ ինքնահսկումը, ըստ նախատեսվածի, պետք է լինի թույլտվության պայմանների մաս:

Մասնակիորեն մոտարկված է

Հրահանգի 23(1) հոդվածը պահանջում է ստեղծել շրջակա միջավայրի վրա ազդեցության տեսչական ստուգումների արդյունավետ համակարգ:

«Բնապահպանական վերահսկողության մասին» 2005 թվականի փոփոխված օրենքից զատ, ՀՀ-ում գործում է նաեւ «Ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» 2000 թվականի փոփոխված օրենքը: Միասին երկու օրենքները բավականին լավ կարգավորում են «շրջակա միջավայրի վրա ազդեցության տեսչական ստուգումների» մեծ մասը: Այնուամենայնիվ, պակասում է երկու օրենքների միջեւ անհրաժեշտ իրավական կապը: Միեւնույն ժամանակ, լավ կարգավորված են այնպիսի հարցեր, ինչպիսիք են ամփոփ ստուգման հաշվետվությունները եւ ստուգման ծրագիրը (այն կարող է ներառել լրացուցիչ հատուկ դրույթներ շրջակա միջավայրի պաշտպանության հարցերով միջառարկայական տեսչական ստուգման խմբերի, ինչպես նաեւ նրա վերաբերյալ, որ շրջակա միջավայրի տեսչական մարմինը պետք է ներգրավված լինի արդեն թույլտվությունների տրամադրման գործընթացի փուլում): «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքի 25-րդ հոդվածը նախատեսում է նաեւ հայտարարված ստուգման հատուկ դեպքեր:



Մոտարկված է

- Լավագույն հասանելի տեխնոլոգիաների կիրառում՝ հաշվի առնելով Լավագույն հասանելի տեխնոլոգիաների համար ելակետային փաստաթղթերը (հոդվածներ 14(3)-ից (6) եւ 15(2)-ից (4))

Յրահանգը պահանջում է լավագույն հասանելի տեխնոլոգիաների (ԼՅՏ) կիրառում եւ դրանց համար ելակետային փաստաթղթերի հաշվի առնում՝ թույլտվության պայմանները սահմանելիս՝ դրանց հետ կապված արտանետումների սահմանային արժեքներով (ԱՍԱ):

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը պարունակում է լավագույն հասանելի տեխնոլոգիաների (ԼՅՏ) սահմանում, սակայն այն լիովին չի համապատասխանում «Արդյունաբերական արտանետումների մասին» հրահանգում օգտագործված սահմանմանը: Սույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ Շրջակա միջավայրի նախարարությունը պետք է մշակի ԼՅՏ-ի վերաբերյալ «տեխնիկական չափորոշիչներ» եւ «Ժամանակացույցեր», սակայն այն չի նշում, որ ԼՅՏ-ն պետք է հաշվի առնվի թույլտվությունների տրամադրման գործընթացում, որն «Արդյունաբերական արտանետումների մասին» հրահանգի հիմնական պահանջ է: Նաեւ չկա հղում ԵՄ ԼՅՏ ելակետային փաստաթղթերին՝ չնայած հարց է, թե արդյոք իրավաբանորեն հնարավոր է ուղղակիորեն հղում կատարել այդ փաստաթղթերին Հայաստանում որպես ԵՄ անդամ չհանդիսացող երկիր:

Որոշակիորեն մոտարկված է

- Այրման կայանների համար արտանետումների սահմանային արժեքների սահմանում (Հոդված 30 եւ Հավելված V)

«Արդյունաբերական արտանետումների մասին» հրահանգի 30-րդ հոդվածը՝ V հավելվածի հետ մեկտեղ, պահանջում է, որ խոշոր այրման կայանների համար (50 ՄՎտ-ից ավելի ջերմային հզորությամբ) սահմանվեն արտանետումների սահմանային արժեքներ (ԱՍԱ) եւ ապահովվի, որ այդ ԱՍԱ-ները ներառվեն համապատասխան թույլտվության մեջ: Այս պահանջներից շեղումներ հնարավոր են որոշակի պայմաններում:

Հայաստանում դեռեւս չի օգտագործվում «սահմանային թույլատրելի արտանետման արժեք» տերմինը: Դրա փոխարեն օգտագործվում է «մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութի սահմանային թույլատրելի արտանետման նորմատիվ» տերմինը, ինչպես սահմանված է «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 4-րդ հոդվածում: Սահմանային թույլատրելի արտանետման այս նորմատիվները պետք է սահմանվեն (թե ում կողմից՝ չի նշվում) բոլոր տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ, որոնց օդի պահանջվող օգտագործումը (ՕՊՕ) գերազանցում է երկու հարյուր միլիոն խորանարդ մետրը (Հոդված 9): Բացի այդ, պետք է սահմանվեն աղտոտող (վնասակար) նյութի սահմանային թույլատրելի արտանետման արժեքներ (թե ում կողմից՝ չի նշվում): Միեւնույն ժամանակ, անհասկանալի է մնում, թե ինչ տարբերություն կա «սահմանային թույլատրելի արտանետման նորմատիվ» եւ «արտանետումների սահմանային թույլատրելի արժեք» արտահայտությունների միջեւ: Օրենքում խոշոր այրման կայանների մասին որեւէ հիշատակում չկա, ինչպես նաեւ չկա որեւէ ցուցում, որ որեւէ չափանիշ կամ սահմանային արժեք պետք է դառնա թույլտվության մաս:

Հաշվի առնելով ԵՄ տերմինաբանությանը բացարձակապես չհամապատասխանող տերմինաբանության եւ մոտեցման օգտագործումը, ինչպես նաեւ խոշոր այրման կայանների եւ թույլտվությունների վերաբերյալ հղումների բացակայությունը՝ այստեղ մոտարկումը չի կարող գնահատվել որպես ՀՀԳՀ-ին համապատասխանող:



Մոտարկված չէ

- Գոյություն ունեցող կայաններից տարեկան արտանետումների ընդհանուր ծավալի կրճատման ծրագրերի մշակում (գոյություն ունեցող կայանների արտանետումների սահմանային արժեքների սահմանման այլընտրանք) (Հոդված 32)

ՀՀԳՀ-ի այս պահանջն անհասկանալի է: «Արդյունաբերական արտանետումների մասին» 32-րդ հոդվածը պահանջում է հին այրող կայանների համար անցումային ծրագրերի մշակում մինչև 2020 թվականի վերջը ժամանակահատվածի համար: «Գոյություն ունեցող կայաններից տարեկան արտանետումների ընդհանուր ծավալի կրճատման ծրագրերի» մասին հստակ հիշատակում չկա: Պահանջը պետք է մեկնաբանվի առողջ բանականությամբ. Հայաստանը պետք է պատրաստի ծրագիր/պլան հին խոշոր կայանների համար՝ ազոտի օքսիդների, ծծմբի երկօքսիդի եւ փոշու արտանետումները աստիճանաբար կրճատելու վերաբերյալ: Այլապես, Հայաստանը կարող է սահմանել արտանետումների սահմանային արժեքներ գոյություն ունեցող կայանների համար:

Ներկայումս գործող այրող կայանների համար արտանետումների կրճատման նման պլան/ծրագիր չկա, եւ, կարծես թե, նման կայանների համար սահմանված չեն հատուկ արտանետումների սահմանային արժեքներ: ՀՀ կառավարության 2024 թվականի N 32-Ն որոշումն իրավական հիմք է հանդիսանում մթնոլորտային օդ աղտոտիչ նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների համար եւ պարունակում է դրանց հաշվարկման բանաձեւ, սակայն, ի տարբերություն ԵՄ օրենսդրության, չի սահմանում պարզ արտանետումների սահմանային արժեքներ կայանների տարբեր կատեգորիաների համար:

Հավանաբար մոտարկված չէ

Եզրափակիչ նկատառումներ եւ առաջարկություններ.

ՀՀ օրենսդրությունը դեռեւս չի ներդրել «ինտեգրված բնապահպանական թույլտվությունների» ԵՄ հայեցակարգը գոնե խոշոր արդյունաբերական կայանների համար, ինչպես պահանջվում է «Արդյունաբերական արտանետումների մասին» հրահանգով: Հայաստանում նաեւ չեն նույնականացվել այն խոշոր կայանները, որոնք պետք է ենթարկվեն ինտեգրված բնապահպանական թույլտվության (2012 թվականին իրականացվել է նախնական գնահատում, սակայն դրա արդյունքները այլեւս հասանելի չեն, իսկ իրավիճակն այդ ժամանակվանից ի վեր, անշուշտ, փոխվել է):

ԵՄ սահմանումների, թույլտվության հայտի պահանջների եւ թույլտվության բովանդակության/պայմանների վրա հիմնված ինտեգրված թույլտվությունների համակարգն իրավաբանորեն սահմանված չէ: Փոխարենը՝ թույլտվությունների համակարգի նկատմամբ շարունակում է կիրառվել ոլորտային մոտեցում (օդ, ջուր, թափոններ):

Լավագույն հասանելի տեխնոլոգիայի (L3S) սահմանում առկա է միայն մթնոլորտային օդի պահպանության ոլորտում, սակայն նույնիսկ այնտեղ այն լիովին չի ներդրվում եւ չի օգտագործվում թույլտվության պայմանները սահմանելու համար: 50 ՄՎտ-ից ավելի ջերմային հզորությամբ այրման կայանների համար արտանետումների սահմանային արժեքներ չեն սահմանվում, ինչպես նաեւ չկա ընդհանուր պարտադիր կանոնների կիրառման համար իրավական հիմք:

Արդյունաբերական կայանների համար արտանետումների (դեպի մթնոլորտային օդ եւ ջրային մարմիններ) փուլային դուրսմղման պլաններ/ծրագրեր նույնպես չկան:

Իրավիճակը փոքր-ինչ այլ է «համապատասխանության դիտանցման եւ վերահսկողության», այսինքն՝ կիրառման կանոնների առումով: Այս առումով, գործող օրենսդրությունը նախատեսում է լավ չափանիշներ տեսչական ստուգումների եւ վերահսկողության համար, ինչպես նաեւ



թույլտվությունների կասեցման մեխանիզմներ: Բացակայում են «ինքնահսկման» կանոնները, որոնք համարվում են թույլտվությունների համակարգի անբաժանելի մաս:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ խորհուրդ է տրվում վերադառնալ գերմանացի և հայ փորձագետների կողմից 2012 թվականին համատեղ մշակված «ինտեգրված բնապահպանական թույլտվությունների» մասին օրենքի նախագծին: Նշված օրենքի նախագիծը պատրաստվել է այդ թվում սույն գեկույցի հեղինակի կողմից և թարգմանվել է հայերեն: Այն պարունակում է բոլոր անհրաժեշտ դրույթները (ներառյալ 2003/35/ԵՀ հրահանգով պահանջվող հանրության մասնակցության վերաբերյալ դրույթները, տե՛ս վերելում 3.1.4 ենթաբաժինը) և սահմանում է կապը ՇՄԱԳ համակարգի և այլ թույլտվությունների հետ: Օրենքի նախագիծը վերաբերում է ոչ միայն խոշոր արդյունաբերական կայաններին, այլև ներմուծում է ինտեգրված, բայց պարզեցված բնապահպանական թույլտվություն փոքր կայանների համար՝ ԵՄ անդամ բազմաթիվ պետություններում կիրառվող մոտեցմանը համահունչ:

3.6.2 Խորհրդի 96/82/ԵՀ հրահանգը փոփոխող և այնուհետ ուժը կորցրած ճանաչող՝ «Վտանգավոր նյութերի առկայությամբ պայմանավորված խոշոր վթարների վտանգների վերահսկման մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2012 թվականի հուլիսի 4-ի 2012/18/ԵՄ հրահանգ

2012/18/ԵՀ հրահանգը (Սեյսմոլոգիա III հրահանգ) վերաբերում է խոշոր արդյունաբերական կայաններում խոշոր վթարների կանխարգելմանը և վերահսկմանը: Այս հրահանգի միայն մի քանի ասպեկտներ են ներառված ՀՀԳՀ-ում: Հրահանգը կոչվում է «Սեյսմոլոգիա»՝ ի պատիվ Իտալիայի այն քաղաքի, որտեղ 1976 թվականին տեղի ունեցավ քիմիական գործարանի խոշոր աղետ: Այս իրադարձությունը հանգեցրեց հրահանգի ընդունմանը, որը հետագայում երկու անգամ էականորեն փոփոխվել է:

• Ներպետական օրենսդրության ընդունում

Հայաստանում գործում է 1998 թվականին ընդունված «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքը (այսուհետ՝ 1998 թվականի օրենք)՝ 2020 թվականին կատարված փոփոխություններով: Ակնկալվում է, որ այս օրենքը մոտ ապագայում կփոխարինվի Ներքին գործերի նախարարության կողմից մշակված «Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության մասին» օրենքի նախագիծով: Նշված նախագիծը դեռևս քննարկման փուլում է:

Ներկայումս գործող 1998 թվականի օրենքը չի անդրադառնում վտանգավոր նյութերի հետ կապված հնարավոր խոշոր արդյունաբերական վթարների և դրանց կանխարգելման հարցերին: Բացի այդ, նոր օրենքի նախագծի բովանդակությունը չի հուշում, որ այն կանդրադառնա խոշոր արդյունաբերական օբյեկտներում խոշոր վթարների վերահսկման հետ կապված կոնկրետ ասպեկտներին:

Մոտարկված չէ

• Իրավասու մարմնի/մարմինների սահմանում

1998 թվականի օրենքը խոշոր արդյունաբերական վթարների դեպքում կոնկրետ պետական մարմինների հստակ սահմանված պարտականություններ չի նախատեսում: Նոր օրենքի նախագծի 11-րդ հոդվածի համաձայն՝ իրավասու մարմինները որոշվում են ըստ ոլորտների, օրենքի հավելվածում նշվածին համապատասխան:

Նոր օրենքի նախագիծում չի օգտագործվում «(խոշոր) արդյունաբերական վթար» տերմինը, փոխարենը՝ օգտագործվում է «արտակարգ իրավիճակ» տերմինը, որը սահմանվում է որպես



«իրադրություն, որն առաջացել է որոշակի տարածքում կամ օբյեկտում բնական, կլիմայական, տեխնոլոգիական, կենսաբանական (համաճարակ, անասնահամաճարակ, բույսերի վարակիչ հիվանդություններ) վտանգավոր երեւոյթների, զենքի տեսակների կիրառման հետեւանքով եւ հանգեցրել կամ կարող է հանգեցնել համայնքի կամ հասարակության բնականոն կենսագործունեության պայմանների խաթարման, մարդկային զոհերի, մարդկանց առողջության վատթարացման, շրջակա միջավայրի վնասման եւ նյութական կորուստների, եւ որի հետեւանքների վերացումը եւ հետադետային վերականգնումը չեն գերազանցում համայնքի կամ հասարակության՝ սեփական ուժերով հաղթահարելու կարողությունը»:

Այս սահմանումը ներառում է արդյունաբերական վթարները, բայց դրանք առանձին չի դիտարկում, ինչը կարող է ստեղծել իրավական եւ գործնական անորոշություն՝ հատկապես արդյունաբերական ռիսկերն ու պատասխանատվությունները դիտարկելիս: Այնուամենայնիվ, արտակարգ իրավիճակի դեպքում բոլոր մասնակիցների պատասխանատվությունը որոշվում է օրենքով: Հետեւաբար, ենթադրվում է, որ օրենքի ընդունումից հետո կսահմանվեն նաեւ իրավասու մարմինները:

Որոշակիորեն մոտարկված է

- **Համապատասխան մարմինների միջեւ համակարգման արդյունավետ մեխանիզմների ստեղծում**

1998 թվականի օրենքի 15-րդ հոդվածի «բ» կետի համաձայն՝ պետական կառավարման տարածքային մարմինները կազմակերպում են մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետեւանքների նվազեցման ու վերացման ծրագրերի մշակումը եւ **համակարգում** այդ ծրագրերում նախատեսված աշխատանքները: Սակայն պետական մարմինների միջեւ համակարգման որեւէ մեխանիզմ չի նշվում, եւ այս հարցի վերաբերյալ որեւէ ենթաօրենսդրական կարգավորում նախատեսված չէ:

ՀՀ վարչապետի 2019 թվականի N 934-Ա որոշմամբ հաստատված ՀՀԳՀ ճանապարհային քարտեզի համաձայն՝ ստեղծվել է աշխատանքային խումբ՝ համապատասխան մարմինների միջեւ փոխգործակցության մեխանիզմները համակարգելու համար: Այս որոշմամբ սահմանվում են 17 (!) պետական կառավարման մարմիններ, որոնք ընդգրկում են ոլորտների լայն շրջանակ՝ աղետների ռիսկի նվազեցումից մինչեւ աղետներին արձագանքում եւ վերականգնում: Համակարգման գործընթացի հիմնական խոչընդոտները դարձել են բարդ վարչական ընթացակարգերն ու կառուցվածքները: Սույն վերլուծության շրջանակներում հնարավոր չէ գնահատել, թե որքանով է այս համակարգումը ներառում արդյունաբերական վթարների կառավարումը:

Օրենքի նախագծի 4-րդ գլուխը, որը նվիրված է «Համակարգի կառավարմանը», առաջարկում է կարգավորել պետական մարմինների աշխատանքի մանրամասները նորմալ պայմաններում, պատրաստության բարձր մակարդակի կամ արտակարգ իրավիճակներում, ինչպես նաեւ աղետներին արձագանքման կառույցների լիազորությունները, կարգավորումների իրականացման մեխանիզմները, ռեսուրսների մոբիլիզացման ասպեկտները եւ այլն: Նախագծում մարմինների լիազորությունները սահմանվում են շատ ավելի լայն եւ համապարփակ, ներառյալ աղետների ռիսկի կառավարման ոլորտում լիազոր մարմնի լիազորությունները, աղետից հետո վերականգնման գործում նրա գործառույթները եւ այլն: Սակայն, **համակարգման ասպեկտների** կարգավորման աստիճանը մնում է անորոշ: Այնուամենայնիվ, սա կարելի է համարել ինչ-որ չափով հարցի լուծում, եթե նոր օրենքն ընդունվի:

Որոշակիորեն մոտարկված է



- **Համապատասխան կառուցվածքների մասին տեղեկատվության գրանցման եւ խոշոր վթարների մասին զեկուցման համակարգերի ստեղծում (հոդվածներ 14 եւ 16)**

Սեւեզոյի հրահանգի 14-րդ հոդվածը պահանջում է, որ իրավասու մարմինը հանրությանը տրամադրի քիմիական նյութեր մշակող խոշոր արդյունաբերական օբյեկտների վերաբերյալ մի շարք տեղեկություններ, ինչպիսիք են՝ օբյեկտում իրականացվող գործունեության կամ գործողությունների պարզ բացատրությունը, ինչպես նաեւ վտանգավոր նյութերի ընդհանուր անվանումները, որոնք կարող են հավանական խոշոր վթարի պատճառ դառնալ, կամ վտանգի դասակարգումը, ինչպես նաեւ տեղեկատվություն այն մասին, թե ինչպես է շահակիր հանրությունը նախագուշացվելու խոշոր վթարի դեպքում:

Հրահանգի 16-րդ հոդվածի համաձայն՝ օբյեկտի շահագործողը պարտավոր է խոշոր վթարից հետո հնարավորինս շուտ տեղեկացնել իրավասու մարմինն միջադեպի մասին, ներառյալ վթարի հանգամանքների, վթարի պատճառ դարձած վտանգավոր նյութերի, բոլոր համապատասխան տվյալների եւ ձեռնարկված արտակարգ միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը:

Այս ամենը պետք է արձանագրվի իրավասու մարմնի կողմից: Որպես այս պահանջները կատարելու հիմք՝ Հայաստանը, ըստ ՀՀԳՀ-ի, պետք է առնվազն ստեղծի պատշաճ համակարգ՝ համապատասխան օբյեկտներից ստացվող տեղեկատվությունն արձանագրելու համար:

Ներկայումս գործող 1998 թվականի օրենքը չի պարունակում որեւէ դրույթ, որը որոշակի արդյունաբերական օբյեկտներից պահանջում է տրամադրել համապատասխան տեղեկատվություն՝ ո՛չ վթարից առաջ, ո՛չ էլ հետո: «Աղետների ռիսկի կառավարման եւ բնակչության պաշտպանության մասին» նոր օրենքի նախագիծը, կարծես, ընդհանրապես նման դրույթ չունի:

Մոտարկված չէ

Եզրափակիչ նկատառումներ եւ առաջարկություններ.

Հայաստանում բացակայում է արդյունաբերական խոշոր վթարների կանխարգելումը եւ կառավարումը կարգավորող հատուկ օրենսդրությունը: Բոլորովին պարզ չէ, թե որքանով է «Աղետների ռիսկի կառավարման եւ բնակչության պաշտպանության մասին» նոր օրենքի նախագիծն անդրադառնում նման հնարավոր վթարներին: Այնուամենայնիվ, օրենքի նախագիծը սահմանում է բոլոր տեսակի ռիսկերի եւ աղետների կառավարման հստակ իրավասություններ եւ, հավանաբար (հուսով ենք), ներառում է բոլոր շահագրգիռ կողմերի միջեւ համակարգման հիմնական մեխանիզմ: Հետեւողականորեն խորհուրդ է տրվում, որ նոր օրենքը ներառի արդյունաբերական վթարների կանխարգելման եւ վերացման հատուկ կանոններ եւ գործիքներ:

Սա ներառում է խոշոր արդյունաբերական օբյեկտներ շահագործողների՝ իրենց կողմից օգտագործվող վտանգավոր նյութերի տեսակների մասին, ինչպես նաեւ վթարների դեպքում համարժեք հաշվետվություն ներկայացնելու պարտավորությունները:

3.7 Զիսիական նյութերի կառավարում

ԵՄ-ում կան քիմիական նյութերի կառավարման ոլորտը կարգավորող մի շարք կանոնակարգեր (ոչ թե հրահանգներ), որոնցից ՀՀԳՀ-ում միայն երկուսին է մասամբ անդրադարձ կատարվում: Մասնավորապես՝

- «Նյութերի եւ խառնուրդների դասակարգման, պիտակավորման եւ փաթեթավորման մասին» թիվ 1272/2008 կանոնակարգը (ԵՀ)՝ թիվ 2024/2865 կանոնակարգով (ԵՄ) մտցված փոփոխություններով.



- «Վտանգավոր քիմիական նյութերի արտահանման եւ ներմուծման մասին» թիվ 649/2012 կանոնակարգը (ԵՄ):

ՀԸԳՀ-ն չի անդրադառնում ոլորտը կարգավորող հետեւյալ կանոնակարգերին.

- «Քիմիական նյութերի գրանցման, գնահատման, թույլտվության եւ սահմանափակման մասին թիվ 1907/2006 կանոնակարգ (ԵՅ), որը քիմիական նյութերի ոլորտում ԵՄ հիմնական օրենսդրական փաստաթուղթն է.
- «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» թիվ 2019/1021 կանոնակարգ (ԵՄ).
- «Սնդիկի մասին» թիվ 2017/852 կանոնակարգը (ԵՄ) փոփոխող` թիվ 2024/1849 կանոնակարգ (ԵՄ):

Անշուշտ, տրամաբանական է, որ թիվ 1907/2006 կանոնակարգի (ԵՅ) տարրերը չեն ներառվել ՀԸԳՀ-ում, քանի որ ՀՀ օրենսդրության մեջ նման պահանջների ներդրումն անիրատեսական կլիներ: Այնուամենայնիվ, Հայաստանը 2004 թվականից անդամակցում է «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիային, իսկ 2017 թվականից` Սնդիկի մասին Միևամատայի կոնվենցիային: Հետևաբար, ապագայում «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» եւ «Սնդիկի մասին» ԵՄ կանոնակարգերը լավագույնս կարող են ներառվել ՀԸԳՀ շրջանակի մեջ:

3.7.1 «Վտանգավոր քիմիական նյութերի արտահանման եւ ներմուծման մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2012 թվականի հուլիսի 4-ի թիվ 649/2012 կանոնակարգ (ԵՄ)

Սույն կանոնակարգը ԵՄ օրենսդրությունն է տեղափոխում «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի եւ պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության (ՆՀՀ) ընթացակարգի մասին» Ռոտերդամի կոնվենցիայի (ՆՀՀ կոնվենցիա) դրույթները: Ներկայումս գործում է սույն կանոնակարգի 01.11.2023 թվականի [կոնսոլիդացված տարբերակը](#):

Ինչպես ԵՄ կանոնակարգի, այնպես էլ ՆՀՀ կոնվենցիայի ուշադրության կենտրոնում Հայաստան ներմուծվող եւ այստեղից արտահանվող քիմիական նյութերի անվտանգ կառավարման հարցն է: ԵՄ կանոնակարգը մասամբ դուրս է գալիս կոնվենցիայի պահանջների շրջանակից, օրինակ` ընդգրկելով ԵՄ մակարդակով արգելված կամ խիստ սահմանափակված լրացուցիչ քիմիական նյութեր:

Ինչպես ԵՄ-ն, այնպես էլ Հայաստանը վերոնշյալ կոնվենցիայի կողմ է` 2004 թվականից, եւ այդ ժամանակից ի վեր պարտավորություն է ստանձնել դրա դրույթները տեղափոխել ազգային օրենսդրության մեջ: Հատկանշական է, որ դա դեռեւս տեղի չի ունեցել: Սակայն վերջին տարիներին պատրաստվել է «Քիմիական նյութերի մասին» նոր օրենքի նախագիծ` հիմնված ՀՀ կառավարության 2018 թվականի N 1265-Ն որոշմամբ հաստատված հայեցակարգի վրա: ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի համաձայն` այս օրենքի նախագծի հիմնական իրավական դժվարությունն այն է, որ այն պետք է համապատասխանի ոչ միայն ԵՄ կանոնակարգին, այլեւ ԵԱՏՄ 2017 թվականի N 19 տեխնիկական կանոնակարգին, որը դեռեւս ուժի մեջ չի մտել:

«Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագիծը կգնահատվի ՀԸԳՀ-ի եւ ՆՀՀ կոնվենցիայի պահանջներին համապատասխանության տեսանկյունից: Հատկապես արդիական են ՆՀՀ կոնվենցիայի պահանջները, քանի որ ԵՄ կանոնակարգի շատ դրույթներ չեն կարող կիրառվել Հայաստանում (մասնավորապես` բոլոր այն դրույթները, որոնք կապված են քիմիական նյութերի Եվրոպական գործակալության մասնակցության հետ):



Ստորել բերված գնահատականը հիմնված է այն ենթադրության վրա, որ «Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագիծը կընդունվի սույն գնահատման հեղինակին տրամադրված տարբերակով:

• Արտահանման մասին ծանուցման ընթացակարգի կիրառում (Հոդված 8)

Նախեւառաջ, կարելու է, որ «Քիմիական նյութերի մասին» նոր օրենքը ներառի ՆՀՀ կոնվենցիայում առկա բոլոր համապատասխան սահմանումները: Սահմանման կարիք ունեցող հիմնական տերմիններն են՝ «քիմիական նյութ», «արգելված քիմիական նյութ», «խիստ սահմանափակված քիմիական նյութ», «ներմուծում», «արտահանում» եւ «վերջնական կարգավորող որոշում»: ԵՄ կանոնակարգի համաձայն՝ առնվազն պետք է սահմանվեն նաեւ «նյութ», «խառնուրդ», «արտահանող» եւ «ներմուծող» տերմինները:

«Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածը պարունակում է 48 սահմանում: Սակայն, բացառությամբ «ներմուծող» եւ «խառնուրդ» հասկացությունների, մյուս հիմնական տերմինները սահմանված չեն: «Քիմիական նյութ» տերմինի փոխարեն օգտագործվում է «քիմիական արտադրանքը», ինչն ընդհանուր առմամբ ընդունելի է: Սակայն օրենքի նախագծում առկա են «քիմիական նյութեր» տերմինի երկու տարբեր սահմանումներ (6-րդ եւ 18-րդ կետերում), ինչն իմաստ չունի: «Ներմուծող» տերմինը սահմանված է, բայց բացակայում են «ներմուծում», «արտահանում» եւ «արտահանող» տերմինները: Չկան նաեւ «արգելված քիմիական նյութ», «խիստ սահմանափակված քիմիական նյութ» եւ «վերջնական կարգավորող որոշում» տերմինների սահմանումները:

Սահմանումների բաժինը պետք է եապես վերանայվի՝ ապահովելու համար, որ այն համապատասխանի ՆՀՀ կոնվենցիայի դրույթներին եւ ԵՄ կանոնակարգի պահանջներին:

Որոշակիորեն մոտարկված է

ԵՄ ՆՀՀ կանոնակարգի 8-րդ հոդվածի համաձայն՝ I հավելվածի 1-ին մասում ներառված քիմիական նյութերի արտահանման ծանուցման ընթացակարգը պետք է սահմանվի ազգային մակարդակով: Համապատասխանաբար, արտահանողը պարտավոր է տեղեկացնել նշանակված ազգային մարմնին եւ տրամադրել նրան որոշակի տեղեկատվություն: 8-րդ հոդվածում նախատեսված մնացած բոլոր գործողությունները վերաբերում են Քիմիական նյութերի եվրոպական գործակալությանը եւ Հայաստանի հետ առնչություն չունեն:

Փոխարենը՝ Ռոտերդամի կոնվենցիայի դրույթներն այս պարագայում պետք է կիրառվեն բոլոր այն քիմիական նյութերի նկատմամբ, որոնք արգելված կամ խիստ սահմանափակված են արտահանող երկրում (տվյալ դեպքում՝ Հայաստանում), ինչպես նշված է կոնվենցիայի 12-րդ հոդվածում:

Արտահանողից V հավելվածում նշված տեղեկատվությունը պարունակող ծանուցում ստանալուց հետո իրավասու մարմինը այդ ծանուցումն ուղարկում է ներմուծող երկրին:

Որպես արտահանող երկիր՝ Հայաստանը պարտավոր է տրամադրել թարմացված արտահանման ծանուցում՝ վերջնական կարգավորող որոշումից հետո, որը հանգեցնում է տվյալ քիմիական նյութի արգելքի կամ խիստ սահմանափակման եական փոփոխության: Եթե Հայաստանի՝ որպես արտահանող երկրի իրավասու մարմինը չի ստանում ծանուցման ստացման հաստատումը դրա ուղարկումից հետո երեսուն օրվա ընթացքում, այն պետք է վերուղարկի ծանուցումը եւ ձեռնարկի բոլոր անհրաժեշտ ջանքերը՝ ապահովելու համար, որ ներմուծող երկիրը ստանա այն:

«Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագծում 12(2) հոդվածը (ինչպես նաեւ 13-րդ հոդվածը) նշում է, որ քիմիական նյութերի արտահանողներն ու ներմուծողները պետք է պահպանեն



վտանգավոր քիմիական նյութերի ներմուծման ու արտահանման ընթացակարգը՝ հիմք ընդունելով Ռոտերդամի կոնվենցիան՝ «համաձայն Կառավարության կողմից հաստատված՝ վտանգավոր քիմիական նյութերի արտահանման ու ներմուծման մասին կանոնակարգի»: Սակայն, Ռոտերդամի կոնվենցիայի դրույթները ուղղակիորեն կիրառելի չեն, ուստի **անհրաժեշտ է համապատասխան կառավարության որոշում** արտահանման ընթացակարգի մանրամասները կարգավորելու համար: Այնուամենայնիվ, լավ է, որ «Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագիծը որպես մեկնարկային կետ պատշաճ իրավական հիմք է ապահովում քիմիական նյութերի արտահանման վերաբերյալ կառավարության որոշման համար:

Որոշակիորեն մոտարկված է

- Այլ երկրներից ստացված արտահանման մասին ծանուցումների մշակման ընթացակարգերի կիրառում (Հոդված 9)

«ՆՀՀ մասին» ԵՄ կանոնակարգի 9-րդ հոդվածը կարգավորում է ներմուծող երկրի եւ Քիմիական նյութերի եվրոպական գործակալության միջեւ հարաբերությունները ներմուծման դեպքում. սա ուղղակիորեն չի վերաբերում Հայաստանին: Այնուամենայնիվ, Ռոտերդամի կոնվենցիայի 10-րդ հոդվածի համապատասխան դրույթը պահանջում է III հավելվածում թվարկված քիմիական նյութերի ներմուծման համար ազգային ընթացակարգի սահմանում համապատասխան ազգային օրենսդրության կամ վարչական միջոցառումների միջոցով: Չնայած Ռոտերդամի կոնվենցիայի 10-րդ հոդվածը կարգավորում է բազմաթիվ ասպեկտներ, ներմուծման համաձայնության հարցումներին ծանուցումների մշակման մանրամասները պետք է կարգավորվեն ՀՀ ազգային օրենսդրությամբ:

«Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագծի հիմնական դրույթները կրկին պարունակվում են 12-րդ եւ 13-րդ հոդվածներում, որոնք սահմանում են, որ ՆՀՀ ընթացակարգ պահանջող քիմիական նյութերի ներմուծման մանրամասները կկարգավորվեն կառավարության որոշմամբ: Կառավարության այդպիսի որոշում դեռեւս գոյություն չունի, բայց դրա ընդունման իրավական հիմքը ներառված է օրենքի նախագծում:

Որոշակիորեն մոտարկված է

- Վերջնական կարգավորիչ գործողության վերաբերյալ ծանուցումներ մշակելու եւ ներկայացնելու ընթացակարգերի սահմանում (Հոդված 11)

«ՆՀՀ-ի մասին» ԵՄ կանոնակարգի 11-րդ հոդվածը վերաբերում է արգելված կամ խիստ սահմանափակված քիմիական նյութերի վերաբերյալ «վերջնական կարգավորիչ որոշման» մշակմանը ազգային մակարդակում եւ այն ՆՀՀ կոնվենցիայի քարտուղարությանը ներկայացնելուն: Համարժեք դրույթը պարունակվում է Ռոտերդամի կոնվենցիայի 5-րդ հոդվածում, որը սահմանում է, որ յուրաքանչյուր Կողմ պետք է տեղեկացնի Կոնվենցիայի քարտուղարությանը արգելված կամ խիստ սահմանափակված քիմիական նյութերի վերաբերյալ ցանկացած ազգային վերջնական կարգավորիչ որոշման մասին:

«Քիմիական նյութերի մասին» ՀՀ օրենքի նախագիծը չի սահմանում «վերջնական կարգավորող որոշում» տերմինը, ինչը պարտադիր չէ, բայց օգտակար կլիներ նման «որոշման» իմաստն ավելի լավ հասկանալու համար: «ՀՀ-ում արգելված քիմիական նյութերի եւ թունաքիմիկատների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի N 293-Ն որոշումը հղում է կատարում Ռոտերդամի կոնվենցիայի 5-րդ հոդվածին: Խորհուրդ է տրվում, որ «Քիմիական նյութերի մասին» ՀՀ օրենքի նախագիծը հստակ հղում պարունակի այս կարգավորմանը, որպեսզի այն համարվի



«վերջնական կարգավորող որոշում»՝ համաձայն 5-րդ հոդվածի: Հայաստանում, կարծես թե, չկան խիստ սահմանափակումներով քիմիական նյութեր (ինչը իրավական տեսանկյունից խնդիր չէ):

Սակայն, վերջնական կարգավորիչ որոշումը Կոնվենցիայի քարտուղարությանը **ներկայացնելու ընթացակարգը** դեռեւս օրենսդրական մակարդակով սահմանված չէ, իսկ օրենքի նախագիծը դրա համար իրավական հիմք չի ապահովում:

Որոշակիորեն մոտարկված է

- **Ներմուծման մասին որոշումներ մշակելու եւ ներկայացնելու ընթացակարգերի սահմանում (Հոդված 13)**

ՆՀՀ կանոնակարգի 13-րդ հոդվածը վերաբերում է ԵՄ հանձնաժողովի եւ Ռոտերդամի կոնվենցիայի քարտուղարության միջեւ հարաբերություններին, ուստի այս համատեքստում այն որել է առնչություն չունի Հայաստանի հետ: Հարց է, թե ինչու է այն ներառված ՀՀԳՀ-ում:

Ինչպես նշվեց վերեւում, Ռոտերդամի կոնվենցիան կարգավորում է դրա III հավելվածի 10-րդ հոդվածում թվարկված քիմիական նյութերի ներմուծումը: Հայաստանում քիմիական նյութերի ներմուծման ընթացակարգերի վերաբերյալ կառավարության որոշման իրավական հիմքը սահմանված է օրենքի նախագծի 12-րդ հոդվածում, սակայն որոշումն ինքնին դեռեւս չի մշակվել:

Մասնակիորեն մոտարկված է

- **Նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառում որոշակի քիմիական նյութերի՝ մասնավորապես Ռոտերդամի կոնվենցիայի III Հավելվածում թվարկված քիմիական նյութերի արտահանման նկատմամբ (Հոդված 14)**

ՆՀՀ կանոնակարգի 14-րդ հոդվածը կարգավորում է քիմիական նյութերի արտահանման պահանջները, որոնք պահանջում են ոչ միայն ծանուցում, այլև լիարժեք ՆՀՀ ընթացակարգ: Ռոտերդամի կոնվենցիայի համապատասխան դրույթը 11-րդ հոդվածն է, որը Հայաստանը պետք է կիրառի ազգային օրենսդրության մեջ: Այն նախատեսում է Կոնվենցիայի III հավելվածում թվարկված քիմիական նյութերի արտահանման համար ՆՀՀ ամբողջական ընթացակարգի (ներառյալ պատասխանի/միջանկյալ արձագանքի մանրամասները) սահմանում:

«Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագիծը 12-րդ եւ 13-րդ հոդվածներում ապահովում է քիմիական նյութերի արտահանման համար նախատեսված ՆՀՀ ընթացակարգի իրավական հիմքը, սակայն պահանջում է, որ մանրամասները կարգավորվեն Կառավարության կողմից հաստատված՝ վտանգավոր քիմիական նյութերի արտահանման ու ներմուծման մասին կանոնակարգով սահմանված ընթացակարգին համապատասխան (տե՛ս Հոդված 13, կետ 1)

Քանի դեռ նման կանոնակարգ ընդունված չէ, կարելի է ասել, որ մոտարկման պահանջը միայն շատ փոքր մասով է իրականացվել:

Որոշակիորեն մոտարկված է

- **Արտահանված քիմիական նյութերին ներկայացվող պիտակավորման եւ փաթեթավորման պահանջների կատարում (Հոդված 17)**

Արտահանված քիմիական նյութերի պիտակավորման հարցին անդրադարձ է կատարվում ՆՀՀ կանոնակարգի 17-րդ հոդվածում: Դրա 1-ին կետը վերաբերում է միայն «Նյութերի եւ խառնուրդների դասակարգման, պիտակավորման եւ փաթեթավորման մասին» կանոնակարգին (ԵՀ), որը կքննարկվի հաջորդ ենթաբաժնում: Քիմիական նյութերի արտադրության եւ պիտակեղիության ժամկետը ցանկության դեպքում կարելի է նշել պիտակի վրա, բայց դա



պարտադիր չէ (2-րդ կետ): «Քիմիական նյութերի գրանցման, գնահատման, թույլտվության եւ սահմանափակման մասին» կանոնակարգով (ԵՅ) պահանջվող անվտանգության տվյալների ուղեկցող թերթիկը պետք է ուղեկցի քիմիական նյութերին արտահանման ժամանակ, սակայն սա չի վերաբերում Հայաստանին:

Այս դրույթներից ոչ մեկը ուղղակիորեն չի վերաբերում Հայաստանի իրավական մոտարկմանը: Սակայն իրավիճակը տարբեր է Ռոտերդամի կոնվենցիայի պարագայում, որի 13(2) հոդվածը պահանջում է, որ Հայաստանն ապահովի, որպեսզի ինչպես III հավելվածում թվարկված քիմիական նյութերը, այնպես էլ Հայաստանում արգելված կամ խիստ սահմանափակված քիմիական նյութերը արտահանման ժամանակ պիտակավորվեն՝ բավարար տեղեկատվություն տրամադրելով մարդու առողջությանը կամ շրջակա միջավայրին սպառնացող ռիսկերի եւ/կամ վտանգների վերաբերյալ:

«Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածի համաձայն՝ պետք է մշակվի «Նյութերի ու խառնուրդների դասակարգման, մակնշման, պիտակավորման ու փաթեթավորման մասին կանոնակարգ՝ Կառավարության կողմից սահմանված պահանջներին համապատասխան»: Նշված կանոնակարգը դեռեւս չի մշակվել կամ ընդունվել, եւ օրենքի նախագիծը միայն իրավական հիմք է հանդիսանում դրա ստեղծման համար:

Որոշակիորեն մոտարկված է

- **Քիմիական նյութերի ներմուծումն ու արտահանումը վերահսկող ներպետական մարմինների սահմանում (Հոդված 18)**

Ինչպես «ՆՀՀ մասին» ԵՄ կանոնակարգի 18-րդ հոդվածը, այնպես էլ Ռոտերդամի կոնվենցիայի 4-րդ հոդվածը պահանջում են քիմիական նյութերի ներմուծման եւ արտահանման վերահսկողության համար պատասխանատու մեկ կամ մի քանի ներպետական մարմինների նշանակում:

«Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդվածի 5-րդ համաձայն՝ Շրջակա միջավայրի նախարարությունը հանդես է գալիս որպես «նշանակված ազգային մարմին», որը պատասխանատու է Ռոտերդամի կոնվենցիայի կիրարկմանն ու կառավարմանն առնչվող պարտավորությունների իրականացման համար:

Մոտարկված է

Եզրափակիչ նկատառումներ եւ առաջարկություններ.

Ներկա դրությամբ, ՀՀ-ը չունի օրենսդրություն, որը կապահովեր ազգային օրենսդրության մեջ Ռոտերդամի կոնվենցիայի տեղայնացումը, չնայած այն հանգամանքին, որ Հայաստանը 2004 թվականից ի վեր այդ կոնվենցիայի կողմ է: «Քիմիական նյութերի մասին» նոր օրենքի նախագիծը նպատակ ունի անհրաժեշտ դրույթները տեղափոխել ներպետական օրենսդրության մեջ, սակայն, ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, այն լիովին չի համապատասխանում պահանջներին: Հայ օրենսդիրները պետք է վերանայեն օրենքի նախագիծը այս մասով. առաջնահերթությունը պետք է լինի Կոնվենցիայի դրույթների համապատասխանության ապահովումը, որից հետո ՀՀԳՀ-ի շրջանակներում «ՆՀՀ-ի մասին» ԵՄ կանոնակարգի պահանջներին մոտարկումը տեղի կունենա ինքնաբերաբար:



3.7.2 67/548/ԵՏՀ եւ 1999/45/ԵՀ հրահանգները փոփոխող եւ ուժը կորցրած ճանաչող եւ թիվ 1907/2006 կանոնակարգը (ԵՀ) փոփոխող՝ «Նյութերի եւ խառնուրդների դասակարգման, պիտակավորման եւ փաթեթավորման մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1272/2008 կանոնակարգ (ԵՀ)

«Նյութերի եւ խառնուրդների դասակարգման, պիտակավորման եւ փաթեթավորման մասին» կանոնակարգի (ԴՊՓ կանոնակարգ) նպատակն է ապահովել մարդու առողջության եւ շրջակա միջավայրի բարձր մակարդակի պահպանություն եւ վտանգավոր նյութերի, խառնուրդների եւ իրերի ազատ տեղաշարժ: Կանոնակարգը սահմանում է նյութերի եւ խառնուրդների դասակարգման միասնական չափանիշներ եւ պարունակում է վտանգավոր նյութերի եւ խառնուրդների պիտակավորման եւ փաթեթավորման կանոններ:

Բացի այդ, Կանոնակարգը սահմանում է պարտավորություններ՝ (i) արտադրողների, ներմուծողների եւ հետագա օգտագործողների համար՝ դասակարգել շուկայահանված նյութերն ու խառնուրդները, (ii) մատակարարների համար՝ պիտակավորելու եւ փաթեթավորելու շուկայահանված նյութերն ու խառնուրդները: ԴՊՓ կանոնակարգում օգտագործվող մոտեցումը հիմնված է Միավորված Ազգերի Կազմակերպության Քիմիական նյութերի դասակարգման եւ պիտակավորման գլոբալ ներդաշնակեցված համակարգի վրա: Կանոնակարգի տեխնիկական հավելվածները ընդհանուր առմամբ կազմում են ավելի քան 1500 (!) էջ:

ԴՊՓ կանոնակարգը վերջերս փոփոխվել եւ փոխարինվել է թիվ [2024/2865 կանոնակարգով](#):

Ինչպես արդեն նշվել է նախորդ ենթագլխում, Հայաստանը չունի քիմիական նյութերի վերաբերյալ համապարփակ օրենսդրություն, սակայն պատրաստել է «Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագիծ: Այս օրենքի նախագծի 4-րդ հոդվածում (20-րդ կետ) խոսվում է «Համապատասխան նյութերի եւ խառնուրդների դասակարգման, մակնշման, պիտակավորման եւ փաթեթավորման մասին» կանոնակարգի մասին, սակայն այդպիսի կանոնակարգ դեռեւս չի մշակվել:

Առայժմ «Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագիծը կգնահատվի մոտարկման պահանջներին համապատասխանության տեսանկյունից:

• Իրավասու մարմնի/մարմինների սահմանում

ԴՊՓ կանոնակարգի 43-րդ հոդվածը ներկայացնում է պատասխանատու ազգային մարմինների նշանակման պահանջ, որոնք կմշակեն ներդաշնակեցված դասակարգման եւ պիտակավորման առաջարկներ եւ պատասխանատու կլինեն կանոնակարգով սահմանված պարտավորությունների կատարման ապահովման համար:

«Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագծի համաձայն՝ Շրջակա միջավայրի նախարարությունը, Ռոտերդամի կոնվենցիայով նախատեսված իր պարտականություններից զատ (եւ արտահանման դասակարգման, պիտակավորման եւ փաթեթավորման հետ կապված), պատասխանատու է նաեւ «Հայաստանի Հանրապետությունում շուկայահանված քիմիական նյութերի ռեգիստր» ավտոմատացված տեղեկատվական համակարգի տնօրինման համար: Սակայն նախագծում հստակորեն չի նշվում արտահանման հարցերից դուրս քիմիական նյութերի դասակարգման, պիտակավորման եւ փաթեթավորման հարցերում նրա իրավասությունը:

Մոտարկված չէ

• Նյութերի դասակարգման, պիտակավորման եւ փաթեթավորման իրականացում

ԴՊՓ կանոնակարգի 4-րդ եւ 13-րդ հոդվածները պահանջում են, որ արտադրողները, ներմուծողները եւ հետագա օգտագործողները դասակարգեն նյութերը կամ խառնուրդները 11



բաժնի համաձայն՝ նախքան դրանք շուկայահանելը: Սա պահանջում է վտանգի դասակարգման համակարգի առկայություն եւ կանոնակարգում նախատեսված համապատասխան տերմինաբանության օգտագործում:

Ինչ վերաբերում է պիտակավորման պահանջներին, դրանք մանրամասնորեն սահմանված են ԴՊՓ կանոնակարգի 17-33-րդ հոդվածներում:

«Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագիծը 4-րդ հոդվածի 20-րդ կետում (ինչո՞ւ հենց այնտեղ) ներկայացնում է քիմիական նյութերի եւ խառնուրդների դասակարգումը՝ «ա»-ից «զ» ենթակետերում նշելով դրանց վտանգավորության դասերը: 7-րդ հոդվածի համաձայն՝ արտադրողներից ու ներմուծողներից պահանջվում է հայտնաբերել ու գնահատել իրենց կողմից տրամադրվող քիմիական նյութերի վտանգավոր հատկությունները:

Օրենքի նախագծի 8-րդ հոդվածի համաձայն՝ քիմիական նյութերն ու խառնուրդները պետք է դասակարգվեն ու պիտակավորվեն ըստ այն վտանգավորության աստիճանի, որը դրանք ներկայացնում են, սակայն չի նշվում, թե ով պետք է իրականացնի դասակարգումը: Բացի այդ, դեռեւս չի մշակվել եւ ընդունվել նյութերի եւ խառնուրդների դասակարգման, մակնշման, պիտակավորման եւ փաթեթավորման վերաբերյալ կանոնակարգ:

18-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ քիմիական նյութերը պետք է պահվեն եւ պահպանվեն միայն արտադրողի կողմից տրամադրված փաթեթավորման մեջ՝ համաձայն կառավարության որոշմամբ հաստատված համապատասխան նյութերի եւ խառնուրդների դասակարգման, պիտակավորման եւ փաթեթավորման կանոնակարգի (որը դեռեւս չի մշակվել): Օրենքի նախագիծը դեռեւս չի կարգավորում պիտակավորման կոնկրետ պահանջները:

Ընդհանուր առմամբ, օրենքի նախագիծը հիմք հանդիսացավ մանրամասն կանոնների սահմանման համար, սակայն բոլոր մանրամասները դեռ պետք է կարգավորվեն կառավարության որոշմամբ:

Որոշակիորեն մոտարկված է

- **խառնուրդների դասակարգման, պիտակավորման եւ փաթեթավորման իրականացում**

Ինչ վերաբերում է խառնուրդներին, ապա, ինչպես նշված է վերելում, դրանց դեպքում կիրառվում են նույն դրույթները, ինչ քիմիական նյութերի համար:

Որոշակիորեն մոտարկված է

Եզրափակիչ նկատառումներ եւ առաջարկություններ.

Ներկայումս Հայաստանում քիմիական նյութերի եւ խառնուրդների դասակարգումը, պիտակավորումը եւ փաթեթավորումը կարգավորող պատշաճ օրենսդրություն գոյություն չունի: «Քիմիական նյութերի մասին» նոր օրենքի նախագիծը կոչված է առնվազն որպես իրավական հիմք ծառայելու դասակարգման, պիտակավորման եւ փաթեթավորման (ԴՊՓ) միջոցառումների վերաբերյալ հետագա կառավարության կանոնակարգի համար, ինչը դրական քայլ է: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է ոչ միայն ընդունել այս օրենքի նախագիծը, այլեւ մշակել համապատասխան կառավարության որոշում՝ քիմիական նյութերի հետ գործ ունենալու մեջ ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի համար ԴՊՓ պատասխանատվության վերաբերյալ՝ ՀՀԳՀ-ի պահանջներին մոտարկելու համար:



4. Կլիմայի փոփոխությանն առնչվող գործողությունների ուղղությամբ մոտարկման ձեռքբերումների եւ բացթողումների վերլուծություն

ԵՄ կլիմայի փոփոխությանն առնչվող գործողությունների օրենսդրությունը հիմնականում ներառում է վերջերս ընդունված 2021/1119 կանոնակարգը (ԵՄ), որը սահմանում է կլիմայական չեզոքության հասնելու շրջանակը [...], եւ որը հայտնի է նաեւ որպես «Կլիմայի մասին եվրոպական օրենք»: Նշված կանոնակարգը, սակայն, **ՀՀԳՀ-ի մաս չի կազմում**: Ավելի լայն իմաստով՝ ԵՄ կլիմայի փոփոխությանն առնչվող գործողությունների օրենսդրությունը ներառում է նաեւ այն ակտերը, որոնք կամ մասամբ ներառված են ՀՀԳՀ-ի IV գլխի IV հավելվածում, կամ որոնց նախորդ տարբերակները (որոնք այլեւս ուժի մեջ չեն) ՀՀԳՀ-ի մաս են կազմում: Մասնավորապես՝

- «Համայնքի տարածքում ջերմոցային գազերի արտանետումների արտոնագրերի վաճառքի համակարգը սահմանելու մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2003 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 2003/87/ԵՀ հրահանգ.
- Թիվ 601/2012 կանոնակարգին (ԵՄ) փոխարինող՝ «Ջերմոցային գազերի արտանետումների դիտանցման եւ հաշվետվությունների ներկայացման մասին» թիվ 2018/2066 (կիրարկող) կանոնակարգ (ԵՄ).
- «Ներպետական եւ Միության մակարդակներով կլիմայի փոփոխությանն առնչվող ջերմոցային գազերի արտանետումների դիտանցման եւ հաշվետվությունների ներկայացման եւ այլ տեղեկատվության մասին հաշվետվությունների ներկայացման մեխանիզմի մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2013 թվականի մայիսի 21-ի թիվ 525/2013 կանոնակարգ (ԵՄ) (փոխարինվել է թիվ 2018/1999 կանոնակարգով (ԵՄ)).
- Թիվ 2019/1937/ԵՄ հրահանգը ճշգրտող եւ թիվ 517/2014 կանոնակարգին (ԵՄ) փոխարինող՝ «Ֆտորացված ջերմոցային գազերի մասին» թիվ 2024/573 կանոնակարգ.
- «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» թիվ 1005/2009 կանոնակարգ:

ՀՀԳՀ-ի մաս չեն կազմում ԵՄ կլիմայի փոփոխությանն առնչվող գործողությունների օրենսդրության մաս կազմող հետեւյալ իրավական ակտերը.

- «Ածխաթթու գազի երկրաբանական պահեստավորման մասին» թիվ 2009/31/ԵՀ հրահանգ.
- «Ածխածնի սահմանի ճշգրտման մեխանիզմ (ԱՍՃՄ) ներդրման մասին» թիվ 2023/956 կանոնակարգ (ԵՄ).
- «Մինչեւ 2030 թ. կլիմայի եւ էներգետիկ քաղաքականության շրջանակում հողօգտագործման, հողօգտագործման փոփոխության եւ անտառօգտագործման հետեւանքով առաջացող ջերմոցային գազերի արտանետումների եւ կլանման ներառման մասին» թիվ 2018/841 կանոնակարգ (ԵՄ).
- «Թիվ 2003/87/ԵՀ հրահանգի համաձայն տվյալների ստուգման եւ ստուգողների հավատարմագրման մասին» թիվ 2018/2067 (կիրարկող) կանոնակարգ (ԵՄ):



4.2.1 Խորհրդի թիվ 96/61/ԵՀ հրահանգը փոփոխող՝ «Համայնքի տարածքում ջերմոցային գազերի արտանետումների արտոնագրերի վաճառքի համակարգը սահմանելու մասին» Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2003 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 2003/87/ԵՀ հրահանգ

Սույն հրահանգով ԵՄ-ում սահմանվում է ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների քվոտաների վաճառքի համակարգը, այն է՝ արտանետումների առեւտրի համակարգը (ETS): Դրա դրույթները կիրառելի են միայն ԵՄ տարածքում: Խոսքը մասնավորապես այն դրույթների մասին է, որոնք վերաբերում են ԵՄ անդամ երկրներում գործող դերակատարների միջեւ արտանետումների քվոտաների վաճառքին: Այնուամենայնիվ, կան նաեւ ջերմոցային գազերին առնչվող որոշ ընդհանուր կանոններ, որոնք կարող են կիրառելի լինել նաեւ Հայաստանում եւ, այդպիսով, ներառվել են ՀՀԳՀ-ում:

Ներկայումս գործում է սույն հրահանգի [կոնսոլիդացված տարբերակը](#), որն ընդունվել է 2024 թվականի մարտին:

• Իրավասու մարմնի/մարմինների սահմանում

Նախ եւ առաջ կարելու է, որպեսզի Հայաստանը նշանակի իրավասու մարմին, որը պատասխանատու է կլիմայի / ջերմոցային գազերի արտանետումների հարցերի համար:

ՀՀ կառավարության 2021 թվականի 749-Ն որոշմամբ հաստատված Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագրի եւ 2021-2025 թվականների միջոցառումների ցանկի համաձայն՝

Ըստ «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային ծրագրի» եւ 2021 թվականի թիվ 749 որոշմամբ հաստատված 2021-2025 թթ. գործողությունների ցանկի՝ կլիմայի հետ կապված գործընթացների համակարգման համար պատասխանատու ազգային կառույցը ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի եւ Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհուրդն է: Խորհուրդը ստեղծվել է ՀՀ վարչապետի 2012 թվականի N 955-Ա որոշմամբ: Խորհրդի նախագահը Շրջակա միջավայրի նախարարն է:

Մոտարկված է

• Համապատասխան կառուցվածքների եւ ջերմոցային գազերի նույնականացման համակարգի ստեղծում (հավելվածներ I եւ II)

Հրահանգի I հավելվածում թվարկված են վերահսկողության ենթակա արդյունաբերական գործունեության բոլոր տեսակները: Դրանց մեջ մտնում են ավելի քան 20 ՄՎտ ջերմային հզորությամբ էներգետիկ կայանները, սեւ մետաղների արտադրությունն ու մշակումը, հանքարդյունաբերությունը, ինչպես նաեւ օրական 20 տոննայից բարձր արտադրական հզորությամբ արդյունաբերական գործարանները, որոնք զբաղվում են փայտանյութից եւ այլ մանրաթելային նյութերից խեժի եւ թղթի ու սովարաթղթի արտադրությամբ:

Հրահանգի II հավելվածում թվարկված են վերահսկողության ենթակա ջերմոցային գազերը. ածխաթթու գազ (CO2), մեթան (CH4), ազոտի օքսիդ (N2O), հիդրոֆլուորոկարբոններ (HFC), պերֆլուորոկարբոններ (PFC) եւ ծծմբի հեքսաֆտորիդներ (SF6):

Հայաստանում, կարծես թե, չկա այնպիսի համակարգ, որը կստուգեր նման օբյեկտներն ու ջերմոցային գազերի արտանետումները եւ կվերահսկեր դրանք: «Կլիմայի մասին» ՀՀ օրենքի



Նախագծում, որը դեռ գտնվում է քննարկման փուլում, ընդհանրապես չի հիշատակվում կլիմայի տեսանկյունից կարևոր արդյունաբերական օբյեկտների նույնականացման անհրաժեշտությունը:

Օրենքի նախագծի 12-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ լիազոր մարմինը պետք է մշակի ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման եւ կադաստրի վարման կարգ եւ սահմանված կարգով ներկայացնի խորհրդի եւ Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը: Նախագծով նաեւ նախատեսվում է, որ լիազոր մարմինը պետք է իրականացնի ջերմոցային գազերի արտանետման թույլտվություն ունեցող իրավաբանական անձանց եւ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց կողմից արտանետված ջերմոցային գազերի գույքագրում: Սակայն սա այն չէ, ինչ պահանջում է ՀԸԳՀ-ն: Դա միայն ցուցակ չէ, այլ արդյունաբերական գործունեության բոլոր համապատասխան տեսակների ամբողջական ցուցակը, որոնք պետք է վերահսկվեն հատուկ, ամենակարևոր ջերմոցային գազերի արտանետումների հետ կապված ոլորտներում: Անհրաժեշտ է վերահսկողության ենթակա արդյունաբերական գործողությունների բոլոր համապատասխան տեսակների ցանկ՝ հատկապես կոնկրետ ջերմոցային գազերի արտանետումների տեսանկյունից առավել կարևոր ոլորտներում:

Ի լրումն «Կլիմայի մասին» օրենքի նախագծի (ինչու՞)՝ ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման իրավական հիմք է «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը: Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման ընթացակարգի նախագիծը մշակվել է ՀԸԳՀ-ի իրականացման առաջընթացի եւ բացթողումների վերաբերյալ «EU4Climate» ծրագրի 2023 թվականի զեկույցի համաձայն (էջ 18 եւ դրանից հետո): Այնուամենայնիվ, պարզ չէ՝ արդյոք այս ընթացակարգն արդեն հաստատվել է, եւ որքանով է այն ներառում մասնավոր հատվածի պարտավորությունները:

Որոշակիորեն մոտարկված է

- **Դիտանցման, հաշվետվություններ ներկայացնելու, ստուգման եւ կատարման համակարգերի եւ հանրային խորհրդակցությունների ընթացակարգերի սահմանում (հոդվածներ 14, 15, 16(1) եւ 17)**

Հրահանգը պահանջում է դիտանցում (տե՛ս Հոդված 14-ը, ինչպես նաեւ 4.2.2 ենթագլուխը՝ ստորեւ), ստուգում (տե՛ս Հոդված 15-ը), սանկցիավորման միջոցով կատարման ապահովում (տե՛ս Հոդված 16-ը) եւ Հրահանգի շրջանակում ներառված ընկերությունների արտանետումների մասին զեկույցների հանրային հասանելիություն (տե՛ս Հոդված 17-ը):

«Կլիմայի մասին» օրենքի նախագծի 24-րդ հոդվածը Հայաստանի Հանրապետության կառավարությանը պարտավորեցնում է գործարկել եւ զարգացնել ջերմոցային գազերի արտանետումների չափումների, հաշվետվողականության եւ հավաստագրման համակարգ:

Օրենքի նախագծում կիրարկման որեւէ մեխանիզմի մասին հիշատակում գոյություն չունի:

Եթե «Կլիմայի մասին» օրենքի նախագիծն ընդունվի իր ներկայիս տեսքով, կարելի է ենթադրել, որ առնվազն կստեղծվի պատշաճ իրավական հիմք համապատասխան ընկերությունների ջերմոցային գազերի արտանետումների դիտանցման, հաշվետվողականության եւ հավաստագրման մասին վերաբերյալ հետագա օրենսդրության համար: Այնուամենայնիվ, 24-րդ հոդվածի ներկայիս ձեւակերպմամբ հստակ չի նշվում, որ հնարավոր է սահմանել նման պարտավորություններ (օրինակ՝ արտանետումների հաշվետվություններ), որոնք պետք է կատարեն որոշ ընկերությունների օպերատորները եւ որոնք կարող են հրապարակվել:

Որոշակիորեն մոտարկված է



Չեղարկված երկու կանոնակարգերը լրացնում են 2003/87/ԵՅ հրահանգը, քանի որ դրանք պարունակում են մանրամասներ ԵՄ-ում ջերմոցային գազերի արտանետումների դիտանցման եւ հաշվետվությունների համակարգի ստեղծման վերաբերյալ: Թե որքանով դրանց առանձին տարրերը կարող են ներառվել ջերմոցային գազերի արտանետումների դիտանցման եւ հաշվետվությունների ապագա հայկական համակարգում, կախված է հայ օրենսդիրից, քանի որ պետք է հաշվի առնվեն այս կանոնակարգերի միայն այն դրույթները, որոնց ներդրումը Հայաստանում կարող է իրապես իրատեսական լինել:

4.2.2 «Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2003/87/ԵՅ հրահանգի համաձայն ջերմոցային գազերի արտանետումների դիտանցման եւ հաշվետվությունների ներկայացման մասին» Հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 21-ի թիվ 601/2012 կանոնակարգ (ԵՄ) (Այլեւս ուժի մեջ չէ, նորը՝ թիվ 2018/2066 կանոնակարգ)

«Ջերմոցային գազերի արտանետումների դիտանցման եւ հաշվետվությունների ներկայացման մասին» Հանձնաժողովի թիվ 601/2012 կանոնակարգն այլեւս ուժի մեջ չէ եւ փոխարինվել է [թիվ 2018/2066 կանոնակարգով](#):

Դրանց բովանդակությունը խիստ միանման է: Կանոնակարգը պահանջում է վերոնշյալ 2003/87/ԵՅ հրահանգի շրջանակներում իրավական ընթացակարգերի սահմանում համապատասխան աղբյուրներից ջերմոցային գազերի արտանետումների դիտանցման եւ հաշվետվությունների համար:

Հայաստանում նման մեխանիզմներ եւ համապատասխան իրավական ընթացակարգեր դեռեւս գոյություն չունեն: Անհայտ է մնում, թե ինչ դիտանցման եւ հաշվետվությունների ընթացակարգեր կսահմանվեն «Կլիմայի մասին» օրենքի նախագծի 24-րդ եւ 25-րդ հոդվածներում, որոնք պետք է ծառայեն որպես իրավական հիմք դրա ընդունումից հետո:

Որոշակիորեն մոտարկված է

4.2.3 Թիվ 280/2004/ԵՅ որոշումն ուժը կորցրած ճանաչող՝ «Ներպետական եւ Միության մակարդակներով կլիմայի փոփոխությանն առնչվող ջերմոցային գազերի արտանետումների դիտանցման եւ հաշվետվությունների ներկայացման եւ այլ տեղեկատվության մասին հաշվետվությունների ներկայացման մեխանիզմի մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2013 թվականի մայիսի 21-ի թիվ 525/2013 կանոնակարգ (ԵՄ)

Թիվ 525/2013 կանոնակարգը (ԵՄ) այլեւս չի գործում: Այն ուժը կորցրած է ճանաչվել թիվ 2018/1999 կանոնակարգի (ԵՄ) ընդունումից հետո:

• Գույքագրման ազգային համակարգի ստեղծում (Հոդված 5)

Նախկին կանոնակարգի 5-րդ հոդվածի փոխարեն այժմ ԵՄ նոր կանոնակարգի 37-րդ հոդվածն է անդամ պետություններից պահանջում «ստեղծել, շահագործել եւ ձգտել անընդհատ կատարելագործել ջերմոցային գազերի աղբյուրների մարդածին արտանետումների եւ կլանումների գնահատման ազգային գույքագրման համակարգեր [...] եւ ապահովել իրենց ջերմոցային գազերի գույքագրման արդիականությունը, թափանցիկությունը, ճշգրտությունը, հետեւողականությունը, համեմատելիությունը եւ ամբողջականությունը»: Ազգային գույքագրման համակարգերի բովանդակության մանրամասները ներկայացված են կանոնակարգի XII հավելվածում:



Այս դրույթը կրկնում է «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի 2015 թվականի Փարիզյան համաձայնագրի (որին Հայաստանը միացել է 2017 թվականից) 7(ա) հոդվածի պահանջը, որը նշում է, որ «յուրաքանչյուր կողմ պետք է պարբերաբար տրամադրի հետեւյալ տեղեկատվությունը. ջերմոցային գազերի աղբյուրների մարդածին արտանետումների եւ կլանումների վերաբերյալ ազգային զեկույց»:

Ինչպես նշվեց վերեւում, «Կլիմայի մասին» օրենքի նախագծի 24-րդ հոդվածը ՀՀ կառավարությանը պարտավորեցնում է գործարկել եւ զարգացնել ջերմոցային գազերի արտանետումների չափումների, հաշվետվողականության եւ հավաստագրման համակարգ: Օրենքի նախագծի 25-րդ հոդվածի համաձայն՝ պետք է ստեղծվի ջերմոցային գազերի արտանետումների կադաստր (տվյալների բազա), որը ներառում է արտանետված ջերմոցային գազերի ծավալն ըստ ոլորտների եւ ջերմոցային գազերի տեսակների, ջերմոցային գազերի արտանետման աղբյուրների [...]: Արտանետումների գույքագրում անցկացնելու եւ կադաստրը վարելու համար տվյալները պետք է տրամադրվեն ջերմոցային գազեր արտանետող պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի կողմից:

Եթե «Կլիմայի մասին» օրենքի նախագիծն ընդունվի իր ներկայիս տեսքով, առնվազն կստեղծվի ազգային գույքագրման համար անհրաժեշտ իրավական հիմք: Անհայտ է, սակայն, թե որքանով նման գույքագրման բովանդակությունը կհամապատասխանի XII հավելվածի պահանջներին:

- **Քաղաքականությունների, միջոցառումների եւ կանխատեսումների ներպետական համակարգի ստեղծում (Հոդված 12)**

Նախկին կանոնակարգի 12-րդ հոդվածին **Նորում փոխարինում է 39-րդ հոդվածը**: Դրա համաձայն՝ ԵՄ անդամ պետությունները պարտավոր են «շահագործել եւ ձգտել անընդհատ բարելավել քաղաքականության եւ միջոցառումների վերաբերյալ հաշվետվությունների, ինչպես նաեւ ջերմոցային գազերի աղբյուրների մարդածին արտանետումների եւ կլանումների կանխատեսումների վերաբերյալ հաշվետվությունների ազգային համակարգեր: Այս համակարգերը պետք է ներառեն համապատասխան ինստիտուցիոնալ, իրավական եւ ընթացակարգային կարգավորումներ»:

Փարիզի համաձայնագրի տեքստում այս դրույթի ուղղակի անալոգ գոյություն չունի, որը կարող է իրավաբանորեն պարտադիր լինել Հայաստանի համար: Փարիզի համաձայնագրի 11.4 հոդվածի համաձայն՝ «**Չարգացող երկիր հանդիսացող Կողմերը պետք է կանոնավոր կերպով տեղեկություն ներկայացնեն սույն Համաձայնագիրն իրականացնելու կարողությունների զարգացման պլանների, քաղաքականության, գործողությունների առաջընթացի կամ սույն Համաձայնագիրն իրականացնելու միջոցների վերաբերյալ**»:

Հայաստանը՝ որպես «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի Հավելված I-ում չներառված կողմ, պարտավոր է կատարել այս պահանջը: ՀՀԳՀ-ի դրույթը պետք է մեկնաբանվի համապատասխանաբար եւ չդիտարկվի որպես որեւէ ավելի լայն «համակարգի» ստեղծման պահանջ, ինչպես դա ենթադրում է 2018 թվականի ԵՄ կանոնակարգի 12-րդ հոդվածը:

«Կլիմայի մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ լիազոր մարմինը պետք է նապաստաբար երկրի կլիմայական քաղաքականության նպատակադրումների եւ իրականացման ընթացքի վերաբերյալ տարեկան հաշվետվություն եւ մինչեւ հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 15-ն այն ներկայացնի ՀՀ կառավարության դատին:

Եթե «Կլիմայի մասին» օրենքի նախագիծն ընդունվի իր ներկայիս տեսքով, առնվազն կստեղծվի ամուր իրավական հիմք քաղաքականության եւ միջոցառումների իրականացման ընթացքի



վերաբերյալ պարբերական հաշվետվություններ ներկայացնելու համար: Սա պետք է բավարար լինի սույն պահանջն իրավականորեն մոտարկված համարելու համար:

Մոտարկված է

4.2.4 Թիվ 842/2006 կանոնակարգը (ԵՄ) ուժը կորցրած ճանաչող՝ «Ֆտորացված ջերմոցային գազերի մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2014 թվականի ապրիլի 16-ի թիվ 517/2014 կանոնակարգ (այլեւս ուժի մեջ չէ, նորը՝ թիվ 2024/573 կանոնակարգ)

Ֆտորացված ջերմոցային գազերի (F-գազեր) արտանետումների կրճատումը «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության պահանջ է, որին Հայաստանը մասնակցում է որպես, այսպես կոչված, 5-րդ հոդվածի կողմ (գարգացող երկիր), մինչդեռ ԵՄ-ն չի հանդիսանում 5-րդ հոդվածի կողմ: F-գազերի կառավարման եւ կրճատման հարցերը դիտարկվել են 2016 թվականի Կիգալիի համաձայնագրում, որով փոփոխություններ են մտցվել Մոնրեալի արձանագրությունում, եւ որն ուժի մեջ է մտել 2019 թվականին: Հայաստանը Կիգալիի համաձայնագիրն ընդունել է 2019 թվականի մայիսի 2-ին, ինչն այն իրավաբանորեն պարտադիր է դարձնում երկրի համար:

F-գազերի մասին ԵՄ օրենսդրությունը մասամբ դուրս է գալիս Մոնրեալի արձանագրության շրջանակներից: Դա վերաբերում է նաու այն դրույթներին, որոնք դարձել են ՀՀԳՀ III հավելվածի մաս:

Հետեւաբար, ՀՀ օրենսդրության մոտարկման պահանջը պետք է գնահատվի հատուկ զգուշությամբ: Սա վերաբերում է թե՛ Մոնրեալի արձանագրության պահանջներին, թե՛ ԵՄ կանոնակարգի դրույթներին՝ այնքանով, որքանով դրանք կարող են կիրառելի լինել Հայաստանի համար:

ԵՄ 2014 թվականի կանոնակարգի նպատակն է պաշտպանել շրջակա միջավայրը՝ նվազեցնելով ֆտորացված ջերմոցային գազերի (F-գազեր) արտանետումները: Այս գազերի թվում են՝ հիդրոֆտորածխածինները (ՀՖԱ), պերֆտորածխածինները (ՊՖԱ), ծծմբի հեքսաֆտորիդը (SF6) եւ ազոտի եռաֆտորիդը (NF3):

Կանոնակարգը սահմանում է F-գազերի արտահոսքերի կանխարգելման, օգտագործման, վերականգնման եւ ոչնչացման կանոնները, ներմուծում է դրանց հատուկ օգտագործման եւ F-գազեր պարունակող որոշակի արտադրանքի ու սարքավորումների շուկա ներմուծման պայմանները, ինչպես նաեւ սահմանում է հիդրոֆտորածխածիններ շուկա ներմուծման քանակական սահմանափակումները:

Այդուհանդերձ, 2014 թվականի կանոնակարգն այլեւս ուժի մեջ չէ: Այն փոխարինվել է [«Ֆտորացված ջերմոցային գազերի մասին» 2024/573 կանոնակարգով](#), որն ունի նույն նպատակները եւ ուժի մեջ է 2024 թվականի փետրվարից: Ուստի, ՀՀԳՀ-ն ունի համապատասխան վերանայման կարիք:

- **Ներպետական օրենսդրության ընդունում**

Հայաստանում համապատասխան օրենսդրությունը բաղկացած է հետեւյալ իրավական ակտերից.

- «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2006 թվականին, վերջին փոփոխությունները՝ 2023 թվականի).



- «Օգոստյին շերտը քայքայող նյութերի եւ հիդրոֆտորածխածինների ներմուծման ընդհանուր չափաբանակները (քվոտաները) սահմանելու [...] մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի N 754-Ն որոշում:
- «Օգոստյին շերտը քայքայող նյութերի եւ հիդրոֆտորածխածինների առաքման թույլտվության էլեկտրոնային եղանակով տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի N 1304-Ն որոշում:
- «Օգոստյին շերտը քայքայող նյութերի եւ հիդրոֆտորածխածինների ներմուծման անհատական չափաբանակի օգտագործման մասին հաշվետվության հաշվառման կարգը հաստատելու [...] մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի N 1761-Ն որոշում:

Մոնրեալի արձանագրության հիմնական սահմանումները, որոնք պետք է օգտագործվեն նաեւ Հայաստանում, հետեւյալն են. «կարգավորվող նյութ», «արտադրություն», «սպառում» եւ «հաշվարկային մակարդակներ»: F-գազերի մասին ԵՄ 2024 թվականի կանոնակարգը պարունակում է նաեւ «ՀՖԱ-ներ», «շահագործող», «վերականգնում» սահմանումները, որոնք կարելի է ստորել քննարկվող պահանջներին մոտարկելու տեսանկյունից:

Հայաստանում օգտագործվում է երկու տերմին («Օգոստյին շերտի պահպանության մասին» ՀՀ օրենքի թարգմանության մեջ)՝ «վերահսկվող նյութեր» եւ «կարգավորվող նյութեր»։ **Ենթադրվում է, որ երկու տերմիններն էլ ունեն նույն իմաստը (օրինակ՝ տե՛ս երկու տերմինների օգտագործումը «հայտ» եւ «հայտատու» հասկացությունների սահմանումներում):**

ՀՖԱ-ները սահմանված են, շահագործողները կա՛մ իրավաբանական անձիք են, կա՛մ անհատ ձեռնարկատերեր (խորհուրդ է տրվում օգտագործել միասնական «շահագործող» տերմինը, քանի որ վերջինիս վերապահված են բազմաթիվ պարտավորություններ): Բացակայում են «արտադրություն» եւ «սպառում» հասկացությունների սահմանումները: Հայաստանում արգելված է օգոստյին շերտը քայքայող բոլոր տեսակի նյութերի արտադրությունը, բայց ոչ ՀՖԱ-ներինը, որոնք Մոնրեալի արձանագրության համաձայն ընկնում են «արտադրության» սահմանման ներքո, ուստի այս տերմինը եւս ենթակա է սահմանման: Նմանապես, պետք է սահմանվի «սպառում» տերմինը, որը մեկ անգամ հիշատակվում է ՀՀ օրենսդրության մեջ (տե՛ս 9-րդ հոդվածը), բայց դեռեւս սահմանված չէ: Բացակայում է նաեւ «հաշվարկային մակարդակներ» տերմինի սահմանումը, որը կարելի է ներմուծման եւ արտահանման տեսանկյունից. այն եւս պետք է ներդրվի:

Մասնակիորեն մոտարկված է

- Իրավասու մարմնի/մարմինների սահմանում

ՀՀ կառավարության 2021 թվականի N 448-Ն որոշման համաձայն՝ օգոստյին շերտի պահպանության եւ F-գազերի օգտագործման կրճատման հետ կապված քաղաքականությունը համակարգելու եւ կարգավորելու համար պատասխանատու լիազոր մարմինը Շրջակա միջավայրի նախարարությունն է:

Մոտարկված է

- Արտանետումների կանխարգելման համակարգի ապահովում (Հոդված 3), հոսակորստի ստուգումների կանոնների սահմանում 4-րդ եւ 6-րդ հոդվածներին համապատասխան, եւ տվյալների վարման համակարգի ստեղծում 6-րդ հոդվածի համաձայն

ԵՄ նախորդ կանոնակարգի 3-րդ հոդվածը (այժմ՝ ԵՄ նոր կանոնակարգի 4-րդ հոդվածը) Հայաստանի առջեւ պահանջ էր դնում արգելելու մթնոլորտ F-գազերի կանխամտածված



արտանետումը, եթե դա ենթադրյալ օգտագործման համար տեխնիկապես անհրաժեշտ պայման չէ: Բացի այդ, F-գազեր պարունակող սարքավորումների շահագործողները պետք է նախազգուշական միջոցներ ձեռնարկեն՝ կանխելու այս գազերի ոչ կանխամտածված արտանետումը («հոսակորուստը»): F-գազերի հոսակորուստի դեպքում շահագործողները պարտավոր են ապահովել սարքավորումների անհապաղ վերանորոգում:

ԵՄ նախորդ կանոնակարգի 4-րդ հոդվածը (այժմ՝ ԵՄ նոր կանոնակարգի 5-րդ հոդվածը) 5 տոննա եւ ավելի անխաթառ գազին համարժեք F-գազեր պարունակող սարքավորումների շահագործողների առջեւ դնում է պահանջ՝ ապահովելու սարքավորումների ստուգում դրանցից արտահոսքից խուսափելու համար:

ԵՄ նախորդ կանոնակարգի 5-րդ հոդվածը (այժմ՝ ԵՄ նոր կանոնակարգի 6-րդ հոդվածը) 500 տոննա եւ ավելի անխաթառ գազին համարժեք F-գազեր պարունակող սարքավորումների շահագործողների առջեւ դնում է պահանջ՝ ունենալու հոսակորուստի հայտնաբերման գործուն համակարգ, որը շահագործողին կահագանգի ցանկացած հոսակորուստի մասին:

ԵՄ նախորդ կանոնակարգի 6-րդ հոդվածը (այժմ՝ ԵՄ նոր կանոնակարգի 7-րդ հոդվածը) հոսակորուստի ստուգման ենթակա սարքավորումների շահագործողների առջեւ դնում է պահանջ՝ այդպիսի յուրաքանչյուր սարքավորման համար կազմել եւ վարել գրառումներ՝ ըստ այդ հոդվածի 1-ին պարբերությունում F-գազերի վերաբերյալ նշված որոշակի տեղեկությունների:

Հայաստանն արգելում է օգոնային շերտը քայքայող նյութերի եւ ՀՖԱ-ների ներմուծումը այն երկրներից, որոնք չեն վավերացրել Մոնրեալի արձանագրության Կիզալիի փոփոխությունը (հոդված 6), սակայն **օրենսդրությունում չկան F-գազերի արտանետումները կանխելուն ուղղված կարգավորումներ**: Հաշվի առնելով, որ F-գազերի հնարավոր հոսակորուստները կարգավորվում են «Օգոնային շերտի պահպանության մասին» օրենքի 8.1 հոդվածով, հավանական է թվում, որ կան նաեւ F-գազերի կանխամտածված արտանետումների դեպքեր, որոնք պետք է հասցեագրվեն, բայց դա տեղի չի ունենում:

Մոտարկված չէ

Ինչ վերաբերում է ձեռնարկատերերի՝ հոսակորուստի ստուգման եւ հաշվետվությունների ներկայացման պարտավորություններին, ապա Հոդված 8.1-ում նշված դրույթը բավականաչափ ճշգրիտ է, որպեսզի համարվի մոտարկման պահանջներին մեծ մասամբ մոտ՝ չնայած կառավարության որոշմամբ կարգավորման ենթակա ընթացակարգային մանրամասները (տե՛ս Հոդված 4(8)), դեռեւս չեն սահմանվել: Չնարավոր չէ գնահատել, թե որքանով որոշ հաստատություններ կարող են ունենալ F-գազերի մեծ քանակություններ, որոնց համար անհրաժեշտ է ներդնել ավելի բարդ արտահոսքի հայտնաբերման համակարգեր: Դժվար է դատել, թե որոշ հաստատություններում որքան մեծ քանակությամբ F-գազեր կարող են լինել՝ հոսակորուստի հայտնաբերման համար անհրաժեշտ լրացուցիչ համակարգեր տեղադրելու համար:

Մեծ հավանականությամբ մոտարկված է

- **Վերականգնման իրականացման ապահովում՝ համաձայն 8-րդ եւ 9-րդ հոդվածներով նախատեսված կանոնների**

ԵՄ հին (ինչպես նաեւ նոր) կանոնակարգի 8-րդ հոդվածը պահանջում է, որ փրփուրներում պարունակվողներից բացի այլ F-գազեր պարունակող սարքավորումների շահագործողները ապահովեն դրանց վերականգնումը, իսկ սարքավորումների շահագործումից հանվելուց հետո՝ դրանց վերամշակումը, վերադարձը կամ ոչնչացումը: Սույն կանոնակարգը նաեւ պարունակում է տարբեր ապրանքային խմբերի վերաբերյալ լրացուցիչ մանրամասներ:



ԵՄ հին կանոնակարգի 9-րդ հոդվածի համաձայն՝ պետք է խրախուսվի F-գազերի վերականգնման համար արտադրողի ընդլայնված պատասխանատվության (ԱԸՊ) սխեմաների մշակումը: Այս դրույթը՝ որպես այդպիսին, այլևս չի կիրառվում, քանի որ նոր կանոնակարգը հղում է կատարում Հայաստանին չվերաբերող «Էլեկտրական եւ Էլեկտրոնային թափոնների մասին» իրահանգի ներքո ԱԸՊ սխեմաներին, ուստի **9-րդ հոդվածը հնացած է ՀՀ համար**: F-գազերի վերականգնման հարցը չի կարգավորվում օգոնային շերտը քայքայող նյութերի մասին Հայաստանի օրենսդրությամբ (տե՛ս վերելում):

Մոտարկված չէ

- Համապատասխան անձնակազմին եւ ընկերություններին ներկայացվող՝ վերապատրաստման եւ հավաստագրման ներպետական պահանջների սահմանում/համապատասխանեցում (Հոդված 10)

Հոդված 10-ը (երկու կանոնակարգերում էլ), որը կիրառելի է Հայաստանի համար, պահանջում է, որպեսզի հոսակորստի ստուգումներ (ինչպես վերելում) եւ F-գազերի վերականգնում (ինչպես վերելում) իրականացնող ֆիզիկական անձանց համար նախատեսվեն օրենքով պարտադիր վերապատրաստումներ:

«Օգոնային շերտի պահպանության մասին» ՀՀ օրենքում կամ որեւէ ենթաօրենսդրական ակտում վերապատրաստման նման պահանջներ առկա չեն:

Մոտարկված չէ

- Պիտակավորման համակարգի ստեղծում այն արտադրատեսակների եւ սարքավորումների համար, որոնք պարունակում են ֆտորացված ջերմոցային գազեր, կամ որոնց գործունեությունը կախված է այդ գազերից (Հոդված 12)

ԵՄ կանոնակարգի՝ անփոփոխ մնացած 12-րդ հոդվածի համաձայն՝ անհրաժեշտ է սահմանել պիտակավորման համակարգ F-գազեր պարունակող կամ դրանցով աշխատող հետեւյալ արտադրանքի համար՝ նախքան դրանք շուկա դուրս բերելը.

- սառնարանային սարքավորումներ.
- օդորակման համակարգեր.
- ջերմային պոմպեր.
- հրդեհային պաշտպանության սարքավորումներ.
- Էլեկտրական անջատիչ սարքավորումներ.
- ֆտորացված ջերմոցային գազեր պարունակող աերոզոլային տարաներ, ներառյալ չափիչ արտազատմամբ ինհալյատորներ.
- ֆտորացված ջերմոցային գազերի բոլոր տեսակի տարաներ.
- ֆտորացված ջերմոցային գազերի լուծիչներ.
- Ռենկինի օրգանակն ցիկլ:

Սկզբունքորեն, Հայաստանը պետք է սահմանի նման պիտակավորման պահանջներ՝ համաձայն ԵՄ կանոնակարգի: Սակայն երկիրը չունի ազգային պիտակավորման պահանջներ ԵՄ կանոնակարգում թվարկված որեւէ ապրանքատեսակի համար: Այնուամենայնիվ, հարց է՝ արդյոք նշված սարքավորումներն ընդհանրապես արտադրվում են Հայաստանում, թե՞ միայն ներմուծվում են: Վերջին դեպքում ազգային պիտակավորման համակարգը անտեղի կլիներ: Հետեւաբար, խիստ



կասկածելի է, թե արդյոք ՀՀԳՀ-ի այս պահանջը կիրառական նշանակություն ունի Հայաստանի համար:

Մոտարկման անհրաժեշտությունը հստակ չէ

- Համապատասխան հատվածներից արտանետումների վերաբերյալ տվյալների ձեռքբերման համար հաշվետվություններ ներկայացնելու համակարգերի ստեղծում (հոդվածներ 19 եւ 20)

ԵՄ հին կանոնակարգի 19-րդ հոդվածի համաձայն (այժմ՝ ԵՄ Նոր կանոնակարգի 26-րդ հոդվածը)՝ ԵՄ-ում պետք է ստեղծվեն համակարգեր, որոնք մեծածավալ F-գազեր արտադրողներից, ներմուծողներից եւ արտահանողներից կպահանջեն հաշվետվություններ ներկայացնել Եվրոպական հանձնաժողովին: Եվրոպական հանձնաժողովի կողմից Հայաստանի առջեւ նման պահանջ չի կարող դրվել, քանի որ Հայաստանը ԵՄ անդամ պետություն չէ:

Մոնրեալի արձանագրությունը արդյունաբերության ճյուղի կողմից քարտուղարությանն ուղղակի հաշվետվության ներկայացում չի նախատեսում կամ պարտադրում, այլ միայն դրա Կողմերին: Մոնրեալի արձանագրությամբ հաշվետվություն ներկայացնելու պարտավորությունները սահմանված են 7-րդ հոդվածում՝ 5-րդ հոդվածի բոլոր Կողմերի համար (մանրամասների տե՛ս [արձանագրության հաշվետվությունների ձեռնարկում](#)):

Արձանագրությունը նախատեսում է օգոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման, արտահանման եւ արտադրության վերաբերյալ հատուկ հաշվետվության ձեւեր, որոնք պետք է օգտագործվեն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից՝ որպես Մոնրեալի արձանագրության քարտուղարությանը հաշվետվություններ ներկայացնող լիազոր մարմին:

ԵՄ հին կանոնակարգի 20-րդ հոդվածի համաձայն (այժմ՝ ԵՄ Նոր կանոնակարգի 27-րդ հոդվածը)՝ պետք է ստեղծվի հավելյալ ազգային հաշվետվությունների համակարգ՝ համապատասխան ոլորտներից օգոնային շերտը քայքայող նյութերի արտանետումների վերաբերյալ հնարավորինս լավ տվյալներ հավաքելու համար:

Մոնրեալի արձանագրության 7-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանը պետք է քարտուղարությանը ներկայացնի F հավելվածի II խմբի՝ վերահսկվող նյութերի տարեկան արտանետումների վերաբերյալ վիճակագրական տվյալներ [...]: Սա վերաբերում է CHF3-ի (ֆտորոֆորմ) արտանետումներին, որը ՀՖԱ-ի տեսակներից մեկն է:

«Օգոնային շերտի պահպանության մասին» օրենքը պարունակում է հաշվետվությունների պահանջների վերաբերյալ մի շարք դրույթներ (ներմուծում՝ հոդված 8, ներմուծված կարգավորվող նյութերի օգտագործում՝ հոդված 4.7 (մանրամասների համար տե՛ս՝ ՀՀ կառավարության 2021 թվականի N-1761-Ն որոշում)), սակայն արտանետումների մասին տարեկան հաշվետվություններ ներկայացնելու պարտավորություն չկա: Հետեւաբար, անհասկանալի է, թե ինչպես կարող է ՀՀ-ն ստանալ կարգավորվող նյութերի արտանետումների վերաբերյալ բավարար տվյալներ՝ Մոնրեալի արձանագրության քարտուղարությանը ներկայացնելու համար: Այդ իսկ պատճառով, թերեւս, մոտարկումն անբավարար է:

Ավելի շուտ մոտարկված չէ

- Կատարման համակարգի ստեղծում (Հոդված 25)

ԵՄ չեղարկված կանոնակարգի 25-րդ հոդվածը պահանջում էր, որ անդամ պետություններն իրենց օրենսդրության մեջ նախատեսեն արդյունավետ, համաչափ եւ համոզիչ պատժամիջոցներ՝ (մասնավոր հատվածի) բոլոր պարտավորությունների կատարումն ապահովելու համար: ԵՄ Նոր



կանոնակարգը 31-րդ հոդվածում պահանջում է նույնը, բայց նաեւ նախատեսում է լրացուցիչ ստուգումներ, որոնք պետք է իրականացվեն տեսչական մարմինների կողմից՝ պարզելու համար, թե արդյոք ձեռնարկությունները կատարում են իրենց պարտավորությունները (Հոդված 29):

«Օգոնային շերտի պահպանության մասին» օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ «օրենքով սահմանված պահանջները խախտողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»: Թեեւ առավել նպատակահարմար կլիներ ավելի ճշգրիտ իրավական հղում կատարել կիրառելի օրենքներին (Քրեական օրենսգիրք, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք)՝ համաձայն իրավունքի գերակայության թափանցիկության միջազգային չափանիշների, այս դեպքում մոտարկումը կարելի է գնահատել բավարար:

Մոտարկված է

4.2.5 «Օգոնային շերտը քայքայող նյութերի մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 1005/2009 կանոնակարգ (ԵՀ) (կոնսոլիդացված տարբերակը՝ 2017 թվականի ապրիլի 19-ի դրությամբ)

Օգոնային շերտը քայքայող նյութերի աստիճանական վերացումը եւ դրանց կառավարումը Մոնրեալի արձանագրության պահանջ է, որի կողմ է Հայաստանը: Օգոնային շերտը քայքայող նյութերի վերաբերյալ ԵՄ օրենսդրությունը մասամբ գերազանցում է Մոնրեալի արձանագրության պահանջները, ներառյալ այն դրույթները, որոնք դարձել են ՀՀԳՀ-ի III հավելվածի մաս:

Հետեւաբար, Հայաստանի համար մոտարկման պահանջները պետք է գնահատվեն խիստ զգուշորեն: Սա վերաբերում է թե՛ Մոնրեալի արձանագրության պահանջներին, թե՛ ԵՄ կանոնակարգի պահանջներին՝ այնքանով, որքանով դրանք կարող են կիրառելի լինել Հայաստանի համար:

Թիվ 1005/2009 կանոնակարգը (այսուհետ՝ ՕՔՆ կանոնակարգ) սահմանում է օգոնային շերտը քայքայող նյութերի արտադրության, ներմուծման, արտահանման, շուկայահանման, օգտագործման, հեռացման, վերամշակման, վերականգնման եւ ոչնչացման կանոնները: Կանոնակարգը վերջին անգամ փոփոխվել է 2017 թվականին:

ՕՔՆ կանոնակարգն արտացոլում է Մոնրեալի արձանագրության ներքո ԵՄ պարտավորությունները: Քանի որ Հայաստանը Արձանագրության 5-րդ հոդվածի կողմ է, ՀՀԳՀ-ում սահմանված ԵՄ կանոնակարգի պահանջները պետք է դիտարկվեն սահմանափակ կերպով՝ այնքանով, որքանով դրանք վերաբերում են Հայաստանին:

- **Ներպետական օրենսդրության ընդունում**

Հայաստանում օգոնային շերտը քայքայող նյութերի վերաբերյալ համապատասխան օրենսդրությունը ներառում է հետեւյալ իրավական ակտերը.

- «Օգոնային շերտի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2006 թվականին, վերջին փոփոխությունները՝ 2023 թվականի).
- «Օգոնային շերտը քայքայող նյութերի եւ հիդրոֆտորածխածինների ներմուծման ընդհանուր չափաքանակները (քվոտաները) սահմանելու [...] մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի N 754-Ն որոշում.
- «Օգոնային շերտը քայքայող նյութերի եւ հիդրոֆտորածխածինների առաքման թույլտվության էլեկտրոնային եղանակով տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի N 1304-Ն որոշում.



- «Օգոսային շերտը քայքայող նյութերի եւ հիդրոֆտորածխածինների ներմուծման անհատական չափաբանակի օգտագործման մասին հաշվետվության հաշվառման կարգը հաստատելու [...] մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի N 1761-Ն որոշում:

ԵՄ ՕԶՆ կանոնակարգը պարունակում է ՕԶՆ-ներին վերաբերող 31 (!) սահմանում: Սա զգալիորեն ավելին է, քան Մոնրեալի արձանագրությամբ նախատեսված 8 սահմանումները: ՀՀ ազգային օրենսդրությունը ԵՄ կանոնակարգին առավելագույնս (եւ հնարավորինս) մոտարկելու համար անհրաժեշտ է նաեւ սահմանել որոշ հիմնական հասկացություններ:

ԵՄ կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացությունները, որոնք վերաբերելի են Հայաստանին ՀՀԳՀ-ի համատեքստում, հետեւյալն են՝ «կարգավորվող նյութեր», «բյուրեղաձուլածխածիններ», «հիդրոբյուրեղաձուլածխածիններ», «հալոններ», «հումք», «արտադրություն», «օգտագործում», «արտահանում», «ներմուծում», «հեռացում», «վերամշակում»:

Հենց «Օգոսային շերտի պահպանության մասին» ՀՀ օրենքն է, որը պետք է ներառի այս բոլոր սահմանումները՝ ՀՀԳՀ-ում սահմանված պահանջները մոտարկման պարագայում: Այնուամենայնիվ, մի շարք հասկացություններ դեռեւս սահմանված չեն եւ չեն օգտագործվում (օրինակ՝ «հիդրոբյուրեղաձուլածխածիններ», «հալոններ», «հումք», «վերամշակում», «վերականգնում»):

Մասնակիորեն մոտարկված է

- Իրավասու մարմնի/մարմինների սահմանում

Մոտարկված է

Կարգավորվող նյութերի արտադրության արգելքի սահմանում՝ բացառությամբ դրանց հատուկ օգտագործման դեպքերի եւ մինչեւ 2019 թվականի հունվարի 1-ը՝ հիդրոբյուրեղաձուլածխածինների (ՀՔՖԱ) (Հոդված 4):

ԵՄ ՕԶՆ կանոնակարգի 4-րդ հոդվածի համաձայն՝ կարգավորվող նյութերի արտադրությունը արգելվում է: Կարգավորվող նյութերը թվարկված են I հավելվածում եւ խմբավորված են 8 տարբեր խմբերի, որոնցից 8-րդ խումբը ներառում է հիդրոբյուրեղաձուլածխածինները (ՀՔՖԱ):

Մոնրեալի արձանագրությունը եւս պաշտոնապես արգելել է ՀՔՖԱ-ների արտադրությունը զարգացած երկրներում 2020 թվականից, իսկ զարգացող երկրներում (ինչպիսին է Հայաստանը)՝ 2030 թվականից (տե՛ս Մոնրեալի արձանագրության 2(F) հոդվածը՝ 5-րդ հոդվածի հետ միասին): Հաշվի առնելով հարցի բարդությունը՝ հնարավոր չէ վերջնականապես գնահատել, թե ԵՄ կանոնակարգի I հավելվածում թվարկված ինչ այլ ՕԶՆ-ներ են արգելվել Մոնրեալի արձանագրությամբ:

«Օգոսային շերտի պահպանության մասին» ՀՀ օրենքն արգելում է ՕԶՆ-ների արտադրությունը (Հոդված 6): Այնուամենայնիվ, պարզ չէ, թե արդյոք այս արգելքը վերաբերում է նաեւ ՀՔՖԱ-ների արտադրությանը, քանի որ դրանք չեն հիշատակվում ՕԶՆ-ներին վերաբերող ՀՀ որեւէ օրենսդրական ակտում:

Մոտարկումը հստակ չէ

- Հսկման ենթակա նյութերի արտադրության, շուկայահանման եւ օգտագործման եւ բացառություններ կազմող կիրառությունների (որպես հումք, տեխնոլոգիական ազդանյութեր, լաբորատոր եւ անալիտիկ գործունեության համար էական նշանակության կիրառություններ, հալոնների չափազանց անհրաժեշտ



**կիրառություններ) եւ առանձին շեղումների համար պայմանների սահմանում
ներառյալ արտակարգ իրավիճակներում մեթիլբրոմիդի կիրառությունները (III
գլուխ)**

ԵՄ ՕԶՆ կանոնակարգի III գլուխը, որը ներառում է 7-ից 14-րդ հոդվածները, կարգավորում է բոլոր հնարավոր բացառությունները, որոնք վերաբերում են I հավելվածում թվարկված ՕԶՆ-ների արտադրության, շուկայահանման եւ օգտագործման սահմանափակումներին, հետեւյալ կերպ.

Համաձայն **7-րդ եւ 8-րդ հոդվածների`** որոշակի կարգավորվող նյութեր կարող են արտադրվել, շուկայահանվել եւ օգտագործվել որպես հումք կամ տեխնոլոգիական ագենտներ:

Հոդված 9-ը իրավական առումով վերաբերելի չէ Հայաստանին, քանի որ այն առնչվում է ՕԶՆ-ների ոչնչացմանը ԵՄ-ի տարածքում:

Հոդված 10-ը թույլ է տալիս կարգավորվող նյութերի բացառիկ արտադրությունը, օգտագործումը եւ շուկայահանումը` ելնելով լաբորատոր եւ վերլուծական կարեւոր նպատակներից:

Հոդված 11-ը թույլ էր տալիս ՀԲՖԱ-ների բացառիկ արտադրությունը, օգտագործումը եւ շուկայահանումը մինչեւ 2019 թվականը, ուստի ներկայումս արդիականություն չունի:

Հոդված 12-ը վերաբերում էր մեթիլբրոմիդի բացառիկ օգտագործմանը եւ շուկայահանմանը մինչեւ 2010 թվականը եւ, հետեւաբար, նույնպես այլեւս արդիական չէ:

Հոդված 13-ը թույլ է տալիս հալոնների բացառիկ շուկայահանումը եւ օգտագործումը, այսպես կոչված, օգտագործման կրիտիկական դեպքերի համար:

Վերջապես, **14-րդ հոդվածը** թույլ է տալիս մեկ արտադրողից/ներմուծողից մյուսին փոխանցել բացառությունները:

Հայաստանում **չկա կարգավորվող նյութերի արտադրությունը, շուկայահանումը եւ օգտագործումը կանոնակարգող օրենսդրություն:** «Օզոնային շերտի պահպանության մասին» օրենքը եւ առնչվող ենթաօրենսդրական ակտերը կարգավորում են միայն ՕԶՆ-ների/կարգավորվող նյութերի ներմուծումը, բայց ոչ դրանց արտադրությունը կամ օգտագործումը: Սա զարմանալի է, քանի որ 8.1 հոդվածում անդրադարձ է կատարվում շեղումներին: Այսպիսով, անհասկանալի է մնում, թե արդյոք կարգավորվող նյութերի արտադրությունը կանոնակարգման անհրաժեշտություն ունեցող հրատապ հարց է:

Մոտարկման անհրաժեշտությունը հստակ չէ

- **Հսկման ենթակա նյութերի բացառություններ կազմող կիրառությունների համար ներմուծման եւ արտահանման լիցենզավորման համակարգի ստեղծում (IV գլուխ) եւ ձեռնարկությունների` հաշվետվություններ ներկայացնելու պարտավորությունների սահմանում (հոդվածներ 26 եւ 27)**

ԵՄ ՕԶՆ կանոնակարգի **IV գլխի 15-18-րդ հոդվածները** նախատեսում են բացառություններ կազմող կիրառությունների համար կարգավորվող նյութերի ներմուծման եւ արտահանման լիցենզավորման համակարգի ստեղծում: Նման լիցենզիաները տրամադրվում են Եվրոպական հանձնաժողովի կողմից: ՀԸԳՀ-ն պահանջում է, որ Հայաստանը ստեղծի նմանատիպ լիցենզավորման համակարգ բացառություններ կազմող կիրառությունների համար ՕԶՆ-ների ներմուծման եւ արտահանման համար, բայց առանց նման համակարգի վերաբերյալ կոնկրետ մանրամասներ տրամադրելու:



ԵՄ ՕՔՆ կանոնակարգի 26-րդ հոդվածը վերաբերում է ԵՄ անդամ պետությունների կողմից հաշվետվությունների ներկայացման պարտավորություններին: Անհասկանալի է, թե ինչպես կարող է այս պարտավորությունը կիրառվել Հայաստանի նկատմամբ, քանի որ այն ԵՄ անդամ պետություն չէ: 26-րդ հոդվածը ներքին հաշվետվությունների ներկայացման պահանջ չի նախատեսում:

Սա տարբերվում է 27-րդ հոդվածից, որը վերաբերում է բիզնեսների կողմից նախորդ օրացուցային տարվա համար յուրաքանչյուր վերահսկվող նյութի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելուն [...] ներառյալ այդ նյութերի արտադրության, արտահանման եւ ներմուծման հետ կապված բոլոր հնարավոր մանրամասները: Սա նշանակում է, որ Հայաստանը պետք է նաեւ սահմանի բիզնեսների համար առնվազն հիմնական հաշվետվությունների պարտավորություններ՝ ՕՔՆ-ների վերաբերյալ՝ ՀՀԳՀ պահանջներին համապատասխանելու համար:

Կարգավորվող նյութերի ներմուծումն ու արտահանումը լավագույնս կարգավորվում են «Օգոնային շերտի պահպանության մասին» օրենքով, ինչպես նաեւ «Օգոնային շերտը քայքայող նյութերի եւ հիդրոֆտորածխածինների առաքման թույլտվության էլեկտրոնային եղանակով տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի N 1304-Ն որոշմամբ:

Համապատասխան ձեռնարկությունների նկատմամբ հաշվետվությունների պահանջները լավագույնս արտացոլված են նաեւ նշված օրենքի 8.4-րդ հոդվածում, ինչպես նաեւ «Օգոնային շերտը քայքայող նյութերի եւ հիդրոֆտորածխածինների ներմուծման անհատական չափաքանակի օգտագործման մասին հաշվետվության հաշվառման կարգը հաստատելու [...] մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի N 1761-Ն որոշման մեջ:

Մոտարկված է

- **Հսկման ենթակա օգտագործված նյութերը վերականգնելու, վերամշակելու, ռեգեներացնելու (վերականգնելու) եւ ոչնչացնելու պարտավորությունների սահմանում (Հոդված 22)**

ՕՔՆ կանոնակարգի 22-րդ հոդվածը պահանջում է, որ սառնարանային, օդորակման եւ ջեռուցման սարքավորումներում, լուծիչներ պարունակող սարքավորումներում, ինչպես նաեւ հրդեհաշիջման համակարգերում եւ հրդեհաշիջման սարքերում պարունակվող կարգավորվող նյութերը պետք է սպասարկման կամ վերանորոգման ընթացքում կամ ապամոնտաժումից կամ հեռացումից առաջ պահպանվեն ոչնչացման, վերամշակման կամ վերականգնման նկատառումներով: Այդպիսի նյութերի ոչնչացումը պետք է իրականացվի միայն VII հավելվածում թվարկված տեխնոլոգիաների միջոցով:

Նմանատիպ պարտավորություններ պետք է ամրագրվեն նաեւ Հայաստանի օրենսդրությամբ, սակայն ներկայումս այս հարցերի որեւէ կանոնակարգում գոյություն չունի: Հայաստանը վերջերս է ստացել Հիդրոքլորֆտորածխածինների փուլային դուրսմղման պլանի III փուլի նախագծի հաստատումը Մոնրեալի արձանագրության իրականացման բազմակողմ հիմնադրամից, որը կնպաստի երկրում վերամշակման եւ վերականգնման կարողությունների զարգացմանը: Անհրաժեշտ վերամշակման եւ վերականգնման ստանդարտները կներդրվեն համապատասխան տեխնիկական կարողությունների ստեղծմանը զուգահեռ:

Ոչնչացման պարտավորություններ սահմանող դրույթները դեռեւս չեն ներդրվել օրենսդրությամբ մեջ, քանի որ երկիրը չունի անհրաժեշտ ոչնչացման հզորություններ: Բացի այդ, ոչնչացման նպատակով այլ երկրներ արտահանումը չի կարող համարվել կենսունակ տարբերակ՝ Հայաստանի չափազանց բարդ լոգիստիկայի եւ ցամաքային աշխարհագրության պատճառով:



Մտարկված չէ

- **Հսկման ենթակա նյութերի հոսակորուստների դիտանցման եւ տեսչական ստուգումների ընթացակարգերի սահմանում (Հոդված 23)**

ՕՔՆ կանոնակարգի 23-րդ հոդվածի համաձայն՝ ԵՄ ձեռնարկությունները պարտավոր են ձեռնարկել բոլոր հնարավոր նախագաղաչական միջոցները՝ կարգավորվող նյութերի հոսակորուստները եւ արտանետումները կանխելու եւ նվազագույնի հասցնելու համար: Մասնավորապես, սառնարանային, օդորակման կամ ջեռուցման սարքավորումները, ինչպես նաեւ կարգավորվող նյութեր պարունակող հրդեհաշիջման համակարգերը պետք է պարբերաբար ենթարկվեն հնարավոր հոսակորուստների առկայության ստուգման (սման ստուգումների հաճախականությունը սահմանված է 23-րդ հոդվածում):

Հայաստանում 8.1 հոդվածը պարունակում է հոսակորուստների դիտանցման վերաբերյալ հիմնական դրույթ, իսկ 4(8) հոդվածը նախատեսում է «կարգավորվող նյութերի գործածման բնագավառում հոսակորուստների դիտանցման կարգի, դիտանցման արդյունքների հաշվառման գրանցամատյանի վարման կարգի եւ ձեւի հաստատում»: Սակայն նշված կարգը մինչ օրս չի հաստատվել:

Մասնակիորեն մտարկված է

- **Հսկման ենթակա նյութերի շուկայահանման եւ օգտագործման արգելքի սահմանում բացառությամբ ռեգեներացված ՋՔՖԱ-ների, որոնք կարող են օգտագործվել որպես սառնազդակ մինչեւ 2030 թվականի հունվարի 1-ը (հոդվածներ 5 եւ 11)**

ԵՄ ՕՔՆ կանոնակարգի 5-րդ եւ 11-րդ հոդվածներն արգելում են կարգավորվող նյութերի շուկայահանումը՝ 2019 թվականից սկսած: Մոնրեալի արձանագրության 5-րդ հոդվածի տակ ընկնող երկրների (ներառյալ Հայաստանի) համար ՕՔՆ-ների եւ մասնավորապես վերականգնված ՋՔՖԱ-ների նկատմամբ նման արգելքը պետք է մտցվի ոչ ուշ, քան 2030 թվականի հունվարի 1-ը (ինչպես նշված է վերելում):

ՕՔՆ-ներին վերաբերող օրենսդրությունը չի պարունակում կարգավորվող նյութերի (ներառյալ ՋՔՖԱ-ները) «շուկայահանում» հասկացությունը, այլ կարգավորում է միայն արտադրությունը եւ ներմուծումը:

Հայաստանում ներկայումս չկան իրավակարգավորումներ, որոնք կկանոնակարգեն կարգավորող նյութերի շուկայահանումն ու օգտագործումը:

Մտարկված չէ

Եզրափակիչ նկատառումներ եւ առաջարկություններ ՕՔՆ-ների/F-գազերի կանոնակարգման վերաբերյալ

Ինչ վերաբերում է F-գազերի (հնարավոր) արտանետումներին, ապա անհրաժեշտ սահմանումներից շատերը, բայց ոչ բոլորը, արդեն իսկ ձեւակերպվել են: F-գազերի արտանետումները կանխելու՝ ԵՄ կանոնակարգով պահանջվող կանոններ չկան, իսկ հոսակորուստների ստուգման կանոնները միայն մասամբ գոյություն ունեն: Հակառակ համապատասխան պահանջներին՝ ո՛չ F-գազերի վերականգնումը, ո՛չ էլ որակավորված անձնակազմի վերապատրաստումն ու հավաստագրումը դեռեւս կարգավորված չեն: F-գազերի արտանետումների տվյալների հաշվետվության համակարգի հիմքերը եւս դեռեւս չեն մշակվել:



Դեռեւս չկան կարգավորվող նյութերի ոչնչացման, վերամշակման կամ վերականգնման վերաբերյալ կարգավորումներ: Չկան նաեւ կարգավորվող նյութերի շուկայահանման եւ օգտագործման կարգավորումներ:

Միեւնույն ժամանակ, անհասկանալի է մնում, թե արդյոք այս բոլոր ասպեկտները պահանջում են պարտադիր կարգավորում Հայաստանի կողմից, այսինքն՝ որքանով են դրանք գործնականում վերաբերելի վերջինիս:

Հաշվի առնելով վերը նշված թերությունները՝ խորհուրդ է տրվում փոփոխություններ կատարել «Օգոնային շերտի պահպանության մասին» օրենքում (կամ ընդունել վերը նշված հարցերի վերաբերյալ կառավարության լրացուցիչ որոշումներ)՝ օրենքով պահանջված սահմաններում:



5. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ առաջարկվող ՅԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ

Շրջակա միջավայրի եւ կլիմայական գործողությունների վերաբերյալ ՀՀԳՀ պահանջների համապարփակ մոտարկման գնահատումը ցույց է տալիս Հայաստանում Կլիմայի փոփոխության վերաբերյալ գործողությունների օրենսդրության եւ Շրջակա միջավայրի օրենսդրության յոթ ենթաօլորտներում մոտարկման հարցում առաջընթացի բավականին բազմազան պատկեր, որքանով որ այն ներառվել է ՀՀԳՀ III եւ IV հավելվածներում:

5.1 ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԱՄՓՈՓՈՒՄ)

Շրջակա միջավայրի եւ կլիմայի ոլորտում մոտարկման մանրամասն գնահատման ընդհանուր գնահատականը ցույց է տալիս, որ բոլոր ոլորտներում եւ ԵՄ շրջակա միջավայրի եւ կլիմայական օրենսդրության գրեթե բոլոր մասերի համար ստեղծվել են օրենսդրական ակտերի մշակման (եւ նաեւ դրանց մեծ մասամբ իրականացման) համար իրավասու մարմիններ, եւ առնվազն որոշ հիմնական ազգային օրենսդրությունն արդեն իսկ գործում է:

5.1.1 Ընդհանուր եզրակացություններ և առաջարկություններ Հայաստանում գործող շրջակա միջավայրի օրենսդրության վերաբերյալ

Կարելի է մի քանի ընդհանուր եզրակացություններ եւ առաջարկություններ անել շրջակա միջավայրի օրենսդրության վերաբերյալ, որոնք ազդում են դրա որակի վրա եւ հնարավոր է՝ խոչընդոտեն դրա կիրարկանը.

- **Բնապահպանական օրենսդրության փոխկապակցվածությունը**

Բոլոր բնապահպանական օրենքներն ու Կառավարության որոշումները գրեթե փոխկապակցված չեն եւ առանձին իրավական ակտեր են: Կան կապեր Կառավարության առաջնային եւ երկրորդային որոշումների միջեւ, բայց դրանից զատ օրենսդրությունը իրավաբանորեն գրեթե փոխկապակցված չէ: Սա հատկապես ակնհայտ է թափոնների վերաբերյալ («Թափոնների մասին» օրենք եւ «Աղբահանության եւ սանիտարական մաքրման մասին» օրենքներ), ինչպես նաեւ Տեսչության եւ վերահսկողության վերաբերյալ («Տեսչական ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենք եւ «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենք), բայց նաեւ ոլորտային օրենքների միջեւ ճշգրիտ կապերի բացակայության դեպքում. հաճախ կա մի կետ, որը պարզապես նշում է՝ «եւ այլ օրենսդրություն», որը թափանցիկ չէ եւ չի համապատասխանում իրավունքի գերակայության միջազգային չափանիշներին:

Ընդհանուր առմամբ, օրենսդիրը պետք է շատ ավելի մեծ ուշադրություն դարձնի ոչ միայն շրջակա միջավայրի ենթաօլորտում, այլ նաեւ հնարավոր փոխկապակցված իրավական ակտերի համակարգված իրավական համակարգի ստեղծմանը՝ կրկնություններից եւ հնարավոր հակասություններից խուսափելու համար:

- **Օրենքների իրավական ոճը**

ՀՀ շրջակա միջավայրի օրենքների (կամ օրենքների նախագծերի) բովանդակության մեծ մասը հիմնականում հռչակագրային եւ մասամբ նույնիսկ պատմողական կամ բացատրական ոճ ունի: Հնարավորինս պետք է խուսափել դրանից: Օրենսդրական գործընթացի ուշադրության կենտրոնում պետք է լինի **հստակ նորմատիվ կանոնների** ներմուծումը, որոնք կորոշեն՝ «Ո՞վ» **պետք է անի «Ի՞նչ», «Ե՞րբ» եւ «Ի՞նչու»**. այս հարցերը պետք է լավ թիրախավորված լինեն, այլ



ոչ թե «ԻՆՉՈՒ»-ն, որը պետք է քննարկվի քաղաքականության փաստաթղթերում կամ նոր օրենսդրության բացատրական նշումներում:

Շրջակա միջավայրի հրահանգների անկյունաքարը այն դրույթներն են, որոնք անձանց եւ մարմիններին տալիս են ճշգրիտ իրավունքներ եւ պարտականություններ (ոչ միայն լիազորություններ): Նման կետերը պետք է շատ ուշադիր մոտարկվեն, որպեսզի իշխանությունները, ինչպես նաեւ սովորական մարդիկ, կարողանան որոշել իրենց իրավունքների ամբողջ ծավալը եւ ճիշտ կերպով հասկանալ իրենց պարտականությունները:

Ընդհանուր առմամբ, պետք է նկատի ունենալ, որ մշակված բոլոր իրավական կանոնները **կիրառելի են** (գործնական եւ իրատեսական) եւ **կիրարկելի, թափանցիկ** (հստակ եւ ճշգրիտ ձեւակերպումներով), **հետեւողական** եւ **համաչափ՝ նպատակին** համեմելու տեսանկյունից: Ամենահավակնոտ եւ առաջադեմ օրենքն էլ ոչինչ չարժե, եթե այն չի կարող իրականացվել բարձր պահանջների, բարդության, անիրատեսական նպատակների, ցածր ինստիտուցիոնալ կարողությունների եւ այլնի պատճառով. ուստի իրավական ակտերում մարտահրավեր նետող պահանջները կատարելու համար պետք է օգտագործվեն անցումային կետեր:

- **Սահմանումներ**

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ԵՄ օրենսդրության տերմինաբանության օգտագործմանը ԵՄ հրահանգներում եւ կանոնակարգերում: Մեծ մասը լավ է ներառված Հայաստանի օրենսդրության մեջ (կամ հարմարեցված է ազգային համատեքստին): Սա հատկապես վերաբերում է նոր իրավական հասկացություններին, ինչպիսիք են ինտեգրված բնապահպանական թույլտվությունները կամ բնապահպանական պատասխանատվությունը: Պետք է ուշադրություն դարձնել նաեւ, որ սահմանվեն միայն այն տերմինները, որոնք հետագայում կօգտագործվեն համապատասխան օրենքի հիմնական մասում (օրինակ՝ նույնիսկ լավ մշակված Ջրային օրենսգրքում սահմանվում են տերմիններ, որոնք հետագայում ընդհանրապես չեն օգտագործվում տեքստի հիմնական մասում):

- **Օրենքների կառուցվածքը / տեխնիկական հավելվածները**

Եթե իրավական տեսանկյունից հնարավոր է, օրենքների (եւ Կառավարության որոշումների) ընթեռնելիությունը պետք է ապահովվի եւ մասամբ բարելավվի՝ օգտագործողին հարմար նորմատիվ տեքստեր ապահովելու համար: Ավելի մեծ իրավական տեքստերը պետք է բաժանվեն գլուխների, եւ հատկապես տեխնիկական հավելվածների օգտագործումը պետք է հաշվի առնվի օրենսդրական աշխատանքներում (ինչպես դա արվում է ԵՄ-ում), որպեսզի չխառնվեն նորմատիվ դրույթները եւ մեծ տեխնիկական մանրամասները կամ ստանդարտները: Այսպիսով, Հայաստանի Կառավարության շատ որոշումներում դա արդեն արվում է:

Մոտարկման առաջընթացի ձեռքբերումների վերաբերյալ լավ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է անել ոչ թե ընդհանուր, այլ **ուլորտային կարճ եզրակացություններ**: Կլիմայի փոփոխության գործողությունների ձեռքբերումներն ու թերությունները քննարկվում են հաջորդ ելնթացվում:

5.1.2 Շրջակա միջավայրի կառավարում եւ շրջակա միջավայրի ինտեգրում քաղաքականության այլ ոլորտներ

Շրջակա միջավայրի լավ կառավարման ոլորտում զգալի առաջընթաց է գրանցվել ՇՄԱԳ-ի եւ ՌԷԳ-ի (ռազմավարական Էկոլոգիական գնահատման) հրահանգի պահանջների մոտարկման ուղղությամբ: Այնուամենայնիվ, այստեղ հատուկ ուշադրություն են պահանջում երկու ասպեկտներ. ընդհանրապես նախատեսված չէ որեւէ սերինինգի գործընթացի փուլ՝ փոքր



Նախագծերի եւ պլանների (ԵՄ II հավելվածի նախագծերում՝ Հայաստանում B կատեգորիայի նախագծերում) ՇՄԱԳ-ի եւ ՌԷԳ-ի անհրաժեշտությունը որոշելու համար՝ ամեն յուրաքանչյուր դեպքի համար առանձին: Փոխարենը, նույնիսկ շատ փոքր նախագծերի եւ շրջակա միջավայրի հետ կապված բոլոր «հիմնարար փաստաթղթերի» համար ՇՄԱԳ-ն եւ ՌԷԳ-ը պարտադիր են Հայաստանում: Սա կասկածներ է առաջացնում պատշաճ իրականացման վերաբերյալ, քանի որ եւ՛ ՇՄԱԳ-ն, եւ՛ ՌԷԳ-ն բարդ գործընթացներ են: Երկրորդ, մի փոքր անհասկանալի հարցն այն է, թե որքանով ՇՄԱԳ/ՌԷԳ եզրակացությունները կարող են ենթարկվել դատական վերանայման՝ որպես վարչական ակտեր: Օրենսդրությունը մինչ այժմ ճշգրիտ չէ:

Ինչ վերաբերում է տեղեկատվության հասանելիությանը, ապա, կարծես թե, «Տեղեկատվության հասանելիության մասին» ընդհանուր եւ լայնածավալ օրենքը, որը լավ կարգավորում է նաեւ ընթացակարգերը, ներառում է շրջակա միջավայրի վերաբերյալ բոլոր տեսակի տեղեկատվությունը, այնպես որ հայ օրենսդիրը անհրաժեշտություն չի տեսել ընդունել «Շրջակա միջավայրի տեղեկատվության հասանելիության մասին» հատուկ օրենք: Պետք է դիտարկել, թե արդյոք լայնածավալ օրենքը լավ է կիրառվում՝ պահանջի դեպքում շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը երաշխավորելու համար:

Ինչ վերաբերում է 2003/35/ԵՀ հրահանգին, որը վերաբերում է որոշակի բնապահպանական պլանների եւ ծրագրերի կազմման գործընթացին հանրային մասնակցությանը, ինչպես նաեւ ինտեգրված թույլտվությունների տրամադրմանը, օդի, ջրի (նիտրատների նկատմամբ խոցելի գոտիների գործողությունների ծրագիր) եւ թափոնների ոլորտներում նման պլաններ դեռեւս նախատեսված չեն, ինչպես նաեւ դեռեւս չկա ինտեգրված բնապահպանական թույլտվություն: Հետեւաբար, այս Հրահանգի պահանջները դեռեւս մոտարկված չեն:

Դեռեւս չկա օրենսդրություն, որը կներառի շրջակա միջավայրի պատասխանատվության մասին հրահանգի պահանջները: Սահմանումների մեծ մասը դեռեւս ուժի մեջ չէ կամ լավ համաձայնեցված չէ (օրինակ՝ շրջակա միջավայրի վնասի երեք տարբեր տեսակները): Վնասը Հայաստանում սխալմամբ ընկալվում է որպես խախտում կամ նույնիսկ պարզապես ազդեցություն շրջակա միջավայրի վրա: Վնասը Հայաստանում հիմնականում պատժվում է (վարչական խախտում կամ քրեական պատիժ) կամ ֆինանսապես փոխհատուցվում է, բայց այստեղ չկան դրույթներ «վերականգնման» եւ հնարավոր վերականգնման միջոցառումների վերաբերյալ, ինչպես որ նպատակ ունի շրջակա միջավայրի պատասխանատվության մասին հրահանգը: Վթարների եւ միջադեպերի դեպքում պատասխանատվություն չկա, վտանգավոր գործունեության համար «խիստ պատասխանատվություն» չկա, ՀԿ-ները իրավունք չունեն շրջակա միջավայրի պատասխանատվության վերաբերյալ դատական հայց ներկայացնելու, ինչպես նաեւ մի շարք այլ ասպեկտներ (ապահովագրություն, հայցի եւ վնասի միջեւ պատճառահետեւանքային կապ, բազմակողմանի պատճառահետեւանքային կապ, հնարավոր արդարացումներ):

Առաջարկվում է մշակել նոր «Բնապահպանական վնասի եւ պատասխանատվության մասին» օրենք եւ համապատասխանաբար փոփոխել կամ հանել գործող օրենսդրությունը՝ ոլորտային օրենքներում օգտագործվող տերմինաբանության վերաբերյալ: Շրջակա միջավայրի պատասխանատվության մասին օրենքը կլինի հորիզոնական օրենք, որը իրավականորեն կապված կլինի Հայաստանի այլ ոլորտային բնապահպանական օրենքների հետ:

5.1.3 Օդի որակը

Ինչ վերաբերում է օդի որակի վերաբերյալ ԵՄ երկու հրահանգներին, որոնք վերջերս միավորվել են ԵՄ-ում (տե՛ս վերելում, գլուխ 3.2.2) եւ ուժի մեջ են մտնելու 2026 թվականի դեկտեմբերի 12-ից, ապա Հայաստանում իրավական իրավիճակը բավարար չէ: Գործող օրենսդրությունը չի



օգտագործում հրահանգների հիմնական տերմինաբանությունը, ինչպես նաեւ հրահանգներում օգտագործվող հայեցակարգային մոտեցումները (ազլումերացիաների կամ օդի որակի գնահատման գոտիների դասակարգում, վերին եւ ստորին գնահատման շեմեր, օդի որակի ծրագրեր եւ կարճաժամկետ գործողությունների ծրագրեր, մաքուր օդի որակի գնահատման համակարգ, հանրության տեղեկացվածվություն օդի որակի տվյալների վերաբերյալ):

Հետեւաբար, խստորեն խորհուրդ է տրվում հիմնարար կերպով վերանայել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» գործող օրենքը, լիովին ներառել ԵՄ-ում օգտագործվող հայեցակարգային մոտեցումը եւ տերմինաբանությունը եւ, հետեւաբար, ապահովել ամուր իրավական հիմք ցանկացած ենթաօրենսդրական ակտի համար: Որպես երկրորդ քայլ, պետք է պատրաստվեն անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտեր (կառավարության որոշումներ):

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի ուշադրության կենտրոնում պետք է լինի օդի որակը եւ կամ ընդհանրապես չկենտրոնանալ արդյունաբերության արտանետումների չափորոշիչների վրա, կամ առանձին գլխում ներառել դրանք. դրանք շատ լավ կարող են ներառվել «Ինտեգրված շրջակա միջավայրի թույլտվությունների եւ վերահսկողության մասին» նոր օրենքի շրջանակներում:

«Որոշակի հեղուկ վառելիքներում ծծմբի պարունակության վերաբերյալ» հրահանգը, կարծես, մասամբ իրականացվում է առնվազն ԿՌ-ի միջոցով: Այնուամենայնիվ, ԿՌ-ն չի պարունակում ծծմբի պարունակության որել է սահմանափակում եւ որել է արգելք, ինչպես պահանջվում է ԵՄ Հրահանգով: Այն պետք է վերանայվի:

Հայաստանում բենզինի՝ պահեստավորման եւ տերմինալներից մինչեւ սպասարկման կայաններ բաշխման հետեւանքով առաջացող ցնդող օրգանական միացությունների արտանետումների վերաբերյալ (Հրահանգ 94/63/ԵՀ) որել է մոտարկման ջանքեր ընդհանրապես տեսանելի չեն: Այս թեման պետք է ուշադրության արժանանա ԿՌ-ի կողմից: Նույնիսկ պարզ չէ, թե որ մարմինը կարող է պատասխանատու լինել այս թեմայի համար:

Ներկերում եւ լաքերում ցնդող օրգանական միացությունների վերաբերյալ 2004/42/ԵՄ հրահանգի պահանջները լավ մոտարկվել են ԿՌ-ի միջոցով, եւ հետագա իրավական գործողությունների կարիք չկա:

5.1.4 Ջրի որակը եւ ջրային պաշարների կառավարումը

ՀՀ օրենսդրությունը (հատկապես Ջրային օրենսգիրքը) լավ է սահմանում ջրային ռեսուրսների կառավարման լիազորությունները՝ հիմնվելով ջրավազանային կառավարման տարածքների վրա: Ջրավազանային կառավարման պլանների կազմումը իրավականորեն կարգավորվում է, ներառյալ պլանների բովանդակությունը, մեծ մասամբ նաեւ հանրության մասնակցության հարցերը, ինչպես նաեւ մոնիթորինգի գործունեությունը: Ֆորմալ առումով այն կարելի է համարել գրեթե ամբողջությամբ իրավականորեն մոտարկված:

Այնուամենայնիվ, պետք է նաեւ ընդունել, որ որոշակի խնդիրներ դեռեւս լուծման կարիք ունեն՝ իրականացումը բարելավելու համար. Մասնավորապես, ջրավազանային կառավարման մարմինները դեռեւս լիովին չեն հասել այն նպատակներին, որոնց համար ստեղծվել են, քանի որ գործնականում նրանց գործառույթները մեծ մասամբ սահմանափակվում են ջրօգտագործման թույլտվությունների տրամադրմամբ: Ավելին, հանրային իրազեկվածության եւ ըմբռնման բարձրացմանն ուղղված անբավարար ջանքերը հանգեցնում են ջրի խնայողության եւ արդյունավետ ջրօգտագործման միջոցառումների սահմանափակ իրականացմանը համայնքային, ձեռնարկությունների, տնային տնտեսությունների եւ անհատական



մակարդակներում: Ցավոք, ի հեճուկս գործող օրենսդրության եւ կարգավորող շրջանակների, պետք է նշել, որ դեռեւս առկա են մի շարք լուրջ խնդիրներ: Դրանց լուծումը կարող է պահանջել օրենսդրական վերանայումներ եւ, հնարավոր է, ջրային ռեսուրսների դիտանցման համակարգի զարգացման համար հիմնավոր ռազմավարության մշակում եւ ընդունում:

Հեղեղումների մասին հրահանգի ՀՀԳՀ պահանջներին մոտարկումը խառը պատկեր է տալիս: Մի կողմից, օգտագործվում է Հեղեղումների մասին հրահանգի տերմինաբանությունը, եւ ԵՄ-ում օգտագործվող հասկացությունները (հեղեղումի նախնական ռիսկի գնահատում, հեղեղումի վտանգի ենթակա տարածքների քարտեզներ, հեղեղումի ռիսկային տարածքների քարտեզներ, հեղեղումի ռիսկի կառավարման պլաններ) առկա են: Սակայն օրենսդրությունը բաց է թողնում այս բոլոր փաստաթղթերի պատրաստման հստակ պարտականությունները եւ մասամբ նաեւ դրանց բովանդակությունը: Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է շատ ավելի ճշգրիտ պարզաբանել Աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) ոլորտում ներգրավված բոլոր դերակատարների դերերն ու պատասխանատվությունները, ներառյալ հեղեղումի ռիսկի կանխարգելման մեխանիզմներն ու գործիքները: Սա կարող է նաեւ պահանջել Ջրային օրենսգրքի եւ հեղեղումների հետ կապված գործող ԿՌ-ի վերանայում:

Քաղաքային կեղտաջրերի մաքրման վերաբերյալ, քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին հրահանգի որոշ համապատասխան ասպեկտներ մասամբ արտացոլված են ազգային օրենսդրական շրջանակում, այդ թվում՝ Ջրային օրենսգրքում եւ կեղտաջրերի արտանետման ստանդարտներին վերաբերող ԿՌ-ում: Այնուամենայնիվ, դեռեւս մնում են Էական բացթողումներ, քանի որ չկա ազլումերացիաների հստակ դասակարգում հիմնված բնակչության համարժեքի վրա, ինչպես սահմանված է հրահանգում, կեղտաջրերի ենթակառուցվածքների ժամկետները եւ աստիճանական իրականացման ծրագրերը չեն ներդաշնակեցվել հրահանգի պահանջների հետ, կեղտաջրերի թույլատրելի արտանետումների սահմանաչափերը դեռեւս հաստատված չեն, եւ ընդհանուր առմամբ, ինստիտուցիոնալ պատասխանատվությունը, ենթակառուցվածքային պլանավորումը եւ կարգավորող մարմինների կիրարկումը դեռեւս պարզ չեն: ՀՀԳՀ պահանջներից զատ, պետք է նշել, որ քաղաքային կեղտաջրերի վերաբերյալ մոնիթորինգի, հաշվետվությունների եւ համապատասխանության մեխանիզմները բավարար չափով մշակված կամ ստանդարտացված չեն ԵՄ պրակտիկայի համաձայն: Ընդհանուր առմամբ, կեղտաջրերի վերաբերյալ իրավական շրջանակը պետք է թարմացվի:

Մյուս կողմից, Հայաստանում խմելու ջրի որակի համար սահմանված չափանիշները լիովին համապատասխանում են ԵՄ խմելու ջրի մասին հրահանգով սահմանված չափանիշներին: Պետք է նաեւ նշել, որ ՀՀ օրենսդրությունը սահմանում է խմելու ջրի մատակարարման համակարգը շահագործող կազմակերպության կողմից խմելու ջրի որակի կանոնավոր դիտանցման պարտավորությունը:

Դժբախտաբար, Հայաստանում լաբորատորիաների տեխնիկական հագեցվածության առումով կան որոշակի բացթողումներ: Կա նաեւ զգալի թերություն խմելու ջրի որակի եւ դիտանցման արդյունքների վերաբերյալ տվյալների հրապարակման եւ մատչելիության հարցում, որոնք պետք է ապահովվեն խմելու ջրի մատակարարման կազմակերպության միջոցով, բայց ընդհանրապես չեն իրականացվում: Թափանցիկությունը բարձրացնելու եւ սպառողների համար հուսալի տեղեկատվության հասանելիությունն ապահովելու համար խորհուրդ է տրվում, որ համապատասխան մարմինները պարտավորեցնեն խմելու ջրի մատակարարման կազմակերպություններին մշակել եւ պահպանել կենտրոնացված, հանրությանը հասանելի թվային հարթակ, ինչպիսիք են նվիրված կայքը եւ/կամ բջջային հավելվածը:



Բացի այդ, պետք է լինեն ջրի որակի տվյալների ավելի հաճախակի թարմացումներ (օրինակ՝ ամսական կամ եռամսյակային), որոնք պետք է ուղեկցվեն կիրառման խիստ մեխանիզմներով՝ համապատասխանությունն ու տվյալների ճշգրտությունն ապահովելու համար:

Ինչ վերաբերում է Նիտրատների նկատմամբ խոցելի գոտիներում գյուղատնտեսական գործունեությունից առաջացող ջրի աղտոտմանը, տեսականորեն առկա են համապատասխան օրենսդրություն եւ իրականացման իրավասություններ: Իրավական առումով նաեւ լավ կերպով որոշված է, թե՛ ինչպես պետք է նույնականացվեն եւ սահմանազատվեն նման խոցելի գոտիների տարածքները: Այնուամենայնիվ, բոլոր իրականացման հարցերը համակցվել են ջրավազանային կառավարման պլանների իրականացման հետ, որոնք, ցավոք, արդյունավետություն չեն ցուցաբերել այս խնդիրների լուծման գործում: Բացի այդ, չկան օրենսդրությամբ նախատեսված խոցելի գոտիների համար նախատեսված գործողությունների պլաններ, ինչպես նաեւ «գյուղատնտեսական օրինակելի պրակտիկայի կանոնակարգեր»՝ ինչպես ԵՄ-ում Նիտրատներով աղտոտման կանխարգելման ստանդարտ գործիքները: Այսպիսով, ջրային օրենսդրությունը պետք է բարելավվի:

5.1.5 Թափոնների կառավարում

Գործում է թափոնների վերաբերյալ որոշակի ընդհանուր օրենսդրություն, սակայն հատկապես «Թափոնների մասին» օրենքը գրեթե ամբողջությամբ կենտրոնանում է լիազորությունների բաշխման վրա, որոնք պարզապես թվարկված են եւ շահագրգիռ կողմերի համար քիչ ճշգրիտ (նորմատիվ) իրավունքներ եւ պարտականություններ ունի: Բացի այդ, թափոնների նվազագույնի հասցնելու տնտեսական խթանները, ըստ էության, միայն նկարագրված են եւ չեն կարգավորվում:

«Թափոնների մասին» եւ «Աղբահանության մասին» օրենքներում նույն իրավական հարցի համար օգտագործվում են տարբեր իրավական տերմիններ (աղբ, թափոններ) (առկա է անհամապատասխանություն): Ինչպես վերելում նշվեց, թափոնների ժամանակակից կառավարման համակարգի շատ կարեւոր տարրեր դեռեւս պատշաճ կերպով չեն ներկայացված ոչ մի օրենքում: Հայաստանում գործնականում քաղաքային խառը թափոնները դասակարգվում են որպես վտանգավոր թափոններ (ըստ Բնապահպանության նախարարության 2006 թվականի N342 որոշման), ինչը թափոնների կառավարումը ԵՄ պահանջներին համապատասխան դարձնում է գործնականում անհնար (տե՛ս նաեւ ԵՄ ցանկը 2000/532/ԵՅ որոշման մեջ):

Խորհուրդ է տրվում միավորել երկու օրենքները (կամ առնվազն պատշաճ կերպով կապել դրանք), փոփոխել սահմանումները եւ ներառել հիմնական հանգուցային պարտավորությունները, ինչպես պահանջվում է «Թափոնների մասին» շրջանակային հրահանգով: Օրենքները, ներառյալ դրանց տարբեր իրականացման լիազորությունները (որոնք լավն են), ամեն դեպքում պետք է մանրակրկտորեն համապատասխանեցվեն միմյանց:

Ինչ վերաբերում է «Աղբավայրերի մասին» հրահանգին մոտարկմանը, Հայաստանը մեծ քայլ է կատարել առաջ՝ վերջին կառավարության որոշումների ընդունմամբ: Այնուամենայնիվ, դեռեւս կա անհամապատասխանություն «աղբավայր» հիմնական տերմինի օգտագործման հարցում, որը պետք է ավելի ճշգրիտ սահմանվի: Բացի այդ, դեռեւս չկա երեք տարբեր աղբավայրերի տեսակների դասակարգում (վտանգավոր թափոններ, ոչ վտանգավոր թափոններ, իներտ թափոններ): Հասկանալի է, որ տարբեր տեսակի աղբավայրեր ունենալու (կամ առնվազն տարբեր մասեր մեկ աղբավայրում) իրականացումը դժվար է, բայց առնվազն օրենսդրությունը պետք է նախատեսի հստակ իրավական տարբերակում եւ ապահովի, որ ապագայում նոր լիցենզավորված աղբավայրերը օգտագործվեն միայն այս տեսակի թափոններից որեւէ մեկի համար: Վերանայված



թափոնների մասին օրենսդրությունը կարող է նախատեսել անցումային դրույթներ իրականացման համար:

Միջնաժամկետ հեռանկարում պետք է խուսափել վտանգավոր եւ ոչ վտանգավոր թափոնները խառնելուց: Պետք է նաեւ նախատեսվեն հստակ միջոցառումներ՝ ժամանակացույցով, ցուցանիշներով եւ պատասխանատվությամբ, որոնք կուղղվեն կենսաբայթայվող թափոնների հեռացմանը եւ աստիճանաբար կապահովեն, որ դրանք այլեւս չտեղափոխվեն աղբավայրեր:

Սակայն հիմնական մարտահրավերը (ինչպես ԵՄ-ում) կլինի երկարաժամկետ հեռանկարում ապահովել, որ նախնական մշակումից առաջ ոչ մի թափոն չտեղափոխվի աղբավայր: Նման իրավական դրույթը կարող է ներառվել օրենսդրության մեջ՝ ներդրման անցումային շրջանի վերաբերյալ դրույթով (տե՛ս վերելում՝ աստիճանական մոտարկում): Արժեքի վերականգնման մեխանիզմը նույնպես պետք է ներդրվի աստիճանաբար, հավանաբար սկսելով վտանգավոր թափոնների հեռացումից:

Հանքարդյունաբերական թափոնների կառավարման վերաբերյալ Հայաստանի օրենսդրությունը շատ լավ է համապատասխանեցվել ՀԸԳՀ պահանջներին՝ Ընդերքի մասին օրենսգրքի 5.1 գլխի, 60.1 – 60.10 հոդվածների եւ այս թեմայի վերաբերյալ բազմաթիվ ԿՈ-ների միջոցով: Կան միայն մի քանի թերություններ, ինչպես նշված է վերելում: «Ընդերք» տերմինը նույնպես պետք է փոխարինվի «հանքարդյունաբերություն» տերմինով: Ինչպես նշված է այս զեկույցի նախաբանում, սա չի նշանակում, որ օրենսդրությունը նույնպես շատ լավ է կիրառվում եւ կիրարկվում:

5.1.6 Բնության պաշտպանություն

ՀՀ բնության պաշտպանության օրենսդրության դրույթները միայն մասամբ են համապատասխանում ՀԸԳՀ պահանջներին (եւ Բեռնի կոնվենցիային, որը վերաբերելի է այստեղ):

Բեռնի կոնվենցիայի համաձայն՝ Հայաստանը պարտավոր է որոշել եւ կառավարել «Էմերալդ տարածքներ» (որը համարժեք է ՀԸԳՀ-ում ԵՄ հրահանգներով պահանջվող «Natura 2000» տարածքներին):

Կարելի է, որ բնության պաշտպանության օրենսդրության մեջ ներառվի դրանց նշանակման եւ կառավարման հատուկ իրավական հիմք, ապա ընդունի կառավարման ընթացակարգերի եւ կառավարման (պլանավորման) միջոցառումների վերաբերյալ մանրամասն ենթաօրենսդրական ակտեր: Նշենք, որ Հայաստանում հայտնաբերվել է մինչեւ 30 թեկնածու զմրուխտե տարածքներ, սակայն համապատասխան ազգային ընթացակարգերի բացակայության պատճառով դրանք չեն կարող պաշտոնապես նշանակվել Բեռնի կոնվենցիայի քարտուղարության հետ համագործակցությամբ, եւ դրանց կառավարումը իրավական առումով անորոշ է:

Ինչ վերաբերում է տեսակների պահպանությանը, ապա գործող համակարգը ընդհանուր առմամբ պահպանում է Կարմիր գրքում թվարկված բոլոր տեսակները, սակայն բացակայում են ԵՄ օրենսդրությամբ նախատեսված հատուկ պահպանության միջոցառումները: Բացի այդ, դեռեւս չեն որոշվել ՀԸԳՀ-ի պահանջած չվող թռչունների ցանկերը:

Ընդհանուր առմամբ, եւ երկարաժամկետ հեռանկարում խորհուրդ կլինի ունենալ Բնության պահպանության մասին նոր համակցված օրենք, որը կպարունակի կենդանական եւ բուսական աշխարհի, բնակավայրերի եւ տեսակների վերաբերյալ դրույթներ (գրվիներ) եւ կապահովի զմրուխտե տարածքների պահպանության հիմքը: Երկարաժամկետ հեռանկարում Կարմիր գիրքը պետք է օգտագործվի միայն գիտական նպատակներով, ինչպես ԵՄ-ում է:



5.1.7 Արդյունաբերական աղտոտում եւ արդյունաբերական վտանգներ

ՀՀ օրենսդրությունը դեռեւս չի ընդունել «ինտեգրված բնապահպանական թույլտվությունների» ԵՄ հայեցակարգը, զոնե խոշոր արդյունաբերական կայանքների համար, ինչպես պահանջվում է Արդյունաբերական արտանետումների մասին հրահանգով: Դեռեւս չեն նշվել խոշոր կայանքներ, որոնք պետք է պահանջեն ինտեգրված բնապահպանական թույլտվություն (2012 թվականին կատարվել է ուսումնասիրություն, բայց արդյունքները, կարծես, այլեւս հասանելի չեն, եւ իրավիճակը, անշուշտ, փոխվել է այդ ժամանակվանից ի վեր):

ԵՄ սահմանումների, թույլտվության դիմումի եւ բովանդակության/պայմանի պահանջների վրա հիմնված ինտեգրված թույլտվությունների համակարգը դեռեւս իրավականորեն չի հաստատվել: Դրա փոխարեն դեռեւս կիրառվում է ոլորտային թույլտվությունների մոտեցումը (օդ, ջուր, թափոններ): Լավագույն հասանելի մոտեցումը սահմանվել է միայն օդի պահպանության ոլորտում, բայց այն չի օգտագործվում թույլտվության պայմանները որոշելու համար: 50 ՄՎտ-ից ավելի ջերմային հզորությամբ այրման կայանների համար արտանետումների սահմանային արժեքներ չեն ընդունվել, եւ ընդհանուր պարտադիր կանոնների կիրառման համար իրավական հիմք չկա: Արդյունաբերական կայանքների համար արտանետումների (դեպի օդ եւ ջուր) աստիճանական կրճատման համար նաեւ պլաններ/ծրագրեր չկան:

Համապատասխանության դիտանցումը եւ վերահսկողությունը բավականին ճշգրիտ են կարգավորվում, հատկապես տեսչական մեխանիզմների, ինչպես նաեւ թույլտվությունների հնարավոր կասեցման առումով: Իրավական առումով բացակայում են միայն «ինքնահսկման» կանոնները, որոնք համարվում են թույլտվությունների էական մաս:

Հաշվի առնելով այս իրավիճակը, հույժ խորհուրդ է տրվում քննարկել գերմանացի եւ հայ փորձագետների կողմից 2012 թվականին համատեղ մշակված «ինտեգրված բնապահպանական թույլտվությունների» վերաբերյալ նախագիծը: Օրենքի այդ նախագիծը փոփոխվել է այս զեկույցի հեղինակի կողմից եւ թարգմանվել է հայերեն: Այն պարունակում է բոլոր անհրաժեշտ դրույթները (ներառյալ հանրության մասնակցության վերաբերյալ դրույթները, ինչպես պահանջվում է 200/35/ԵՀ հրահանգով, տե՛ս 3.1.4 գլուխը) եւ կապը ՇՄԱԳ համակարգի եւ այլ թույլտվությունների հետ: Օրինագիծը ոչ միայն ներառում է խոշոր արդյունաբերական կայանքները, այլ նաեւ ներկայացնում է ինտեգրված, բայց պարզեցված բնապահպանական թույլտվություն նաեւ փոքր կայանքների համար, ինչպես դա արվում է ԵՄ շատ անդամ պետություններում:

«Աղետների ռիսկի կառավարման եւ բնակչության պաշտպանության մասին» նոր օրենքի նախագիծը, հավանաբար, կծառայի որպես ամուր հիմք՝ Սեւեոյի հրահանգով պահանջվող խոշոր արդյունաբերական վթարների հնարավոր հետեւանքները լուծելու համար: Օրենքի նախագիծը սահմանում է հստակ իրավասություններ բոլոր տեսակի ռիսկերի եւ աղետների կառավարման վերաբերյալ, եւ, հավանաբար (հուսով եմ), նաեւ բոլոր շահագրգիռ կողմերի միջեւ համակարգման որոշակի հիմնական մեխանիզմ: Այնուամենայնիվ, հույժ խորհուրդ է տրվում նոր օրենքում ներառել արդյունաբերական վթարների կանխարգելման եւ դրանց լուծման համար հատուկ կանոններ եւ գործիքներ: Սա ներառում է խոշոր արդյունաբերական կայանքների օպերատորների կողմից օգտագործվող վտանգավոր նյութերի տեսակի վերաբերյալ հաշվետվության պարտավորությունները, ինչպես նաեւ վթարների դեպքում պատշաճ հաշվետվության պարտավորությունները, ինչպես պահանջվում է ՀՀԳՀ-ով:

5.1.8 Քիմիական նյութերի կառավարում

Հայաստանում չկա օրենսդրություն, որը կծառայի Ռոտերդամի (նախնական տեղեկացված համաձայնության) կոնվենցիայի ազգային օրենսդրության մեջ ներդրմանը, չնայած Հայաստանը



այդ կոնվենցիայի կողմ է 2004 թվականից: «Քիմիական նյութերի մասին» նոր օրենքի նախագիծը (2022 թվականի դրությամբ) նախատեսված է անհրաժեշտ կանոնները ազգային օրենսդրության մեջ ներմուծելու համար, սակայն գնահատումը ցույց է տվել, որ այն թերի է: Օրենքի նախագիծը պետք է եապես վերանայվի՝ նախնական տեղեկացված համաձայնության կոնվենցիային համապատասխանելու համար: Կոնվենցիային համապատասխանեցնելու դեպքում, ԵՄ նախնական տեղեկացված համաձայնության կարգավորման պահանջներին համապատասխանեցումը, համաձայն ՀՀԳՀ-ի, կիրականացվի ավտոմատ կերպով:

Քիմիական նյութերի եւ խառնուրդների պատշաճ դասակարգումը, պիտակավորումը եւ փաթեթավորումը նույնպես դեռեւս կարգավորված չէ ՀՀ-ում: «Քիմիական նյութերի մասին» նոր օրենքի նախագիծը նախատեսված է ծառայելու առնվազն որպես իրավական հիմք դասակարգման, պիտակավորման եւ փաթեթավորման միջոցառումների վերաբերյալ կառավարության հետագա որոշման համար, ինչը լավ է: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է ոչ միայն ընդունել այդ նախագիծը, այլեւ մշակել քիմիական նյութերի հետ կապված բոլոր շահագրգիռ կողմերի դասակարգման, պիտակավորման եւ փաթեթավորման պարտավորությունների վերաբերյալ պատշաճ կառավարության որոշում՝ ՀՀԳՀ պահանջներին մոտարկելու համար:

5.1.9 Կլիմայի փոփոխությանն առնչվող գործողություններ

Կլիմայի փոփոխության դեմ պայքարի ոլորտում, նախեւառաջ, պետք է նշել, որ ԵՄ 6 իրավական ակտերից 5-ը այլեւս ուժի մեջ չեն, քանի որ դրանք իրավաբանորեն չեղյալ են հայտարարվել: ՀՀԳՀ IV հավելվածը պետք է համապատասխանաբար փոփոխվի: Հայաստանում ամեն դեպքում մոտարկվող հիմնական ակտերը պետք է լինեն միջազգային համաձայնագրերը (ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին կոնվենցիան գումարած Փարիզի համաձայնագիրը եւ Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրությունը՝ փոփոխված տարբերակով): ԵՄ կանոնակարգերը պետք է մոտարկվեն այնքանով, որքանով դա իմաստ ունի Հայաստանի համար եւ իրավաբանորեն հնարավոր լինի:

«Օզոնային շերտի պահպանության մասին» օրենքը եւ «Կլիմայի մասին» օրենքի նախագիծը, որը դեռեւս քննարկման փուլում է, Հայաստանում այս ոլորտի հիմնական իրավական գործիքներն են: Նշենք, որ «Կլիմայի մասին» օրենքի նախագիծը միայն որոշ չափով է «օրենքի» բնույթ կրում, քանի որ այն գրեթե նորմատիվ տարրեր չունի, այլ հաճախ զուտ նկարագրական է (ավելի շուտ կարդացվում է որպես քաղաքականության փաստաթուղթ), ներառում է բազմաթիվ իրավասություններ, բայց միայն որոշակի իրավական հիմք հետագա օրենսդրության համար: Հետեւաբար այն կարող է դիտարկվել միայն որպես մեկնարկային կետ: Պետք է դեռ անել բավականին շատ աշխատանք, ինչպիսիք են որոշակի արդյունաբերական կայանքների եւ դրանց ջերմոցային գազերի արտանետումների նույնականացման եւ վերահսկողության համակարգի ստեղծումը, համապատասխան ընկերություններից ջերմոցային գազերի արտանետումների դիտանցումը, հաշվետվությունը եւ ստուգումը (ներառյալ արտանետումների հաշվետվությունները), ջերմոցային գազերի գույքագրման հստակ կայացումը եւ պահպանումը, ինչպես նաեւ ջերմոցային գազերի արտանետումների վերահսկման վերաբերյալ քաղաքականության եւ միջոցառումների հետագա առաջընթացը:

«Կլիմայի մասին» օրենքի նախագիծն ուղեկցում են նաեւ այլ հայկական օրենքների մի շարք վերանայումներ, մասնավորապես՝ կազմակերպչական հարցերի եւ ընդհանուր հորիզոնական ասպեկտների վերաբերյալ (օրինակ՝ կրթություն, գիտական գործունեություն, ՇՄԱԳ եւ վերահսկողություն): Այնուամենայնիվ, այս առաջարկվող փոփոխությունները դեռեւս չեն հրապարակվել, եւ պարզ չէ, թե որքանով դրանք կնպաստեն ջերմոցային գազերի արտանետումների վերահսկման վերաբերյալ ՀՀԳՀ մոտարկման հարցերին: Այնուամենայնիվ,



պետք է նշել, որ պետք է մշակվեն մի շարք ենթաօրենսդրական ակտեր, որոնք կսահմանեն ինչպես մասնավոր, այնպես էլ պետական հատվածի կոնկրետ պարտավորությունները՝ «Կլիմայի մասին» օրենքի (սախագծի) իրականացման համար:

Այս զեկույցի հեղինակները լիովին գիտակցում են Հայաստանի օրենսդրական հիերարխիան եւ այն փաստը, որ հաճախ օրենքներն ունեն բավականին հռչակագրային կամ նույնիսկ պատմողական բնույթ եւ կիրառելի են դառնում միայն հետագա երկրորդական օրենսդրության միջոցով: Այնուամենայնիվ, սա համարվում է Հայաստանի առաջնային բնապահպանական օրենսդրության ընդհանուր թերություն (տե՛ս վերելում, գլուխ 5.1.1):

Ինչ վերաբերում է F-գազերի (հևարավոր) արտանետումներին (ինչպես նշված է Մոնրեալի արձանագրության եւ ՀԸԳՀ IV հավելվածում ներառված երկու իրավական ակտերի շրջանակներում), «Օզոնային շերտի պահպանության մասին» օրենքում պետք է ավելացվեն որոշ սահմանումներ: Պետք է կարգավորվեն F-գազերի արտանետումների կանխարգելման, դրանց վերականգնման, իրավասու անձնակազմի վերապատրաստման եւ հավաստագրման վերաբերյալ կանոնները, ինչպես նաեւ պետք է ներդրվի F-գազերի արտանետումների վերաբերյալ հաշվետվությունների համակարգ (որոշակի կայանքների միջոցով): Բացակայում են նաեւ վերահսկվող նյութերի վերամշակման կամ վերականգնման, ինչպես նաեւ վերահսկվող նյութերի շուկայավարման եւ օգտագործման վերաբերյալ ընդհանուր դրույթները:

Այնուամենայնիվ, հիդրոքլորֆտորածխածինների վերամշակման եւ վերականգնման վերաբերյալ անհրաժեշտ կանոնները կներդրվեն համապատասխան հզորությունների ստեղծման հետ մեկտեղ՝ վերջերս հաստատված հիդրոքլորֆտորածխածինների փուլային դուրսմղման կառավարման պլանի III փուլի սախագծի շրջանակներում:

Մինչ օրս օրենսդրության մեջ չեն ներդրվել ոչնչացման պարտավորությունների վերաբերյալ կանոններ, քանի որ երկրում ոչնչացման հզորություններ չկան (ինչը մի քանի անգամ նշվել է տարբեր հանդիպումների եւ քննարկումների ժամանակ): Բացի այդ, ոչնչացման նպատակով այլ երկրներ արտահանումը չի կարող դիտարկվել որպես կենսունակ տարբերակ՝ Հայաստանի չափազանց բարդ լոգիստիկայի եւ ցամաքային աշխարհագրական դիրքի պատճառով:

Հաշվի առնելով նշված թերությունները, հույժ խորհուրդ է տրվում վերանայել «Կլիմայի մասին» օրենքի սախագիծը եւ պատրաստել անհրաժեշտ կառավարության որոշումներ, ինչպես նաեւ փոփոխություններ կատարել «Օզոնային շերտի պահպանության մասին» օրենքում (կամ ընդունել վերը նշված ասպեկտների վերաբերյալ կառավարության լրացուցիչ որոշումներ)՝ օրենքով սահմանված չափով:

5.2 ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԵՏԱԳՎ ՔԱՅԼԵՐ

Ստորեւ ներկայացված են մի քանի առաջարկներ՝ շրջակա միջավայրի եւ կլիմայի փոփոխության գործողությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության քաղաքականությունները մշակողների եւ օրենսդիր մարմնի կողմից ձեռնարկվելիք հաջորդ քայլերի վերաբերյալ՝ ՀԸԳՀ պահանջներին լիարժեք համապատասխանության հասնելու համար:

Որպես հաջորդ քայլերից առաջինը՝ պետք է մշակվի նոր եւ շատ ավելի հստակ ՀԸԳՀ ճանապարհային քարտեզ, որը նախատեսում է ձեռնարկվելիք ճշգրիտ գործողություններ, իրատեսական ժամանակացույց, նվաճումների (միջանկյալ եւ համապատասխան) ցուցանիշներ, սախագծի մշակման համար պատասխանատու դերակատարներ Կառավարությունից եւ, ըստ հևարավորության, նաեւ դոնորային անհրաժեշտ աջակցություն:



5.2.1 Շրջակա միջավայրի կառավարում եւ շրջակա միջավայրի ինտեգրում քաղաքականության այլ ոլորտներ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» օրենքում առաջարկվող փոփոխությունները (որպեսզի ներառվի B կատեգորիայի գործունեության համար սկրինինգային փուլ եւ սահմանվեն չափանիշներ՝ որոշելու այն «հիմնարար փաստաթղթերը», որոնք կարող են եական ազդեցություն չունենալ շրջակա միջավայրի վրա եւ, հետեւաբար, չեն պահանջում ՇՄԱԳ/ռազմավարական շրջակա միջավայրի գնահատում) կարող են կատարվել ցանկացած պահի:

Ինչ վերաբերում է շրջակա միջավայրի պատասխանատվությանը եւ վնասին, խորհուրդ է տրվում մոտ ապագայում ստանալ միջազգային դոկորների աջակցությունը՝ իրավական փորձագիտությամբ, որպեսզի **համատեղ մշակվի** «Բնապահպանական պատասխանատվության եւ վնասի վերականգնման մասին» նոր օրենք: Հաշվի առնելով հեղինակների փորձը այս թեմայի վերաբերյալ, սա կարող է տեսել մոտ 10-12 ամիս: Այլընտրանքորեն, այս թեմայի վերաբերյալ կմշակվի առնվազն հատուկ գլուխ՝ այն ներառելու «Բնապահպանական հսկողության մասին» օրենքում: Այնուամենայնիվ, մի շարք այլ օրենքներում վնասի, պատասխանատվության, փոխհատուցման եւ այլնի հետ կապված տերմինաբանությունը պետք է համապատասխանաբար ճշգրտվի: Սա պետք է լինի գործողությունների առաջնահերթություն, քանի որ մինչ օրս այս թեմայի շուրջ գրեթե ոչ մի մոտարկում չի իրականացվել:

5.2.2 Օդի որակը

Մոտ ապագայում պետք է իրականացվի նաեւ **«Մթնոլորտային օդի պահպանության մասին» գործող օրենքի ամբողջական վերանայում**՝ համապատասխան միջազգային դոկորների աջակցությամբ: Այս աջակցությունը պետք է ներառի ինչպես իրավական, այնպես էլ տեխնիկական փորձագիտություն (ինչպես մշակել գործող օդի որակի դիտանցման համակարգ): ԵՄ օրենսդրության մեջ օգտագործվող տերմինաբանությունը պետք է լիովին համապատասխանեցվի, մշակվեն անհրաժեշտ պլանների (հանրային մասնակցությամբ) իրավական հիմքերը, իսկ հետագայում այդ պլանները պատրաստվեն: Նման վերանայումը եւ պլանների պատրաստումը կարող է տեսել մոտ մեկ տարի: Բնականաբար, լավ կլիմեր, եթե նման աջակցությունը կարողանար ուղեկցվել օդի որակի դիտանցման համար որոշակի տեխնիկական սարքավորումների տրամադրմամբ:

Բենգալցակայաններում ցնդող օրգանական միացությունների (SOU) հարցերի վերաբերյալ կառավարության որոշումը կարող է կայացվել միայն հայ օրենսդիրների կողմից:

5.2.3 Ջրի որակ եւ ջրային պաշարների կառավարում

Ջրային ոլորտում առաջին քայլը պետք է լինի **ջրի ընդհանուր ռազմավարության մշակումը**՝ օրենսդրության եւ դրա իրականացման մեջ առկա թերությունները լուծելու համար: Ուշադրության կենտրոնում պետք է լինեն ջրավազանային կառավարման պլանների ներկայիս օգտագործումը եւ բովանդակությունը, ինչպես նաեւ դրանց կապը ջրային թույլտվությունների հետ, միջազգային գետավազանների սահմանների հստակեցումը, համատեղ ջրային ռեսուրսների կառավարումը: Նման ռազմավարության մեջ պետք է լուծվեն կեղտաջրերի մաքրման հարցերը, ինչպես նաեւ նիտրատներով աղտոտվածությունը՝ ավելի ճշգրիտ որոշելու համար, թե ինչպես վերանայել Ջրային օրենսգիրքը եւ ընդունել անհրաժեշտ կառավարության որոշումներն ու գործիքները, ինչպիսիք են ջրային կառավարման պլանները եւ գյուղատնտեսական օրինակելի գործելակերպի վարքականոնը: Հետագայում պետք է նախաձեռնվեն անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները:



5.2.4 Թափոնների կառավարում

Թափոնների ոլորտում անհրաժեշտ է առաջնահերթ կարգով կատարել **«Թափոնների մասին» օրենքի ամբողջական եւ հիմնարար վերանայում միջազգային դոնորների աջակցությամբ** (իրավաբանական եւ տեխնիկական փորձագիտական աջակցություն): Սահմանումներն ու գործիքները (օրինակ՝ թափոնների կառավարման պլան, թափոնների կանխարգելման ծրագիր, կենսաբանական թափոնների ռազմավարություն) պետք է օրենսդրության մեջ ներառվեն, թույլտվությունների համակարգը բարելավվի, ներդրվի թափոնների ավելի լավ դասակարգում, ներդրվի թափոնների վերաբերյալ տվյալների հավաքագրման համակարգ, օրենքը համապատասխանեցվի «Աղբահանության եւ սանիտարական մաքրման մասին» օրենքին եւ այլն:

Նման նախագծի շրջանակներում պետք է լուծվեն նաեւ աղբավայրերի մասին օրենսդրության մեջ անհրաժեշտ փոփոխությունները: Պետք է կենտրոնանալ իրատեսական օրենսդրության վրա՝ ապահովելու համար տարբեր տեսակի աղբավայրերի քայլ առ քայլ ներդրումը, որտեղ միայն մշակված թափոններն են հեռացվում, եւ կառավարման ծախսերը լավ փոխհատուցվում են, ի թիվս այլոց թափոնների վերականգնման եւ հեռացման գործունեության մեջ պոտենցիալ ներդրողներ ներգրավելու համար:

5.2.5 Բնության պաշտպանություն

Ինչ վերաբերում է բնության պաշտպանության օրենսդրությանը, կարճաժամկետ հեռանկարում պետք է իրավական հիմք լինի **«Էմերալդ տարածքների»** սահմանման համար, որը պետք է ներառվի օրենսդրության մեջ (հավանաբար՝ «Կենդանական աշխարհի մասին» օրենք) եւ մշակվեն ենթաօրենսդրական ակտեր երկուսի վերաբերյալ էլ, պետք է հաստատվեն «Էմերալդ տարածքների» սահմանման ընթացակարգը եւ այդ տարածքների պահպանության կառավարման կանոնները: Երկուսի համար էլ պահանջվում է **միջազգային փորձագետների աջակցություն**: Հայաստանում պահպանվող չվող թռչունների ցանկը պետք է պատրաստվի՝ համապատասխանեցնելով այն ԵՄ վայրի թռչունների մասին իրահանգի հավելվածին:

5.2.6 Արդյունաբերական աղտոտում եւ արդյունաբերական վտանգներ

«Ինտեգրված շրջակա միջավայրի թույլտվության եւ վերահսկողության մասին» օրենքի ներդրումը պետք է լինի օրենսդրական առաջնահերթություն, քանի որ դա պահանջում է հիմնարար փոփոխություն արդյունաբերական գործունեության համար ներկայիս «վարչաիրամայական» մոտեցման մեջ, եւ հաշվի առնելով, որ համատեղ մշակված օրենքի նախագծի տեքստն արդեն վերանայվել է: Այս օրենքի նախագծի հետագա ճշգրտումը եւ համապատասխանեցումը (եւ արտանետումների սահմանային արժեքների եւ մանրամասն ընթացակարգային քայլերի, ընդհանուր պարտադիր կանոնների եւ ԼՅՏ տեղեկատվական փաստաթղթերի օգտագործման վերաբերյալ ենթաօրենսդրական ակտերի հնարավոր լրացումները) պետք է իրականացվեն որպես առաջնահերթություն՝ **Էական իրավական եւ գործնական ազգային եւ միջազգային փորձագիտական աջակցությամբ**:

«Աղետների ռիսկերի կառավարման եւ բնակչության պաշտպանության մասին» օրենքի նախագիծը պետք է քննվի արդյունաբերական հնարավոր վթարների կանխարգելման եւ դրանց լուծման վերաբերյալ պատշաճ համակարգման մեխանիզմի առկայության տեսանկյունից: Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է օրենքում շատ ավելի ճշգրիտ կերպով պարզաբանել աղետների ռիսկերի կառավարման (ԱՌԿ) ոլորտում ներգրավված բոլոր դերակատարների դերերն ու պարտականությունները (սա վերաբերում է նաեւ, օրինակ, հեղեղումների ռիսկերին):



5.2.7 Քիմիական նյութերի կառավարում

«Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագիծը (որը պետք է նաեւ անդրադառնա խառնուրդներին) պետք է վերանայվի այնպես, որ այն պարունակի վերը նշված բոլոր համապատասխան ասպեկտներն ու ընթացակարգերը՝ նախնական տեղեկացված համաձայնության կոնվենցիայի եւ ԵՄ ԴՊՓ կանոնակարգի պահանջներին համապատասխանեցնելու վերաբերյալ: Թե որքանով է միջազգային փորձագիտությունը անհրաժեշտ սա աջակցելու համար, դժվար է գնահատել:

5.2.8 Կլիմայի փոփոխությանն առնչվող գործողություններ

Մենք խորհուրդ ենք տալիս վերանայել «Կլիմայի մասին» օրենքի նախագիծը՝ դրան ավելի նորմատիվ «իրավական» բնույթ հաղորդելու եւ համապատասխանաբար ուժեղացնելու համար: Որպես իրավական հիմք պետք է ավելացվեն մասնավոր հատվածի, ինչպես նաեւ իրավասու մարմինների պարտավորությունների (ոչ միայն լիազորությունների) վերաբերյալ առնվազն որոշ հիմնական դրույթներ:

«Օգոնային շերտի պահպանության մասին» օրենքը պետք է փոքր-ինչ փոփոխվի: ԵՄ ԹԱՅԵՔՍ աջակցության առաքելությունը կարող է լինել դոնորների աջակցության համապատասխան միջոց, քանի որ այս խնդիրը պահանջում է սահմանափակ քանակի լրացուցիչ փորձագիտական աջակցություն:



ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված I. ՀԱՎԵԼՎԱԾ III ՀՐԳՀ ԳԼՈՒԽ 3-ի (ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ)

Շրջակա միջավայրի կառավարում եւ շրջակա միջավայրի
ինտեգրում քաղաքականության այլ ոլորտներ

- «Շրջակա միջավայրի վրա որոշակի պետական եւ մասնավոր ծրագրերի ազդեցության մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 13-ի 2011/92/ԵՄ հրահանգ՝ փոփոխություններով
- «Շրջակա միջավայրի վրա որոշակի նախագծերի եւ ծրագրերի ազդեցության գնահատման մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2001 թվականի հունիսի 27-ի 2001/42/ԵՅ հրահանգ
- խորհրդի 90/313/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հանրային հասանելիության մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2003 թվականի հունվարի 28-ի 2003/4/ԵՅ հրահանգ
- «Շրջակա միջավայրին վերաբերող որոշակի նախագծերի եւ ծրագրերի կազմման մասով հանրային մասնակցությունը սահմանելու եւ հանրային մասնակցության եւ արդարադատության մատչելիության վերաբերյալ խորհրդի 85/337/ԵՏՀ եւ 96/61/ԵՅ հրահանգները փոփոխելու մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2003 թվականի մայիսի 26-ի 2003/35/ԵՅ հրահանգ
- «Շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման եւ վերականգնման մասով բնապահպանական պատասխանատվության մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2004 թվականի ապրիլի 21-ի 2004/35/ԵՅ հրահանգ՝ փոփոխություններով

Օդի որակը

- «Եվրոպայի համար մթնոլորտային օդի որակի եւ ավելի մաքուր օդի մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2008 թվականի մայիսի 21-ի 2008/50/ԵՅ հրահանգ

(սույն հրահանգն ուժը կորցրած է ճանաչվել «Եվրոպայի համար շրջակա միջավայրի օդի որակի եւ ավելի մաքուր օդի մասին» 2024(2881) հրահանգով, որն ուժի մեջ է մտնում 2026 թվականի դեկտեմբերի 12-ից)

- «Մթնոլորտային օդում արսենիումի, կադմիումի, սնդիկի, նիկելի եւ արոմատիկ բազմացիկլիկ ածխաջրածինների մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի 2004/107/ԵՅ հրահանգ

(սույն հրահանգն ուժը կորցրած է ճանաչվել «Եվրոպայի համար շրջակա միջավայրի օդի որակի եւ ավելի մաքուր օդի մասին» 2024(2881) հրահանգով, որն ուժի մեջ է մտնում 2026 թվականի դեկտեմբերի 12-ից)



- «Որոշակի հեղուկ վառելիքներում ծծմբի պարունակության նվազեցման մասին» 93/12/ԵՏՀ հրահանգը փոփոխող՝ խորհրդի 1999 թվականի ապրիլի 26-ի 1999/32/ԵՅ հրահանգ՝ փոփոխություններով

(Այլեւ ուժի մեջ չէ, նորը՝ (ԵՄ) 2016/802 հրահանգ)

- «Բենզինի պահման եւ բեռնափոխման կայաններից լցակայաններ դրա մատակարարման արդյունքում առաջացող՝ ցնդող օրգանական միացությունների (SOU) արտանետումների նկատմամբ վերահսկողության մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 1994 թվականի դեկտեմբերի 20-ի 94/63/ԵՅ հրահանգ՝ փոփոխություններով

(կոնսոլիդացված տարբերակը՝ 2019 թվականի հուլիսի 26-ի դրությամբ)

- 1999/13/ԵՅ հրահանգը փոփոխող՝ «Որոշակի ներկերում, լաքերում եւ փոխադրամիջոցների երեսմշակման ապրանքներում օրգանական լուծույթների օգտագործման հետեւանքով ցնդող օրգանական միացությունների արտանետումների սահմանափակման մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2004 թվականի ապրիլի 21-ի 2004/42/ԵՅ հրահանգ

(կոնսոլիդացված տարբերակը՝ 2021 թվականի հուլիսի 16-ի դրությամբ)

Ջրի որակը եւ ջրային պաշարների կառավարումը

- Ջրային քաղաքականության ոլորտում Համայնքի գործողությունների շրջանակը սահմանող՝ Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2000 թվականի հոկտեմբերի 23-ի 2000/60/ԵՅ հրահանգ՝ փոփոխություններով

- «Հեղեղումների ռիսկերի գնահատման եւ կառավարման մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 23-ի 2007/60/ԵՅ հրահանգ

- «Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին» խորհրդի 1991 թվականի մայիսի 21-ի 91/271/ԵՏՀ հրահանգ՝ փոփոխություններով

Ուժը կորցրած է ճանաչվել 2027 թվականի օգոստոսի 1-ից՝ «Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2024 թվականի նոյեմբերի 27-ի 2024/3019 հրահանգով

- «Մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի մասին» խորհրդի 1998 թվականի նոյեմբերի 3-ի 98/83/ԵՅ հրահանգ՝ փոփոխություններով

(Այլեւ ուժի մեջ չէ, նորը՝ (ԵՄ) 2020/2184 հրահանգ)

- «Գյուղատնտեսական աղբյուրներից արտանետվող նիտրատների հետեւանքով առաջացող աղտոտման դեմ ջրերի պաշտպանության մասին» խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի 91/676/ԵՏՀ հրահանգ՝ փոփոխություններով

Թափոնների կառավարում

- Որոշ հրահանգներ ուժը կորցրած ճանաչող՝ «Թափոնների մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/98/ԵՅ հրահանգ



(կոնսոլիդացված տարբերակը՝ 2024 թվականի փետրվարի 18-ի դրությամբ)

- «Աղբավայրերի մասին» խորհրդի 1999 թվականի ապրիլի 26-ի 1999/31/ԵՀ հրահանգ՝ փոփոխություններով

(կոնսոլիդացված տարբերակը՝ 2024 թվականի օգոստոսի 4-ի դրությամբ)

- 2004/35/ԵՀ հրահանգը փոփոխող՝ «Արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների կառավարման մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2006 թվականի մարտի 15-ի 2006/21/ԵՀ հրահանգ՝ մշակված 2009/335/ԵՀ, 2009/337/ԵՀ, 2009/359/ԵՀ եւ 2009/360/ԵՀ որոշումներով

Բնության պաշտպանություն

- «Վայրի թռչունների պահպանության մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 30-ի 2009/147/ԵՀ հրահանգ
- «Բնական միջավայրերի եւ կենդանական ու բուսական աշխարհի վայրի տեսակների պահպանության մասին» խորհրդի 1992 թվականի մայիսի 21-ի 92/43/ԵՏՀ հրահանգ՝ փոփոխություններով

Արդյունաբերական աղտոտում եւ արդյունաբերական վտանգներ

- «Արդյունաբերական արտանետումների մասին» (ներառված աղտոտման կանխարգելում եւ վերահսկում) Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 24-ի 2010/75/ԵՄ հրահանգ

(Վերաձեւակերպվել է 2024 թվականի օգոստոսի 4-ին՝ որպես «Արդյունաբերական եւ անասնաբուժական արտանետումների մասին» 2010/75/ԵՄ հրահանգ)

- խորհրդի 96/82/ԵՀ հրահանգը փոփոխող եւ այնուհետ ուժը կորցրած ճանաչող՝ «Վտանգավոր նյութերի առկայությամբ պայմանավորված խոշոր վթարների վտանգների վերահսկման մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2012 թվականի հուլիսի 4-ի 2012/18/ԵՄ հրահանգ

Քիմիական նյութերի կառավարում

- «Վտանգավոր քիմիական նյութերի արտահանման եւ ներմուծման մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2012 թվականի հուլիսի 4-ի թիվ 649/2012 կանոնակարգ (ԵՄ)

(կոնսոլիդացված տարբերակը՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ)

- 67/548/ԵՏՀ եւ 1999/45/ԵՀ հրահանգները փոփոխող եւ ուժը կորցրած ճանաչող եւ թիվ 1907/2006 կանոնակարգը (ԵՀ) փոփոխող՝ «Նյութերի եւ խառնուրդների դասակարգման, պիտակավորման եւ փաթեթավորման մասին» Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1272/2008 կանոնակարգ (ԵՀ)

(կոնսոլիդացված տարբերակը՝ 2023 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ)



Հավելված II. ՀԱՎԵԼՎԱԾ III ՀԸԳՀ ԳԼՈՒԽ 4-ի (ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

- Համայնքի տարածքում ջերմոցային գազերի արտանետումների արտոնագրերի վաճառքի համակարգ սահմանող՝ Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2003 թվականի հոկտեմբերի 13-ի 2003/87/ԵՀ հրահանգ եւ Խորհրդի փոփոխող 96/61/ԵՀ հրահանգ

(կոնսոլիդացված տարբերակը՝ 2024 թվականի մարտի 1-ի դրությամբ)

- «Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2003/87/ԵՀ հրահանգի համաձայն ջերմոցային գազերի արտանետումների դիտանցման եւ հաշվետվությունների ներկայացման մասին» Հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 21-ի թիվ 601/2012 կանոնակարգ (ԵՄ)

(Այլեւ ուժի մեջ չէ, նորը՝ «2003/87/ԵՀ հրահանգի համաձայն ջերմոցային գազերի արտանետումների դիտանցման եւ հաշվետվությունների ներկայացման մասին» Հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 2018/2066 կիրարկող կանոնակարգ (ԵՄ))

- «Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2003/87/ԵՀ հրահանգի համաձայն ջերմոցային գազերի արտանետումների մասին հաշվետվությունների եւ տոնակազմերի մասին հաշվետվությունների վերահաստատման եւ վերահաստատողների հավատարմագրման մասին» Հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 21-ի թիվ 600/2012 կանոնակարգ (ԵՄ)

(Այլեւ ուժի մեջ չէ, նորը՝ «Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2003/87/ԵՀ հրահանգի համաձայն տվյալների ստուգման եւ ստուգողների հավատարմագրման մասին» Հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 2018/2067 կիրարկող կանոնակարգ (ԵՄ))

- Թիվ 280/2004/ԵՀ որոշումն ուժը կորցրած ճանաչող՝ «Ներպետական եւ Միության մակարդակներով կլիմայի փոփոխությանն առնչվող ջերմոցային գազերի արտանետումների դիտանցման եւ հաշվետվությունների ներկայացման եւ այլ տեղեկատվության մասին հաշվետվությունների ներկայացման մեխանիզմի մասին» Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2013 թվականի մայիսի 21-ի թիվ 525/2013 կանոնակարգ (ԵՄ)

(Այլեւ ուժի մեջ չէ, նորը՝ «Էներգետիկ միության եւ կլիմայի փոփոխությանն առնչվող գործողությունների մասին» Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 2018/1999 կանոնակարգ (ԵՄ), որով ուժը կորցրած է ճանաչվում Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի թիվ 525/2013 կանոնակարգը (ԵՄ))

- «Ֆտորացված ջերմոցային գազերի մասին» Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2014 թվականի ապրիլի 16-ի թիվ 517/2014 կանոնակարգ (ԵՄ) եւ թիվ 842/2006 ուժը կորցրած ճանաչող կանոնակարգ (ԵՄ)



(Այլեւս ուժի մեջ չէ, նորը՝ «Ֆտորացված ջերմոցային գազերի մասին» Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2024 թվականի փետրվարի 7-ի թիվ 2024/573 կանոնակարգ (ԵՄ), որով ուժը կորցրած է ճանաչվում թիվ 517/2014 կանոնակարգը (ԵՄ))

- «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 1005/2009 կանոնակարգ (ԵՀ) (կոնսոլիդացված տարբերակը՝ 2017 թվականի ապրիլի 19-ի դրությամբ)